

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՋՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՀՈԿՐԱՆՆԵՍԻ

**ՎՃՈՒՄԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՁԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԺԲ.00.04 մասնագիտությունը ամբ - «Դատական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալ իստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն տեսություն»

իրավաբանական գիտություններին թեկնածուի աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. ՂԱԶԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ1.

Վճճաբեկության եռություները, տեղը և դերը դատական վերանայման համակարգում....12

§1. Վճճաբեկության իրավական բնույթը.....12

§2. Վճճաբեկ վերանայման ինդիկատորը: Վճճաբեկության գործառնության դերը դատական վերանայման համակարգում.....27

ԳԼՈՒԽ2.

Վճճաբեկ բողոքարկումը և վճճաբեկ դատարանում բողոքի նախնական քննությունը..49

§1. Վճճաբեկ բողոքը՝ որպես վճճաբեկ վարույթի հիմք: Վճճաբեկ բողոքարկման հասկացությունը և նշանակությունը.....49

§2. Վճճաբեկ բողոքարկման առարկան և ժամկետները.....62

§3. Վճճաբեկ բողոքարկման սուբյեկտները.....79

§4. Վճճաբեկ բողոք բերելու և բողոքի նախնական քննության դատավարական կարգը.....9

8

ԳԼՈՒԽ3.

Բողոքի ըստ եռության քննությունը Վճճաբեկ դատարանում.....128

§1. Վճճաբեկ դատարանում բողոքի քննության դատավարական կարգը: Վճճաբեկ վերանայման սահմանները.....128

§2. Վճճաբեկ դատարանի կողմից դատական ակտայացնելու կարգը: Դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերը.....142

§ 3. Վճռաբեկ դատարանի Լիազորությունները.....	158
ԵՁՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	172
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.....	181

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Դատական ակտ կայացնելիս դատական սխալներ թույլ տալու օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալների առկայությունը և ըստ այդմ օրինակաչություն և հիմնավորվածության պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելու հնարավորությունը՝ օբյեկտիվ անհրաժեշտություն են դարձնում դատական վերանայման տարբեր ձևերի գոյությունը ժամանակակից քրեադատավարական համակարգերում: Դատական վերանայման այդ ձևերի շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում վճռաբեկությունը, որը կոչված է լուծելու ոչ միայն դատական սխալների ուղղման, այլ նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման և դրանով իսկ միասնական դատական պրակտիկա ձևավորելու կարևորագույն խնդիրը:

Հայրենական քրեական դատավարությունում վճռաբեկության ինստիտուտը ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) սկզբնական խմբագրությունից մինչև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագրծում (այսուհետև՝ Նախագիծ) դրա վերաբերյալ կարգավորումների սահմանումը ենթարկվել է եական փոփոխությունների՝ նախատեսելով թե գործառնության ին և թե ինստիտուցիոնալ առումով տարբեր մոդելներ: Վերանայման այս ձևի գործառնության դերի նորովի ընկալման համար բեկումնային նշանակություն ունեցավ 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան) նոր՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառնության նախատեսումը: Վճռաբեկ դատարանի այս նոր սահմանադրաիրավական կարգավիճակով պայմանավորված՝ վճռաբեկության գործառնության դերը, վճռաբեկ վերանայման՝ դատական սխալների ուղղման և օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիրների հարաբերակցությունը գիտական հանրության և պրակտիկ իրավաբանների շրջանում տարաբնույթ մեկնաբանություններն են տեղիք էր տալիս: Իսկ վճռաբեկության գործառնության դերի հստակեցումից է մեծապես կախված վճռաբեկ վերանայման մեխանիզմի արդյունավետ օրենսդրական կանոնակարգումը: Այսպես, օրինակ, նույն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահ-

մանադրաիրավական գործառույթը հանգեցրել է Վճռաբեկ վերանայ-
ման մեխանիզմի բովանդակային այնպիսի փոփոխության, ինչպիսին
վճռաբեկ բողոքարկման թույլատրական (դիսկրեցիոն) կարգն է, որն
առաջին հայացքից կարող է հակասության մեջ մտնել դատական
սխալների ուղղման խնդրի հետ: Խնդրի արդիականության մասին է
վկայում հստակ մոտեցումների բացակայության պայմանավոր-
ված՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում առա-
ջարկվող՝ համակարգային փոփոխությունն կատարելու, այն է՝ եռաս-
տիճան դատական համակարգից երկաստիճան դատական համակարգին
անցնելու գաղափարը, որից, սակայն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի
հանրաքվեով ընդունված փոփոխությունն ենթարկված ՀՀ Սահմանադրու-
յունը հրաժարվել և գնացել է Վճռաբեկ դատարանի սահմանադրա-
իրավական կարգավիճակի հստակեցման ճանապարհով: Վճռաբեկ դատա-
րանի այս նոր սահմանադրաիրավական կարգավիճակը գիտական մա-
կարդակով վերլուծելու, դրանով պայամանավորված վճռաբեկու-
յան գործառույթային դերը և դրա առջև դրված խնդիրները հստակեց-
նելու, այդ խնդիրների ողջամիտ հավասարակշռության ապահով-
մանն ուղղված օրենսդրական կարգավորումներ առաջարկելու անհ-
րաժեշտությունը վկայում են սույն հետազոտության արդիակա-
նության մասին:

Վճռաբեկության ինստիտուտի օրենսդրական առանձին կարգա-
վորումների գործողության ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ
խնդիրներ քննարկման առարկա են դարձվել բարձրագույն դատական
առյաններին՝ ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետև՝
Սահմանադրական դատարան) և Վճռաբեկ դատարանի որոշումներում:
Բացի այդ, որոշակի կարգավորումներ, ի համեմատ դրանց սկզբնա-
կան խմբագրության, չնայած ենթարկվել են էական փոփոխու-
թյունների և լրացումների, այդուհանդերձ բավարար չափով չեն երաշխա-
վորում արդար դատաքննության իրավունքի համատեքստում վճռա-
բեկ վերանայման հիմնարար իրավունքը, իսկ գործնականում առա-
ջացող մի շարք խնդիրներ դեռևս մնում են չլուծված: Դեռ ավելի
երբեմն ինքնին օրենսդրական փոփոխությունները և լրացումները
խորացրել են առկա խնդիրները: Ասվածի վառ օրինակը կարող են լի-
նել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխու-
թյունն»

ներևաբացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված թիվ 30-48-Ն օրենքով կատարված փոփոխությունները, որոնց արդյունքում դատական սխալի իմաստով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը նույնացվեցին վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերի հետ, ինչը վճռաբեկության մեխանիզմում վերաքննության տարրերի անհարկի ընդլայնման դրսևորում է: Դեռ ավելին, վերոհիշյալ փոփոխությունը չլուծեց և նույնիսկ ավելի խորացրեց վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի հետ կապված՝ գործնականում առաջացող խնդիրները: Նույն օրենքով ներմուծվեց դատավարության մասնակիցների կողմից բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու օրենսդրական պահանջը, որը ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 17-ի թիվ ՍԴՈ-1196 որոշմամբ ճանաչվեց ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Իսկ օրենսդրական բարեփոխումների ձախողումը, ի թիվս այլոց, շատ հաճախ պայմանավորված է դրանց տեսական և գործնական հիմնավորվածության բացակայությամբ: Այլ կերպ՝ դատական վերանայման այս ինստիտուտի հետ կապված արդյունավետ օրենսդրական կարգավորումներ առաջարկելու համար անհրաժեշտ է նախ և առաջ խոր վերլուծության ենթարկել և գիտականորեն հիմնավորել դատական ակտերի վերանայման այս ձևի իրավական էությունը, վերհանել առկա գործնական խնդիրները և դրանց համահունչ օրենսդրորեն կանոնակարգել դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկ բողոքների քննության ու լուծման հետ կապված խնդիրները:

Քրեադատավարական այս ինստիտուտը բովանդակային փոփոխությունների է ենթարկվել ՀՀ Ազգային ժողովի օրակարգում ընդգրկված՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Նախագծում առկա օրենսդրական նոր կարգավորումները գիտական քննարկման առարկա դարձնելու, դրանց գիտական հիմնավորվածության և գործնական արդյունավետության վերլուծություն և իրականացնելու, այդպիսիք գործող օրենսդրական կարգավորման հետ համեմատորակական վերլուծության ենթարկելու, նախագծով սահմանված կարգավորումները կատարելագործելու անհրաժեշ-

տող թյուրևը ևս վկայում են սույն հետազոտության արդիականության մասին:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Վճռաբեկ վերանայման հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել խորհրդային և ժամանակակից դատավարագետների գիտական աշխատություններում: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիրները մի շարք դեպքերում դարձել են նաև գիտական ատենախոսությունների ուսումնասիրության առարկա: Այդ ուսումնասիրությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Ռ.Ն. Մելիքյանի, Է.Ֆ. Կուցովայի, Մ.Մ. Գրոդզինսկու, Ն.Ն. Կովտունի, Ի.Յա. Ֆոյնիցկու, Վ.Բ. Կալմիկովի, Օ.Ա. Սուխովայի և այլոց աշխատությունները: Չնայած այդ ամենին՝ հարկ է նկատել, որ վճռաբեկության ինստիտուտի հիմնախնդիրները հայրենական դատավարագիտության մեջ դեռևս չի արժեք կերպով ուսումնասիրված չեն:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման և վերանայման առնչությամբ ծագող դատավարական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման և վերանայման հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն են, Նախագծի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը վճռաբեկության ինստիտուտի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը: Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- սահմանել վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի հասկացությունը՝ սահմանազատելով դատական ակտերի վերանայման մյուս ձևերից.

- հստակեցնել վճռաբեկության գործառնություններն ու խնդիրները, դատական վերանայման այս ձևի տեղը դատական վերանայման համակարգում.

- վերհանել վճռաբեկ բողոքարկման հիմքերի, ժամկետների,

վճռաբեկ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի, վճռաբեկ բողոքարկման դատավարական կարգի, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի, վճռաբեկ վերանայման սահմանների, վճռաբեկ դատարանում գործերի քննության և լուծման կարգի, վճռաբեկ դատարանի լիազորությունների վերաբերյալ տեսական և գործնական խնդիրները՝ ուսումնասիրելով դրանց առնչությամբ ձևավորված դատական պրակտիկան,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրամշակել և ներկայացնել վճռաբեկության ինստիտուտի օրենսդրական կատարելագործման առաջարկներ,

- կատարված գիտական վերլուծության լույսի ներքո վերլուծել և մեկնաբանել Նախագծում տրված կարգավորումները,

- համեմատարկական վերլուծության ենթարկել գործող օրենսգրքով և Նախագծով վճռաբեկության ինստիտուտի օրենսդրական կարգավորումը, հիմնավորել Նախագծով կատարված փոփոխությունների առաջնայնությունը և ներկայացնել առաջարկություններ Նախագիծն առավել կատարելագործելու ակնկալիքով:

Յեռագոտության տեսական հիմքը: Յեռագոտության տեսական հիմքը ձևավորվել է քրեական դատավարությունում վճռաբեկության ինստիտուտին նվիրված հայրենական և արտասահմանյան արքյուններից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Գ.Ս. Ղազինյանի, Ռ.Ն.Մելիքյանի, Է.Ֆ. Կուցովայի, Մ.Մ. Գրոդզինսկու, Ս.Ս.Ստրոգովիչի, Ի.Յա. Ֆոյնիցկու, Ն.Ն. Կովտունի, Վ.Ս.Գոլովկոյի, Վ.Բ. Կալմիկովի, Օ.Ա. Սուխովայի, Ն.Վ.Լանտուխի, Մ.Ֆ. Ջիրոմի, Ջ.Ա. Ջոլովիչի և այլոց աշխատությունները:

Յեռագոտության իրավական և փորձառական հիմքը: Յեռագոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու առնչվող ՅՅ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՅՅ սահմանադրական դատարանի, ՅՅ վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

Յեռագոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկ-

ցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ:

Յետազոտության գիտական նորույթը: Թեև վճռաբեկության ինստիտուտին առնչվող որոշ հիմնախնդիրներ հետազոտության են ենթարկվել մի շարք դատավարագետների աշխատանքներում, այդուհանդերձ հայրենական իրավագիտության մեջ դեռևս բացակայում են այս ինստիտուտին ուսումնասիրությանը նվիրված համընդգրկուն աշխատություններ: Յետազոտության գիտական նորույթն այն է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել վճռաբեկության ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են՝ հիմնվելով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նոր օրենսգրքի նախագծի, առանձին օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունների համեմատաիրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած կարծիքների, ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի համակարգային ուսումնասիրության վրա: Յետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են Վճռաբեկ դատարանի սահմանադրավական կարգավիճակով պայմանավորված՝ վճռաբեկության գործառույթային դերը, վճռաբեկ վերանայման հայեցողական (դիսկրեցիոն) բնույթը, վճռաբեկության սահմանները և այլն: Արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանը վերաբերող առաջարկներում:

Պաշտպանության առաջ քաշվող դրույթները:

1. Վճռաբեկության՝ արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթների հարաբերակցության

հարցը քննարկելիս, հակառակ դրանցից մեկին մյուսի նկատմամբ առաջնայնությամբ տալու վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ տեղ գտած մոտեցումներին, անհրաժեշտ է հիմք ընդունել այն գաղափարը, որ նշված գործառույթների արդյունքը, այն է՝ անձի հիմնարար իրավունքներին առնչվող դատական սխալների ուղղումը և միասնական դատական պրակտիկայի ապահովումը ոչ միայն չեն փոխբացառում, ավելին՝ լրացնում են միմյանց:

2. Թեև վճռաբեկ դատարանի՝ իրավունքի զարգացման գործառույթն ուղղակի սահմանադրական ամրագրում չի ստացել, սակայն միասնական դատական պրակտիկայի ապահովման գործառույթի շրջանակներում դատական ակտերի վճռաբեկ վերանայման արդյունքն ինքնըստինքյան կարող է լինել նաև իրավունքի զարգացումը: Ընդ որում, թեև Հայաստանի Հանրապետությունը պատկանում է գրված իրավունքի համակարգ ունեցող երկրների թվին, այդուհանդերձ, դա չի բացառում, ավելին՝ իրավական ինտեգրման առկա պայմաններում պայմանավորում է դատական նախադեպեր ստեղծելու ճանապարհով իրավունքի զարգացման գործառույթի շրջանակներում իրավակարգավորման բացերի լրացումը:

3. Վճռաբեկ դատարանի կողմից իր սահմանադրական առաքելության իրականացման արդյունավետության ն ուղղակիորեն պայմանավորված է նաև վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությամբ: Քանի որ վճռաբեկ բողոքարկման առարկայի մոտ 40%-ը կազմում են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդյունքում կայացված գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ուստի, վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված արդյունավետ միջոց կարող է լինել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացումը, ինչին կարելի է հասնել նախ և առաջ դատական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված դատարաններ ստեղծելու ճանապարհով: Նման կարգավորումների պարագայում գործն ըստ էության չլուծող

դատական ակտերը կարող են բացառվել վճռաբեկ բողոքարկման առարկայից: Մյուս կողմից՝ հաշվի առնելով նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի առնչությամբ օրենքի միատեսակ մեկնաբանության ապահովման անհրաժեշտությունը՝ խնդրի լուծման հնարավոր մոդել կարող է լինել կիրառման ենթակա նորմի մեկնաբանությունն ստանալու համար վճռաբեկ դատարանին դիմելու ընթացակարգի նախատեսումը:

4. Վճռաբեկ բողոքարկման մատչելիության ապահովման տեսանկյունից կարևոր է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և վարույթ ընդունելը մերժելու միասնական դատական պրակտիկայի ձևավորումը: Նշված խնդիրը կարող է լուծվել ոչ թե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները պատճառաբանելով, այլ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը հստակեցնելով և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը պատճառաբանելու պահանջ նախատեսելով, ինչն առավել կանխատեսելի կդարձնի վճռաբեկ բողոքի նախնական քննության ընթացակարգերը:

5. Վճռաբեկ բողոքների նախնական քննության տարբերակված դատավարական ձևի նախատեսումը վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման եղանակներից մեկն է: Վարույթ ընդունելու պարզեցված ընթացակարգ պետք է նախատեսել այն բողոքների համար, որոնցում բարձրացված իրավունքների խախտման հարցն արդեն իսկ լուծվել է վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով (առկա են նույն հարցի վերաբերյալ ուղղորդող որոշումներ (Եվրոպական դատարանի օրինակով՝ leading cases)):

6. Հաշվի առնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վճռաբեկ դատարանի հայեցողությունը և այն, որ վարույթ կարող է ընդունել միայն օրենքով սահմանված որակական խիստ պահանջներին բավարարող բողոքը, ինչը կարող է ապահովվել միայն մասնագիտական հատուկ գիտելիքներ ներդնելու պարագայում, ուստի վճռաբեկ բողոքարկման՝ դրանով պայմանավորված նաև դատական պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք կարող է լինել քրեական դատավարության այս

փուլում անձի՝ անվճար իրավաբանական օգնությունն իր օգտվելու հնարավորության նախատեսումը, անգամ եթե նախորդող փուլերում վերջինս անձամբ է իրականացրել իր պաշտպանությունը:

7. Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի՝ արդարադատության իրականացման (հիմնարար իրավունքների պաշտպանության) և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնությունները՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները կանոնակարգելիս նախընտրելի է այն մոդելը, որը նախ՝ Վճռաբեկ դատարանին կտա ապացույցներ գնահատելու հնարավորություն, և երկրորդ՝ թույլ կտա ուղղելու իր իսկ արձանագրած դատական սխալներն այնքանով, որքանով դա թույլ են տալիս ապացույցների գնահատման արդյունքները՝ ելնելով արդյունավետության և ողջ ամիսժամկետում գործի քննության պահանջներից:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն առաջին հերթին այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է վճռաբեկ վերանայման ինստիտուտի գործնական խնդիրների վերհամեմատումը դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց արարկան որևէ կերպ առնչվում է վճռաբեկության ինստիտուտի ուսումնասիրությանը: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությանը պատրաստվել է ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են գեկույցների և ամբիոնում ներկայացված գիտա-

կան հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Գլ ու խ 1

Վճռաբեկության երկայնակ, տեղը և դերը դատական վերանայման համակարգում

§1. Վճռաբեկության իրավական բնույթը

Դատական որոշումների ստուգումը և վերանայումը համարվում են արդարադատության պատշաճ իրականացման, քրեական դատավարության խնդիրների լուծման, քրեական դատավարությունում օրինականության և անձի իրավունքների ապահովման կարևոր երաշխիքներ: Դատական որոշումների ստուգման և վերանայման ձևերը հնարավոր են դարձնում կարճ ժամանակում դատական սխալների ուղղումը, նպաստում են ստորադաս դատարանների աշխատանքի որակի բարձրացմանը և դատական արակտիկան օրենքին խիստ համապատասխան ուղղորդելուն¹: Քրեական արդարադատության ոլորտում դատական վերանայման ինստիտուտի ներմուծումը կոչված է երաշխավորելու անձի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի բողոքարկման և վերադաս դատական առյանի կողմից դրա վերանայման՝ միջազգային իրավական փաստաթղթերով (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 2-րդ հոդված² (այսուհետ՝ Կոնվենցիա), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ մաս³) և ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածով⁴ երաշխավորված հիմնարար իրավունքը:

Քրեադատավարական տեսության մեջ ընդհանուր ձևով առանձնացնում են դատական ակտերի վերանայման երկու հիմնական (դասական) ձևեր⁵, որոնք բնորոշվում են «վերաքննություն» (ծագում է

¹Տե՛ս **Рыжаков А.П., Сергеев А.И.**, Кассационное производство. М., 1997, էջ 4:

²Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան (ընդունվել է 04.11.1950թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ., ՀՀ-ի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 26.04.2002թ.)//<http://conventions.coe.int/treaty/rus/treaties/html/005.htm> (10.09.2014թ.):

³Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 16.12.1966թ.-ի 2200 Ա (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 23.03.1976)

<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/005/03/IMG/NR000503.pdf?OpenElement>

⁴Տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն

//<http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm>

⁵Վերոհիշյալ դիտարկմանը, ի հարկե, պետք է վերաբերել որոշակի վերապահումով, քանի որ դատական ակտերի վերաքննիչ և վճռաբեկ վերանայման կառուցակարգերի առանձնացումը բնորոշ է մայրցամաքային կամ ռոմանագերմանական իրավական համակարգին: Մինչդեռ, ընդհանուր իրավունքի համակարգին ընդհանրապես խորթ է «վճռաբեկություն» եզրույթը և դատական ակտերի վերանայման բոլոր հնարավոր ձևերը կլանվում են «ասելացիա» (վերաքննություն) հասկացության մեջ: Անգամ նույն մայրցամաքային իրավական համակարգում բարձրագույն դատական ատ-

լատիներեն՝ *appelare* բառից, որը թարգմանաբար նշանակում է բողոքարկել, դիմել բարձրագույն դատական ատյանին գործն ըստ էության լուծելու համար) և «վճռաբեկություն» (ծագում է լատիներեն «*cassatio*» կամ ֆրանսերեն «*casser*» բառից, որը թարգմանաբար նշանակում է կոտրել, ջարդել, ոչնչացնել, այսինքն՝ բեկանել կամ չեղյալ հայտարարել ստորադաս դատարանի դատական ակտը) եզրույթներով⁶: Դատական վերանայման այս ձևերի հետկապված հիմնախնդիրներին ընդհանրապես, և վճռաբեկության ինստիտուտի հասկացությանը և դրա էությանը, մասնավորապես, անդրադարձել են Խորհրդային միության, Ռուսաստանի Դաշնության, Եվրոպական երկրների, ինչպես նաև հայրենական դատավարագետներ⁷: Հաշվի առնելով տեսական հարուստ նյութի առկայությունը՝ անհրաժեշտ ենք համարում վճռաբեկության ինստիտուտի էության հետկապված խնդիրների ուսումնասիրությանը համակարգվածությունն հաղորդելու նպատակով այն կառուցել որոշակի ուղենիշի համաձայն՝ իբրև այդպիսին դիտարկելով վճռաբեկության երկփեղկված բնույթը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է վճռաբեկ վարույթի հետկապված տեսական և իրավակիրառ խնդիրների ուսումնասիրության շրջանակներում դատավարագետների կողմից առաջ քաշվող այն դիրքորոշմանը,

յանի կողմից իրականացվող վերանայման շրջանակներում առանձնացնում են երկու հիմնական մոդել՝ ֆրանսիական վճռաբեկությունը և գերմանական ռևիզիան: Ավելի մանրամասն տե՛ս **Sofie M.F.Geeroms**, Comparative law and legal translation. Why the terms Cassation, Revision and Appeal should not be translated. *The American journal of Comparative Law*, Vol. 50, No. 1, (Winter, 2002), էջեր 201-228//

http://www.jstor.org/stable/840834?seq=1#page_scan_tab_contents

⁶Տե՛ս **Գ.Ս.Ղազիսյան**, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., Երևանի համալս. Հրատ., 2001, էջ 382-383, **Калмыков В.Б.**, Кассационное производство в уголовном процессе: Проблемы теории и правоприменения. Дисс... канд. юрид. наук. Казань, 2010, էջեր 11-40, **Сухова О.А.**, Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе, Дисс. ...канд. юрид. наук, Саранск, 2004, էջեր 18-61, **Строгович М.С.**, Уголовный процесс. - М.: Юридическое изд-во Министерства юстиции. СССР, 1946, էջ 450:

Sofie M.F.Geeroms, նշված աշխատությունը, **J.A.Jolowicz**, Appeal, Cassation, Amparo and all that: What and why?, էջեր 2050-2051// <http://biblio.juridicas.unam.mx/libros/2/643/26.pdf>

⁷Տե՛ս **Գ.Ս.Ղազիսյան**, նշված աշխատությունը, էջեր 377-409, **Ռ.Լ.Սելիբյան**, Դատական վերանայումը ՀՀ քրեական դատավարությունում//Դատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություններ: Եր.: Ասողիկ, 2010, էջեր 332-355, **Гродзинский М.М.**, Кассационное и надзорное производство в советском уголовном процессе, гос. изд. юрид. лит., М., 1949, **Куцова Э.Ф.**, Советская кассация как гарантия законности в правосудии. гос. изд. юрид. лит., М., 1949, **Бардамов Б.Г.**, Сущность, содержание и значение кассационного производства в российском уголовном процессе. Автореф. дис... канд. юрид. наук. Иркутск, 2006, **Ковтун Н.Н.**, Судебный контроль в уголовном судопроизводстве России: понятие, сущность, формы, дис. ... д-ра юрид. наук, М., РГБ, 2003, էջեր 326-416, **Лантух Н.В.**, Формы проверки не вступивших в законную силу приговоров. Дисс. ... канд. юрид. наук. Санкт-Петербург, 2001, **Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления**. Кол авторов Под общ.ред. Н.А.Колоколова, Юрист, Москва, 2011, **Сухова О.А.**, նշված աշխատությունը, **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, **Sofie M.F.Geeroms**, նշված աշխատությունը, **J.A.Jolowicz**, նշված աշխատությունը:

որ վճռաբեկությունը կարող է դիտարկվել երկու տեսանկյունից՝ որպես դատական ակտերի վերանայման մեխանիզմ (ձև) կամ դատական վերահսկողության մեխանիզմի տարր և որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ⁸:

Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև (մեխանիզմ): Վճռաբեկության ինստիտուտի որոշակիորեն խորքային վերլուծությունը, դրա էության վերհանումը, կարծում ենք, առաջին հերթին պահանջում են անդրադառնալ վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի (մեխանիզմի) իրավական էությանը, վերհանել վերանայման այս ձևի էական բնութագրական հատկանիշները, որոնցով այն տարբերվում է դատական ակտերի վերանայման մյուս ձևերից: Տեսական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջարք դատավարագետներ դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը բնորոշում և դրա էությունը, տարբերիչ գծերը վերհանում են դատական ակտերի վերանայման մյուս ձևի՝ վերաքննության կամ ապելյացիայի հետ համեմատության և համադրության մեջ: Արդյունքում մասնագիտական գրականության մեջ վճռաբեկ վերանայման մեխանիզմի վերաբերյալ տեղ գտած բազմաթիվ բնորոշումները, որոշակի առանձնահատկություններով հանդերձ, բովանդակային առումով գրեթե նույնական են. տեսաբաններն ըստ էության միակարծիք են վերանայման այս ձևի էության մեկնաբանության հարցում՝ այն բնորոշելով որպես դատական ակտի վերանայում՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահպանման տեսանկյունից: Դասական իմաստով դատական ակտերի վճռաբեկ վերանայումը չի ենթադրում գործով ձեռք բերված ապացույցների անմիջական հետազոտման արդյունքում գործի փաստական հանգամանքների վերլուծություն և գործի փաստական կողմի վերանայում⁹: Սահմանազատելով վերաքննությունը վճռաբեկությունից՝ Ն.Վ.Լանտուխը բավական պատկերավոր եզրահանգում է անում այն մասին, որ վերաքննության ինստիտուտը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ վերադաս դատական ատյանը կոչված է լավագույնս երաշխավորելու դատական ակտի արդարացիությունը, իսկ

⁸Տե՛ս *Ռ.Ն.Սելիբյան*, նշված աշխատությունը, էջ 332, *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը:

⁹Տե՛ս *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, *Сухова О.А.*, նշված աշխատությունը, *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, *Sofie M.F.Geeroms*, նշված աշխատությունը, *J.A.Jolowicz*, նշված աշխատությունը:

վճռաբեկ վարույթը՝ իրավաբանական այն ֆիկցիայի, որ դատարանի կողմից օրենքով սահմանված կարգի պահպանման բկայացված ցանկացած դատական ակտարդարադատ է¹⁰: Բացի այդ, տեսական գրականության մեջ, իբրև վճռաբեկության բնութագրիչ գիծ, առանձնացվում է բողոքարկվող դատական ակտի փոխարեն նոր դատական ակտ կայացնելու (դատական ակտը փոփոխելու) լիազորության բացակայությունը և միայն դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու կամ դատական ակտն անփոփոխ թողնելու հնարավորության առկայությունը: Յենց «վճռաբեկություն» («cassatio») եզրույթը, ինչպես արդեն նշվել է, թարգմանաբար նշանակում է բեկանել կամ չեղյալ հայտարարել ստորադաս դատարանի դատական ակտը: Դատական ակտերի վերանայման նկարագրված կառուցակարգը քրեադատավարական գիտության մեջ բնորոշվում է «մաքուր վճռաբեկություն» (գործի էությունն ից մաքրված) եզրույթով և ներկայացվում որպես գուտ տեսական կառուցակարգ, որը մշակվել և հիմնավորվել է ֆրանսիացի դատավարագետների կողմից¹¹: Եվ այս առումով, քրեադատավարական տեսության մեջ առանձին դատավարագետներ հաճախ մեջբերում են ֆրանսիական քրեական դատավարության տեսության դասական Մ.Ֆոստեն Էլիի հայտնի պատկերավոր այն բնորոշումը, որ վճռաբեկ վերանայումը դատարան է դատարանի գործունեության նկատմամբ՝ «դատարան դատարանի նկատմամբ», իսկ վերաքննիչ վերանայում իրականացնող դատարանը «գործով դատարան է»¹²: Վճռաբեկության քննարկվող հատկանիշը, սակայն, միանշանակ չի ընկալվում դատավարագետների շրջանում: Այսպես, օրինակ, «մաքուր» վճռաբեկությունը բնորոշելով որպես իրավական փաստարկների փոխանակում կամ բանավեճ (քննարկում) իրավունքի մեկնաբանության կարևոր խնդրի շուրջ՝ Լ.Վ.Գոլովկոն կարծիք է հայտնում, որ մաքուր վճռաբեկության կամ առհասարակ դատական ակտերի վերանայման համակարգի դասական մոդելը (երբ վերաքննիչ վերանայման արդյունքում կայացված դատական ակտն ըստ էության վերջնական է, և վճռաբեկ վերանայման առարկա կարող է դառնալ միայն դրա

¹⁰Տե՛ս *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, էջ 30:

¹¹Տե՛ս *Ortolan et Ledeau*, Elements de droit penal. Penalite-juridictions-procedure. Paris. 1855, *Garroud R.*, Traite theorique et pratique d'instruction criminelle et de la procedure penale, t.I. Paris. 1894, էջ 10, մեջբերումն ըստ՝ *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, էջ 22:

¹²Տե՛ս *Helie F.*, Traite d'instruction criminelle ou theorie du code d'instruction criminelle Paris. 1867. №892. մեջբերումն ըստ՝ *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, էջ 26 և *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 12:

իրավական կողմը) թույլ է տալ իսկուծել մի շարք խնդիրներ: Դրանց շարքում հեղինակը հատկապես կարևորում է այն, որ դասական իմաստով վճռաբեկության ինստիտուտի գոյության պայմաններում բարձրագույն դատական ատյանը, որը և պետք է օժտված լինի վճռաբեկ վերանայման լիազորություններով, կարողանում է ոչ միայն ուղղել դատական սխալները, այլ և ապահովել դատական պրակտիկայի միասնականությունը¹³: Սակայն մյուս կողմից՝ վճռաբեկության այս մոդելը նաև բազմաթիվ քննադատությունների է արժանանում, որոնք հիմնականում հանգում են նրան, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումը միայն գործի իրավական կողմով անխուսափելիորեն գուցորդվում է ֆորմալ իզմով (ձևականությամբ), ձևի ակնհայտ գերակայությունը բովանդակության նկատմամբ¹⁴:

Թեև տեսական գրականության մեջ գոյություն ունի որոշակիորեն ընդունված տեսակետ առ այն, որ «մաքուր» վճռաբեկության ֆրանսիական մոդելը մի շարք այլ երկրների դատական վերանայման համակարգում գոյություն ունեցող այս ինստիտուտի նախատիպն է, սակայն միևնույն ժամանակ այսօր որևէ երկրի դատական համակարգում դժվար է գտնել մաքուր ձևով պահպանված վճռաբեկության դասական մոդելը¹⁵: Նահանջը մաքուր վճռաբեկությունից դեպի խառը վճռաբեկություն դրսևորվում է վճռաբեկ ատյանի գործունեության մեջ վերաքննության որոշակի տարրեր ներմուծելով: Այս նահանջն ունի իր օբյեկտիվ պատճառները, այն է՝ մարդկային և նյութական ռեսուրսների դատավարական խնայողության խնդիրը, իրավունքի և փաստի հարցերի հստակ տարանջատման անհնարիությունը, քանի որ գործի փաստական կողմին վերաբերող հարցերը ճնշող մեծամասնությամբ կարելի է վերաձևակերպել և ներկայացնել որպես իրավական խնդիր¹⁶: Վճռաբեկության խառը մոդելը ենթադրում է՝

¹³Տե՛ս **Головко Л.В.**, Новеллы УПК РФ: прогресс или институциональный хаос?/ Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления:- Юрист: Москва, 2011:

¹⁴Տե՛ս **Чельцов-Бebutov М.А.**, Курс уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах, СПб.: Равена, Альфа, 1995, էջեր 506-508

file:///C:/Users/USER/Downloads/1chel_tsov_bebutov_m_a_kurs_ugolovno_protseessual_nogo_prava_o.pdf

¹⁵Տե՛ս **J.A.Jolowicz**, նշված աշխատությունը, էջեր 2050-2051, **Гуценко К.Ф., Головко Л.В., Филимонов Б.А.**, Уголовный процесс западных государств. Под ред.: Гуценко К.Ф. - М.: Зерцало-М, 2001, էջ 378:

¹⁶ Տե՛ս **J.A.Jolowicz**, նշված աշխատությունը, նույն տեղում:

1. վերանայ ման ռեիզիոն տարրերի առկայ ու թյ ու ն (երբ վճռաբեկ վերանայ ման բողոքը սոսկ առիթ է վերանայ ման վարույթ հարուցելու համար, և վերանայ ու մն իրականացնող դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ բողոքի հիմքերով և հիմնավորումներով):

2. դատարանի կողմից գործի է ու թյ ան մեջ խորանալ ու հնարավոր ու թյ ու ն:

3. դատական ակտը փոփոխել ու լ ի ազոր ու թյ ան առկայ ու թյ ու ն առանց գործը ստորադաս դատարան նոր քնն ու թյ ան ու ղարկել ու ¹⁷:

Վճռաբեկ ու թյ ան խառը մոդելի օրինակ են գերմանական ռեիզիան և խորհրդային վճռաբեկ ու թյ ու նը, որոնք, սակայն, ևս ու ն են իրենց առանձնահատկ ու թյ ու ն ները, որոնցով է ապես տարբերվում են միմյանցից: Այսպես, օրինակ, նույն գերմանական ռեիզիայի՝ ֆրանսիական վճռաբեկ ու թյ ու նից սահմանազատման և այն որպես խառը վճռաբեկ ու թյ ան մոդել դիտարկել ու հիմնական չափանիշը դատական ակտը փոփոխել ու լ ի ազոր ու թյ ան առկայ ու թյ ու նն է ¹⁸: Իսկ, օրինակ, խորհրդային վճռաբեկ ու թյ ու նը ենթադրում է գործի ոչ միայն իրավական, այլ և փաստական կողմի վերանայ ու մ ¹⁹, վերանայման ռեիզիոն տարրերի լ այն առկայ ու թյ ու ն, երբ վճռաբեկ վերանայ ման բողոքը սոսկ առիթ է վերանայ ման վարույթ հարուցել ու համար, և վերանայ ու մն իրականացնող դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ բողոքի հիմքերով և հիմնավորումներով ²⁰:

Ամփոփել ու վ վերոգրյալը՝ կարող են եզրահանգել, որ մաքուր վճռաբեկ ու թյ ու նը, ալելի շատ և ալելի շ ու տ տեսական մոդել է, և գործնականում դրան բնորոշ բոլոր տարրերի հետևողական և անշեղ իրացումը, մասնավորապես գործի վերանայ ու մը զուտ դրա իրավական կողմով սահմանափակելը, դժվար է պատկերացնել՝ պայմանավորված, արդեն իսկ հիշատակված, գործի իրավական և փաստական կողմի միջև հստակ սահմանազծեր անցկացնել ու անհնարին ու թյ ամբ: Վճռա

¹⁷ Տե՛ս *Лантух Н.В.*, նշված աշխատ ու թյ ու նը, էջեր 26-27:
¹⁸ Տե՛ս *Sofie M.F.Geeroms*, նշված աշխատ ու թյ ու նը, *Лантух Н.В.*, նշված աշխատ ու թյ ու նը, էջեր 77-82:
¹⁹ Տե՛ս *Гродзинский М.М.*, նշված աշխատ ու թյ ու նը, էջ 14: Դատական ակտերի վերանայ ման խորհրդային վճռաբեկ-ռեիզիոն մեխանիզմի (ձևի) մեջ վերաքնն ու թյ ան տարրերի լ այն ընդգրկ ու մը, կարծում ենք, որոշակիորեն պայմանավորված է, ի թիվս այլոց, այն հանգամանքով, որ խորհրդային օրենսդր ու թյ ու նն ի սկզբանե հրաժարվել է ապելյացիայից: Ալելի մանրմասն տե՛ս *Лантух Н.В.*, նշված աշխատ ու թյ ու նը:
²⁰ Տե՛ս *Ковтун Н.Н.*, նշված աշխատ ու թյ ու նը, էջ 329:

բեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի գործունեության ևս մեջ կարելի է գտնել օրինակներ, երբ դատարանն ըստ էության անուղղակիորեն վերանայել է գործի փաստական կողմը: Ասպես, օրինակ, առանձին դեպքերում արձանագրելով, ստորադաս դատարանների կողմից ապացույցները գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելու իրավական պահանջների խախտում՝ Վճռաբեկ դատարանն ըստ էության վերանայել է վերջիններիս հետևություններն անձի մեղավորության մասին հաստատված համարված հանգամանքների մասին²¹: Մաքուր վճռաբեկության կառուցակարգը որոշ դեպքերում իրոք կարող է նաև հանգեցնել ձևի անհարկի գերակայության բովանդակության նկատմամբ, դատավարական խնայողականության կարևորագույն պահանջի անտեսման: Վերջին դիտարկումը հատկապես տեղին է մաքուր վճռաբեկության բնութագրական այն հատկանիշի կապակցությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ վերանայում իրականացնող դատարանը պետք է բացառապես լիազորված լինի անփոփոխ թողնելու ստորադաս դատարանի դատական ակտը կամ բեկանելու այն, և գործն ուղարկելու ստորադաս դատարան նոր քննության: Այնուամենայնիվ, հակառակ ծայրահեղություն կարող է լինել վերաքննության և վճռաբեկության ֆունկցիոնալ կրկնողությունը²²: Կարծում ենք՝ վճռաբեկության կոնկրետ մոդելի ընտրությունը և դրա օրենսդրական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ վճռաբեկությունը չնույնացվի դատական ակտերի վերանայման մյուս հիմնական ձևի՝ վերաքննության հետևանքների վերանայման այս ձևերի այն էական տարբերիչ առանձնահատկությունը, որ վճռաբեկության մեխանիզմը սահմանափակված է միայն գործի իրավական կողմով և կարող է թույլ տալ խորանալ գործի էության մեջ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ստորադաս դատարանի կողմից թույլ տված իրավական սխալներն ուղղելու համար, և չի ենթադրում գործի փաստական կողմի վերանայում: Եվ դատական

²¹Տե՛ս, ի թիվս այլոց, Վճռաբեկ դատարանի՝ Նելլի Ափոյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0009/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

²²Տե՛ս **Муромова Н.Г.**, Система судебного контроля в уголовном судопроизводстве: вопросы теории, законодательного регулирования и практики. Казань. Изд-во Казан, гос. ун-та им. В.И. Ульянова-Ленина, 2004, էջ 200:

ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը գործադրող մարմինը (մեզանում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը) չպետք է իրավունքի դատարանից վերածվի փաստ քննող դատարանի: Նման եզրահանգման համար հիմք է ծառայում նաև որոշակի համեմատախրավական ուսումնասիրությունը: Այն մասնավորապես վկայում է, որ ռոմանագերմանական իրավական ավանդույթի շրջանակներում վճռաբեկ վերանայման գործառույթը որպես կանոն բարձրագույն դատական ատյանների բացառիկ գործառույթն է, իսկ դատական այդ ատյանների իրավասությունը սահմանափակված է բացառապես իրավունքի հարցերով (Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ, Բուլղարիա, Էտալիա, Իսպանիա, Ռումինիա)²³: Ինչպես արդեն նշել ենք, վճռաբեկության մեխանիզմում վերաքննության տարրերի անհարկի ընդլայնման դրսևորում է վերը հիշատակված՝ ՀՕ-48-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում դատական սխալի իմաստով վճռաբեկ բողոքը վարույթը նդունելու հիմքերի նույնացումը վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերի հետ: Խոսքը հատկապես վերաբերում է գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունների՝ դատարանում հետազոտված ապացույցներին անհամապատասխանության հիմքին, ինչը զուտ փաստի հարց է և ենթադրում է գործի փաստական կողմին անդրադառնալու անհրաժեշտություն: Այս հիմքի հետ հետկապված՝ վճռաբեկ վերանայման շրջանակներում կարող են քննարկման առարկա դառնալ միայն, ինչպես արդեն նշվել է, համապատասխանաբար ապացույցների գնահատման քրեադատավարական պահանջների խախտումները:

Որոշ տեսաբաններ «մաքուր» կամ «ֆրանսիական» վճռաբեկության բնութագրական գծերի շարքում ընդգրկում են նաև հետևյալ հատկանիշները՝

1. գործը վերանայվում է միայն կողմերի խնդրանքով.
2. օրենքով հստակ սահմանված է այն խախտումների շրջանակը, որոնք հիմք են դատական ակտը բեկանելու համար՝ անկախ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունից.
3. վճռաբեկ վերանայման ծավալը սահմանափակված է կողմերի

²³Տե՛ս **Sofie M.F. Geeroms**, նշված աշխատությունը, **J.A. Jolowicz**, նշված աշխատությունը:

ներկայացրած բողոքի սահմաններով²⁴.

4. Վճռաբեկ վերանայման առարկա են կազմում միայն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը²⁵:

Անդրադառնալով վճռաբեկ վերանայման մեխանիզմի այն հատկանիշին, որ գործը վերանայվում է միայն կողմերի խնդրանքով, ապա պետք է նշել, որ վերաքննիչ վարույթից սկսած՝ քրեական դատավարության համակարգում փուլերի հաջորդականությունը կախված է բողոք բերելու սուբյեկտիվ կամարտահայտություններից: Ընդ որում, դատական ակտերի վճռաբեկ վերանայման վարույթ հարուցելու համար սոսկ բողոքաբերի սուբյեկտիվ կամարտահայտությունը բավարարչէ. վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի օրենքով սահմանված որոշակի բովանդակային պահանջների, պարունակի այն վարույթ ընդունելու համար բավարար հիմնավորումներ²⁶: Ինչ վերաբերում է հաջորդ երկու հատկանիշներին, ապա դրանց մասին ավելի մանրամասն կխոսվի սույն աշխատության հետագա պարագրաֆներում: Պարզապես, հարկ ենք համարում նշել, որ այդպիսիք վճռաբեկությունը դատական ակտերի վերանայման մյուս ձևերից, մասնավորապես՝ վերաքննությունից սահմանազատելու չափանիշ ծառայել չեն կարող, քանի որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր սահմանված են նաև վերաքննիչ բողոքարկման համար: Բացի այդ, սահմանափակ վերաքննության պարագայում ևս վերաքննիչ դատարանը կաշկանդված է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով:

Ինչպես արդեն նշվել է դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը, տեսաբանների բնորոշմամբ, ենթադրում է **օրինական ուժի մեջ չմտած** դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգում: Քննարկվող հատկանիշը ոչ միայն զուտ տեսական, այլ նաև գործնական կարևորություն ունի: Վերջին եզրահանգման օգտին է խոսում այն հանգամանքը, որ վճռաբեկ վերանայ-

²⁴ Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 26:

²⁵ Տե՛ս **Головко Л.В.**, նշված աշխատությունը, Уголовный процесс:учебник//А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред. проф. А.В. Смирнова. — 4-е изд., перераб. и доп. — М.:КНОРУС, 2008, էջ 593.

http://kalinovskiy-k.narod.ru/p/upp/smirnov_kalinovskiy_2008.pdf

²⁶ Այս մասին ավելի մանրամասն կխոսվի սույն աշխատության հետագա պարագրաֆներում:

ման մեխանիզմի այս էական հատկանիշի պարզաբանումից է մեծապես կախված նաև վճռաբեկ բողոքարկման իրավական հետևանքների հստակեցումը, բողոքարկվող դատական ակտի հետագա իրավական ճակատագրի որոշումը: Խնդիրը գործնական առավել կարևորություն է ստանում գործող Օրենսգրքում այս հարցի հստակ օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում: Այսպես, Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատական ակտն **օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկամսյա ժամկետում**: Նույն օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը կարող է բերվել վերաքննիչ դատարանի՝ **«գործն ըստ էության չ ու ծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում (...)**»: Մինչդեռ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ **օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝** վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելու և դրանց վճռաբեկ բողոքարկման ժամկետների համարումը վկայում է, որ վճռաբեկության կարգով կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Մինչդեռ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասում ուղղակիորեն հակառակ կարգավորում է նախատեսված: Ըստ այդմ էլ, հստակ կանոնակարգված չեն վճռաբեկ բողոքարկման իրավական հետևանքները: Այսպես, օրինակ, Օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մասում հստակ սահմանված է, որ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերաքննիչ բողոքարկումը կասեցնում է դրա օրինական ուժի մեջ մտնելը: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարույթը կանոնակարգող 48-րդ գլխում նման հստակ կարգավորում չկա: Քննարկվող խնդրի առնչությամբ պետք է նշել, որ քրեադատավարական տեսության մեջ ընդունված է տարբերակել դատական ակտերի բողոքարկման (վերանայման) սովորական կամ բնականոն և բացառիկ եղանակներ: Դատական վերանայման այս տեսակների սահմանազատման չափանիշը բողոքարկման առարկան է: Այսպես, եթե սովորական վերանայման առարկան են կազմում ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, ապա օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող

են բողոքարկվել միայն բացառիկ վերանայման կարգով: Այս տարանջատումը բխում է կրկին դատվելու անթույլատրելիության (non bis in idem)՝ Կոնվենցիայով և ներպետական օրենսդրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքից, որը կոչված է երաշխավորելու իրավական որոշակիության և դատական ակտերի կայունության կարևորագույն սկզբունքները, որոնք այլ պահանջների հետ մեկտեղ ենթադրում են, որ գործով վերջնական որոշումը չպետք է կասկածի տակ դրվի: Միևնույն ժամանակ Կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը և դրան համահունչ՝ 33 օրենսդրությունը նախատեսում են այս սկզբունքից շեղվելու իրավաչափ հնարավորությունը միայն համապատասխան բացառիկ հիմքերի առկայության դեպքում, որոնք չեն կարող նույնական լինել դատական ակտերի սովորական բողոքարկման հիմքերի հետ: Եթե բացառիկ վերանայման ցանկացած հիմքով օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են բողոքարկվել, ապա հակառակը բացառվում է: Մասնավորապես, եթե օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են բողոքարկվել նյութական և դատավարական իրավունքի ցանկացած խախտման հիմքով, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ապա օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով: Տեսություն մեջ գերակշռող տեսակետի համաձայն՝ վերաքննությանը և վճռաբեկությանը դատական ակտերի բողոքարկման (վերանայման) սովորական եղանակներ են²⁷: Մենք նույնպես հակված ենք այն մոտեցմանը, որ վճռաբեկությանը՝ որպես դատական ակտերի վերանայման բացառիկ եղանակ դիտելը կհանգեցնի դատական ակտերի կայունության սկզբունքի ոչ իրավաչափ սահմանափակման այնպիսի իրավիճակի, երբ նյութական կամ դատավարական իրավունքի սովորական խախտման հիմքով հնարավոր կլինի բողոքարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Եզրահանգելով, որ վճռաբեկ բողոքարկման ամարկակազմում են ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, կարծում ենք, քննարկման կարիք ունի նաև այն հարցը, թե արդյոք այն ընդգրկում է միայն գործն ըստ էության լուծող դատական ակ-

²⁷Տե՛ս *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, էջ 36, *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 12:

տերի վերանայումը: Վերոնշյալ հարցադրման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ քրեադատավարական տեսության մեջ դատական ակտերի բողոքարկման սովորական ձևերի շարքում առանձնացնում են նաև մասնավոր բողոքարկումը²⁸: Ի տարբերություն վերաքննության (վճռաբեկության)՝ մասնավոր վերանայման կարգով բողոքարկման ենթակա են գործն ըստ էության չլուծող կամ միջանկյալ դատական ակտերը²⁹: Գործող Օրենսգրքը նախատեսում է գործն ըստ էության չլուծող դատական ակտերը (խոսքն առավելապես վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում կայացված դատական ակտերին) վերաքննիչ, ապա վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորություն: Եվ այս դատական ակտերի բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունները մասամբ՝ այնքանով, որքանով կարգավորված չեն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը կանոնակարգող 39-րդ գլխի նորմերով, կարգավորվում են վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում վարույթը կանոնակարգող համապատասխանաբար 10-րդ և 11-րդ բաժնի նորմերով, սակայն դրանցով կարգավորվող՝ վերաքննիչ (վճռաբեկ) դատարանի կողմից իրականացվող դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ վերաքննություն կամ վճռաբեկություն չէ³⁰: Նախագիծը³¹ ևս մի կողմից՝ տարբերակում է վերաքննության (վճռաբեկության) կառուցակարգը՝ որպես եզրափակիչ (գործն ըստ էության լուծող) դատական ակտերի, իսկ մյուս կողմից՝ հատուկ վերանայումը՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից ոչ եզրափակիչ (գործն ըստ էության չլուծող) դատական ակտերի վերանայման մեխանիզմներ: Հատուկ վերանայման կառուցակարգի առանձնացումն ինքնանպատակ չէ: Այն ոչ միայն հստակ տարանջատում է գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի վերանայման ձևերը, այլ և նախատեսում է դրանց համապատասխան, մասնավորապես հատուկ վերանայման պարագայում բողոքարկման և բողոքի

²⁸ Տե՛ս **Գ.Ս.Ղազիսյան**, նշված աշխատությունը, էջ 383:

²⁹ Տե՛ս **Червоткин А.С.**, Промежуточные судебные решения и порядок их пересмотра в российском уголовном процессе, дис... канд. юрид. наук., М., 2013
http://msal.ru/common/upload/Dissertatsiya_CHervotkin%5B2%5D.pdf

³⁰ Տե՛ս **Ռ.Լ.Սելի իբյան**, նշված աշխատությունը, էջեր 299-301:

³¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը//
http://parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf

քննություն ան պարզեցված ընթացակարգ: Ընդ որում, ինչպես բխում է Նախագծի համապատասխան դրույթներից, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման և բողոքի քննության ընթացակարգի պարզեցումն առավելապես վերաբերում է բողոքարկման և բողոքի քննության ժամկետների կրճատմանը, ինչպես նաև վերանայման արդյունքում դատարանի իրավասության (վերջինիս կողմից կայացվող դատական ակտերի) շրջանակի սահմանափակմանը: Դատական ակտերի վերանայման այս երկու ձևերի սահմանազատման չափանիշ, կարծում ենք, թերևս կարող է լինել նաև այն, որ եթե վճռաբեկ վերանայման մեխանիզմը ենթադրում է օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, ապա միջանկյալ, օրինակ նույն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված դատական ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանք ենթակա են անհապաղ կատարման: Եվ ըստ այդմ, մասնավոր բողոքարկման առարկա են դառնում արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Հատուկ ընդգծման կարիք ունի նաև այն հանգամանքը, որ Նախագծի 401-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ վճռաբեկ դատարանում գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայման առարկա կարող են դառնալ միայն օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության դեպքում: Նման կարգավորումն ըստ էության նպատակ ունի նաև նվազեցնել ու Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը: Այս տեսանկյունից, կարծում ենք՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 163-րդ հոդվածով, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով³² նախատեսված՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարաններ ձևավորելու գաղափարը գործնականում իրացնելու դեպքում կարելի է առավել հեղափոխական լուծումներ գտնել: Համապատասխան մասնագիտական գիտելիքներ և փորձ ունեցող դատավորների կողմից մինչդատական վարույթի նկատմամբ որակյալ դատական

³²Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ՝ մշակված Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, էջ 40
<http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

վերահսկողության իրականացումն ապահովելու դեպքում, կարծում ենք, կարող ենք վճռաբեկ բողոքարկման առարկայի ծավալից բացառել միջանկյալ քննարկվող դատական ակտերը: Դրանք մեկ անգամ վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորություն ընձեռելը, կարծում ենք, բավարար կլինի երաշխավորելու անձի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի բողոքարկման և այն վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքը: Նման կարգավորումը կարող է իրապես Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու մեխանիզմ ծառայել, քանի որ վիճակագրական տվյալների համաձայն՝ 2009-2015թթ.-ի կտրվածքով վճռաբեկ բողոքարկման առարկայի 40%-ը կազմել են գործն ըստ էության չլուծող դատական ակտերը: Իհարկե պետք է ընդունել, որ միջանկյալ դատական ակտերի վերանայման հետկապված՝ ևս կարող է իրավական նորմի մեկնաբանության (իրավունքի զարգացման) առումով օրենքի միատեսակ կիրառության խնդիր առաջանալ: Կարծում ենք՝ խնդրի լուծման արդյունավետ մոդել կարող է լինել ընդհանուր իրավունքի ավանդույթի շրջանակներում, մասնավորապես Անգլիայում կիրառվող՝ «case stated» (կողմերի միջև համաձայնությունը փաստերի շուրջ) կոչվող ինստիտուտը: Դրա էությունն այն է, որ ստորադաս դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կազմվում է գործով հաստատված համարված փաստական հանգամանքների շարադրանքը, որը ներկայացվում է Անգլիայի Բարձր դատարան՝ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ կարծիք ստանալու համար³³:

Գրեթե միակարծիք լինելով, ինչպես արդեն նշվել է, դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմի բովանդակային առումով մեկնաբանության հարցում, տեսաբանները, այդուհանդերձ, եզրույթաբանական առումով այն տարբեր կերպ են բնորոշում: Այսպես, վճռաբեկ վերանայման մեխանիզմը բնորոշելիս տեսաբաններն օգ-

³³Այս ինստիտուտը որոշակի ընդհանրություններ ունի Եվրոպական կոնվենցիային կից 16-րդ արձանագրությամբ (1-2-րդ հոդվածներ) նախատեսված՝ անդամ-պետություններին բարձրագույն դատական ասյանների միջնորդության հիման վրա Եվրոպական դատարանի կողմից խորհրդատվական եզրահանգումներ տալու ինստիտուտի հետ: Ավելի մանրամասն տե՛ս Protocol No. 16 to the Convention on the Protection of Human Rights and Fundamental Freedoms, CETS 214 – Human Rights (Protocol No. 16), 2.X.2013// http://www.echr.coe.int/Documents/Protocol_16_ENG.pdf

տագործում են «դատական վերահսկողության»³⁴ կամ «դատական հսկողության եղանակ»³⁵, «դատական ակտերի բողոքարկման և ստուգման եղանակ»³⁶, «դատական ակտերի բողոքարկման և վերանայման եղանակ»³⁷ եզրույթները: Ընդ որում, շատ հաճախ այս եզրույթներն օգտագործվում են համակցված ձևով: Անդրադառնալով այն հարցին՝ արդյոք վճռաբեկությանը դատական հսկողության, թե դատական վերահսկողության եղանակ է, կարծում ենք՝ այն կարող է բնորոշվել որպես ստորադաս դատարանի գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության եղանակ: Վերոհիշյալ դիտարկումը կարելի է հիմնավորել նրանով, որ քրեադատավարական իրավունքի տեսության մեջ տարբերակելով «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթները՝ տեսաբանները տարբեր իրավական բովանդակության են դնում այդ եզրույթների մեջ՝ առաջինը պայմանավորելով որոշակի ենթակայության հարաբերության ներքին առկայությանը, ինչը բացառվում է դատական իշխանության մարմինների համակարգի ներսում, որի բնութագրական հատկանիշներից մեկը ներքին անկախության սկզբունքն է: Ինչ վերաբերում է դատական ակտերի «վերանայման ձև» և «ստուգման ձև» եզրույթներին, ապա, կարծում ենք, առավել տեղին է «վերանայման ձև» հասկացության օգտագործումը, քանի որ նախ թե՛ ներպետական և թե՛ միջազգային, մասնավորապես, վերը հիշատակված իրավական ակտերում նշվում է վերանայման իրավունքի մասին, և երկրորդ՝ վերանայումն իրականացվում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությանը, հիմնավորվածությանը և արդարացիությանը ստուգելու եղանակով, այլ կերպ՝ ստուգումը վերանայման իրականացման ձևն է, դրա բաղկացուցիչ մասը: Բացի այդ, ստուգումը չի ներառում դատական ակտերի վերանայման բաղկացուցիչ մասը կազմող բողոքարկման գործընթացը: Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ վճռաբեկ վերանայումը դատական ակտերի վերանայման հայեցողական ձև է, որը ենթադրում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայում սոսկ իրավունքի հիմքով և ունի հատուկ նպատակային նշանա-

³⁴Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 20, *Куцова Э.Ф.*, նշված աշխատությունը, էջ 15:

³⁵ Տե՛ս *Ковтун Н.Н.*, նշված աշխատությունը:

³⁶ Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը:

³⁷ Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը:

կու թյ ու ն՝ ապահովել ու օրենքի միատեսակ կիրառու թյ ու նը:

Այ սպիսով, վճռաբեկ վերանայ ման մեխանիզմը կարելի է բնորոշել որպես ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայ ման հայեցողական ձև, որի արդյունքում վճռաբեկ ատյանը, նպատակ ունենալով ուղղել ու դատական սխալները և ապահովել ու օրենքի միատեսակ կիրառու թյ ու նը, ստուգում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը՝ նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանման տեսանկյունից:

Վճռաբեկությունը՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ: Վճռաբեկությունը նաև քրեական դատավարության ինքնուրույն փուլ է՝ օժտված քրեական դատավարության փուլ ինքնորոշ հատկանիշներով, այն է՝ քրեական դատավարության ընդհանուր խնդիրներից բխող անմիջական խնդիրներ, մասնակցող մարմինների ու անձանց որոշակի շրջանակ, յուրահատուկ քրեադատավարական հարաբերություններ, դատավարական գործունեության որոշակի ընթացակարգ՝ դատավարական ձև, ամփոփիչ (փուլային) դատավարական որոշումների շրջանակ³⁸, որի շրջանակներում տեսություն մեջ առանձնացնում են միմյանց հետ սերտորեն փոխկապակցված երկու հարաբերականորեն ինքնուրույն վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկության կարգով բողոքի քննության ենթափուլեր³⁹: Կարծում ենք՝ իբրև վճռաբեկության սկզբնական փուլ առավել նպատակահարմար է ոչ թե սոսկ վճռաբեկ բողոքարկման, այլ վճռաբեկ բողոքարկման և բողոքի նախնական քննության փուլի առանձնացումը: Այս դիրքորոշումը կարելի է հիմնավորել նրանով, որ «վճռաբեկ բողոքարկում» եզրույթն առավել ապես վերաբերում է քրեական դատավարության մասնակիցների կողմից բողոք բերելու հետ կապված դատավարական հարաբերություններին, մինչդեռ այս փուլում Վճռաբեկ դատարանն արդեն իսկ իրականացնում է բողոքի նախնական քննությունը: Այսպիսով, վճռաբեկությունը նաև քրեական դատավարության ինքնուրույն փուլ է՝ կազմված վճռաբեկ բո-

³⁸Յայ աստանի Յանրապետության քրեական դատավարություն, «Ընդհանուր մաս», (4-րդ հրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով), դասագիրք լուսինների համար (խմբագրություն՝ Գ.Ս. Ղազիսյանի), Երևանի համալս. հրատ., Երևան, 2006, էջ 16:

³⁹Տե՛ս **Ռ.Լ.Մելիքյան**, նշված աշխատությունը, էջ 332, **Cyxosa O.A.**, նշված աշխատությունը, էջեր 29-30:

դոքարկման և բողոքի նախնական քննության (պարտադիր ենթափուլ) և բողոքի ըստեության քննության (ֆակուլտատիվ ենթափուլ, քանի որ այս ենթափուլ բողոքն անցնում է միայն այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում) ենթափուլերից:

§2. Վճռաբեկ վերանայման խնդիրները: Վճռաբեկության գործառնության ին դերը դատական վերանայման համակարգում

Քրեադատավարական ցանկացած ինստիտուտի, այդ թվում՝ վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի իրավական երկայնք, վճռաբեկ ատյանի դատարանի գործունեության եղանակները մեծապես կանխորոշվում են դրա առջև դրված խնդիրներով: Դատական ակտերի վերանայման այս ձևի առջև դրված խնդիրների բացահայտումը հիմնաբար այն նշանակություն կարող է ունենալ դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման հետ կապված առանձին հարցերի օրենսդրական կարգավորման և որամենակարևորն է դատական համակարգում վճռաբեկ ատյանի դատարանի տեղի և դերի հստակեցման համար: Ժամանակին ռուս նշանավոր դատավարագետ Ի.Յ.Տոյնիցկին բավական հետաքրքիր դիտարկում է արել առայն, որ վճռաբեկության ինստիտուտը հետապնդում է երկու բնույթի խնդիրներ՝ դատական-քաղաքական և դատական-գործնական: Դատական-քաղաքական խնդիրը վերջինիս բնորոշմամբ վճռաբեկ դատարանին հաղորդում է դատական հսկողության բարձրագույն մարմնի բնույթ և նշանակություն, իսկ ինքնին վճռաբեկությունը դառնում է իշահ օրենքի իրականացվող գործունեություն՝ կտրված գործի երկայնքից: Դատավարագետի խոսքերով՝ դատական-գործնական խնդրի վրա է հիմնված վճռաբեկությունը՝ իշահ գործի, երբ վճռաբեկ դատարանի որոշումը սահմանափակվում է միայն այդ կոնկրետ գործի ճակատագիրը լուծելով⁴⁰: Ըստեության նույն դատական-քաղաքական և դատական-գործնական խնդիրներ են առանձնացնում այն դատավարագետները, որոնց համոզմամբ դատական ակտերի վերանայման այս ձևը կոչված է համապատասխանաբար՝ նպաստելու քրեական, քրեադատավարական և մյուս օրենքների ճիշտ մեկնաբանությանը և կիրառմանը (դատական

⁴⁰Տե՛ս **Фойницкий И.Я.**, Курс уголовного судопроизводства. Том 2, Изд. 3-е. – С. -Пб.: Типография т-ва «Общественная Польза», 1910, էջ 520:
file:///C:/Users/USER/Downloads/1foynitskiy_i_ya_kurs_ugolovnogo_sudoproizvodstva_tom_2.pdf

պրակտիկայի ղեկավարումը), աջակցելու քրեական գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը և ապահովելու մարդու և քաղաքացու իրավունքների և ազատության նենդանի պաշտպանությունը⁴¹:

Դատական սխալների ուղղումը և ըստ այդմ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատության նենդանի պաշտպանությունն առհասարակ դատական վերանայման համակարգի առջև դրված հիմնական խնդիրներից մեկն է: Եվ այս խնդրի լուծման հարցում անմասն չի կարող մնալ նաև այդ համակարգը կազմող տարրերից մեկը՝ վճռաբեկությունը: Վերջին եզրահանգման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ դատական վերանայման այս ձևը գործադրող մարմինը, որպես կանոն, երկրի բարձրագույն դատական ասյանն է, և որպես դատական իշխանության բարձրագույն մարմին՝ կոչված է իրականացնելու արդարադատություն:

Դատական ակտերի վճռաբեկ վերանայումը կոչված է լուծելու դատական վերանայման մեկ այլ կարևոր խնդիր ևս, այն է՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովումը: Այս խնդրի կարևորությունն անվիճելի է այն իմաստով, որ միասնական իրավակիրառչ ափանիշների մշակումն օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի, իրավունքի գերակայության, իրավական որոշակիության հիմնարար արժեքների ապահովման գործունե մեխանիզմ է⁴²: Պետք է համաձայնել տեսական գրականության մեջ արտահայտված այն կարծիքի հետ, որ բարձրագույն դատական ասյանների կողմից օրենքի միատեսակ մեկնաբանությունը և ըստ այդմ միասնական դատական պրակտիկայի ապահովումը օբյեկտիվ անհրաժեշտություն է՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ անընդհատ փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ բարդ իրավական խնդիրներ է առաջացնում իրավակիրառ

⁴¹Տե՛ս **Ковтун Н.Н.**, Судебный контроль в уголовном судопроизводстве России, Монография / Н.Н. Ковтун. - Н. Новгород: Нижегородская правовая академия, 2002, էջ 85, Sarstedt W Die Revision in Strafsachen. Essen, 1962, էջ 31, մեջբերումն ըստ **Лантух Н.В.**, նշված աշխատությունը, էջ 81:

⁴²Տե՛ս **Быстров А.Н.**, Проблемы обеспечения единообразия в истолковании правовых норм судами общей юрисдикции и арбитражными судами (на примере Закона об ОСАГО). Общество и право, 2009.

<http://cyberleninka.ru/article/n/problemy-obespecheniya-edinoobraziya-v-istolkovanii-pravovyh-norm-sudami-obschey-yurisdiksi-i-arbitrazhnymi-sudami-na-primere-zakona> **Юревич И.В.**, Роль Верховного суда Украины в обеспечении единства правопонимания/Проблемы законности, No 116, 2011 <http://cyberleninka.ru/article/n/rol-verhovnogo-suda-ukrainy-v-obespechenii-edinstva-pravoponimaniya>

պրակտիկայում, օրենսդրական կարգավորման բացերին արագ արձագանքելու անհրաժեշտությունը, իրավական համակարգի աստիճանական համապատասխանեցումը՝ իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին⁴³: Այս խնդրի կարևորությունն ընդգծել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ Եվրոպական դատարանը)⁴⁴: Իր նախադեպային իրավունքում Եվրոպական դատարանը արձանագրել է, որ բարձրագույն դատական ատյանների վրա է դրված ստորադաս դատարանների համար ուղղորդող նշանակություն ունեցող մեկնաբանություններ տալու պարտականությունը: Հակառակ պարագայում, ինքնին բարձրագույն դատական ատյանը դառնում է իրավական անորոշության աղբյուր՝ խաթարելով հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ⁴⁵: Քննարկվող գործառույթը դիտարկելով որպես իրավունքի (իրավական օրենքների) գերակայության երաշխիք՝ «օրենքի միատեսակ կիրառություն և մեկնաբանություն», «միասնական դատական պրակտիկա» եզրույթների բովանդակությունը բացահայտելիս տեսաբանները դրանց էությունը իրավաչափորեն չեն սահմանափակում միայն գործող օրենսդրության դրույթների միատեսակ մեկնաբանությամբ և կիրառությամբ՝ նշելով, որ ցանկացած բովանդակության նորմատիվ ակտերի պահանջների ձևական պահպանումը բացառում է մարդու իրավունքներով, իրավունքի համընդհանուր սկզբունքներով առաջնորդվելու անհրաժեշտությունը և թույլատրում է այդ թվում նաև ոչ իրավական օրենքների կիրառու-

⁴³Տե՛ս *Скитович В.В., Седельник В.В.*, Правосудие и правоохранительная деятельность в евразийском пространстве К вопросу об имплементации судебного прецедента в правовую систему Республики Беларусь.

<http://www.eurasian-advocacy.ru/pravosudie-i-pravookhranitel'naya-deyatelnost-v-evrazijskom-prostranstve/1468-k-voprosu-ob-implementatsii-sudebnogo-pretsedenta-v-pravovuyu-sistemu-respubliki-belarus>

Вишневский Г.А., Единство судебного правоприменения как способ обеспечения верховенства права.

<http://ecsocman.hse.ru/data/2012/01/06/1270397099/2-2011-4.pdf>

Цвайгерт К., Кетц Х., Введение в сравнительное правоведение в сфере частного права: В 2 т.: Т.1: Основы. Пер. с нем. — М.: Междунар. отношения, 2000.—Էջ 403//

<http://www.twirpx.com/file/139935/> *Տ.Թորոյ ան*, Իրավունքի աղբյուրները գլոբալացման պայմաններում, Օրինականություն, N72, 2012, էջ 63:

⁴⁴Տե՛ս *S.W. v. the United Kingdom*, 1995 թվականի նոյեմբերի 25-ի վճիռ, գանգատ թիվ 20166/92, կետ 36, *C.R. v. the United Kingdom*, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, գանգատ թիվ 20190/92, կետ 34:

⁴⁵Տե՛ս *Beian v. Romania*, 2007 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, գանգատ թիվ 30658/05, կետ 39, *Pérez Arias v. Spain*, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 32978/03, կետ 27:

մը: Մի շարք տեսաբաններ իրավաչ ափորեն զարգացնում են այն գաղափարը, որ դատական մեկնաբանության դերն ու նշանակությունն օրենքի դրույթների՝ իրավունքի համընդհանուր սկզբունքներին համապատասխան մեկնաբանության վրա հիմնված միասնական դատական պրակտիկայի ձևավորումն է⁴⁶: Այսպիսով, տեսության մեջ օրենքի միատեսակ կիրառության ապահովման շրջանակներում իրավաչ ափորեն դիտարկվում է նաև իրավունքի զարգացման գործառույթը, որը կոչված է բացառել ու դատական իշխանության մարմինների կողմից ոչ իրավական օրենքների կամ օրենքների ոչ իրավական մեկնաբանության կիրառությունը, և ըստ այդմ ենթադրում է առկա օրենսդրական կարգավորումների մեկնաբանությունը սահմանադրական սկզբունքներին, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում գործող՝ պետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթներին, վերազգային դատական մարմինների պրակտիկայում մշակված չափանիշներին համապատասխան: Այս գործառույթի էությունը հանգամանորեն վերհանելու համար, կարծում ենք, պետք է անդրադառնալ դատարանի իրավա մեկնաբանողական գործունեության բովանդակությանը և դրասահմաններին. արդյոք դատարանի իրավամեկնաբանողական գործունեությունը ենթադրում է նաև դատական իրավաստեղծագործությունը: Խնդիրն այն է, որ ռոմանագերմանական իրավական ընտանիքի շրջանակներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը օրենքն է, իսկ դատական նախադեպի՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուրի գոյությունը՝ խնդրահարույց, արդիական է դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից օրինաստեղծ (իրավաստեղծ) գործունեության իրականացման և օրենսդիր մարմնի գործառույթների հնարավոր յուրացման խնդիրը⁴⁷: Տեսական առանձին աղբյուր-

⁴⁶Տե՛ս **Вишнеевский Г.А.**, նշված աշխատությունը, **Силаева О.С.**, Судебный прецедент как источник права в России. Вестник Челябинского государственного университета, 2011, N19 (234), էջեր 13-18, **Муромцев С.А.** Право и справедливость // Сборник правоведения и общественных знаний. М., 1983, Т. 1, էջ 11:

⁴⁷Տե՛ս **Скитович В.В., Седельник В.В.**, նշված աշխատությունը, **Адыгезалова Г.Э.**, Судебный прецедент как основной источник права в теории О. Холмса, Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики, N3-1 / 201. <http://cyberleninka.ru/article/n/sudebnyy-pretседent-kak-osnovnoy-istochnik-prava-v-teorii-o-holmsa> **Силаева О.С.**, Судебный прецедент как источник права в России. Вестник Челябинского государственного университета. 2011, N19(234) <file:///C:/Users/User/Downloads/sudebnyy-pretседent-kak-istochnik-prava-v-rossii.pdf> **Рожнов А.П.** К вопросу о признании судебной практики юридическим источником уголовного права Вестник Волгоградского государственного университета. Серия 5:

ների ուսումնասիրությանը վկայում է, որ դատական իրավաստեղծագործությանը որոշակիորեն ճանաչված իրողություն է: Ընդ որում, տարանջատելով օրենսդիր և դատական իշխանության խնդիրները, դատական իրավաստեղծագործությունը կապում է օրինաստեղծ գործունեության հիմնական գամայն տարբեր՝ իրավակիրառ գործունեության հետ. դատարանի խնդիրը ոչ թե սոսկ օրենքի տառը կոնկրետ հասարակական հարաբերությունների նկատմամբ կիրառելն է (ձևական արդարդատություն), այլ դրանց ստեղծագործական մեկնաբանությունը (creation du droit) կամ օրենքի ոգին վերհանելը, որը ենթադրում է ոչ թե սոսկ օրենքի դրույթների պարզաբանումը, այլ և առանձին դեպքերում օրենքները զարգացնելը և լրացնելը, այլ կերպ՝ օրենսդրական բացերի լրացնելը կամ հնարավոր հակասությունները լուծելը՝ ապահովելով իրավունքի գերակայության գաղափարի վրա հիմնված արդար դատական ակտի կայացումը⁴⁸: Այս պարագայում իրավական սկզբունքների հիման վրա դատարանի իրավական դիրքորոշումների, այլ կերպ՝ իրավական նորմերի մշակումը ոչ միայն արդարադատության իրականացման միջոց են, այլ նաև գլխավոր նպատակ⁴⁹: Առանձին տեսաբանների կարծիքով դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է լրացնել օրենսդրական կարգավորման բացերն ու վերացնել առկա թերությունները, հակառակ պարագայում դատարանի գործողությունները կարող են գնահատվել որպես իրաժարում արդարադատության իրականացումից⁵⁰:

Юриспруденция. Выпуск №1/ 2012. <http://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-priznanii-sudebnoy-praktiki-yuridicheskim-istochnikom-ugolovnogo-prava>

⁴⁸Տե՛ս **F. Terre (ed)**, *Le discours et le code: Portalis deux siecles apres le Code Napoleon* (Paris: LexisNexis Litec, 2004). **A.T. von Mehren and J.R. Gordley**, *The Civil Law System: An Introduction to the Comparative Study of Law* (Boston, Mass. and Toronto: Little, Brown, 2nd ed, 1977), էջ 55, **J. Ghestin, G. Goubeaux, and M. Fabre-Magnan**, *Traite de droit civil. Introduction generale / sous la direction de Jacques Ghestin* (Paris: LGDJ, 4th ed, 1994), էջեր 434-442, **J.Foyer**, «Loi et jurisprudence» in *Terre_ (ed)*, *Le discours et le code: Portalis deux siecles apres le Code Napoleon* (Paris: LexisNexis Litec, 2004), էջ 28, **F. Zénati**, *La jurisprudence* (Paris: Dalloz, 2001), էջեր 221-224, մեջբերումներն ըստ՝ **Jan Komarek**, *Judicial lawmaking and Precedent in Supreme Courts*, London School of Economics & Political Science (LSE), Legal Studies Working Paper No. 4/2011, էջ 19, **Лившиц Р.З.**, Судебная практика как источник права. –М.: Институт государства и права Российской Академии Наук, 1997, էջեր 14-15:

⁴⁹Տե՛ս **Гаджиев Г.А.**, *Российская судебная доктрина верховенства права: двадцать лет спустя, Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире / Сборник статей. Ответственные редакторы: В.Д. Зорькин, П.Д. Баренбойм* – М.: ЛУМ, Юстицинформ, 2013. – էջեր 215, 220 և 222, 228-229: **Жуков В.М.**, *К вопросу о судебной практике как источнике права. Судебная практика как источник права.* –М.: Институт государства и права Российской Академии Наук, 1997, էջեր 18-19:

⁵⁰Տե՛ս **P. Malaurie and P. Morvan**, *Droit civil: introduction generale* (Paris: Defrénois, 2nd ed, 2005), 265 with further references, 278, մեջբերումն ըստ՝ **Jan Komarek**, նշված աշխատությունը, էջ 19: **Жуков В.М.**, նույն տեղում:

Ընդ որում, օրենքի և դատական իշխանության մարմինների կողմից մշակված կանոնների հարաբերակցության խնդրի առնչությամբ իրավաչափ ենք համարում այն մոտեցումը, որ դատական ակտում սահմանված կանոնը պետք է գործի այնքան ժամանակ, մինչև օրենսդիրը կհաստատի այն՝ համանման օրենսդրական կարգավորում սահմանելով կամ կփոփոխի կամ ընդհանրապես կվերացնի այն՝ նոր օրենքներ ընդունելու, դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու ճանապարհով⁵¹: Չաշվի առնելով դատական մեկնաբանության դերի և նշանակության վերաբերյալ կատարված վերլուծությունը՝ կարծում ենք՝ կարելի է դիտարկում անել առայն, որ բարձրագույն դատական ատյանի կողմից օրենքի իրավական մեկնաբանության ապահովումը, այդ թվում՝ Կոնվենցիայի դրույթների, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո օրենսդրական կարգավորման թերությունների և բացերի վերհանումը, օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի բուն էությունն է. գործառույթ, որի իրականացումն ինքնասպասակ է և ի վերջո ուղղված է իրավունքի գերակայության նվաճմանը: Օրենսդրական կարգավորման բացի լրացման օրինակներ կարելի է գտնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ: Այսպես, օրինակ, **Գ.Միքայելյանի** գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի կայացրած ԵԱԴԴ/0085/06/09 որոշումը որոշումը, որով ձերբակալված և կալանավորված անձի դատավարական կարգավիճակից զատ նախատեսվեց նաև բերվածի դատավարական կարգավիճակը (ըստ էության ներմուծվեց նոր սուբյեկտ): Վ.Մինասյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի ՀՀՔԲԴՅ/0106/01/08 որոշման մեջ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ կալանքի ժամկետի կասեցման հնարավորությունն նախատեսող՝ Օրենսգրքի 138-րդ հոդվածը հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, Վճռաբեկ դատարանը սահմանել է նախաքննական մարմնի կողմից գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ նաև անձի կալանքի հարցը լուծելու որոշակի իրավակարգավորումներ: Տ.Քամալյանի գործով 2010 թվականի մարտի 26-ին կայացրած

⁵¹Տե՛ս *Jan Komarek*, նույն տեղում:

ԵՇԴ/0097/01/09 որոշմամբ Վճռաբեկ դատարանն ուղղակիորեն ներմուծեց դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցը և ուծելիս տուժողի դիրքորոշումը ճշգրտելու պարտադիր իրավական պահանջ, որը բացակայում է Օրենսգրքում: Նշված որոշումներում ակնհայտ է Վճռաբեկ դատարանի կողմից օրենսդրական բացերի և բացման գործառույթի իրականացումը: Այդուհանդերձ, դրա իրավաչափությունը հիմնավորող փաստարկ, կարծում ենք, կարող է լինել այն, որ նշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով Վճռաբեկ դատարանն ապահովել է համապատասխան խնդիրների առնչությամբ Կոնվենցիայի դրույթների, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ինկորպորացումը մեր ներափոխական իրավական համակարգ և դրանց անմիջական գործողությունը: Բացի այդ, օրինակ, նույն Վ.Մինասյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումը⁵² գործնականում և այն կիրառություն է ստացել, թեև մինչև օրս օրենքում համապատասխան փոփոխություններ չեն կատարվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող են եզրահանգել, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման և մասնավորապես իրավունքի զարգացման գործառույթի իրացման շրջանակներում բարձրագույն դատական ատյանը կոչված է իրականացնելու իրավաստեղծ գործունեություն: Իրավունքի զարգացման գործառույթը զուտ օրենքների՝ դրանց տառին խիստ համապատասխան, իրավամեկնաբանությամբ սահմանափակելը դատարանի գործունեությունը դարձնում է ինքնանպատակ, քանի որ դատարանը խնդիր ունի ոչ թե սոսկ վեր հանելու առկա օրենսդրական կարգավորման բացերն ու թերությունները, այլ՝ նուրաբանչյուր կոնկրետ դեպքում առաջարկելու իրավական և ուժումներ՝ կանխելու համար իրավական վակուումի առաջացումը և ապահովելու անձի իրավունքների և ազատությունների իրական պաշտպանություն:

Տեսություն մեջ առանձնացվում է բարձրագույն դատական ատյանների կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման եր-

⁵²Օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած կարգավորումների՝ կոնվենցիոնալ պահանջներին անհամապատասխանությունն արձանագրել է նաև Եվրոպական դատարանը Մինասյանն ընդդեմ Հայաստանի գործով 2014 թվականի ապրիլի 18-ի վճռում:

կուլ հիմնական եղանակ. դատական պրակտիկայի ամփոփման արդյունքների հիման վրա ղեկավար պարզաբանումներ տալը (աբստրակտ մեկնաբանություն)⁵³, ինչպես նաև կոնկրետ գործի քննության կապակցությամբ հետագայում նմանատիպ գործերի քննության ժամանակ պարտադիր նախադեպեր ստեղծելը (կոնկրետ մեկնաբանություն): Բարձրագույն դատական ատյանների կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման վերը նշված երկրորդ եղանակն արդարացիորեն կապվում է դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի ձևավորման հետ: Ինչպես նշվում է արտասահմանյան տեսական գրականության մեջ, ընդհանուր իրավունքի երկրներում դատավորները ստեղծում են իրավունք և դատական նախադեպի ուսմունքը ընդհանուր իրավունքի ավանդույթներին պատկանող ամերիկյան իրավական համակարգի պարադիգմատիկ առանձնահատկությունն է⁵⁴: Այդուհանդերձ, այս գործառույթների իրականացումը խորթ է նաև մայրցամաքային իրավունքի երկրների դատական իշխանության բարձրագույն մարմիններին, որոնց դերակատարությունն այս հարցում իհարկե փոքր-ինչ այլ բնույթ ունի: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ֆորմալ առումով պարտադիր նախադեպի (*stare decisis*) կանոնի բացակայությանը: Այսինքն, այստեղ օրենս-

⁵³Այսպես, օրինակ, բարձրագույն դատական ատյանի կողմից օրենքի միատեսակ կիրառության և միասնական դատական պրակտիկայի ապահովման ուղղույն եղանակ էր ԽՍՀՄ Գերագույն դատարանի այլ ենումի ղեկավար պարզաբանումների ինստիտուտը, որոնք, ինչպես նշում են տեսաբանները, իրավունքի աղբյուր էին, քանի որ ստորադաս դատարանների դատական ակտերում հաճախ հղում էր կատարվում դրանց՝ որպես գործի լուծման իրավական հիմքերի: Ընդ որում, հետագայում նաև օրենքի ուժով է սահմանվել դրանց պարտադիր բնույթը: Ժամանակակից պայմաններում ՌԴ քրեական դատավարությունում դատական պրակտիկայի միասնականության ապահովման գործառույթը սահմանադրորեն վերապահված է Գերագույն դատարանին (ՌԴ Սահմանադրության 126-րդ հոդված): Եվ այս գործառույթի իրացման հիմնական մեխանիզմը դատական պրակտիկայի առանձին հարցերով պարզաբանումներ տալու ինստիտուտն է: Տե՛ս **Жуйков В.М.**, նշված աշխատությունը, էջ 16, **Лившиц Р.З.**, Судебная практика как источник права. –М.: Институт государства и права Российской Академии Наук, 1997, էջեր 7-8, **Дикарев И.С.**, Механизмы обеспечения единства судебной практики в уголовном процессе, Власть, № 8/2011, էջ 149//<http://cyberleninka.ru/article/n/mehanizmy-obspecheniya-edinstva-sudebnoy-praktiki-v-ugolovnom-protseesse>//Практика применения Уголовно-процессуального кодекса Российской Федерации Актуальные вопросы судебной практики, рекомендации судей Верховного Суда РФ по применению уголовно-процессуального законодательства на основе новейшей судебной практики.<http://www.vsfra.org/library/%D0%9F%D1%80%D0%B0%D0%BA%D1%82%D0%B8%D0%BA%D0%B0%20%D0%BF%D1%80%D0%B8%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F%20%D0%A3%D0%B3%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B2%D0%BD%D0%BE%D0%BF%D1%80%D0%BE%D1%86%D0%B5%D1%81%D1%81%D1%83%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE%D0%B3%D0%BE%20%D0%BA%D0%BE%D0%B4%D0%B5%D0%BA%D1%81%D0%B0%20%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B9%D1%81%D0%BA%D0%BE%D0%B9%20%D0%A4%D0%B5%D0%B4%D0%B5.pdf>

⁵⁴ Տե՛ս **Jan Komarek**, նշված աշխատությունը, էջ 3:

քի միատեսակ կիրառությունն ապահովում է ոչ թե պարտադիր նախադեպեր ստեղծելու, այլ այն հանգամանքի ուժով, որ ստորադաս դատարանները հակված են հետևելու բարձրագույն դատական ատյանների կողմից տրված մեկնաբանություններին՝ խուսափելու համար ապագայում իրենց կայացրած դատական ակտերի հնարավոր բեկանումից⁵⁵: Սակայն վերջին տարիներին այս տարբերությունն աստիճանաբար զիջում է իր դիրքերը⁵⁶: Անկախ դեյուրե կամ տեսություն մեջ դատական նախադեպի՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուրի ձևական ճանաչելուց, գործնականում ռոմանագերմանական իրավական ընտանիքի շրջանակներում գնալով աճում է դատական նախադեպի դերը⁵⁷: Այդուհանդերձ ինքնին այս իրավական ընտանիքի շրջանակներում թե՛ օրենսդրական և թե՛ տեսական մակարդակում տարբերել վերաբերմունքը դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի գոյության հարցին⁵⁸: Ընդ որում, նշված իրավական համակարգի որոշ երկրներում այն անգամ ճանաչվում է որպես իրավունքի ձևական-իրավաբանական աղբյուր: Այսպես, օրինակ, Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ իրավական նորմը կոնկրետ հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվի՝ դրանում պարունակվող դրույթների տառացի բովանդակությանը կամ մեկնաբանությանը համապատասխան: Կոնկրետ իրավական նորմի բացակայության դեպքում դատավորը գործը պետք է լուծի գոյություն ունեցող սովորույթային իրավունքի նորմերին համապատասխան: Իսկ նաև սովորույթային նորմերի բացակայության դեպքում դատարանին օրենքով վերապահված է իրավական նորմեր ստեղծելու՝ օրենսդրի գործառույթ՝ պայմանով, որ նման օրինակ գործունեությունը

⁵⁵ Տե՛ս Sofie **M.F. Geeroms**, նշված աշխատությունը, **Лантух Н.В.**, նշված աշխատությունը, էջեր 67-82:

⁵⁶ Տե՛ս **Mauro Cappelletti**, “The Doctrine of Stare Decisis and the Civil Law: A Fundamental Difference or no Difference at All?”, (1981), էջեր 381-395:

⁵⁷ Տե՛ս **Богатырев В.В., Юдина Е.В.**, Унификация места и роли судебного прецедента в правовых системах мира и становление его как источника глобального права, Вестник Владимирского юридического института N4(9), 2008, էջեր 108-109, **Տ.Թրոսյան**, նշված աշխատությունը, էջ 63: **Давид Р., Жоффре-Спинози К.**, Основные правовые системы современности. М., 1998, էջ 107, <http://lib.ru/PRAWO/rene.txt>, F. Zénati, «La nature de la Cour de cassation» (Bulletin d’information de la Cour de cassation no. 575, 15 April 2003), at <http://www.courdecassation.fr>

⁵⁷ Տե՛ս **Foster N.**, German Law and Legal System. Mayfield, 1993, էջ 47, մեջբերումն ըստ **Богатырев В.В., Юдина Е.В.**, նշված աշխատությունը, էջ 109:

⁵⁸ Տե՛ս К вопросу о судебной практике как источнике права. Судебная практика как источник права. – М.: Институт государства и права Российской Академии Наук, 1997, 48 էջ, **Богатырев В.В., Юдина Е.В.**, նշված աշխատությունը:

յ ու ն իրականացնել ի ս դատավորը պետք է հաշվի առնի ձևավորված իրավական դոկտրինները և նախադեպային իրավունքը⁵⁹: Իսպանիայում ևս Գերագույն դատարանի որոշումները ձևավորում են ընդհանուր իրավական դոկտրինան, որի պահանջների խախտումը ստորադաս դատարանի դատական ակտերը Գերագույն դատարան բողոքարկելու կարևորագույն հիմքերից մեկն է⁶⁰: Սակայն անգամ այն երկրներում (Գերմանիա, Դանիա, Իտալիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Յուլանդիա, Յունաստան), որտեղ դատական իրավունքը ձևական առումով չի ճանաչվում իրավունքի աղբյուր, այդուհանդերձ գործնականում այն զգալի դերակատարություն ունի⁶¹ և ստորադաս դատարանները, որպես կանոն, հետևում են վերադաս դատական ատյանների որոշումներին, թեև կաշկանդված չեն դրանցով⁶²: Դատարանի իրավաստեղծ գործունեության հետ կապված՝ տեսական գրականության մեջ քննարկման առարկա է դատական ակտի նորմատիվ՝ նմանատիպ գործերով դրա պարտադիր նշանակության հարցը: Քննարկվում է նաև այն հարցը, թե արդյոք բարձրագույն դատական ատյանին իրավաստեղծ լիազորություններ վերապահելը վերջինիս կայացրած դատական ակտերը մեխանիկորեն պարտադիր է դարձնում ստորադաս դատարանների համար: Որոշ հեղինակներ Գերմանիայի օրինակով կարծիք են հայտնել, որ կոնկրետ գործով դատարանի իրավաստեղծ լիազորություններ վերապահելը, այն է՝ իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա կոնկրետ օրենսդրական դրույթներից շեղվելու հնարավորության ընդեմումն արդեն իսկ ենթադրում է այդ դատական ակտերին հետևելու անհրաժեշտությունը և ըստ այդմ նախադեպային համակարգի գոյությունը⁶³: Մյուսները Ֆրանսիայի օրինակով⁶⁴ հակառակ տեսակետն են արտահայտել, որ յուրաքանչ-

⁵⁹Տե՛ս Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգիրք, 1907 թվականի դեկտեմբերի 10 (2014 հունիսի 1-ի դրությամբ) // <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19070042/201407010000/210.pdf>

⁶⁰Տե՛ս *Давид Р., Жоффре-Спинози К.*, նշված աշխատությունը, էջ 108:

⁶¹Տե՛ս *Foster N.*, German Law and Legal System. Mayfield, 1993, էջ 47, *Кросс Р.* նշված աշխատությունը, էջ 32, *P. Malaurie and P. Morvan*, Droit civil: introduction generale (Paris: Defrénois, 2nd ed, 2005), էջ 265, *JJan Komárek*, նշված աշխատությունը, էջ 18:

⁶²Տե՛ս *Богатырев В.В., Юдина Е.В.*, նշված աշխատությունը, 2008, էջ 109:

⁶³Տե՛ս *J.P. Dawson*, The Oracles of the Law (Ann Arbor: The University of Michigan Law School, 1968), էջեր 461-479, 484:

⁶⁴Ֆրանսիայում ևս նախադեպեր ստեղծելու արգելքը, գործնականում աստիճանաբար ձևական բնույթ է ստանում: Ինչպես նշում է Ջ.Յ.Մարիմանը, Ֆրանսիայում դատական իշխանության մարմինները (խոսքն առավելապես վերաբերում է վճռաբեկ դատարանին) դատական ակտերում փաստացի մեկնաբանում

յ ու ը կ ո ն կ ր ե տ գ ո թ ծ ո վ ի թ ա վ ա կ ան ն ո թ մ ս ա հ մ ան ե լ ու լ ի ա զ ո թ ու թ -
յ ու ն ը դ ե ճ ն ս չ ի ե ն թ ա դ թ ու մ , ո թ ա յ ն պ ար տ ա դ ի թ ն շ ան ա կ ու թ յ ու ն ու -
ն ի մ յ ու ս դ ատ ար ան ն եր ի հ ամ ար , ք ան ի ո թ դ թ ան ց ու ժ ը տ ար ա ծ վ ու մ է
մ ի ա յ ն կ ո ն կ ր ե տ գ ո թ ծ ի ն կ ատ մ ամ բ ⁶⁵:

Վ եր ը շ ար ա դ թ վ ա ծ դ ատ ո ղ ու թ յ ու ն ն եր ն ար դ ի ա կ ան ե ն ն ան Յ ա յ ա ս -
տ ան ի Յ ան ր ա պ ե տ ու թ յ ան` ո թ ա պ ե ս մ ա յ ը ց ամ ա ք ա յ ի ն ի թ ա վ ու ն ք ի եր կ թ ի
դ ատ ա կ ան հ ամ ա կ ար գ ի հ ամ ար ա յ ն ի մ ա ս տ ո վ , ո թ ա յ ս օ թ օ թ ե ն ս դ թ ա կ ան
մ ա կ ար դ ա կ ո վ ն ա խ ա դ ե պ ա յ ի ն հ ամ ա կ ար գ ի ն եր մ ու ծ մ ան հ ի մ ք եր ե ն
ս տ ե ղ ծ վ ե լ : Ա յ ս ա պ ե ս , Յ Յ դ ատ ա կ ան օ թ ե ն ս գ ը ք ի 15-ր դ հ ո ղ վ ա ծ ի 4-ր դ մ ա -
ս ի հ ամ ա ճ ա յ ն` ո թ ո շ ա կ ի փ ա ս տ ա կ ան հ ան գ ամ ան ք ն եր ու ն ե ց ո ղ գ ո թ ծ ո վ
վ ճ ճ ա ք ե կ դ ատ ար ան ի դ ատ ա կ ան ա կ տ ի հ ի մ ն ա վ ո թ ու մ ն եր ը (ա յ դ թ վ ու մ`
օ թ ե ն ք ի մ ե կ ն ա ք ան ու թ յ ու ն ն եր ը) պ ար տ ա դ ի թ ե ն դ ատ ար ան ի հ ամ ար
ն ու յ ն ան մ ան փ ա ս տ ա կ ան հ ան գ ամ ան ք ն եր ո վ գ ո թ ծ ի ք ն ն ու թ յ ան ժ ամ ա -
ն ա կ , բ ա ց ա ճ ու թ յ ամ բ ա յ ն դ ե պ ք ի , եր բ վ եր ջ ի ն ս ծ ան ր ա կ շ ի ճ փ ա ս տ ար կ -
ն եր ի մ ա տ ն ան շ մ ամ բ հ ի մ ն ա վ ո թ ու մ է , ո թ դ թ ան ք կ ի թ ա ճ ե լ ի չ ե ն
տ վ յ ա լ փ ա ս տ ա կ ան հ ան գ ամ ան ք ն եր ի ն կ ատ մ ամ բ : Ի թ հ եր թ ի ն ա յ ս ն ո թ -
մ ը կ յ ան ք ի կ ո չ ե լ ու օ թ ե ն ս դ թ ա կ ան եր ա շ խ ի ք ը օ թ ե ն ք ի մ ի ա տ ե ս ա կ
կ ի թ ա ճ ու թ յ ան հ ի մ ք ո վ բ ո ղ ո ք ը վ ար ու յ թ ը ն դ ու ն ե լ ու ա յ ն ա փ ս ի հ ի մ -
ք եր ն ա խ ա տ ե ս ե լ ն է , ի ն չ ա փ ս ի ք ե ն ս տ ո թ ա դ աս դ ատ ար ան ի կ ո ղ մ ի ց ի թ ա -
վ ա կ ան ն ո թ մ ը Վ ճ ճ ա ք ե կ դ ատ ար ան ի կ ամ ե վ ո թ ա կ ան դ ատ ար ան ի ո թ ո -
շ ու մ ն եր ու մ ար տ ա հ ա յ տ վ ա ծ ի թ ա վ ա կ ան դ ի թ ք ո թ ո շ ու մ ն եր ի ն հ ա կ ա -
ս ո ղ մ ե կ ն ա ք ան ու թ յ ամ բ կ ի թ ա ճ ե լ ը : Գ ո թ ծ ն ա կ ան ու մ ա յ ս ն ո թ մ ի կ ի -
թ ա ճ ու թ յ ան մ ա ս ի ն ե ն վ կ ա յ ու մ Վ ճ ճ ա ք ե կ դ ատ ար ան ի` Դ Վ ար ո ս յ ան ի
գ ո թ ծ ո վ 2014 թ վ ա կ ան ի դ ե կ տ ե մ բ եր ի 16-ի ՇԴ/0005/11/14 ո թ ո շ ու մ , Մ ար -
ս եր ա լ Ս Պ Շ-ի գ ո թ ծ ո վ 2015 թ վ ա կ ան ի հ ու ն ի ս ի 5-ի Ե ՇԴ/0011/11/ Դ Օ հ ան -
յ ան ի և Ա Ա ջ ամ յ ան ի գ ո թ ծ ո վ 2015 թ վ ա կ ան ի դ ե կ տ ե մ բ եր ի 18-ի
ՏԴ/0009/01/1514 և մ ի շ ար ք ա յ լ ո թ ո շ ու մ ն եր ը , ո թ ո ն ց ու մ , ի թ ի վ ս ա յ -
լ ո ց , վ ճ ճ ա ք ե կ բ ո ղ ո ք ը վ ար ու յ թ ը ն դ ու ն ե լ ու հ ամ ար և բ ո ղ ո ք ար կ -
վ ո ղ դ ատ ա կ ան ա կ տ եր ը բ ե կ ան ե լ ու հ ամ ար հ ի մ ք է ծ ա ճ ա յ ե լ դ թ ան ց
(դ թ ան ց ու մ կ ի թ ա ճ վ ա ծ ա ճ ան ձ ի ն ն ո թ մ եր ի մ ե կ ն ա ք ան ու թ յ ան) հ ա կ ա -

ե ն օ թ ե ն ք ը` ս տ ե ղ ծ ե լ ո վ ի թ ա վ ու ն ք ի ա ղ բ յ ու ը ծ ա ճ ա յ ո ղ` ն ո թ ի թ ա վ ա կ ան
կ ար գ ա դ թ ա գ թ եր պ ար ու ն ա կ ո ղ դ ատ ա կ ան ն ա խ ա դ ե պ եր , ի ս կ Ֆ թ ան ս ի ա կ ան ի թ ա վ ա կ ան
հ ամ ա կ ար գ ն ա ս ի ճ ան ա ք ար մ եր ծ ե ն ու մ է Ե վ ո թ ա կ ան ը ն դ ի ան ու ը ի թ ա վ ու ն ք ի ն :
Տե՛ս **J.H.Merryman**, *The French Deviation*, *The American Journal of Comparative Law* Vol. 44, No. 1
(Winter, 1996), 109-119 է ջ եր :

⁶⁵Տե՛ս **Jan Komárek**, ն շ վ ա ծ ա շ խ ա տ ու թ յ ու ն ը , է ջ 18:

սուբյեկտները Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ վճռաբեկ վերանայման օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը իրավական որոշակիության և իրավունքի գերակայության հիմնարար արժեքներին համահունչ արդարադատության ունենալու գործունե երաշխիք է: Առավել ընդհանուր ձևով այս գործառույթի էությունն առկա իրավական կարգավորումների մեկնաբանության է այն հաշվով, որ ապահովվի դրանց միատեսակ կիրառությունը դատական իշխանության մարմինների կողմից այն դեպքերում, երբ որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ միևնույն նորմը տարբեր գործերով կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ: Սակայն օրենքի միատեսակ կիրառությունը չի սահմանափակվում միայն օրենքի տառացի մեկնաբանությամբ և առանձին դեպքերում ենթադրում է դատական իրավաստեղծագործության իրականացում, որը կարող է հանգեցնել անգամ նոր իրավական կանոններ սահմանելուն այն դեպքերում, երբ առկա օրենսդրական կարգավորումները ոչ իրավական են կամ առկա են օրենսդրական կարգավորման բացեր: Բարձրագույն դատական ատյանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացման և ըստ այդմ միասնական դատական պրակտիկայի ձևավորման մեխանիզմը կարելի է ներկայացնել որոշակի փուլային համակարգի տեսքով: Նախ, կոնկրետ գործի քննության և լուծման շրջանակներում իրավական նորմը ենթարկվում է որոշակի դատական իրավամեկնաբանության: Ապա օրենսդրորեն երաշխավորվում է բարձրագույն դատական ատյանի մեկնաբանությունների պարտադիր լինելը ստորադաս դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, իսկ բարձրագույն դատական ատյանին վերապահվում են որոշակի գործունե լծակներ՝ ապահովելու համար ստորադաս դատարանների կողմից իր իրավական դիրքորոշումների միասնական կիրառությունը:

Անդրադառնալով դատական վերանայման համակարգում վճռաբեկության տեղին և դերին՝ կարծում ենք՝ իբրև ելակետ պետք է ընդունել վճռաբեկ վերանայման քննարկված խնդիրների

ողջ ամիտ հավասարակշռության գաղափարը: Դատական իշխանության մարմինների համակարգի ընդհանրապես, և դատական վերանայման համակարգի արդյունավետ գործունեությունը մասնավորապես, մեծապես կախված է այդ համակարգը կազմող տարրերի ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ առումով ռացիոնալ կազմակերպումից: Դատական իշխանության տարբերատյանների և հատկապես վճռաբեկ դատարանի գործառնության ին (\$ֆունկցիոնալ) դերի հստակեցումը խիստ արդիական է ԶԶ դատական իշխանության մարմինների համակարգի համար: Խոսքը, մասնավորապես վերաբերում է Վճռաբեկ դատարանի սահմանադրարվակայան կարգավիճակն ամրագրող՝ 2005 թվականի փոփոխություններով ԶԶ սահմանադրության 92-րդ հոդվածին տրվող տարաբնույթ մեկնաբանություններին: Դատական տարբերատյանների գործառնության դերի սահմանազատման չափորոշիչները մշակելիս իբրև հիմք կարելի է ընդունել դատական վերանայման պատմականորեն ձևավորված ավանդական մոդելները՝ իհարկե խուսափելով մեխանիկական ընդօրինակումից: Անգլոսաքսոնական և ռոմանագերմանական իրավական ընտանիքի առանձին երկրներում գործող դատական ակտերի վերանայման ձևերի համեմատարվակայան հետազոտության արդյունքում պրոֆ. Ջ.Ա.Ջալովիչը, եզրահանգելով, որ աստիճանաբար վերանում են հստակ սահմանազծերը դատական ակտերի վերանայման տարբերի ձևերի միջև, հետաքրքրական և պատկերավոր դիտարկում է անում առայն, որ ազգային դատական վերանայման համակարգը ձևավորելիս պետք է հստակ որոշել, թե դատական ակտերի վերանայման ձևեր են ստեղծվելու, ինչ խնդիրներ են դրանք լուծելու և ինչպես պետք է դրա արդյունքում ինստիտուցիոնալ առումով կազմակերպվի դատական վերանայման համակարգը: Ընդ որում, հեղինակը նաև հատուկ ընդգծում է, որ դատական վերանայման համակարգի ձևավորման ժամանակակից միտումն առավելապես պրագմատիկ նկատառումներով, այն է՝ արդարադատության իրականացման առավել արդյունավետ և քիչ ծախսատար մեթոդներ գտնելու՝ անկասկած արդարացված մոտեցմամբ առաջնորդվելն է⁶⁶: Այսպիսով, դատական վերանայման արդյունավետ համակարգի մշակման ուղղությամբ առաջարկներ ներկայացնելու և այդ համակարգում վճռաբեկության տե-

⁶⁶Տե՛ս *J.A.Jolowicz*, նշված աշխատությունը:

ղը, դերն ու նշանակությունը վեր հանել ու համար, կարծում ենք, օգտակար կարող է լինել ռոմանագերմանական իրավական ավանդույթների շրջանակում դատական վերանայման ավանդական համակարգերի ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Չնայած ՀՀ-ն պատկանում է ռոմանագերմանական իրավական ընտանիքին, այդուհանդերձ, հաշվի առնելով իրավական համակարգերի մերձեցման արդի միտումները (խոսքը մասնավորապես վերաբերում է ընդհանուր իրավունքի երկրների համար ավանդական պարտադիր նախադեպի սկզբունքի ներթափանցմանը ռոմանագերմանական իրավական ընտանիք) արժեքավոր կարող է լինել նաև անգլոսաքսոնական իրավական ավանդույթների ուսումնասիրությունը: Վճռաբեկության ինստիտուտի ծագումը, ինչպես արդեն նշվել է, կապված է ֆրանսիական իրավունքի հետ, և վերանայման ֆրանսիական մոդելը օրինակ է ծառայել միջարքայլ եվրոպական երկրների իրավական համակարգերի համար⁶⁷: Ֆրանսիայում գործում է դատական ակտերի ակտերի վերաքննիչ-վճռաբեկ վերանայման դասական ֆրանսիական մոդելը, որը ներմուծվել է Նապոլեոնյան 1808 թվականի օրենսգրքով: Վերոհիշյալ օրենսգրքով նախատեսված և մինչև օրս որոշակի փոփոխություններով գործող ֆրանսիայի դատական համակարգը կազմված է Ռստիկանական տրիբունալներից, որոնք քննում են մանր իրավախախտումների վերաբեր-

⁶⁷Ինչպես նշվում է տեսության մեջ, եվրոպական բազմաթիվ երկրների կողմից վճռաբեկության ինստիտուտի ներմուծումն իրենց ազգային օրենսդրական դատաշատ դեպքերում մեխանիկական էր, քանի որ այդ երկրների պատմությունն ընդհանուր ոչ մի ընդհանուր բան չուներ նախահեղափոխական ֆրանսիայի քաղաքական և պատմական հիմնախնդիրների հետ, նամանակնոր որ ինքին ժամանակակից ֆրանսիական վճռաբեկությունը մեծապես շեղվել է հետհեղափոխական ֆրանսիական վճռաբեկության ինստիտուտի սկզբունքներից: Այսպես, ֆրանսիական վճռաբեկության պատմությունը սկիզբ է առնում 1779 թվականի ֆրանսիական բուրժուական հեղափոխության ժամանակաշրջանից, որի հիմնական քաղաքական խնդիրներից մեկը դատական իշխանության մարմինների՝ նախադեպի ուժ ունեցող դատական ակտեր կայացնելու լիազորությունների սահմանափակումն էր: Եվ հենց նախադեպային իրավունքի ձևավորումը կանխելու նպատակով է հետհեղափոխական շրջանում ստեղծվում Վճռաբեկ տրիբունալը (Cour de Cassation), որն ավելի շուտ օրենսդիր իշխանության մարմին էր և կոչված էր ապահովելու օրենքի միատեսակ և ճիշտ կիրառությունը՝ պաշտպանելով օրենքը դատական իշխանության մարմինների ոտնձգությունից: Սակայն ինչպես ցույց է տալիս Վճռաբեկ տրիբունալի գարգացման պատմությունը, այն աստիճանաբար օրենսդիր իշխանության մարմնից վերածվում է դատական իշխանության բարձրագույն մարմնի: Ներկայումս, սակայն վերջինիս դերակատարումը ներկայումս ոչ այնքան օրենսդրի պահպանը լինելն է, որքան նախադեպային իրավունքում միատեսակությունն ապահովելը: Ավելի մանրամասն տե՛ս **2.3.Մարմնակազմ**, նշված աշխատությունը:

յալ գործերը, Ուղղիչ տրիբունալներից, որոնք քննում են զանցանքների (միջին ծանրության հանցագործությունների՝ միսդիմինոր) վերաբերյալ գործերը, Վերաքննիչ դատարաններից և Վճռաբեկ դատարանից, ինչպես նաև ասիզների դատարանից⁶⁸: Ֆրանսիայում չնայած ձևական առումով ժխտվում է պարտադիր նախադեպի ինստիտուտի գոյությունը, և վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հայեցողությունը խիստ սահմանափակ է, այդուհանդերձ, վերջին տարիներին, վճռաբեկ դատարանի կողմից իր գործառնությունների արդյունավետ իրականացման և մեծ թվով գործերի հոսքը կրճատելու նպատակով նախատեսվել են համապատասխան մեխանիզմներ⁶⁹: Այսպես, օրինակ, Ֆրանսիայում, բողոքարկման ազատության որոշակի սահմանափակման դրսևորում է միայն հատուկ փաստաբանների կողմից վճռաբեկ բողոք բերելու պահանջը, որոնց թիվը խիստ սահմանափակ է: Նույն նպատակին է ծառայում նաև վճռաբեկ դատարանում բողոքն անընդունելի ճանաչելու նախնական պարզեցված ընթացակարգի ներմուծումը⁷⁰: Հատուկ փաստաբանների միջոցով բողոք բերելու ինստիտուտը Ֆրանսիայի օրինակով նախատեսվել է նաև Բելգիայում, որտեղ ևս վճռաբեկ դատարանը (Hof van Cassatie) օրենքի միատեսակ կիրառության ապահովման պարտականություն է կրում⁷¹: Գերմանիայում դաշնային (\$եդերալ) դատարանները բարձրագույն դատական անյաններ են (Courts of Last resort), որոնք **կոչված են ապահովելու դաշնային օրենքների միատեսակ մեկնաբանությունը և կիրառությունը**: Ներկայումս Գերմանիայում գործող հինգ դաշնային դատարաններից Դաշնային Գերագույն դատարանը (Bundesgerichtshof) բացառապես իրավունքի նորմերի խախտման հիմքով ռեիզիայի կարգով վերանայում է Հողի դատարանի և Հողի Գերագույն դատարանի՝ քաղաքացիական և քրեական գործերով կայացրած դատական ակտերը: Գերմանական ռեիզիոն համակարգը դատական ակտերի վճռաբեկ վերանայումից տարբերվում է վերանայման մատչելիության որոշակի սահմանափակմամբ: Այսպես, եթե դատական ակտե-

⁶⁸Տե՛ս **Ռ. Ն. Մելիքյան**, Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 35:

⁶⁹ Այս մասին, ավելի մանրամասն կխոսվի սույն աշխատության 2-րդ գլխում:

⁷⁰ Ավելի մանրամասն տե՛ս, **Sofie M.F. Geeroms**, նշված աշխատությունը, էջեր 204-208, The role of the Court of Cassation//http://www.courdecassation.fr/about_the_court_9256.html

⁷¹ Տե՛ս **Sofie M.F. Geeroms**, նշված աշխատությունը, էջեր 208-210:

րի վճռաբեկ վերանայման ֆրանսիական մոդելը, չնայած սահմանափակման որոշակի միտումներին, ընդհանուր առմամբ ենթադրում է վճռաբեկ բողոքարկման ազատության, ապա Գերմանիայում ռեզիայի կարգով բերված բողոքն ընդունվում է վարույթ, եթե առկա է առանձնահատուկ կարևորության գործ կամ իրավունքի զարգացման կամ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար պահանջվում է Գերագույն Դաշնային դատարանի որոշումը⁷²: Բողոքարկման թույլատվական կարգի նախատեսումը նպատակ ունի հնարավորինս նվազեցնելու երկրի բարձրագույն դատական ատյանի ծանրաբեռնվածությունը, վերջինիս գործունեությունը կենտրոնացնել օրենքի միատեսակ կիրառության և իրավունքի զարգացման, այլ ոչ թե սոսկ կողմերի մասնավոր շահերի ապահովման վրա: Յենց այդ նույն նպատակներից ելնելով՝ 2001 թվականի բարեփոխումների արդյունքում ևս մեկ անգամ ընդգծվեց իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիրների առաջնահերթությունը՝ դրանով իսկ էապես սահմանափակելով դատարանի մատչելիությունը⁷³: Նույն՝ օրենքի միատեսակ կիրառության խնդրի ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ բողոքարկման թույլատվական կարգ է գործում նաև, օրինակ, Շվեդիայի Գերագույն դատարանում⁷⁴: Օրենքի միատեսակ կիրառության (դատական պրակտիկայի միասնականության) ապահովման խնդիր է դրված նաև ռոմանագերմանական իրավական ընտանիքի մի շարք այլ երկրների բարձրագույն դատական ատյանների, մասնավորապես Շվեյցարիայի՝ Քրեական գործերով դաշնային դատարանի վճռաբեկ պալատի, Իտալիայի Վճռաբեկ դատարանի, Լիտվայի, Չեխիայի, Լեհաստանի, Սլովակիայի Գերագույն դատարանների վրա⁷⁵:

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունը հստակ առանձնացումն, ինչպես արդեն նշվել է, առավել բնորոշ է ընդհանուր իրավունքի համակարգին: Մասնավորապես, բարձրագույն դատական ատյանները կոչված են ուղղորդելու ստորադաս

⁷²Այս կարգավորումը դեռևս գործում է միայն քաղաքացիական գործերով:

⁷³Տե՛ս **Sofie M.F. Geeroms**, նշված աշխատությունը, էջ 217:

⁷⁴Տե՛ս Շվեդիայի դատական վարույթի վերաբերյալ օրենսգրքի 54-րդ գլխի 10-րդ բաժին, Swedich Code of Judicial Procedure//http://www.imolin.org/doc/amlid/Sweden_Code%20of%20Judicial%20Procedure.pdf

⁷⁵Տե՛ս Судебные системы Европейских стран. Справочник/Перевод с француз. Д.И.Васильева и с англ. О.Ю. Кобякова.–М. Международные отношения, 2002// <http://padaread.com/?book=85417&pg=1>

դատական ատյաններին, խնդիր ունեն համոզվել ու, որ ստորադաս դատարանների կողմից իրավունքը մեկնաբանվել ու կիրառվել է ճիշտ և միատեսակ: Եվ այս խնդիրների արդյունավետ իրականացման նպատակով այդ դատական մարմինները կենտրոնացված են սահմանափակ թվով գործերի վրա⁷⁶: Իսկ վերջին հանգամանքը ենթադրում է դատական վերանայման (վճռաբեկ վերանայման) բողոքը վարույթ ընդունելու հայեցողությունն լայն շրջանակ: Բողոքարկման «թույլ ատվական» կարգը (Appeal on Leave, Discretionary Review) լայնորեն տարածված է անգլոսաքսոնական երկրների դատական վերանայման քրեադատավարական համակարգերում: Դրաեությունն այն է, որ բողոքարկման համար սուբյեկտը պետք է ստանա գործը լուծած կամ դատավճռի վերանայման իրավասությունը օժտված դատարանի թույլ տվողությունը: Այսպես, օրինակ, Անգլիայում բողոքարկման թույլ ատվական կարգը գործում է ոչ միայն բարձրագույն դատական ատյան՝ Գերագույն դատարան⁷⁷, այլև Համայնքների դատարան, Բարձր դատարան և Վերաքննիչ դատարան բերվող բողոքների նկատմամբ: Իսկ ԱՄՆ-ում բողոքարկման դիսկրեցիոն կարգը հիմնականում գործում է ԱՄՆ Գերագույն դատարան, ինչպես նաև նահանգային «վերին ատյանի դատարաններ» (Courts of Last Resort) բերվող բողոքների նկատմամբ, հատկապես եթե տվյալ նահանգում «միջանկյալ վերաքննիչ դատարաններ» (Intermediate Courts of Appeal) չեն գործում⁷⁸:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ընդհանուր դիտարկում անել, որ մայրցամաքային իրավական ավանդույթների շրջանակներում դատական իշխանության մարմինների համակարգի բարձրագույն օղակները հանդես են գալիս առավել ապես որպես իրավունքի դատարան և իրավասու են վճռաբեկության կամ ռեիզիայի կարգով (որն, ըստ էության նույն, ուղղակի փոքր ինչ ձևափոխված վճռաբեկությունն է), վերանայել ստորադաս դատարանի կայացրած դատական ակտերը: Ընդ որում, նույն ռոմանագերմանական իրավական ավանդույթի և նույնիսկ \$րանսիական մոդելի շրջանակներում աս-

⁷⁶Տե՛ս **J.E.Smithburn**, Appellate review of trial court decisions/ Carolina Academic Press, Durham, North Carolina, 2009, էջ 4:

⁷⁷Գերագույն դատարանը ստեղծվել է 2005 թվականի «Սահմանադրական բարեփոխումների մասին» ակտի հիման վրա և սկսել է գործել 2009 թվականի հոկտեմբերի 1-ից՝ փոխարինելով Լորդերի պալատին:

⁷⁸Տե՛ս **Ռ.Լ.Մելիքյան**, Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 34:

տիճանաբար ընդգծվում է բարձրագույն դատական ատյանների կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման (իրավունքի զարգացման) գործառույթի իրականացման կարևորությունը: Իսկ այս խնդրի հետևողական իրացումն ի վերջո հանգեցնում է դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի դերի բարձրացմանը և ընդհանուր իրավունքին բնորոշ պարտադիր նախադեպի սկզբունքի աստիճանական ներմուծմանն ուսումնասիրված երկրների իրավական համակարգ: Եվ հաշվի առնելով, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը կարող է արդյունավետ իրականացվել միայն որակյալ նախադեպեր ստեղծելու ճանապարհով, ինչն իր հերթին պահանջում է մարդկային և նյութական ռեսուրսները կենտրոնացնել սահմանափակ թվով գործերի վրա՝ դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված համապատասխան մեխանիզմները (փաստաբանների միջոցով բողոք բերելու ինստիտուտը, ընդհանուր իրավունքի երկրների բնորոշ՝ բարձրագույն դատական ատյաններ բողոքարկման թույլ տվական կարգը) ներթափանցում են նաև մայրցամաքային իրավունքի համակարգ:

Անդրադառնալով դատական վերանայման ազգային համակարգի զարգաման պատմությանը և այդ համակարգում վճռաբեկության տեղին ու դերին՝ ապապետք է նշել, որ Հայաստանի առաջին Հանրապետության քրեական դատավարությունում գոյություն ունեին և՛ վերաքննության, և՛ վճռաբեկության ինստիտուտները, որոնք վերացվեցին Հայաստանի խորհրդայնացմամբ: Նոր ձևավորվող խորհրդային քրեական դատավարությունում, որպես դատական որոշումների վերստուգման և վերանայման ձև, սահմանվեց խորհրդային վճռաբեկությունը: Խորհրդային Հայաստանում գործում էր երկաստիճան դատական համակարգ՝ ժողովրդական դատարան-գերագույն դատարան: Ժողովրդական դատարանները որպես առաջին ատյանի դատարան քննում էին ոչ բոլոր քրեական գործերը: Դրանց զգալի մասն առաջին ատյանի կարգով քննում էր Գերագույն դատարանը, որը միաժամանակ իրականացնում էր նաև դատական ակտերի վերանայումը վճռաբեկության և հսկողական վարույթի կարգով⁷⁹: Հայաստանի երրորդ Հանրապետությունում 1995 թվականին ընդունված Սահմանադ-

⁷⁹Տե՛ս **Գ.Ս. Ղազիսյան**, նշված աշխատությունը, էջ 386:

րու թյամբ նախատեսվեց եռաստիճան դատական համակարգ, իսկ արդեն 1998 թվականի օրենսգրքի սկզբնական խմբագրու թյամբ նախատեսվեց քրեական գործերով դատավճիռների վերանայման չորս տեսակ՝ վերաքննիչ վարույթ, վճռաբեկ վարույթ, հսկողական վարույթ և գործերի վերանայում նոր երևան եկած հանգամանքների հիման վրա: Յայտանի երրորդ Յանրապետության դատական վերանայման համակարգը եթե ոչ ինստիտուցիոնալ, ապա \$ուկցիոնալ առումով բնութագրվում է ծայրահեղական մոտեցումներով: Օրինակ, դատական ակտերի վճռաբեկ վերանայման ձևի օրենսդրական կանոնակարգման առումով կարելի է առանձնացնել միմյանցից սկզբունքորեն տարբեր մոդելներ: Այսպես, 1998 թվականին քրեական դատավարության օրենսգրքի ընդունմամբ քրեադատական համակարգ ներմուծված դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը, ինչպես նշում է Գ.Ս.Ղազիսյանը, օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վճռաբեկ և առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հսկողական վարույթի կարգով վերանայման ձևերի սինթեզ էր⁸⁰: Վերոհիշյալ դիտարկման համար հիմք է ծառայել գործող Օրենսգրքի սկզբնական խմբագրու թյամբ 403-րդ հոդվածը, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանը վերանայում էր վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Այս մոդելը պահպանվեց մինչև 2006 թվականի հունիսի 7-ի ՅՕ-152-Ն օրենքով Օրենսգրքում փոփոխության ենթարկելը, երբ նախատեսվեց առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վեցամսյա ժամկետում վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորություն: Այս մոդելը գործեց մինչև 2009 թվականի հունվարի 1-ը, երբ նախատեսվեց վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերը վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորություն: Ընդ որում, ՅՕ-152-Ն օրենքով նախատեսվեց նաև բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ՝ պայմանավորված Վճռաբեկ դատարանի՝ նոր օրենքի միատեսակ կիրառության և ապահովելու գործառնություն:

⁸⁰ Տե՛ս **Գ.Ս.Ղազիսյան**, նշված աշխատությունը, էջեր 400-401:

Գործող Օրենսգրքով նախատեսված վերանայման մոդելը, երբ առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են փաստի և իրավունքի հիմքով բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը՝ իրավունքի հիմքով վճռաբեկ դատարան, կարող է իրապես ծառայել դատական պաշտպանության և դատական վերանայման սահմանադրական իրավունքներին և իրար ժեք իրականացմանը՝ դատական տարբեր ատյանների գործառույթային դերի և նշանակության ուղղակի հստակեցման պայմանով: Ներկայումս հատկապես արդիական է Վճռաբեկ դատարանի սահմանադրարկական կարգավիճակի, և ըստ այդմ դատական համակարգում ունցած տեղի և դերի հստակեցումը: Այդ հանգամանքը սահմանադրական բարեփոխումների արդեն իսկ հիշատակված հայեցակարգի հիմնահարցերի համատեքստում հատուկ ընդգծել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը: 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միաստեսակ կիրառությունը: Քննարկվող նորմի՝ վերոհիշյալ խմբագրությունամբ պայմանավորված՝ խիստ արդիական էր Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ արդարադատության և օրենքի միաստեսակ կիրառության ապահովման գործառույթների հարաբերակցության հարցը, որը տեսաբանների և պրակտիկաշխատողների կողմից այն քննարկման առարկա է դարձվել⁸¹: Այսպես, հստակ չէր, թե վճռաբեկ դատարանը արդարադատություն և իրականացնելով է ապահովում օրենքի միաստեսակ կիրառությունը, թե հակառակը: Եվ թերևս Վճռաբեկ դատարանի ոչ հստակ իրավական կարգավիճակով էր պայմանավորված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում սկզբնապես հնարավոր համարվող՝ եռաստիճան հա-

⁸¹Տե՛ս Ա.Ս.Ղամբարյան, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսակական և մեթոդաբանական հիմնախնդիրներ): Եր., ՀՌՀ, հրատ., 2013 էջեր 258-280, Վ.Վ.Հովհաննիսյան, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի միաստեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրարկական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում //«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 1 (19), էջեր 64-75, Դատական իշխանությունը//սեպտեմբեր-հոկտեմբեր, 2005 N9-10, էջեր 4-11:

մակարգից երկաստիճանին անցնելու գաղափարը: Քննարկվող գործառույթների հարաբերակցության հստակեցումը սերտորեն կապված է վճռաբեկ վերանայման մեխանիզմի առջև դրված երկու հիմնական խնդիրների՝ դատական սխալների ուղղման և օրենքի միատեսակ կիրառության ողջամիտ հավասարակշռման խնդրի հետ: Թեև նշված խնդիրները միմյանց չեն փոխբացառում, այդուհանդերձ դրանցից և որևէ մեկին ակնհայտ առավելություն տալը կարող է հանգեցնել մյուսի անհամաչափ սահմանափակման: Այսպես, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթը հանգեցրել է, ինչպես արդեն նշվել է, դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման թույլատրական (դիսկրեցիոն) կարգ նախատեսելուն: Այդուհանդերձ, հարց է ծագում, թե արդյոք այս գործառույթի արդյունավետ իրականացումը պետք է դիտարկել որպես գերխնդիր և ապահովել դրա իրացումը ընդհուպ մինչև արդարադատության շահերի հաշվին: Կարծում ենք՝ բոլոր դեպքերում վճռաբեկ դատարանը՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմին, պետք է հնարավորություն ունենա իրականացնելու իր հիմնական՝ արդարադատության գործառույթը: Քննարկվող սահմանադրական նորմի մեկնաբանությունը ևս դատավարական գործառույթների եռատարր (հիմնարար-հիմնական-լրացուցիչ) դասակարգման՝ տեսականորեն մշակված մոդելը վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի վրա տեղայնացնելով՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովումը դիտվում է որպես վճռաբեկ դատարանի հիմնական դատավարական գործառույթ, որն առկա է արդարադատության հիմնարար գործառույթի հետ մեկտեղ⁸²: Ըստ այդմ, վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի ընտրողական արդարադատության իրականացումն այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալներին: Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ օրենքի միատեսակ կիրառության և արդարադատության իրականացման գործառույթների ողջամիտ հավասարակշռման ապահովման նպատակով մի կողմից պետք է շարուն-

⁸²Տե՛ս Զայաստանի Զանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրություն՝ Գ.Յարույնյանի, Ա.Վաղարշյանի.-Եր.: «Իրավունք», 2010, էջ 909:

Նակի գործել բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ՝ որպես օրենքի միատեսակ կիրառության արդյունավետ իրականացման երաշխիք: Վճռաբեկ դատարանի (քրեական պալատի) ծանրաբեռնվածության և դատավորների սահմանափակ թվի պայմաններում բոլոր բողոքները վարույթ ընդունելու և ըստ էության քննության առնելու պարագայում որակյալ դատական նախադեպեր ստեղծելու հնարավորությունն առավել, քան անհնարին կդառնար: Այսպես, օրինակ, ՀՀ Դատական դեպարտամենտից 2016 թվականի ապրիլի 13-ին ստացված թիվ Ե-2360 տեղեկանքի համաձայն՝ 2010-2015թթ. ընթացքում Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքների թիվը տատանվել է 1043-1455-ի սահմաններում՝ այսինքն՝ միջինում գերազանցել է 1000-ը⁸³: Մյուս կողմից՝ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի շրջանակից չպետք է բացառվեն անձի հիմնարար իրավունքներին և ազատությանն ենթին առնչվող դատական սխալի դեպքերը՝ ապահովելով Վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացումը: Ըստ էության հավասարակշռված կարգավորման այդ գաղափարն է զարգացվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխության և ներդրված ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանն ապահովում է **օրենքների և այլ նորմադիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը**, վերացնում է մարդու իրավունքների և ազատությանն ենթի **հիմնարար խախտումները**: Սահմանադրաիրավական այս պահանջի ինկորպորացում կարող է դիտարկվել Նախագծով առաջարկվող հավասարակշռված կարգավորման մոդելը՝ համաձայն որի բողոքն ընդունվում է վարույթ եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ եթե առկա է ոչ թե ցանկացած, այլ կոպիտ դատական սխալ՝ անկախ օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությանից: Վճռաբեկ վերանայման մատչելիության սահմանափակման իրավաչափության գրավական կարող է լինել ի վերջո ստորադաս դատարանների գործունեության արդյունավետության բարձ-

⁸³Նշված վիճակագրական տվյալների մասով տե՛ս նաև ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ ըստ տարիների համեմատական վիճակագրական վերլուծությանն ենթող http://www.court.am/files/news/3788_am.pdf//http://www.court.am/files/news/3388_am.pdf//http://www.court.am/files/news/2864_am.pdf//http://www.court.am/files/news/2457_am.pdf//http://www.court.am/files/news/2151_am.pdf

րացումը: Քրեական գործերի քննության և լուծման ծանրության կենտրոնը պետք է լինի ոչ թե վճռաբեկ դատարանը, այլ առաջին հերթին հենց ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները: Ուստի կարելի է քննարկման առարկա դարձնել լավագույն միջազգային, այդ թվում՝ ֆրանսիայի, Գերմանիայի օրինակով⁸⁴ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության ներքին քննության կոլեգիալ կարգի ներդրումը առաջին ատյանի դատարանում: Կամ վերաքննության արդյունավետության բարձրացման միջոց կարող է լինել վերաքննիչ դատարանում վճռաբեկության կարգով գործերի քննության կարգի բացառումը: Ստորադաս դատարանների⁸⁵ գործունեության արդյունավետության բարձրացումն ինքնին կարող է վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման օբյեկտիվ մեխանիզմ լինել և որոշակիորեն մեղմել բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի առնչությամբ պրակտիկայում առկա դժգոհության ներքին մերժողական մոտեցումները:

Գլուխ 2.

Վճռաբեկ բողոքարկումը և վճռաբեկ դատարանում բողոքի նախնական քննությանը

§1. Վճռաբեկ բողոքը՝ որպես վճռաբեկ վարույթի հիմք: Վճռաբեկ բողոքարկման հասկացությունը և նշանակությունը

Վճռաբեկ բողոքարկման ենթափուլում ընթացող դատավարական հարաբերությունների ուսումնասիրությունը թերևս կարելի է սկսել այդ հարաբերությունների առանցքը կազմող կարևորագույն դատավարական փաստաթղթի՝ վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած ընդհանուր բնորոշումների համաձայն՝ վճռաբեկ բողոքը քրեական դատավարության մասնակցի՝ դատարանին ուղղված՝ դատավարական ձևակերպում

⁸⁴Ավելի մանրամասն տե՛ս *Гуценко К.Ф., Головки Л.В., Филимонов Б.А.*, նշված աշխատությունը, *Чельцов-Бebutov М.А.*, նշված աշխատությունը, էջեր 476-477:

⁸⁵ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին է վկայում դատարանների գործունեության վերաբերյալ արդեն իսկ հիշատակված վիճակագրական վերլուծական այն տվյալները, համաձայն որոնց 2014 թվականի ընթացքում ամբողջությամբ բավարարված 20 վճռաբեկ բողոքներից 7-ով, իսկ 2015 թվականի ընթացքում՝ 38 բողոքներից 8-ով բեկանվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

ստացած խնդրանքն է՝ իր իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարող դատական ակտը վերանայելու և գործն ըստ էության լուծելու մասին⁸⁶: Բավական ընդգրկուն մեկ այլ բնորոշման համաձայն՝ վճռաբեկ բողոքը վճռաբեկ ատյանի դատարանում վարույթի հարուցման առիթ ծառայող գրավոր դատավարական փաստաթուղթ է, որն ամրագրում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների գործողություններն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման կապակցությամբ, կազմվում է քրեադատավարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ և պարունակում է վճռաբեկ ատյանին հասցեագրված և պատճառաբանված պահանջ համապատասխան դատական ակտն օրինականության, հիմնավորվածության և արդարացիության տեսանկյունից ստուգելու մասին՝ իր խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման նպատակով⁸⁷: Որոշ դատավարագետներ, ելնելով վճռաբեկ բողոքի նշանակությունից, այն բնորոշում են որպես բողոքը վարույթ ընդունելու և քննության առնելու բացարձակ նախապայման⁸⁸, կամ որպես առիթ, որը համապատասխան հիմքերի առկայության պարագայում դառնում է նախադրյալ այս կամ այն հիմքով դատական ակտի բեկանման կամ փոփոխման համար⁸⁹: Ռուսական քրեադատավարական տեսության մեջ առկա «վճռաբեկ բողոք» հասկացության և դրան նշանակություն վերաբերյալ առավելապես ընդհանուր բնույթի այս տեսական բնորոշումներն առանձին դեպքերում արտացոլում են սուսկռուսական վճռաբեկության (մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող) առանձնահատկությունները, որոնցով այն սկզբունքորեն տարբերվում է մեր ներպետական օրենսդրությամբ նախատեսված վճռաբեկության մոդելից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է գործի փաստական կողմը վերանայելու իրավասությանը, բողոքը վարույթ ընդունելու և դատական ակտը վերանայելու հայեցողական լիազորությունների բացակայությանը: Վերոհիշյալ առանձնահատկություններով է թերևս պայմանավորված, որ վճռաբեկ բողոքը բնորոշվում է որպես վճռաբեկ ատյանի դատարանին ուղղված՝

⁸⁶Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 101, *Гродзинский М.М.*, նշված աշխատությունը, էջ 34:

⁸⁷Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 199:

⁸⁸Տե՛ս *Божьев В.*, Пределы прав суда кассационной инстанции // Законность, 2003, N11, էջեր 2-3:

⁸⁹Տե՛ս *Куцова Э.Ф.*, նշված աշխատությունը, էջեր 30, 77:

գործն ըստ էության⁹⁰ և ուժեղ ու պահանջ կամ դատական ակտի վճռաբեկ վերանայման բացարձակ նախապայման կամ առիթ: Ընդ որում, առաջ անցնելով՝ նշենք, որ մեր կարծիքով վճռաբեկ վարույթի հարուցման առիթը ոչ թե վճռաբեկ բողոքն է, այլ վճռաբեկ բողոքարկումը՝ վճռաբեկ բողոք բերելու դատավարական գործողության իմաստով: Վճռաբեկ վարույթ չի կարող հարուցվել, քանի դեռ քրեական դատավարության համապատասխան մասնակցի կողմից չի իրացվել բողոք բերելու իրավունքը: Դեռ ավելի ն, համապատասխան դատավարական փաստաթուղթը վճռաբեկ բողոքի կարգավիճակ ձեռք է բերում վճռաբեկ դատարան ներկայացվելու փաստի ուժով: Իսկ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանում վարույթի հիմքն է, քանի որ վճռաբեկ դատարանում վարույթի շրջանակներում ընթացող բոլոր դատավարական հարաբերությունները ծավալվում են վճռաբեկ բողոքի շուրջ: Բացի այդ, վճռաբեկ բողոքն է իր բովանդակությամբ փաստում, թե արդյոք պահպանվել են վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված պահանջները (վճռաբեկ բողոքարկման նախադրյալները), մասնավորապես, արդյոք բողոքը բերել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտը, պահպանվել են արդյոք բողոքարկման ժամկետները, արդյոք բողոքարկվել է բողոքարկման ենթակա դատական ակտ, առկա են արդյոք դատական ակտի բողոքարկման և բողոքը վարույթ ընդունելու հիմքեր և այլն⁹¹: Իսկ նման պահանջների առկայությունը ստուգելու համար հիմք են ծառայում քրեադատավարական օրենքով բողոքի ձևին և բովանդակությամբ անստուգելի ներկայացվող ընդհանուր պահանջները, որոնք հանգում են հետևյալին. վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի՝

- 1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.
- 2) տվյալներ բողոք բերած անձի մասին.
- 3) դատավճիռը կամ այլ որոշումը, որը բողոքարկվում է, և այդ որոշումը կայացրած դատարանի անվանումը. վճռաբեկ բողոքի բովանդակությանը նման պահանջ ներկայացնելը պայմանավորված է

⁹⁰Իսուքը չի վերաբերում գործի լրիվ ծավալով ըստ էության կրկին քննությանը, քանի որ ՌԴ քրեադատավարական օրենսդրությամբ ևս վճռաբեկ առյանը կաշկանդված է վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակով:

⁹¹Այդ մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև:

ներանով, որ վճռաբեկ բողոքն, ի թիվս այլոց, առանց քննության է թողնվում այն դեպքում, երբ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակաչ է բողոքարկման վճռաբեկության կարգով.

4) նշում այն մասին, թե դատավճիռը կամ այլ որոշումը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով. վճռաբեկ բողոքի այս կառուցվածքային տարրը կոչված է կանխորոշելու վճռաբեկ վերանայման առարկան և սահմանները: Բացի այդ, դահնարավորություն է տալիս ստուգել, թե արդյոք պահպանված են բողոքարկման սահմանափակ իրավունք ունեցող սուբյեկտների կողմից բողոք բերելու պայմանները⁹².

5) պատճառաբանված մատնանշում այն մասին, թե որ նյութական կամ դատավարական իրավունքն է խախտվել, որը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա կամ ինչ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ են առկա. բողոքին ներկայացվող այս պահանջը կոչված է ապահովելու բողոքի հիմնավորվածությունը (պատճառաբանվածությունը): Այն համակարգային կապի մեջ է գտնվում վճռաբեկության սահմանների օրենսդրական կարգավորման հետ: Բողոքի պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ բողոքաբերը պետք է ներկայացնի որոշակի իրավական կամ փաստական բնույթի դատողություններ, որոնք հիմք կտան կասկածի տակ դնելու դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը: Քանի որ վճռաբեկ դատարանը կաշկանդված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կարևոր է այս հասկացությունների բովանդակության բացահայտումը: Այսպես, բողոքի հիմքը՝ ստորադաս դատարանի կողմից որոշակի նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի պահանջները խախտված լինելու կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների⁹³ առկայության մասին հիմնական թեզիսն է, որը պետք է հիմնավորվի բողոքի հետագա տեքստում: Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին, ապա դրանք անօրինական և չհիմնավորված

⁹²Այս մասին ավելի մանրամասն կխոսվի սույն գլխի 2-րդ պարագրաֆում:

⁹³Նախագծի 360-րդ հոդվածը դատական սխալի հետ մեկտեղ իբրև դատական վերանայման բողոքի հիմք՝ նախատեսում է դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական կամ իրավական հանգամանքները՝ դատական ակտ կայացնելիս դատարանին և կողմերին անհայտ մնացած կամ դատական ակտը հրապարակելուց հետո առաջացած որևէ փաստ կամ ուժի մեջ մտած որևէ իրավական ակտ կամ արտահայտված որևէ իրավական դիրքորոշում (Նախագծի 365-րդ հոդվածի 5-րդ մաս): Վերոհիշյալ բնորոշումից բխում է, որ դրանք բովանդակային առումով գրեթե նույնական են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներին:

դատական ակտկայացնելու մասին որոշակի դատողություններ են, որոնք, որպես կանոն, շարադրվում են գործի հանգամանքների և փաստերի, դրանք հաստատող ապացույցների վկայակոչման, լուծման ենթակա այս կամ այն հարցով դատարանի եզրահանգումների քննադատական վերլուծության, գործի քննության դատավարական կարգի քննադատական գնահատականի, իրավական նորմերի սեփական վերլուծության միջոցով և այլն⁹⁴: Փաստորեն, բողոքի հիմքի առկայությունը հիմնավորելիս բողոք բերած անձը ներկայացնում է փաստեր և փաստարկներ (տրամաբանական, իրավական և այլն), որոնք վկայում են դատական ակտի օրինական, հիմնավորված և արդարացի չլինելու մասին: Եթե փաստերը բխում են բուն գործի նյութերից, ապա փաստարկները բողոքաբերի որոշակի վերլուծական գործունեության արդյունքն են: Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ վճռաբեկության սահմանների օրենսդրական կարգավորման տառացի մեկնաբանությունն ինքնուրույն է, որ վճռաբեկ դատարանը կաշկանդված է ոչ միայն բողոքի հիմքերով, դրանք հաստատող փաստերով, այլևս բողոքաբերի ներկայացրած փաստարկներով: Եթե վճռաբեկ դատարանին բողոքի հիմքերով և դրանք հաստատող գործի նյութերից բխող փաստերով կաշկանդելը միանգամայն իրավաչափ է հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռության երաշխավորման համատեքստում⁹⁵, ապա, կարծում ենք, նույն պնդումը չի կարելի անել փաստարկների առումով, քանի որ դրանք սոսկ բողոքաբերի սեփական մտավոր, տրամաբանական վերլուծության արդյունքն են: Եթե վճռաբեկ դատարանը կաշկանդված լինի բողոքաբերի փաստարկներով, ապա ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ որոշում է կայացվում, օրինակ, վճռաբեկ բողոքը բավարարելու մասին, վճռաբեկ դատարանը չպետք է հնարավորություն ունենա սեփական, թեկուզև բողոքաբերի հետ համընկնող դիրքորոշումը, հիմնավորել լրացուցիչ փաստարկներով: Որոշակի պրակտիկ նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վճռաբեկ դատարանն իր որոշումներում, (խոսքը վերաբերում է վարույթ ընդունված բողոքների վճռաբեկ վերանայման արդյունքում կայացված որոշումներին) դուրս չգա-

⁹⁴Տե՛ս **Cyxosa O.A.**, նշված աշխատությունը, էջ 206:

⁹⁵Այս մասին ավելի մանրմասն կխոսվի սույն աշխատանքի երրորդ գլխի առաջին պարագրաֆում:

լ ով բողոքի հիմքերի և դրանք հիմնավորող փաստերի շրջանակից, չի սահմանափակվում է սուսկ այդ հիմքերի առկայ ու թյ ու նը հիմնավորող փաստերի՝ բողոքաբերի վերլուծ ու թյ ու ն ներով և դրանց արդյ ու ն ք ներով⁹⁶: Վերոշարադրյ ալ ի առնչ ու թյ ա մբ հարկ ե նք համար ու մ անդրադառնալ Նախագծի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ ու մ տեղ գտած կարգավորմանը, համաձայ ն որի՝ դատական վերանայման բողոքը պետք է բովանդակի **բողոքի հիմքը, այ ն հաստատող փաստերը**, պահանջը, ինչ պես նաև դրանք **հիմնավորող փաստարկները**: Իսկ ն ու յ ն Նախագծի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայ ն՝ վճռաբեկ ու թյ ու ն ն իրականացվ ու մ է վճռաբեկ բողոք ու մ նշված **հիմքի և այ ն հաստատող փաստերի սահմաններ ու մ**: Այ սպիսով, Նախագիծը բողոքի «հիմնավոր ու մ ներ» հասկաց ու թյ ան փոխարեն նշ ու մ է բողոքի հիմքը հաստատող փաստերի և դրանք հիմնավորող փաստարկների մասին, որոնց տարանջատ ու մ ն, ինչ պես արդեն նշվել է, ինքնանպատակ չէ: Ընդ որ ու մ, թեև և՛ գործող Օրենսգիրքը, և՛ Նախագիծը սահման ու մ են դատական վար ու յ թի ընթացք ու մ բողոքը լրացնել ու օրենսդրական արգելք, Նախագծով այ ն վերաբեր ու մ է միայ ն բողոքի հիմքերին և դրանք հաստատող փաստերին, և բողոքաբերն արդարացիորեն զրկված չէ նոր փաստարկներ ներկայացնել ու հնարավոր ու թյ ու ն նից: Նոր փաստարկներ ներկայացնել ու պարագայ ու մ բողոքի հիմքը և դրանք հաստատող փաստերը չեն փոփոխվ ու մ, այլ բողոքաբերն իր դիրքորոշ ու մը հաստատել ու , այ ն ու ժեղացնել ու և ս մեկ հնարավոր ու թյ ու ն է ստան ու մ: Անձին իր իրավ ու ն ք ների և օրինական շահերի պաշտպան ու թյ ան նման լրաց ու ց իչ գործիքի ընձեռ ու մը պայմանավորված է Նախագծով վճռաբեկ բողոքի քնն ու թյ ան դատավարական կարգի մեջ մրցակց ու թյ ան տարրերի էական ընդլ այ ն մամբ:

6) բողոք բերած անձի պահանջը. նման պահանջի նախատես ու մը պայմանավորված է դեպի վատթարաց ու մ շրջադարձի անթ ու յ լ ատրել ի ու թյ ան սկզբ ու ն քի ապահովման անհրաժեշտ ու թյ ա մբ: Բացի այդ, վար ու յ թը եզրափակող դատավարական որոշման մեջ դատարանը պետք է որոշակի իրավական գնահատական տա բողոքի պահանջին՝ լրիվ կամ մասնակի բավարարի այ ն, կամ թողնի առանց բավարարման:

⁹⁶Տե՛ս, ի թիվս այլ ո ց, Վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի ԱՎԴ/0002/01/14, 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԷԴ/0119/01/13, 2014 թվականի մայիսի 31-ի ՏԴ/0071/01/13, 2014 թվականի մայիսի 31-ի ԿԴ/0029/01/13 որոշ ու մ ները:

6.1) վճռաբեկ բողոք վարույթ ընդունելու հիմքերից որևէ մեկի հիմնավորումները. օրենսդիրը վճռաբեկ բողոքի հիմնավորվածության լրացուցիչ բովանդակային պահանջներ է ներկայացնում, որոնք կոչված են ապահովելու երկրի բարձրագույն դատական ատյան ներկայացվող բողոքների հիմնավորվածության բարձր մակարդակը: Ընդ որում, ՅՕ-48-Ն արդեն իսկ հիշատակված օրենքով օրենսդիրը ոչ միայն հստակեցրեց օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքով բողոքը վարույթ ընդունելու պայմանները, այլև որոշակիորեն ուրվագծեց դրանց հիմնավորումների շրջանակը: Բովանդակային պահանջների հետմիասին օրենսդիրը միաժամանակ նախատեսում է բողոքին այն դատական ակտերը կցելու ձևական պահանջ, որոնց հակասում է բողոքարկվող դատական ակտը: Բողոքի հիմնավորվածության ապահովման տեսանկյունից, կարծում ենք, բավարար է այդ դատական ակտերի ռեկվիզիտների վկայակոչումը, համապատասխան հատվածների մեջբերումը և համեմատական վերլուծության կատարումը: Դատական ակտեր կցելու պահանջի ոչ նպատակահարմար լինելու մասին եզրահանգումը պայմանավորված է դրա հետևանքով պրակտիկայում առաջացող խնդիրներով: Այն շատ հաճախ հանգեցնում է ժամանակային, նյութական ռեսուրսների ավելորդ կորստի, բողոքի քննության ձգձգումների: Այսպես, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին առանձին որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքը վերադարձնելու հիմքը շատ հաճախ հենց քննարկվող դատական ակտերը կցելու պահանջը չապահովանելն է: Ընդ որում, քիչ են այն դեպքերը, երբ բողոքը վերադարձվում է դրանում վկայակոչված մոտ մեկ տասնյակ կամ նույնիսկ մեկ տասնյակից ավելի որոշումներից մեկը կամ մի քանիսը չկցելու հիմքով⁹⁷: Կարծում ենք՝ այս դեպքում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացնելը, այն բողոքաբերին բողոքի հետմիասին ուղարկելն ավելորդ ծանրաբեռնում է վճռաբեկ դատարանում վարույթը: Թերևս կասկածից վեր է, որ բողոքին չկցված՝ պահանջվող դատական ակտերն անհրաժեշտության դեպքում գտնելն առկա էլ եկտրոնային և թղթային հարուստաղբյուրների առկայությունն պարագայում առանձնապես մեծ դժվարությունն չի ներկայաց-

⁹⁷Տե՛ս, ի թիվս այլոց, վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 12-ի ԵԿԴ/0123/01/14, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԱԲԴ/0142/01/14 որոշումը:

նում, առավել ևս եթե խոսքը վերաբերում է Վճռաբեկ դատարանի որոշումներին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման կարգավորման սահմանադրականության հարցի քննարկման շրջանակներում Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի հունիսի 12-ի ՍԴՈ-1296 որոշման մեջ, իրավաչափ համարելով վճռաբեկ բողոք բերողի կողմից վկայակոչվող իրավական դիրքորոշումներին և համապատասխան դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին համեմատական վերլուծության պահանջը, այդուհանդերձ գտել է, որ համապատասխան դատական ակտերը բողոքին կցելու պահանջը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է բողոքաբերին այն պարագայում, երբ դրանք հասնելի են դատավարության կողմերին և Վճռաբեկ դատարանին: Հատուկ անդրադառնալով Եվրոպական դատարանի վճիռները կցելու՝ օրենքի պահանջին, երբ, մի կողմից՝ դրանք մի քանի տասնյակ էջեր են կազմում ու համաձայն իրավակիրառ պրակտիկայի՝ պետք է թարգմանաբար ներկայացվեն (նկատի ունենալով, որ ՀՀ-ում դատավարությունը տարվում է հայերենով), մյուս կողմից՝ սահմանափակ է բողոք ներկայացնելու ժամկետը, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն կարող է վտանգել արդար դատաքննության իրավունքի իրացումը: Ուստի վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք Օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 1-ին, 2-4-րդ կետերից, ինչպես նաև Նախագծի 386-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերից հանել համապատասխան դատական ակտերը կցելու պահանջը:

7) բողոքին կցվող նյութերի ցանկը. վերոշարադրյալ պահանջի հետ կապված՝ հարկ է նշել, որ իբրև վճռաբեկ բողոքին ներկայացվող ձևական պահանջ՝ օրենսդիրը բողոքաբերին պարտավորեցնում է բողոքին կցել .

ա) «բողոքի պատճենը, գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի) ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը»: Վերոհիշյալ նորմի օրենսդրական ձևակերպումը, մասնավորապես, պատճենը բառից հետո օգտագործվող «» կետադրական նշանը պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Կարծում ենք՝ տրամաբանական է այն մեկնաբանությունը, որ օրենսդիրը նախատե-

սել է բողոքի պատճենը գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու և այն ուղարկված լինելու փաստը հավաստող անդորրագրերը բողոքին կցելու պահանջ: Սակայն հարց է ծագում, թե արդյոք բողոքին պետք է կցվի նաև բողոքի պատճենը: Եթե օրենսդիրը նախատեսած լիներ թե՛ բողոքի պատճենը և թե՛ այն դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը կցելու պահանջ, ապա քննարկվող նորմի ձևակերպման մեջ օրենսդիրը ստորակետից հետո պետք է օգտագործեր «այն» դերանունը: Մինչդեռ առկա օրենսդրական ձևակերպման պայմաններում, եթե ստորակետը մեկնաբանվի այնպես, որ բողոքին պետք է կցված լինի բողոքի պատճենը, ապա հարց է ծագում, թե դատավարական ինչ փաստաթուղթ (փաստաթղթեր) ուղարկված լինելը հավաստող անդորրագրեր պետք է կցվեն բողոքին: Հաշվի առնելով, որ բողոքի պատճենը կցելու օրենսդրական անհրաժեշտությունը պարզ է, մինչդեռ բողոքի պատճենը դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու պահանջը միանգամայն տրամաբանական է, քանի որ բողոքի պատճենը ստանալուց հետո դատական ակտը կայացրած դատարանը գործն ուղարկում է Վճռաբեկ դատարան, իսկ դատավարության մասնակիցը կարող է իրացնել բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքը, ապա, կարծում ենք, ստորակետի օգտագործումը սոսկ լեզվաբանական թերությունն է: Ընդ որում, գործնականում այս նորմի վերոհիշյալ մեկնաբանությունը է առաջ նորոգվում Վճռաբեկ դատարանը: Նման եզրահանգման համար հիմք է ծառայում այն, որ քննարկվող պահանջը պահպանված չլինելու հիմքով բողոքը վերադարձնելու ինստիտուտի ներմուծումից հետո Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքների ճշող մեծամասնությունը դրանց պատճենները կցված չի եղել, սակայն բողոքը նշված հիմքով վերադարձնելու որևէ որոշում չկա:

բ) Օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ներկայացուցչի՝ օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը և Վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

«Վճռաբեկ բողոք» և «վճռաբեկ բողոքարկում» հասկացությունն

Ների սերտ կապով պայմանավորված՝ կարծում ենք՝ կարիք կա անդրադառնալու «վճռաբեկ բողոքարկում» հասկացությանը: Այսպես, քրեադատավարական տեսության մեջ առկա բնորոշումների վերլուծությանը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն ընկալվում է հետևյալ երեք առումներով՝ վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունք, դատավարական գործունեության տեսակ և իրավական ինստիտուտ, որը կարգավորում է վճռաբեկ բողոքարկման դատավարական գործունեությունը (վճռաբեկ բողոքարկման իրավունքն օբյեկտիվ իմաստով): Վճռաբեկ բողոքարկումը՝ որպես վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունք և որպես դատավարական գործունեության տեսակ, հասկացվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով վճռաբեկ բողոքարկման իրավունքը սոսկ վճռաբեկ բողոք բերելու իրավունքն է⁹⁸, իսկ վճռաբեկ բողոքարկումը քրեական դատավարության իրավասու մասնակիցների՝ վճռաբեկ բողոք բերելու (վճռաբեկ ատյանի դատարանին դիմելու)՝ քրեադատավարական օրենքով կարգավորված գործունեությունը⁹⁹: Լայն իմաստով վճռաբեկ բողոքարկման իրավունքը ներառում է նաև վճռաբեկ ատյանի դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով դրա քննության իրավունքը¹⁰⁰, իսկ վճռաբեկ բողոքարկումն էլ նույն տրամաբանությամբ՝ բողոքն ըստ էության քննության առնելու, լուծելու և դրա արդյունքները դիմումատուին հասցնելու հետ կապված դատավարական գործունեությունը¹⁰¹: Սակայն մենք ինքներս հակված ենք վճռաբեկ բողոքարկման՝ վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքի և վճռաբեկ բողոք բերելու դատավարական գործողության՝ նեղ իմաստով ընկալմանը: Այլ հարց է, որ վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է այն քննության առնելու վճռաբեկ ատյանի դատարանի պարտականությունը, իսկ բողոքը բերելու դատավարական գործողությունն առիթ է դրանախնակա՞ն քննության և քննության արդյունքները բողոքաբերին

⁹⁸Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 103:

⁹⁹Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 76:

¹⁰⁰Տե՛ս *Беззубов С.И.*, Производство по уголовному делу в апелляционном суде: проблемы теории, нормативного регулирования и правоприменительной практики, дисс... канд. юрид. наук. -Н. Новгород: НА МВД РФ, 2007, էջ 53:

¹⁰¹Տե՛ս *Беззубов С.И.*, նշված աշխատությունը, էջ 111, *Белобородов С.В.*, Принцип широкой свободы обжалования в уголовном судопроизводстве России, дисс. ...канд. юрид. наук. - Нижний Новгород: НА МВД РФ, 2006, էջեր 43-48:

հասցնելու (բողոքի նախնական քննության արդյունքով կայացված որոշումը բողոքաբերին ուղարկելու) համար: Եվ վերջապես, վճռաբեկ բողոքարկումը՝ որպես քրեադատավարական ինստիտուտ, քրեադատավարական նորմերի համակցության է, որը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, բողոքարկման ժամկետներն ու բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները և դրանք չպահպանելու հետևանքները, վճռաբեկ բողոքարկման դատավարական կարգը¹⁰²:

Վճռաբեկ բողոքարկումը՝ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքի իմաստով, քրեական դատավարության մասնակիցների տնօրինչական իրավունքն է¹⁰³, որի առնչությամբ քրեադատավարական տեսության մեջ առանձնացնում են վճռաբեկ բողոքարկման ազատությանը՝ որպես վճռաբեկ վարույթում մրցակցության սկզբունքի դրսևորում: Այս վերջին դիտարկումը, սակայն, փոքր-ինչ հակասական կարող է թվալ՝ հաշվի առնելով, որ տեսության մեջ վճռաբեկ բողոքարկման ազատությանն առհասարակ ներկայացվում է որպես խորհրդային ռեզիայի բնութագրական առանձնահատկություն, անգամ սկզբունք, իսկ խորհրդային դատավարությանն ընդհանրապես խորթ էր մրցակցության գաղափարախոսությունը: Ընդ որում, խորհրդային դատավարագիտությանը վճռաբեկ բողոքարկման ազատությանը կապում էր դատական ակտի հետանհամաձայնությանն առանց որևէ փաստարկման արտահայտելու հնարավորության հետ, և դրա երաշխիքը օրենքով վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող հստակ պահանջների բացակայությունն էր¹⁰⁴: Վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքի դերն ու նշանակությունն ընդգծում են նաև ժամանակակից դատավարագետները¹⁰⁵: Քրեադատավարական տեսության մեջ վճռաբեկ բողոքարկման ազատության դրսևորում է համարվում բողոքարկման իրավունք ունե-

¹⁰² Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 76:

¹⁰³ Տե՛ս **Белобородов С.В.**, նշված աշխատությունը, նույն տեղում, **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջ 47:

¹⁰⁴ Տե՛ս **Гродзинский М.М.**, նշված աշխատությունը, էջ 20:

¹⁰⁵ Учебник уголовно-процессуального права/Под ред. П.А. Лупинской. - М., 2003, էջեր 591-592, **Никитина Л.В.**, Действие принципов уголовного процесса в апелляционном, кассационном и надзорном производствах, Вестник Саратовской гос. акад. права, 2000, N2, էջ 53, **Белобородов С.В.**, նշված աշխատությունը, էջ 93:

ցող սուբյեկտների լայն շրջանակի նախատեսումը, ամբաստանյալի վիճակի վատթարացման բացառման երաշխիքով վճռաբեկ բողոք ներկայացնելու եղանակով վճռաբեկ վերանայման ընթացակարգ հարուցելու, բողոքի հիմնավորվածության և պատճառաբանվածության սահմանները որոշելու, բողոքը հետ վերցնելու դատավարական լիազորությունների առկայությունը¹⁰⁶ և այլն: Ժամանակակից դատավարագետները, սակայն, միակարծիք չեն, վճռաբեկ բողոքարկման ազատության այնպիսի հատկանիշի մեկնաբանման հարցում, ինչպիսին վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող հստակ պահանջների բացակայությունն է¹⁰⁷: Ընդ որում, այն դատավարագետները, ում կարծիքով վճռաբեկ բողոքին ներկայացվող հստակ պահանջների նախատեսումը որևէ կերպ չի սահմանափակում վճռաբեկ բողոքարկման ազատությունը, պարզապես գտնում են, որ վճռաբեկ բողոքարկման ազատությունը, ի տարբերություն վճռաբեկ բողոքարկման իրավունքի, որն անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն է և որը սահմանափակման ենթակա չէ, վճռաբեկ բողոքարկման ազատությունը բացարձակ բնույթ չի կրում: Վճռաբեկ բողոքարկման ազատության իրացման օրենքով հստակ սահմանված որոշակի շրջանակների նախատեսումը նույն դատավարագետները դիտարկում են որպես դատավարության տարբերկողմերի շահերի և ընդհանրապես հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման միջոց¹⁰⁸: Վերոհիշյալ դիրքորոշումը, սակայն, գուտտեսական առումով, որոշակի առարկությունների տեղիք է տալիս: Կարծում ենք՝ օրենքով նախատեսված վճռաբեկ բողոքարկման առարկան, հիմքերը ու ժամկետները, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և վճռաբեկ բողոք բերելու դատավարական կարգը ոչ թե վճռաբեկ բողոքարկման ազատության սահմանափակումներ են, այլ բողոքարկման իրավունքի իրացման պայմաններ: Վճռաբեկ բողոքարկման իրավունքի բացարձակ

¹⁰⁶Տե՛ս **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջ 67, **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 67

¹⁰⁷Տե՛ս **Гвоздева С.В.**, Особенности апелляционного производства по новому УПК РФ//Новый Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: проблемы законодательства, теории и практики: Сб. науч. тр.//Отв. ред. П.Л.Пудников, Волгоград, 2002, էջ 175, **Волколуп О.В.**, Система уголовного судопроизводства и проблемы ее совершенствования. СПб., էջեր 193-194, **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 71:

¹⁰⁸Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջեր 72-73:

բնույթի մասին դիտարկումը կարող է ընդունելի համարվել այն պարագայում, եթե վճռաբեկ բողոքարկման իրավունքը նույնացվում է սոսկ ձևական առումով վճռաբեկ բողոք բերելու (վճռաբեկ դատարան դիմելու) հնարավորության հետ: Վճռաբեկ բողոքարկումը, սակայն, ինքնանպատակ չէ: Անձը վճռաբեկ բողոք է բերում իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման սահմանադրական, կոնվենցիոնալ իրավունքը վճռաբեկության կարգով իրացնելու՝ ներպետական օրենսդրությամբ երաշխավորված հնարավորությունը, իրավական պաշտպանության այդ միջոցը սպառելու նպատակով: Վճռաբեկ բողոքարկումը վերջին հաշվով որոշակի դատավարական նպատակի՝ դատական ակտերի վճռաբեկ վերանայման հասնելու միջոց է: Որպես դատական ակտերի վճռաբեկ վերանայման նախադրյալ կամ առիթ՝ վճռաբեկ բողոքարկման իրավունքը պետք է իրացվի օրենքով դրան ներկայացվող որոշակի պահանջների պահպանմամբ: Ըստ այդմ, այդ պահանջները հանդես են գալիս որպես դատական ակտի վճռաբեկ վերանայման իրավունքի սահմանափակումներ: Արդարադատության մատչելիության իրավունքի երաշխավորման համատեքստում բողոքարկման (վերանայման) իրավունքի որոշակիորեն սահմանափակումն իրավաչափ է համարում նաև Եվրոպական դատարանը՝ ճանաչելով պետության կողմից այս հարցում համապատասխան հայեցողությանը նդրսևորելու հնարավորությունը: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ դատական վերանայման բողոք ներկայացնելու համար ժամկետներ և այլ ձևական պահանջներ սահմանող կանոններ նախատեսվող նպատակունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորումը: Այդուհանդերձ այդ կանոնները չպետք է անձին զրկեն իր իրավունքների պաշտպանության հասանելի միջոցից¹⁰⁹, դրանք չպետք է այն ձևով կամ այն աստիճան սահմանափակեն կամ նվազեցնեն մատչելիության իրավունքը, որ արժեզրկեն այս իրավունքի բուն էությունը: Ավելին, այդ սահմանափակումը համահունչ չի լինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, եթե այն չի

¹⁰⁹Տե՛ս *Canete de Goni v. Spain*, գանգառ թիվ 55782/00, 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ, կետ 36, *Miragal Escolano and others v. Spain*, գանգառներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98..., 2000 թվականի հունվարի 25-ի վճիռ, *Zvolky and Zvolkska v. The Czech Republic*, գանգառ թիվ 46129/99, 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռ, կետ 51:

հետապնդում «իրավաչափ նպատակ» և չկա «ողջամիտ հավասարակշռության հետապնդվող նպատակի և ձեռնարկված միջոցների միջև»¹¹⁰: Դեռևս 1995 թվականի հունվարի 10-ի՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով ապելացիոն համակարգերի և ընթացակարգերի ներդրման և դրանց գործունեության կատարելագործման մասին» թիվ R (95) հանձնարարականում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, հաշվի առնելով բողոքների քանակական աճը և գործերի ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունը, իրավաչափ էր համարել բողոքարկման իրավունքի որոշակիորեն սահմանափակումը, մասնավորապես, բողոքարկման ժամկետների սահմանումը (3-րդ հոդված b կետ), բողոքարկման թույլատրական կարգի ներմուծումը (3-րդ հոդված, c կետ, 7-րդ հոդված f կետ), միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հետաձգումը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը (3-րդ հոդված d կետ), բողոքարկման թույլատրական կարգ սահմանված լինելու դեպքում բողոքարկման սահմանափակումը բացառապես իրավունքի հարցերով (5-րդ հոդված c կետ), դատարանում որակյալ իրավաբանական ներկայացուցչության խթանումը (6-րդ հոդվածի k կետ):

Ինչ վերաբերում է «բողոքարկման իրավունք» և «բողոքարկման ազատություն» հասկացությունների հարաբերակցությունը, ապա դրանց սահմանազատման համար հիմք կարող են ծառայել առհասարակ «իրավունք» (սուբյեկտիվ իմաստով) և «ազատություն» հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ առկա տեսական մոտեցումները¹¹¹, որոնք տեղայնացնելով քննարկվող խնդրի վրա, կարող ենք փաստել, որ վճռաբեկ բողոքարկման ազատությունն օրենքով անձին վերապահված՝ բողոք բերելու իրավունքի իրացման, դրատնօրինման ազատությունն է: Այլ կերպ՝ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտն ազատ է բողոք բերելու իրավունքի իրացման՝ օ-

¹¹⁰Տե՛ս *Ashingdane v. the United Kingdom*, 1985 մայիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 8225/78, կետ 57, *Markovic and Others v. Italy*, 2006 թվականի դեկտեմբերի 14-ի Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 1398/03, կետ 99):

¹¹¹Տե՛ս *Спрогович М.С.*, Проблемы теории права. Избранные труды, в 3 томах/отв. ред. С.Н. Братусь. М.: Наука, 1990. Т.1, էջ 224, *Краснослободцева Н.К.*, Соотношение Понятий «СВОБОДА» И «ПРАВА» Человека, Ленинградский юридический журнал, N4(38), 2014, էջ 79 <http://cyberleninka.ru/article/n/sootnoshenie-ponyatiy-svoboda-i-prava-cheloveka>, *Бадальянц Ю.С., Д.А. Ягофаров.*, Права человека:учебное пособие/Ю.С. Бадальянц,Д.А. Ягофаров. Москва-Рязань: Издательство «Поверенный», 2006 <http://pravo.news/kniga-rossii-pravo-grajdanskoe/prava-cheloveka-uchebnoe-posobie-yus.html>

րենքի պահանջների շրջանակներում տնօրինելու այս իրավունքը և թույլատրելիի շրջանակներում ընտրելու դրա իրացման իր համար նախընտրելի տարբերակը:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկ բողոքի իրավական նշանակությունը, պետք է նշել, որ վճռաբեկ բողոքարկումը՝ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքի իմաստով, անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն է, անձի՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոց¹¹²: Յաշվի առնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի առկայությունը՝ այն նաև միասնական դատական պրակտիկայի ձևավորման գործընթացին անուղղակի մասնակցության միջոց է: Իսկ ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի իրավական նշանակությունը, ապա արդի օրենսդրական կարգավորման պայմաններում, երբ վճռաբեկ վերանայումը սահմանափակված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով, այն հանգում է վերանայման սահմանները կանխորոշելուն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքը վճռաբեկ վարույթի հիմք ծառայող, օրենքով սահմանված ձևական և բովանդակային որոշակի պահանջների համապատասխանող գրավոր դատավարական փաստաթուղթ է, որը հավաստում է բողոքարկման իրավունքի իրացման պահանջների առկայությունը, իսկ վճռաբեկ բողոքարկումը՝ դատավարության մասնակիցների կողմից բողոք բերելու դատավարական գործողության, որը վճռաբեկ վարույթի ծագման նախադրյալ է այնքանով, որքանով առաջացնում է այն նախնական քննության առնելու Վճռաբեկ դատարանի պարտականությունը: Վճռաբեկ բողոքարկումը կարող է ծառայել որպես դատական ակտերի վճռաբեկ վերանայման նախադրյալ, եթե պահպանված են վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման առարկայական, ժամկետային, սուբյեկտային, բովանդակային պայմանները:

§2. Վճռաբեկ բողոքարկման առարկան և ժամկետները

Վճռաբեկ բողոքարկման առարկան (վճռաբեկ դատարան բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը) սահմանված է Օրենսգրքի

¹¹²Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 63, Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Под ред. И.Л.Петрухина. М., 2002, էջ 214.

403-րդ հոդվածում, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը¹¹³: Քննարկվող նորմի տառացի մեկնաբանությունն ինչ ուղղակիորեն բխում է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը (այդ մասին խոսվել է նաև սույն աշխատության 1-ին գլխի 1-ին պարագրաֆում) չի տարբերակում գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ)¹¹⁴ դատական ակտերի վերանայման մեխանիզմները: Օրենսդրական կարգավորման որոշակի առանձնահատկություններով հանդերձ (խոսքը, մասնավորապես, վերաբերում է բողոքարկման տարբեր ժամկետներին, գործն ըստ էության չլուծող դատական ակտի վերանայման արդյունքում կայացվող որոշումների սահմանափակ շրջանակին)՝ դրանք միավորված են դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեկ միասնական ձևի ներքո: Գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման և վերանայման մեխանիզմների սահմանազատման խնդիրն արդիական է ժամանակակից, այդ թվում՝ նաև հայրենական դատավարագետների շրջանում: Ընդ որում, տեսաբանների կողմից առաջարկվող դասակարգումն ինքնանպատակ չէ և ուղղված է տարբերակված դատավարական ձևի՝ մասնավորապես գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման և վերանայման պարզեցված ընթացակարգի ներմուծմանը՝ ապահովելու համար համապատասխան իրավական խնդիրների արագ և արդյունավետ քննությունը և լուծումը¹¹⁵: Նման տարբերակված կարգավորում է նախատեսում նաև, ինչպես արդեն նշվել է,

¹¹³Վերոշարադրյալ խմբագրությունը այս նորմը սահմանվել է 2007 թվականի հունիսի 6-ին ընդունված 30-270-Ն օրենքով, որով նաև ուժը կորցրած է ճանաչվել գործող Օրենսգրքի՝ դատավարական առումով վճռաբեկ բողոքարկման առարկան սահմանող 414-րդ հոդվածը, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանում վարույթը կանոնակարգող գլխի նորմերով ենթակա էին բողոքարկման միայն դատարանի վերջնական որոշումները, իսկ Օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետը, որը գործում է մինչև օրս, պարզապես սահմանում էր «վերջնական որոշում» հասկացության ընդհանուր բնորոշումը: Ընդ որում, վերոհիշյալ օրենքով Օրենսգրքի 6-րդ հոդվածը լրացվեց 10.1-րդ կետով, որը հստակ սահմանում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի շրջանակը:

¹¹⁴Քրեադատավարական տեսությունն այս մեջ միջանկյալ դատական ակտերը բնորոշվում են որպես դատարանի լրացուցիչ որոշումներ, որոնք նպատակ ունեն պառչած պայմաններ ստեղծել վարույթի իրականացման համար, գործն ըստ էության չեն լուծում և որպես կանոն ենթակա են անհապաղ կատարման: Ավելի մանրամասն տես՝ **Червоткин А.С.**, նշված աշխատությունը, **Лоджанская Т.И.**, նշված աշխատությունը:

¹¹⁵Տես **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջ 81, **Жеребятьев И., Шамарлиу Л.**, Некоторые вопросы реализации правосудия в уголовном судопроизводстве // Уголовное право, 2004, N 3, էջ 84:

Նախագիծը: Գործն ըստ Էուռթյան Լուծող և գործն ըստ Էուռթյան չԼուծող դատական ակտերի բովանդակային տարբերությամբ պայմանավորված, կարծում ենք, միանգամայն իրավաչափ է վերջին դեպքում բողոքարկման պարզեցված ընթացակարգի նախատեսումը: Միևնույն ժամանակ, նման տարբերակումը հնարավոր ենք համարում ոչ թե վերանայման հատուկ ձև առանձնացնելու, այլ վճռաբեկության շրջանակներում բողոքարկման և վերանայման ընթացակարգերը տարանջատելու եղանակով: Թե՛ գործն ըստ Էուռթյան և թե՛ գործն ըստ Էուռթյան չԼուծող դատական ակտերի վճռաբեկատյանում վերանայման պարագայում պահպանվում են դատական ակտերի վճռաբեկ վերանայման ձևի այնպիսի բնութագրական առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ դատական ակտերի վերանայումը սոսկ իրավունքի հիմքով և վերանայման հայեցողական բնույթը: Կարծում ենք՝ վերջին դիտարկմանը չի խանգարում նաև այն հանգամանքը, որ թեև ի տարբերություն գործն ըստ Էուռթյան Լուծող դատական ակտերի՝ գործն ըստ Էուռթյան չԼուծող դատական ակտերի վճռաբեկ վերանայման պարագայում վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև և որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ չեն համընկնում, քանի որ այս դեպքում քրեական գործը կարող է դեռևս գտնվել վերաքննության կամ նույնիսկ նախնական քննության փուլում:

Գործող Օրենսգրքի՝ վերը հիշատակված 403-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 10.¹-րդ կետի և 376.¹-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից բխում է, որ վճռաբեկ դատարան բողոքարկման ենթակա գործն ըստ Էուռթյան Լուծող դատական ակտերն են առաջին ատյանի դատարանի դատավճռի, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշման վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը: Ինչ վերաբերում է գործն ըստ Էուռթյան չԼուծող դատական ակտերին, ապա Օրենսգրքի 403-րդ հոդվածից բխում է, որ վճռաբեկ բողոքարկման առարկա են կազմում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, ինչպես նաև դատական քննության ընթացքում կայացված

գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտերը, ինչպես նաև ինքնին վերաքննիչ դատարանի կայացրած գործն ըստ էության չլուծող դատական ակտերը: Յետևաբար, վճռաբեկ բողոքարկման առարկան հստակեցնելու համար նախպեսք է պարզել, թե առաջին ատյանի դատարանի՝ մինչդատական վարույթում և դատական քննության փուլում կայացրած՝ գործն ըստ էության չլուծող որ դատական ակտերն են ենթակա բողոքարկման վերաքննության կարգով: Այսպես, Օրենսգրքի 376.¹-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ և ըստ այդմ վճռաբեկ դատարան կարող են բողոքարկվել առաջին ատյանի դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, խուզարկության, ազրավման, բժշկական հաստատությանում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցության նկերի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումների վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը: Ինչ վերաբերում է դատական քննության ընթացքում նախքան դատավճիռը կայացվող, սակայն դատավճիռ անկախ, ինքնուրույն բողոքարկման ենթակա գործն ըստ էության չլուծող դատական ակտերի շրջանակին, ապա դրա հստակեցման հիմնախնդիրները քրեադատավարական տեսության մեջ լայն քննարկման և դատավարագետների կողմից գիտագործնական ուսումնասիրությունների առարկա են դարձվել ¹¹⁶: Ընդհանուր մոտեցման համաձայն՝ դատական քննության ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը կարող է իրականացվել միայն գործի ըստ էության քննության արդ-

¹¹⁶Տե՛ս **Червоткин А.С.**, նշված աշխատությունը, էջեր 92-112, **Лоджанская Т.И.**, նշված աշխատությունը, **Клепиков Д.А.**, Промежуточное судебное решение: самостоятельное обжалование, обоснованность и процессуальная форма//Актуальные проблемы российского права, N4/2015, <http://cyberleninka.ru/article/n/promezhutochnoe-sudebnoe-reshenie-samostoyatelnoe-obzhalovanie-obosnovannost-i-protsessualnaya-forma>, **Шмилина Н.Ю.**, О некоторых проблемах апелляционного пересмотра промежуточных судебных решений по уголовным делам//Сибирский юридический вестник, N1/2013<http://cyberleninka.ru/article/n/o-nekotoryh-problemah-apellyatsionnogo-peresmotra-promezhutochnyh-sudebnyh-resheniy-po-ugolovnym-delam>

յ ու ն ք ն եր ո վ կ այ ա ց վ ա ծ` գ ո թ Ն ը ս տ ե ու թ յ ա ն լ ու ծ ո ղ դ ա տ ա կ ա ն ա կ տի բ ո ղ ո ք ա ր կ մ ա ն հ ե տ մ հ ա ժ ա մ ա ն ա կ ¹¹⁷ ք ա ց առ ե լ ու հ ա մ ա ր մ հ ջ ա մ տ ու թ յ ու ն ը ս տ ո ր ա դ ա ս դ ա տ ա ր ա ն հ կ ո ղ մ հ ց ա ր դ ա ր ա դ ա տ ու թ յ ա ն ի ր ա կ ա ն ա ց մ ա ն ը ¹¹⁸: Ս ա կ այ ն մ յ ու ս կ ո ղ մ հ ց` առ ա ն ձ հ ն մ հ ջ ա ն կ յ ալ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր հ ա ն մ հ ջ ա կ ա ն բ ո ղ ո ք ա ր կ մ ա ն հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ա ն ի ս պ առ ք ա ց առ ու մ ը կ ա ր ո ղ է հ ա ն գ ե ց ն ե լ դ ա տ ա կ ա ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն , գ ո թ ի ո ղ ջ ա մ հ տ ժ ա մ կ ե տ ու մ ա ր դ ա ր ա ց հ ք ն ն ու թ յ ա ն ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն և կ ո ն վ ե ն ց հ ի ո ն ալ ի ր ա վ ու ն ք ն եր հ ո տ ն ա հ ա ր մ ա ն ը ¹¹⁹: Ք ր ե ա դ ա տ ա վ ա ր ա կ ա ն տ ե ս ու թ յ ա ն մ ե ջ գ եր հ շ խ ո ղ մ ո տ ե ց մ ա ն հ ա մ ա ձ այ ն` գ ո թ Ն ը ս տ ե ու թ յ ա ն չ լ ու ծ ո ղ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր հ բ ո ղ ո ք ա ր կ մ ա ն ս ա հ մ ա ն ն եր ը ո թ ո շ ե լ ու չ ա փ ա ն հ շ կ ա ր ո ղ է լ ի ն ե լ փ ո խ զ ի ջ ու մ ը դ ա տ ա վ ո ր ն եր հ ա ն կ ա խ ու թ յ ա ն և դ ա տ ա կ ա ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն ս կ զ բ ու ն ք ն եր հ մ հ ջ և ¹²⁰: Չ ա ր գ ա ց ն ե լ ո վ այ ս չ ա փ ա ն հ շ ը` ու ու ս դ ա տ ա վ ա ր ա գ ե տ ն եր ը գ ո թ ը դ ա տ ա կ ա ն ք ն ն ու թ յ ա ն ն ա փ ա պ ա տ ր ա ս տ ե լ ու , գ ո թ ի դ ա տ ա կ ա ն ք ն ն ու թ յ ա ն և վ եր ա ք ն ն հ չ վ ա ր ու յ թ ի ը ն թ ա ց ք ու մ կ այ ա ց վ ա ծ գ ո թ Ն ը ս տ ե ու թ յ ա ն չ լ ու ծ ո ղ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր հ վ ճ ո ա ք ե կ բ ո ղ ո ք ա ր կ ու մ ը հ ն ա ր ա վ ո ր ե ն հ ա մ ա ր վ ու մ պ այ մ ա ն ո վ , ո ր այ դ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր հ վ եր ա ն այ ու մ ը չ ի ս ա հ մ ա ն ա փ ա կ ի ս տ ո ր ա դ ա ս դ ա տ ա ր ա ն հ ա ն կ ա խ ու թ յ ու ն ը , ե թ ե .

1) ա ն ձ հ խ ա փ ա տ վ ա ծ ի ր ա վ ու ն ք ն եր հ ա մ բ ո ղ ջ ծ ա վ ալ ո վ վ եր ա

¹¹⁷Գ ո թ Ն ը ս տ ե ու թ յ ա ն լ ու ծ ո ղ դ ա տ ա կ ա ն ա կ տի հ ե տ մ ե կ տ ե ղ կ ա մ , այ ս պ ե ս կ ո չ վ ա ծ , « հ ե տ ա ձ գ վ ա ծ » բ ո ղ ո ք ա ր կ մ ա ն ի ր ա վ ա կ ա ր գ ա վ ո ր ու մ ն եր ն ի ր ա վ ա չ ա փ է հ ա մ ա ր ե լ ն ա ն Ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ն ի ր 2010 թ վ ա կ ա ն հ ն ո յ ե մ բ եր հ 2-ի թ հ վ Ս Դ Ռ -922 և 2015 թ վ ա կ ա ն հ փ ե տ ր վ ա ր հ 10-ի թ հ վ Ս Դ Ռ -1190 ո թ ո շ ու մ ն եր ու մ : Վ եր ը հ հ շ ա տ ա կ վ ա ծ` Ս Դ Ռ -922 ո թ ո շ մ ա ն մ ե ջ Ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ը հ ղ ու մ է կ ա տ ա ր ե լ ն ա ն Ե վ թ ո պ այ ի խ թ ի հ թ ղ ի ն ա փ ա ր ա ր ն եր հ կ ո մ հ տ ե հ ա ր դ ե ն ի ս կ հ հ շ ա տ ա կ վ ա ծ R(95)5 հ ա ն ձ ն ա ր ա ր ա կ ա ն հ 3-ր դ հ ո ղ վ ա ծ ի « ժ » կ ե տի այ ն կ ա ր գ ա վ ո ր ու մ ն եր հ ն , ո ր ա փ տ ու թ յ ու ն ն եր ը կ ա ր ո ղ ե ն « ... հ ե տ ա ձ գ ե լ ո թ ո շ ա կ ի մ հ ջ ա ն կ յ ալ հ ա ր ց եր հ բ ո ղ ո ք ա ր կ մ ա ն ի ր ա վ ու ն ք ի ր ա կ ա ն ա ց ու մ ը` մ հ ն չ և հ հ մ ն ա կ ա ն գ ո թ ը ո վ գ լ խ ա վ ո ր բ ո ղ ո ք ի ն եր կ այ ա ց ու մ ը »:

¹¹⁸Տ ե՛ս **Сухова О.А.**, ն շ վ ա ծ ա շ խ ա տ ու թ յ ու ն ը , է ջ 122:
¹¹⁹Տ ե՛ս **Мизулина Е.Б.**, Пределы кассационного обжалования/Проблемы охраны прав и законных интересов личности в социалистическом уголовном праве и процессе. - Ярославль: Изд-во Ярослав, госуд. ун-та, 1985, է ջ 92, **Колоколов И.Л.**, Судебная реформа: некоторые проблемы судостроительства, уголовного права и процесса, Курск, 1999, է ջ 136:

¹²⁰Ի ր ու ն մ ա ն հ ա վ ա ս ա ր ա կ շ ո վ ա ծ կ ա ր գ ա վ ո ր մ ա ն ք ա ն ա ձ և` ու ու ս դ ա տ ա վ ա ր ա գ ե տ ն եր ն առ ա ջ ա ր կ ու մ ե ն Ռ Դ Ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն հ 1998 թ վ ա կ ա ն հ հ ու լ ի ս ի 2-ի թ հ վ 20-Պ (Постановление Конституционного Суда РФ от 02.07.1998 N 20-П "По делу о проверке конституционности отдельных положений статей 331 и 464 Уголовно - процессуального кодекса РСФСР в связи с жалобами ряда граждан") ո թ ո շ մ ա ն 3-ր դ կ ե տ ու մ տ ե ղ գ տ ա ձ այ ն դ ր ու յ ը , հ ա մ ա ձ այ ն ո թ ի` դ ա տ ա վ ո ր ն եր հ ա ն կ ա խ ու թ յ ու ն ը չ ի խ ա փ ա տ վ ու մ ն ա փ ա ն գ ո թ Ն ը ս տ ե ու թ յ ա ն լ ու ծ ո ղ դ ա տ ա կ ա ն ա կ տ կ այ ա ց ն ե լ ն այ ն մ հ ջ ա ն կ յ ալ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր հ բ ո ղ ո ք ա ր կ մ ա ն ա ր դ յ ու ն ք ու մ , ո թ ո ն ք ու ղ ղ ա կ ի ո թ ե ն չ ե ն առ ն չ վ ու մ վ եր ջ ն ա կ ա ն դ ա տ ա կ ա ն ա կ տի բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ա ն ը` ն եր առ յ ալ գ ո թ ի փ ա ս տ ա կ ա ն հ ա ն գ ա մ ա ն ք ն եր հ , ա պ ա ց ու յ ց ն եր հ գ ն ա հ ա տ մ ա ն , ա ր ա ր ք ի ո թ ա կ մ ա ն , պ ա տ ժ վ եր ա ք եր յ ալ ե գր ա հ ա ն գ ու մ ն եր հ ն : Տ ե՛ս **Сухова О.А.**, ն շ վ ա ծ ա շ խ ա տ ու թ յ ու ն ը , է ջ 151:

կանգնու մը վճռաբեկ դատարանի կողմից անգամ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելուց հետո կարող է խնդրահարույց կամ անհնարին լինել .

2) դա կարող է ապահովել անձի իրավունքների, գործի քննության օրինական կարգի արագ կերպով վերականգնումը,

3) գործն ըստ էության չլուծող դատական ակտը կապված է քրեական գործի հետագա քննության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հետ.

4) բողոքաբերի վկայակոչած խախտումները վկայում են ոչ միայն այդ խախտմամբ իրականացված դատավարական գործողության կամ կայացված դատավարական որոշման անօրինականության մասին, այլև անօրինական են դարձնում դեռևս չիրականացված դատավարական գործողությունը կամ ամբողջ ծավալով չիրականացված քրեադատավարական գործունեությունը, հետևաբար նաև՝ ոչ արդարադատ դեռևս չկայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը¹²¹:

Այսպիսով, որպես ընդհանուր կանոն՝ դատական քննության ընթացքում կայացված գործն ըստ էության չլուծող դատական ակտերը պետք է բողոքարկվեն դատավճռի հետ միասին՝ երաշխավորելու համար դատարանների ներքին անկախությունը: Այս կանոնից իրավաչափ բացառություն կարող են համարվել այն դեպքերը, երբ անձի խախտված իրավունքների ամբողջ ծավալով վերականգնումը վճռաբեկ դատարանի կողմից անգամ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելուց հետո կարող է խնդրահարույց կամ անհնարին լինել, և եթե դա չի խոչընդոտի ստորադաս դատարանում գործի ողջ ամիտ ժամկետում քննությանը: Վերոհիշյալ չափանիշների հավաքմամբ՝ դատավարագետներն առավել ապես միակարծիք են անձին ապրիլի կալանքի տակ պահելու կամ խափանման այլ միջոցներ կիրառելու, դռնփակ դատական քննություն անկացնելու, պաշտպանության միջոց կիրառելու մասին միջնորդությունները մերժելու, դատական սանկցիա կիրառելու մասին որոշումների անմիջական բողոքարկման ընթացակարգ սահմանելու հարցում¹²²: Ինչ վերաբե-

¹²¹Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջեր 151-152, **Пальчикова М. В.**, Пределы и критерии обжалования промежуточных судебных решений по уголовным делам//Уголовный процесс. 2013, N1, էջեր 71–72, **Дорошков В.В.**, Пересмотр решений мирового судьи по уголовным делам в апелляционном порядке // Российская юстиция, 2002, N7, էջեր 39–41:

¹²²Տե՛ս **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջ 97, **Жеребятьев И., Шамарлиу Л.**,

րում է ինքնուրույն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերին, ապա այ դպիսիք առավել ապես ստորին ատյանի դատարանում գործի բնականոն քննությանն ապահովելու նպատակով բազմաթիվ դատավարական հարցերով կայացվող որոշումներն են, որոնց բողոքարկումը կարող է հանգեցնել վարույթի ձգձգման և հանգեցնել վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի գործունեությանը անհարկի միջամտության և ստորադաս դատարանի անկախության սահմանափակման: Խոսքն առավել ապես վերաբերում է ապացույցների հետազոտման կարգ սահմանելու, ապացույցներ հետազոտելու, պահանջելու կամ առանձին ապացույցներ ապացուցողական զանգվածից հանելու վերաբերյալ միջնորդությանները մերժելու կամ բավարարելու մասին որոշումներին¹²³: Անդրադառնալով Օրենսգրքում այս առնչությամբ առկա կարգավորումներին՝ նախ, հարկ է նշել, որ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու, հանձնման մասին և դատական ակտերի կատարման կասակցությամբ որոշումների վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը (Օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 1-ին, 6-7-րդ կետեր): Բողոքարկման ենթակա՝ օրենքում ուղղակիորեն սահմանված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի այս շրջանակը, սակայն, սպառնիչ է, քանի որ Օրենսգրքի նույն 376.1-րդ հոդվածի 8-րդ կետը նախատեսում է նաև օրենքով սահմանված առանձին դեպքերում այլ դատական ակտերը (պաշտպանության միջոցների իրականացման դադարեցման, դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու, գրավը պետության եկամուտ դարձնելու մասին, երաշխավորողի մուծած դրամական գումարը պետության եկամուտ դարձնելու, դատական սանկցիա կիրառելու մասին (նաև վերաքննիչ դատարանի) որոշումները բողոքարկելու հնարավորություն):

Առանձին քննարկման կարիք ունի այն հարցը, թե արդյոք կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները բողոքարկելու օրենսդրական հնարա-

նշված աշխատությունը, էջ 84, *Лоджанская Т.И.*, նշված աշխատությունը, էջ 247, *Червоткин А.С.*, նշված աշխատությունը, էջ 98:

¹²³Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 125:

վորությունը վերաբերում է նաև դատական քննության փուլում կայացվող համապատասխան որոշումներին: Քննարկվող խնդրի առնչությամբ Վճռաբեկ դատարանը Ն.Յարությունյանի գործով 2016 թվականի մարտի 30-ի ԵԱՆԴ/0081/01/14 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում խախտման միջոցի բողոքարկման օրենսդրական հնարավորության առկայության մասին: Քննարկվող խնդրի առնչությամբ բավական հետաքրքրական մոտեցում է արտահայտել ՌԴ Սահմանադրական դատարանն իր 1998 թվականի հունիսի 2-ի թիվ 20-Պ որոշմամբ¹²⁴, որով հակասահմանադրական է ճանաչել ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ առաջին ասյանի դատարանի որոշումների բողոքարկման օրենսդրական կարգավորումներն այն մասով, որով դրանք չեն նախատեսում անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները շոշափող՝ խախտման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների կիրառման կամ դրանց ժամկետի երկարաձգման հետ կապված որոշումները նախքան գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը բողոքարկելու հնարավորությունը: ՌԴ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ որդեգրված մոտեցումն այն է, որ նշված որոշումների վերանայման հնարավորությունը ստորադաս դատարանին չի դնում վերադաս դատարանից կախվածության մեջ, քանի որ դրանք շոշափում քրեական գործի էությունը¹²⁵: Այս դիրքորոշումը ՌԴ Սահմանադրական դատարանը զարգացրել և վերահաստատել է նաև իր 2004 թվականի փետրվարի 6-ի թիվ 44-Օ որոշման¹²⁶ մեջ: Օ.Ա.Սուլխովայի կարծիքով ՌԴ Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը կոչված է երաշխավորելու դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը և բխում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով ձերբակալված կամ կալանավորված անձի համար երաշխավորված ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությանն ազատարձակվելու

¹²⁴Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 2 июля 1998 г. N 20-П «По делу о проверке конституционности отдельных положений статей 331 и 464 Уголовно-процессуального кодекса РСФСР в связи с жалобами ряда граждан», http://sutyajnik.ru/rus/cases/judgments/con_sud/shalatonova.htm

¹²⁵Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 113:

¹²⁶Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 06.02.2004 N 44-О "По жалобе гражданина Демьяненко Владимира Николаевича на нарушение его конституционных прав положениями статей 56, 246, 278 и 355 Уголовно-процессуального кодекса Российской Федерации" http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_47218/

իրավունքից¹²⁷: Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները, սակայն, որոշակի առարկությունների տեղիք են տալիս: Այսպես, քրեական վարույթի շրջանակներում անձի՝ իր նկատմամբ ընտրված կալանքի օրինականությունը վիճարկելու հնարավորությունը, ի հավելումն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի և դրանից անջատ, երաշխավորված է նաև 5-րդ հոդվածի 4-րդ կետով՝ համաձայն որի՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատարձակել, եթե կալանավորումն անօրինական է: Սակայն, եթե 5-րդ հոդվածի 3-րդ կետը ենթադրում է պետության պարտականությունը պարբերաբար ստուգել կալանավորման օրինականությունը, ապա 4-րդ կետը երաշխավորում է համապատասխան վարույթ նախաձեռնելու անձի իրավունքը¹²⁸: Նշված կետի պահանջներին բավարարող՝ դատական վերանայման եղանակները կարող են տարբերվել՝ կախված ազատությունից զրկելու կոնկրետ տեսակից: Հիմնական պահանջն այն է, որ կալանքի օրինականությունը պետք է ստուգվի ողջամիտ պարբերականությամբ¹²⁹: Ընդ որում, նույն 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի պարտավորեցնում անդամ-պետություններին երաշխավորել երկրորդ ատյանի դատարանի կողմից կալանավորման օրինականությունը ստուգելու և անձին ազատարձակելու միջնորդությունը քննության առնելու ընթացակարգեր¹³⁰: Հիմք ընդունելով վերոշարադրյալը և հաշվի առնելով, որ դատական քննության փուլում անձը հնարավորություն ունի պարբերաբար բարձրացնելու կալանավորման օրինականության հարցը՝ կարծում ենք՝ իրավաչափ կարող է համարվել գործող օրենսդրական կարգավորման գործնականում այնպիսի մեկնաբանությունը, որ չնախատեսվի դատական

¹²⁷Տե՛ս *Cysoea O.A.*, նշված աշխատությունը, էջ 114:

¹²⁸Տե՛ս Right to Liberty and Security under the European Convention on Human Rights (Article 5).

INTERIGHTS. Manual for Lawyers. Handbook, 2007, էջ 42

[//http://www.interights.org/document/105/index.html](http://www.interights.org/document/105/index.html) *Ismoilov and Others v. Russia*, 2008 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ, գանգատ թիվ 30352/03, կետ 146:

¹²⁹Տե՛ս *Herczegfalvy v. Austria*, 1992 սեպտեմբերի 24-ի վճիռ, գանգատ թիվ 10533/83, կետեր 75,77, *Blackstock v. the United Kingdom*, 2005 թվականի հունիսի 21-ի վճիռ, գանգատ թիվ 59512/00, կետ 44, *Shishkov v. Bulgaria*, 2003 թվականի հունվարի 9-ի վճիռ, գանգատ թիվ 38822/97, կետ 88:

¹³⁰Տե՛ս *Kucera v. Slovakia*, 2007 թվականի հունիսի 17-ի վճիռ, գանգատ թիվ 48666/99, կետ 107:

քննություն ան փուլում կալանավորման օրինականությունը վերադաս դատական ատյանում վիճարկելու ուղղակի օրենսդրական հնարավորություն: Մեր կարծիքով, նման մեկնաբանությունը հակասության մեջ չի մտնի կոնվենցիոնալ պահանջների հետայնքանով, որ նախատեսված են դատական քննության փուլում անձի նախաձեռնությամբ կալանքի օրինականությունը պարբերաբար վիճարկելու մեխանիզմներ, իսկ վերոհիշյալ կոնվենցիոնալ նորմն էլ չի սահմանում երկրորդ ատյան երաշխավորելու պարտադիր պահանջ: Բացի այդ, նման կարգավորման համաչափության մասին է վկայում նաև այն, որ կալանքի կիրառման՝ հիմնավոր կասկածի առկայության պայմանը կապված է դեպքին անձի հնարավոր առնչության փաստի հետ: Եվ ստորադաս դատարանում գործի ըստ էության քննության փուլում վերադաս դատական ատյանի կողմից կալանավորման պայմանին անդրադառնալը և ստորադաս դատարանի դիրքորոշումից տարբեր մոտեցման ձևավորումը, ստորադաս դատարանի գործունեությանը միջամտելու և վերջինիս անկախությունը սահմանափակելու վտանգ է պարունակում:

Կարծում ենք՝ առանձին քննարկման կարիք ունի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշման բողոքարկման հնարավորության հարցը, քանի որ այս առումով Օրենսգրքի ընդհանուր (174-րդ հոդվածի 4-րդ մաս) և հատուկ մասերը (380-րդ հոդվածի 2-րդ մասը) հակադիր օրենսդրական կարգավորումներ են նախատեսում¹³¹: Բողոքարկման բաց թողած ժամկետը վերականգնելու հարցի լուծումը սերտորեն առնչվում է արդարադատության մատչելիության կարևորագույն իրավունքի հետ, դրանից է կախված անձի՝ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետագա իրացման հնարավորությունը: Ուստի կարծում ենք՝ բողոքարկման բաց թողած ժամ-

¹³¹Կ.Մնացականյանի գործով 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ԵԿԴ/0236/06/08 որոշման մեջ Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննարկվող նորմերի միջև առկա կոլիզիան անհրաժեշտ է լուծել՝ նախապատվություն տալով Օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասին: *Կ.Կիրակոսյանի* գործով ավելի ուշ՝ 2010 թվականի մայիսի 4-ին ընդունված ՅՅԲԴ2/0149/01/08 որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է, որ Օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա վարույթն իրականացնող վերադաս դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ, իսկ 380-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ բացառապես իրավասու անձի միջնորդությամբ քննարկել և լուծել բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցը վրա:

կետը վերականգնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկման առարկա դարձնելը անձի դատական պաշտպանության իրավունքի ապահովման կարևոր երաշխիք է:

Առանձին անդրադարձի կարիք ունի տեսության մեջ լայնորեն քննարկվող՝ ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հարցը: Գործող Օրենսգիրքը նման հնարավորություն չի ընձեռում: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել: Վճռաբեկ դատարանը *ՀՀ նվազագույնի գործով* 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԿԴ/0547/06/09 որոշման մեջ կոլիզիոն կանոնների կիրառմամբ այս հակասությունը լուծել է հոգուտ Օրենսգրքի՝ որպես առավել վաղ ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող ակտի: Քննարկման առարկա դարձնելով քաղաքացիական դատավարությունում համանման կարգավորումների համատեքստում դատական օրենսգրքի նշված նորմի գործնականում այն մեկնաբանությունը, որ օրենսդիրը նախատեսել է միայն ինքնաբացարկի մասին միջնորդությունը բավարարելու, սակայն ոչ մերժելու մասին որոշումը բողոքարկելու հնարավորություն՝ Սահմանադրական դատարանն իր 2010 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտել է իրավական մոտեցում առ այն, որ քննարկվող կարգավորումներն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդ որոշումների վիճարկման իրավունքը՝ ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Ճանաչելով պետության հայեցողությունը ինքնաբացարկի որոշման բողոքարկման կարգի և ժամկետների ընտրության հարցում՝ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ դիտարկում է արել առ այն, որ տարբեր երկրների օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, «հետաձգված բողոքարկմանը», որը նույնպես ապահովում է դատարանի իրավազորության երաշխավորման հար-

ցում կողմերի իրավունքների իրացումը: Որոշ դատավարագետներ, սակայն, օրինակ, կողմ են ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկման կառուցակարգին այն հիմնավորմամբ, որ այս որոշման բողոքարկումը կոչված է բացառելու հետագայում դատական ակտի բեկանումն այն հիմքով, որ դատական ակտը կայացվել է դատարանի անօրինական կազմով¹³²: Բացի այդ, վերադաս դատական ատյանի կողմից այս որոշման վերանայումը չի սահմանափակում ստորադաս դատարանի անկախությունը, քանի որ այն վերաբերում է կոնկրետ կազմով գործի քննության հնարավորությանը, այլ ոչ թե գործի էությանը: Այդուհանդերձ, այս կարգավորումը կարող է նաև խնդրահարույց լինել: Այսպես, հաշվի առնելով վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման ժամկետները՝ չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի կայացման պահին (առավել ևս եթե բողոքը վարույթ ընդունված լինի) առաջին ատյանի դատարանն արդեն իսկ կայացրած լինի գործն ըստ էության լուծող դատական ակտ: Այս դեպքում, հարց է ծագում, թե ինչ իրավական հետևանքներ է առաջացնելու վճռաբեկ դատարանի դատական ակտը: Որոշ տեսաբաններ այս իրավիճակից ելք համարում են ստորադաս դատարանում վարույթի կասեցումը: Սակայն նման կարգավորումն էլ խնդրահարույց է այն առումով, որ կարող է հանգեցել առաջին ատյանի դատարանում գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման: Բացի այդ, չի բացառվում բողոքարկման իրավունքի չարաչափան հնարավորությունը: Հաշվի առնելով քննարկված դրական և բացասական կողմերը՝ կարծում ենք՝ առավել հավասարակշռված օրենսդրական կարգավորում է հետաձգված բողոքարկման կառուցակարգը: Առկա բացասական կողմերի հետ մեկտեղ՝ այս դիրքորոշումը հիմնավորող փաստարկ կարող է լինել դատական ակտի հնարավոր բեկանումից հետո անձի իրավունքների ամբողջ ծավալով վերականգնման հնարավորությունը: Կարծում ենք՝ նույնպիսի մոտեցում պետք է դրսևորել նաև տեսության մեջ քննարկվող՝ գործն ըստ ընդդատության ուղարկելու և դռնփակ դատական նիստում անցկացնելու մասին որոշումներն ինքնուրույն

¹³²Տե՛ս **Таран А.С.**, Обжалование решения суда об отводе. «Уголовное судопроизводство», 2011, №3, էջ 25, **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 130, **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջ 93:

բողոքարկելու հնարավորության օրենսդրական կանոնակարգման հարցում¹³³: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, ինքնուրույն բողոքարկման առարկա կարող է լինել դռնփակ դատական քննության անցկացնելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը՝ անձնական կյանքի գաղտնիության իրավունքի համաժամանակյա պաշտպանության նկատառումներից ելնելով: Վերոհիշյալ դիրքորոշումը կարելի է հիմնավորել նրանով, որ հետագայում գործն ըստ էության լուծող դատական ակտի հետ այս որոշման բողոքարկման արդյունքում դժվար կամ անհնար կարող է լինել խախտված իրավունքների ամբողջ ծավալով վերականգնումն անգամ դատական ակտի հնարավոր բեկանման պարագայում: Ընդ որում, պետք է ի նկատի ունենալ նաև, որ այս կտրվածքով մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի խախտումն իր բնույթով կարող է և գործի ելքի վրա ազդող հանգամանք չլինել: Ուստի, այս դեպքում անձը կարող է առավելագույնը հավակնել իր իրավունքների խախտման փաստի արձանագրման և դրա արդյունքում կրած բարոյական վնասի փոխատուցման: Մինչդեռ վերոհիշյալ որոշման ավելի վաղ (նախքան գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը) բողոքարկման պարագայում անձը կարող է հասնել իր համար առավել բարենպաստ իրավական հետևանքների, այն է՝ կանխել իր իրավունքի հետագա (շարունակական) խախտումը:

Առանձին քննարկման կարիք ունի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման բողոքարկման հնարավորության հարցը, որին, կարծում ենք, Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո կարող ենք դրական պատասխան տալ: Այսպես, Ա.Ղավալյանի գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0225/06/08 որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ առանց օրենքով նախատեսված հիմքերի վերաքննիչ բողոքն ա-

¹³³Դռնփակ դատական քննության անցկացնելու մասին որոշման ինքնուրույն բողոքարկման առումով նույնպիսի իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՌԴ Սահմանադրական դատարանն իր 2007 թվականի հունիսի 17-ի թիվ 622-Օ-Օ որոշման մեջ: Ст.у Определение Конституционного Суда РФ от 17.07.2007 N 622-О-О "Об отказе в принятии к рассмотрению жалобы гражданина Скепского Владислава Вячеславовича на нарушение его конституционных прав частью девятой статьи 166, пунктом 4 части второй статьи 241, частью пятой статьи 278 и частью шестой статьи 355 Уголовно-процессуального кодекса Российской Федерации", http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_71931/

առանց քննության թողնելը հանգեցնում է դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Մեկ այլ՝ Վ.Ալ. իխանյանի գործով 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՅՅՔԲԴ/0046/01/08 որոշման մեջ Վճռաբեկ դատարանն քննարկվող որոշման ինքնուրույն բողոքարկման անհրաժեշտությունը հիմնավորել է նրանով, որ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ, քանի որ Օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1 կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են նաև առաջին ատյանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը: Չնայած վերը հիշատակված ուղղակի օրենսդրական կարգավորմանը, կարծում ենք, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը չի կարող դիտարկվել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ: Օրենսդրական կարգավորման այդ նույն տրամաբանությամբ ստացվում է, որ եթե առանց քննության է թողնվել գործն ըստ էության չլուծող դատական ակտի դեմ բերված բողոքը, ապա նույն՝ առանց քննության թողնելու մասին որոշումն այս դեպքում գործն ըստ էության չլուծող դատական ակտ է: Թե՛ գործն ըստ էության լուծող, և թե՛ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքն առանց քննության թողնելու մասնորոշումը կայացվում է ոչ թե դատական ակտի ըստ էության վերանայման, այլ բողոք բերելու դատավարական որոշակի պահանջներ պահպանված չլինելու հիմքով: Ուստի, կարծում ենք, անկախ բողոքարկման առարկայից՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը գործն ըստ էության չլուծող դատական ակտ է: Այլ հարց է, որ այնքանով, որքանով այն բացառում է գործով հետագավարույթը, և դրանով էապես սահմանափակում է դատական վերանայման իրավունքը, նշված որոշումը բողոքարկելու հնարավորությունն չնախատեսելը կարող է հանգեցնել անձի դատական պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ Օրենսգիրքը վճռաբեկ բողոքարկման առարկայի առումով նախատեսում է ընդհանուր առմամբ համաչափ օրենսդրական կարգավորումներ: Այ-

դու հանդերձ, գործող օրենսդրական կարգավորումը գերծ չէ նաև թերու թյ ու ններից, որոնցից շատերը գործնականում վեր են հանվել դատական պրակտիկայում՝ Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի որոշումներում: Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք օրենքում ուղղակիորեն սահմանել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու, ինչպես նաև դռնփակ դատական քննության անցկացնելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումները բողոքարկելու հնարավորություն:

Այժմ անդրադառնանք վճռաբեկ բողոքարկման ժամկետներին: Օրենսգիրքը նախատեսում է վճռաբեկ բողոք բերելու տարբերակված ժամկետներ¹³⁴: Այսպես, գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ՝ 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ¹³⁵: Սակայն եթե գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը հաշվարկում է դատական ակտի հրապարկման, ապա գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում՝ ստացման պահից: Դատական ակտերի բողոքարկման ժամկետի՝ հրապարկման պահից հաշվարկման կանոնի իրավաչափությունն անդրադարձել է Եվրոպական դատարանը ***Մամիկոնյ անն ընդդեմ Հայ աստանի*** գործով որոշման մեջ, որով իրավական դիրքորոշում է արտահայտել առայն, որ. «(...) վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված տասնօրյա ժամկետի հաշվարկը վերաքննիչ դատարանի վճռի հրապարակման օրվանից հաշվարկելն ինքնին չի կարող դիտարկվել որպես կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում (...) եթե այն ուղեկցվել է բավարար երաշխիքներով, որոնք իրավունք են տալիս բողոքարկող անձանց օգտվելու բո-

¹³⁴Նման տարբերակված կարգավորումը, համաձայն Սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված թիվ ՍԴՌ-1062 որոշման, միանգամայն իրավաչափ է և կապված է դրանց քննության պայմանավորված այն հանգամանքի հետ, որ գործն ըստ էության լուծող դատական ակտին ծանոթանալու և վճռաբեկ բողոք պատրաստելու համար անձին անհրաժեշտ է ավելի երկար ժամանակահատված:

¹³⁵Օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի՝ հիմնարար խախտման հիմքով վերանայումը վերաքննությունն կամ վճռաբեկությունն չէ, ուստի իրավաչափ է դրականոնակարգումը վճռաբեկ դատարանում վարույթը կարգավորող բաժնում:

դոքսարկման ատյանի արդյունավետ մատչելի չլինելը, (...)»: Նման երաշխիք եվրոպական դատարանը դիտարկել է օրենքի այն պահանջը, որ վերաքննիչ դատարանի դատավճիռը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում հանձնվի դատապարտյալին (տե՛ս **Mamikonyan v. Armenia** գործով եվրոպական դատարանի 2010 թվականի մարտի 16-ի վճիռը, գանգատ թիվ 25083/05): Նույն խնդրին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-1052 որոշման մեջ և վերահաստատելով իր նախկին՝ 2007 թվականի նոյոմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719, 2006 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-652, 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-665, 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքների վերաբերյալ՝ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ անձը «*պետք է ունենա ողջամիտ ժամկետ դատական ակտն ստանալ ու ց կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալ ու ց, նրան սաքտնապես հասանելի լինել ու ց հետո հիմնավոր բողոք ներկայացնել ու համար, իսկ բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերել ու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից անկախ պատճառներով, իրավունքի ու ժող (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը*»: Վերոհիշյալ իրավական դիրքորոշումը Սահմանադրական դատարանը վերահաստատել է նաև արդեն իսկ հիշատակված ՍԴՈ-1062 որոշման մեջ: Նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանն բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնել ու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիք է դիտարկել օրենքով սահմանված՝ արդեն իսկ հիշատակված այն պահանջի իրացումը, որ եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի (հասանելի դարձվի) անձին և անձն առնվազն 27 օր ժամանակ ունենա հիմնավոր բողոք ներկայացնել ու համար:

Գործնականում վճռաբեկ բողոքարկման ժամկետը հաշվարկվում է, համենայն դեպս, մինչև և Սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-1249 որոշման ընդունումը, հաշվարկվում էր վերաքննիչ դատարանի դատական ակտի փաստացի ստացման

պահից: Այսպես, եթե բողոքաբերը բաց էր թողել բողոք բերելու օրենքով սահմանված ժամկետը, քանի որ դատական ակտը ուշ էր հանձնվել, ապա անկախ բողոքարկման բաց թողած ժամկետը հարգելի համարելու միջնորդությունից, Վճռաբեկ դատարանը բողոքը համարում էր ժամկետում տրված և այն նախնական քննության էր առնում: Վերոշարադրյալից բխում է, որ Վճռաբեկ դատարանը գործնականում ավելի էլ այն երաշխիքներ էր տրամադրում, քան պահանջվում էր ՍԴՈ-1052 որոշմամբ, քանի որ այն չէր սահմանում, անկախ միջնորդության առկայությունից կամ բացակայությունից, բողոքարկման բաց թողած ժամկետը վերականգնելու հիմադրատիվ պահանջ: Իսկ արդեն վերը հիշատակված՝ թիվ ՍԴՈ-1249 որոշմամբ հատուկ ընդգծվեց համապատասխան միջնորդություն ներկայացնելու պարտադիր պահանջը: Վերոհիշյալ որոշման ընդունմանը հաջորդեց բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության բացակայության հիմքով վճռաբեկ բողոքները վերադարձնելու արակտիկան¹³⁶: Թեև բողոքը վերադարձնելու նման հիմք քրեադատավարական օրենքը չի նախատեսում, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի նման գործունեությունը կարելի է արդարացնել նրանով, որ այդ կերպ Վճռաբեկ դատարանի կողմից փորձ է կատարվել խուսափել արակտիկայի կտրուկ փոփոխությամբ պայմանավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակումներից: Սակայն Վճռաբեկ դատարանի հետագա՝ 2016 թվականի առաջին քառամսյակում վճռաբեկ բողոքները ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու արակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանը գնացել է հակառակ ծայրահեղության՝ որդեգրելով բողոքարկման ժամկետը ստացման պահից 27 օր հաշվարկելու մեկ այլ՝ սկզբունքորեն նոր մոտեցում¹³⁷: Այս մոտեցման հիմքում ընկած էր Սահմանադրական դատարանի արդեն իսկ հիշատակված թիվ ՍԴՈ-1062 որոշման մեջ տեղ գտած այն դիրքորոշումը, որ. **«անձն առնվազն 27 օր ժամանակ ու նենա հիմնադրո բողոք ներկայացնել ու համար»**: Վճռաբեկ դատարանի այս քաղաքականությունը, կարծում ենք, որոշակի

¹³⁶Տե՛ս օրինակ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի փետրվարի 3-ի թիվ ԳԴ/0001/01/15 որոշումը:

¹³⁷Տե՛ս օրինակ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 4-ի թիվ ԵՄԴ/0066/01/14 որոշումը:

քննադատությանը ունենալի տեղիք է տալ իս: Գործող օրենսդրական կարգավորումներում որևէ փոփոխության կամ լրացում կատարված չլինելու պարագայում դրանց մեկնաբանության այդպես կտրուկ փոփոխությանն առանց ծանրակշիռ հիմքերի Վճռաբեկ դատարանի գործունեությանը դարձնում է իրավական անորոշության աղբյուր, ինչն անհամատեղելի է արդարադատության մատչելիության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքների հետ: Եվ երկրորդ՝ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման մեջ նշվում է, որ անձը ոչ թե առավել ազույնը, այլ առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա բողոք ներկայացնելու համար: Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը ոչ թե բողոքարկման՝ դատական ակտի ստացման պահից 27-օրյա ժամկետի տրամադրումն է, այլ այն, որ բողոքարկման ժամկետները դատական ակտերի հրապարակման պահից հաշվարկելու կարգը գործող օրենսդրական կարգավորման տրամաբանության շրջանակներում անձին դատական ակտի ստացման պահից բողոքարկման համար առնվազն 27 օր տրամադրելու պարագայում համահունչ կլինի դատական պաշտպանության իրավունքին: Զենց ինքը՝ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական դատավարության շրջանակներում համարժեք օրենսդրական կարգավորման նույն կերպ մեկնաբանությանը, իր 2016 թվականի ապրիլի 26-ի թիվ ՍԴՈ-1268 որոշման մեջ արձանագրել է, որ. **«առնվազն 27 օր ժամանակը՝ չի կարող դիտարկվել բողոք ներկայացնելու համար հաշվարկման ենթակա ինքնուրույն և առավել ազույն ժամկետ Միայն այն դեպքում, երբ դատական ակտի հրապարակման պահից օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) պետք է ունենա առնվազն 27 օր ժամանակ, որպես նվազագույն ժամկետ, հիմնավոր բողոք ներկայացնելու համար»:** Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման ընդունումից հետո Վճռաբեկ դատարանի (մասնավորապես քրեական պալատի) կողմից բողոքարկման մեկամսյա ժամկետի հաշվարկի համար դարձյալ ելակետ է ընդունվել դատական ակտի ստացման պահը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հետևողականորեն իրացնում է նաև ՍԴՈ-1249 որոշման մեջ ընդգծված այն դիրքորոշումը, որ այն դեպ-

քում, երբ բողոքաբերը դատական ակտը ստացել է օրենքով նախատեսված եռօրյա ժամկետից հետո, ապա պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող ապացույցները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքարկման ժամկետների սահմանման առումով գործող Օրենսգիրքը համաչափ օրենսդրական կարգավորում է նախատեսում, որը, սակայն, որոշակիորեն խնդրահարույց է գործնըստ եռնթյան և ուժող դատական ակտերի ակտերի բողոքարկման ժամկետների հաշվարկման պահի առումով: Թեև դատական պրակտիկան որոշակիորեն փորձել է և ուժել նշված խնդիրը, այդուհանդերձ, առավել նպատակահարմար կարող է լինել բողոքարկման ժամկետները դատական ակտի ստացման պահից հաշվարկելու օրենսդրական կարգի նախատեսումը:

§3. Վճռաբեկ բողոքարկման սուբյեկտները

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանող՝ Օրենսգրքի 404-րդ հոդվածն Օրենսգրքի ընդունումից հետո մինչև օրս թերևս առավել հաճախակի օրենսդրական փոփոխությունների և ևրացումների ենթարկված նորմերից է¹³⁸: Այս հարցում օրենսդրական զարգացումներն առավել ապես կապված են վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման անմիջական և միջնորդավորված կարգի գուգակցումների և դրանց անընդհատ հերթափոխերի հետ: Ընդ որում, օրենսդրական կարգավորման պարբերական փոփոխությունների նպատակ է ն 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, առանձին օրենսդրական կարգավորումների վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները: Վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման կարգի օրենսդրական կարգավորման տեսանկյունից ժամանակագրական առումով կարելի է առանձնանացնել հետևյալ մոդելները.

1) Օրենսգրքի ընդունումից հետո մինչև 2006 թվականի հունիսի 16-ը գործող մոդելը, երբ նախատեսված էր օրինական ուժի մեջ

¹³⁸Օրենսգրքի 404-րդ հոդվածը փոփ. 18.02.04 ՅՕ-34-Ն, 13.09.05 ՅՕ-178-Ն, ևրաց. 25.05.06 ՅՕ-91-Ն, փոփ. խմբ., ևրաց. 01.06.06 ՅՕ-108-Ն, խմբ., փոփ. 21.02.07 ՅՕ-93-Ն, խմբ. 28.11.07 ՅՕ-270-Ն, փոփ. 26.12.08 ՅՕ-237-Ն, ևրաց. 10.06.14 ՅՕ-48-Ն:

չ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու անմիջական և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ՝ ՀՀ գլխավոր դատախազի և նրատեղակալների ինչպես նաև դատավարության մյուս մասնակիցների կողմից՝ հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ:

2) 2006 թվականի հունիսի 16-ից մինչև 2007 թվականի ապրիլի 7-ը գործող մոդելը, երբ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների սահմանադրական ինստիտուտի վերացմամբ պայմանավորված՝ Օրենսգրքից հանվեց փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտը: Ըստ այդմ, նախատեսվեց ՀՀ գլխավոր դատախազի կամ նրատեղակալ աների կողմից օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև դատավարության մասնակիցների կողմից առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի և վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորություն:

3) 2007 թվականի ապրիլի 7-ից մինչև 2009 թվականի հունվարի 1-ը գործող մոդելը, երբ դարձյալ ներմուծվեց հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը և նախատեսվեց առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների, դատավճիռների ու որոշումների¹³⁹ դեմ բացառապես ՀՀ գլխավոր դատախազի կամ նրատեղակալների, ինչպես նաև դատավարության մասնակիցների (բացառությամբ մեղադրողի) կողմից միջնորդավորված կարգով բողոք բերելու հնարավորություն: Հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը, որոշակի առանձնահատկություններով հանդերձ, ոչ այլ ինչ էր, քան դրանախատկար կազմող՝ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով բողոք բերելու ինստիտուտի վերականգնում, ինչպես իրավաչափորեն դիտարկել է Սահմանադրա-

¹³⁹Ավելի վաղ՝ 2007 թվականի հունիսի 7-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ-152-Ն օրենքով սահմանվել էր վերաքննիչ դատարանի դատական ակտերի՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելու կարգ և ըստ այդմ վճռաբեկության կարգով կարող էին բողոքարկվել ոչ միայն առաջին ատյանի, այլ և վերաքննիչ դատարանի արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ավելի ուշ՝ ընդունված արդեն հիշատակված ՀՀ-270-Ն օրենքը վճռաբեկ բողոքարկման առարկան սահմանափակեց բացառապես վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերով՝ վերացնելով առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն անմիջականորեն վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորությունը:

կան դատարանն իր 2008 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-765 որոշման մեջ: Վերը հիշատակված որոշման մեջ վճռաբեկ բողոքարկման առարկայի՝ օրենսդրական կարգավորման փոփոխության ու ներքին զարգացումների, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի դրույթների և գործնականում քննարկվող ինստիտուտի կիրառության արդյունքների համակարգային վերլուծության համատեքստում գնահատելով հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի ազդեցությունը արդարադատության մատչելիության իրավունքի վրա՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) հաշվի առնելով, (...) որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելի իստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությանը և ինքնօգտվելու հնարավորությունը, (...) նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելու և հրաժարվելու ազատությանը [...] (...) արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի և դրանով հետապնդվող նպատակի միջև, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի էությունը: (...) փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, (...) երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, բնականաբար, պայմանավորված Սահմանադրական դատարանի արդեն իսկ հիշատակված որոշմամբ:

4) 2009 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի հունիսի 3-ը գործող մոդելը, երբ նախատեսվեց քրեական դատավարության մասնակիցների կողմից վերաբննիչ դատարանի գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ անմիջականորեն վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը, բնականաբար, պայմանավորված Սահմանադրական դատարանի արդեն իսկ հիշատակված որոշմամբ:

5) 2014 թվականի հունիսի 3-ից գործող վերջին մոդելը, որը ներմուծվել է ՀՕ-48-Ն օրենքով: Նշված օրենքով դարձյալ նախատես-

վեց դատավարության մասնակիցների (բացառությամբ քրեական հետապնդման մարմինների) և դիմողի կողմից վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված, այն է՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու կարգ: Փաստաբանի միջոցով բողոք բերելու կառուցակարգի՝ հատուկ արտոնագիր ունեցող կամ հավատարմագրված բողոք բերելու ինստիտուտից թերևս էական տարբերիչ հատկանիշը ցանկացած, այլ ոչ թե որոշակի հատուկ գործընթացի արդյունքում արտոնագիր կամ հավատարմագիր ստացած սահմանափակ թվով փաստաբանների կողմից բողոք բերելու հնարավորությունն է: Այդուհանդերձ, այս օրենսդրական կարգավորմանն անդրադառնալով՝ Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի մարտի 15-ի թիվ ՍԴՈ-1196 որոշման մեջ գտել է, որ այն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածությունն է առաջացնում անձանց համար: Եվրոպական դատարանը ևս բազմիցս իր նախադեպային իրավունքում հաստատել է, որ վճռաբեկ առյանի դատարանում փաստաբանի կողմից ներկայացվելու պահանջն ինքնին չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, այն հստակորեն համահունչ է իրավունքի հարցեր քննող բարձրագույն դատական առյանի կարգավիճակին, և Եվրոպայի խորհրդի միջառք անդամ երկրների իրավական համակարգերի բնութագրիչ առանձնահատկությունն է¹⁴⁰: Անդրադառնալով հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտին ՅՅ քաղաքացիական դատավարության շրջանակներում՝ *Թովմասյանն ընդդեմ Յայաստանի* և *Շամոյանն ընդդեմ Յայաստանի* գործերով Եվրոպական դատարանը գտել է, որ ինքնին նշված ինստիտուտը չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, սակայն «*իրավաբանական օգնության դիմելու հնարավորության բացակայությունը, հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում գործող ընթացակարգային այն պահանջը, որի համաձայն վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարան կարող էին ներկայացվել միայն հավատարմագրված փաստաբանների միջոցով, անհամաչափորեն սահմանափակում էր դիմումատուի՝ դատարանի արդյունա-*

¹⁴⁰Տե՛ս *Gillow v. the United Kingdom*, 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ, գանգատ թիվ 9063/80, կետ 69, *Vacher v. France*, 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ, գանգատ թիվ 20368/92, կետեր 24, 28, *Tabov v. Poland*, 2007 թվականի մարտի 22-ի վճիռ, գանգատ թիվ 8932/05, կետ 42:

վետ մատչելի իրություն իրավունքը» (տե՛ս Թովմասյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 2016 թվականի հունվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 11578/08, 31-րդ կետը, Շամոյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 2015 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 18499/08, 30-րդ և 36-րդ կետերը): Այսպիսով, Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերոհիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտն ինքնին չի հակասում դատական պաշտպանության իրավունքին, սակայն այն խնդրահարույց է անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու պատշաճ իրավական ընթացակարգերի բացակայության համատեքստում: Մյուս կողմից՝ փաստաբանի միջոցով բողոք բերելու ինստիտուտի նախատեսումը վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքների որակը բարձրացնելու իրավաչափ նպատակ է հետապնդում: Օրենքով սահմանված բովանդակային խփստ պահանջներին համապատասխանող պատշաճ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պահանջվում է մասնագիտական խորը գիտելիքների առկայություն, Սահմանադրական դատարանի որոշումների, Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համակողմանի իմացություն¹⁴¹: Վերոհիշյալ հանգամանքները նվազագույնի են հասցնում մասնագիտական իրավաբանական գիտելիքներ չունեցող անձանց կողմից որակյալ բողոքներ ներկայացնելու հնարավորությունը: Նման պայմաններում պրոֆեսիոնալ իրավաբանական օգնությունը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Այսպիսով, բացառապես փաստաբանի միջոցով բողոք բերելու պայմանի նախատեսումը կարող է դիտարկվել որպես դատական ակտի վերանայման իրավունքի իրավաչափ և անհրաժեշտ սահմանափակում, եթե նախատեսվեն անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու պատշաճ իրավական ընթացակարգեր: Դեռ ավելին, անգամ պարտադիր իրավաբանական ներկայացուցչության պահանջի բացակայության պարագայում իրավաբանական օգնություն ցույց տալու պատշաճ իրավական ընթացակարգերի նախատեսումը, կարծում ենք, կարող է լուծել վճռաբեկ դատարանն անորակ բողոքներով չծանրաբեռնելու խնդիրը: Այս

¹⁴¹ Այդ մասին ավելի մանրամասն կխոսվի սույն գլխի չորրորդ պարագրաֆում:

դեպքում հարցն արդեն իրավաբանական օգնություն տրամադրելու հիմքերի և ընթացակարգի հստակեցումն է¹⁴²: Այս հարցում, որոշակիորեն ուղղորդող նշանակություն կարող են ունենալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում մշակված չափանիշները¹⁴³: Այսպես, արդարադատության մատչելիության համատեքստում անդրադառնալով վերանայման վարույթի շրջանակներում, մասնավորապես հենց վճռաբեկ ատյանի դատարանում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հիմքերին՝ Եվրոպական դատարանը հռչակում է անդրադառնալով դեմ գործերից մեկով արդեն իսկ պարտադիր իրավաբանական ներկայացուցչության պահանջի առկայությունը դիտարկել էր անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու բացարձակ հիմք¹⁴⁴: Սակայն ներկայումս Եվրոպական դատարանի կողմից կիրառվող հիմնական չափանիշը *Քվարանթան ընդդեմ Ծվեյցարիայի* գործով մշակված, այսպես կոչված, Քվարանթայի թեստն է¹⁴⁵՝ համաձայն որի անձը պետք է անվճար իրավաբանական օգնություն ստանա, եթե չունի բավարար ֆինանսական միջոցներ, և եթե դա է պահանջում արդարադատության շահը¹⁴⁶: Թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ինչպես նշում է Եվրոպական դատարանը, ուղղակիորեն չի տարածվում իրավաբանական օգնություն համար դիմելու ներպետական ընթացակարգերի վրա, այդուհանդերձ, առանձին գործերով Եվրոպական դատարանը այն կիրառելի է համարել նաև այդ ընթացակարգերի նկատմամբ այնքանով, որքանով դրանց հետ կապված լուրջ թերությունները կարող են էական ազդեցություն ունենալ արդարադատության մատչելիության իրավունքի վրա¹⁴⁷: Այսպես, օրինակ, Բելգիայի, Ֆրանսիայի և Լեհաստանի¹⁴⁸ դեմ առանձին գործերով Եվրոպական դա-

¹⁴²Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի նախագահը ևս Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի օրինակով նշել էր, որ վիճակագրության համաձայն՝ առավել ասես հաջողության են հավակնում վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով ներկայացվող բողոքները: Տե՛ս **G. Canivet**, “The system of justice and fair trials”, *Juris-classeur périodique*, Study, I 361, no. 46, 2001 թվականի նոյեմբերի 14, էջ 2089:

¹⁴³Ավելի մանրամասն տե՛ս Legal aid in Europe: Minimum requirements under International Law <https://www.opensocietyfoundations.org/sites/default/files/ee-legal-aid-standards-20150427.pdf>

¹⁴⁴Տե՛ս **Airey v. Ireland**, 1979 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռ, գանգատ թիվ 6289/73:

¹⁴⁵Տե՛ս **Quaranta v. Switzerland**, 1991 թվականի մայիսի 24-ի վճիռ, գանգատ թիվ 12744/87:

¹⁴⁶Տե՛ս **Pham Hoang v. France**, 1992 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռ, գանգատ թիվ 13191/87, **R.D. v. Poland**, 2001 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ, գանգատներ թիվ 29692/96, 34612/97:

¹⁴⁷Տե՛ս **Gutfreund v France**, 2003 թվականի հունիսի 12-ի վճիռ, գանգատ թիվ 45681/99, կետ 44:

¹⁴⁸Բելգիայում և Լեհաստանում թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական, իսկ

տարանը, քննարկման առարկա դարձնելով վճռաբեկ բողոք բերելու համար իրավաբանական օգնության դիմելու ընթացակարգերը, առանձնացրել է այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝ իրավաբանական օգնություն ստանալու դիմումի անհապաղ քննությունը, դիմումների քննության գործընթացի հետ կապված հնարավոր կողմնակալության դեմ երաշխիքների առկայությունը: Ընդ որում, քննարկվող խնդրի առնչությամբ՝ Եվրոպական դատարանը քննարկման առարկա է դարձրել իրավաբանական օգնության համար դիմումի քննության շրջանակներում բողոքի հիմքերին անդրադառնալու օրենսդրական կարգավորումները՝ դրսևորելով ոչ միատեսակ, հակասական մոտեցումներ: Այսպես, օրինակ, Բելգիայի դեմ գործերից մեկով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում էր արձանագրել այն, որ դիմողի՝ իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքը անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժվել էր իրավաբանական օգնության ներպետական խորհրդի կողմից (domestic Legal Aid Board): Եվրոպական դատարանը գտել էր, որ բողոքի հիմնավորվածությունը գնահատելը ոչ թե խորհրդի, այլ վճռաբեկ դատարանի խնդիրն էր: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ նշված խորհրդի կողմից իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքը մերժելը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, արժեզրկել էր արդարադատության մատչելիության իրավունքը: Սույն գործով Եվրոպական դատարանը հաշվի էր առել նաև վճռաբեկ բողոքը փաստաբանի միջոցով բերելու պարտադիր օրենսդրական պահանջի առկայությունը¹⁴⁹: Մինչ դեռ օրինակ Դել Սոլն ընդդեմ Ֆրանսիայի գործով իրավաբանական օգնության ներպետական խորհրդի կողմից վիճարկելի հիմքի բացակայության պատճառաբանությամբ քաղաքացիական

Ֆրանսիայում՝ քաղաքացիական գործերով նախատեսված է փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պարտադիր պահանջ: Ընդ որում, Բելգիայում և Ֆրանսիայում վճռաբեկ բողոք բերելու համար իրավաբանական օգնություն ստանալու դիմումը քննարկում են վճռաբեկ դատարանում գործող հատուկ փաստաբանական բյուրոները (Legal Aid Board): Իսկ Լեհաստանում բողոք բերելու համար իրավաբանական օգնություն ստանալու դիմումը ներկայացվում է դատական ակտը կայացրած դատարան: Ավելի մանրամասն տե՛ս European Court of Human Rights Jurisprudence on the Right to Legal Aid, Open Society Justice Initiative

https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&ved=0ahUKEwib4YiO_OHOAhVG3CwKHeNOCv8QFggbMAA&url=http%3A%2F%2Fwww.legalaidreform.org%2F%2Ffeuropean-court-of-human-rights%2Fitem%2Fdownload%2F107_2e8b10cd5e32ad4e1e053e53cd6df878&usg=AFQjCNFRYDcxp4ehnclrRY-DBnD-4ZtOfA&bvm=bv.131286987,d.bGg

¹⁴⁹Տե՛ս **Aerts v. Belgium**, 1998 թվականի հունիսի 30-ի վճիռ, գանգատ թիվ 61/1997/548/1051:

գործով վճռաբեկ բողոք բերելու համար անվճար իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքը մերժելը դարձյալ վճռաբեկ բողոքը փաստաբանի միջոցով բերելու պարտադիր օրենսդրական պահանջի առկայության պարագայում Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի դիտարկել: Եվրոպական դատարանի իբրև որոշիչ գործոն հաշվի էր առել իրավաբանական օգնություն տրամադրելու ներպետական ընթացակարգի արդյունավետությունը, մասնավորապես իրավաբանական օգնություն ստանալու դիմումի անհապաղ քննությունը, դիմումների քննության գործընթացի հետ կապված՝ հնարավոր կողմնակալության դեմ երաշխիքների առկայությունը: Բացի այդ, Եվրոպական դատարանը գտել էր, որ բելգիական՝ բողոքի անհիմն լինելու չափանիշն ավելի խիստ է, քան \$րնասիական՝ «վիճարկելի հիմքի բացակայությունը»¹⁵⁰: Նույն գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում էր արտահայտել, որ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կոնկրետ պայմանի նախատեսումը ուղղված է իրավաչափայն նպատակի իրացմանը, որ հանրային միջոցները պետք է հասանելի լինեն միայն այն դիմումատուներին, ում բողոքները ողջամտորեն հավակնում են հաջող արդյունքի: Եվ իրավաբանական օգնություն տրամադրելու համապատասխան ընթացակարգերը կարող են գործել, եթե նախատեսված են համապատասխան գործերի ընտրության մեխանիզմներ¹⁵¹: Հաշվի առնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական լիազորությունների հետ կապված՝ գործնականում առկա խնդիրները, կարծում ենք, իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների քննության ընթացակարգերի համանման կարգի կիրառումն այն առումով, որ դիմումը բավարարելու պայման դիտարկվի բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը, կարող է ավելի սրացնել գործնականում առկա խնդիրները: Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելը բողոքի հիմքերի և հիմնավորումների բովանդակությամբ պայմանավորելու կարգավորումը, կարծում ենք, ոչ այնքան իրավաչափ է նաև այն առումով, որ այս փուլում անձը իրավաբանական օգնության է դիմում հենց այն պատ-

¹⁵⁰Տե՛ս *Del Sol v. France*, 2002 թվականի փետրվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 46800/99:

¹⁵¹ Տե՛ս *X v. the United Kingdom*, 1980 թվականի հունիսի 10-ի վճիռ, գանգատ թիվ 8158/78, *Garcia v. France*, 1991 թվականի հունվարի 10-ի վճիռ, գանգատ թիվ 14119/88:

ճառով, որ անձամբ հնարավորություն չունի բավարար հիմքեր և հիմնավորումներ պարունակող պատշաճ որակի բողոք ներկայացնել: Ինչ վերաբերում է այն հարցին, թե որ մարմինը պետք է քննի համապատասխան դիմումները, ապա կարծում ենք՝ մեզանում ավելի կիրառելի կլինի լեհաստանյան փորձը, երբ բողոք բերելու համար իրավաբանական օգնություն ստանալու դիմումը ներկայացվում է դատական ակտը կայացրած դատարան:

Այժմ անդրադառնանք բողոքարկման իրավունք ունեցող կոնկրետ սուբյեկտներին և վերջիններիս կողմից բողոքարկման իրավունքի իրացման պայմաններին: Քրեադատավարական տեսության մեջ առանձնացնում են դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացման ընդհանուր և հատուկ նախադրյալներ: Այսպես, օրինակ, Ն.Ն.Կովտունը դատախազի կողմից վճռաբեկ բողոք բերելու իրավունքը կապում է ընդհանուր բնույթի այնպիսի նախադրյալի հետ, ինչպիսին ստորադաս դատարանի անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելու հետևանքով խախտված հանրային շահը պաշտպանելու անհրաժեշտությունն է¹⁵²: Մեկ այլ բնորոշմամբ՝ դատախազի կողմից ստորադաս դատարանի անօրինական, չհիմնավորված և ոչ արդարացի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը ոչ միայն հասարակության և պետության օրինական շահերի, այլ նաև անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության միջոց է: Եվ բազմաթիվ դատավարագետներ դատախազի կողմից վճռաբեկ բողոք բերելու այս պայմանը կապում են վճռաբեկ վարույթի շրջանակներում դատախազի մեղադրանքի պաշտպանության և օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնելու գործառույթների հետ: Դատավարագետների կարծիքով՝ բոլոր այն դեպքերը, երբ դատախազը բողոք է բերում ամբաստանյալի (արդարացվածի) վիճակի վատթարացման պահանջով, ըստ էության ոչ այլ ինչ են, քան մեղադրանքի գործառույթի շարունակությունն¹⁵³: Այդ նույն դատավարագետների կարծիքով դատախազը քրեական դատավարությունում իրականացնում է ոչ միայն մեղադ-

¹⁵²Տե՛ս *Ковтун Н.Н.*, նշված աշխատությունը, էջեր 347-348:

¹⁵³Տե՛ս *Руденко Р.А.*, Задачи органов прокуратуры и новых общесоюзных законов. Социалистическая законность. 1959, N4, էջ 12, *Строгович М.С.*, Проверка законности и обоснованности судебных приговор. — М., 1956, էջ 180:

րանքի, այլև օրինականության նկատմամբ հսկողության գործառույթ: Այդ պատճառով դատախազն իրավունք ունի բողոք բերել՝ ոչ միայն մեղադրանքի շահերից ելնելով, այլև ի շահ ամբաստանյալի¹⁵⁴: Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը հանրային շահից անկախ դիտարկելու դիրքորոշումը քննադատության տեղիք է տալիս այն առումով, որ հանրային շահը նույնացվում է սոսկ պետության շահի հետ՝ դրան հակադրելով մասնավոր շահը: Հանրային շահի պաշտպանությունը չի ենթադրում ի վնաս ամբաստանյալի ցանկացած, այդ թվում՝ ոչ արդարադատ դատական ակտն ու ժիմեջ թողնելը: Դատախազի կողմից ոչ արդարադատ դատական ակտի բողոքարկումը՝ հօգուտ ամբաստանյալի, ևս հանրային շահի պաշտպանության գործառույթի շրջանակներում է: Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, որ վճռաբեք բողոք բերելը և այն պաշտպանելը մեղադրանքի գործառույթի շարունակությունն է դատավարական նոր պայմաններում, ապա մենք հակված ենք տեսության մեջ առկա հակառակ այն մոտեցմանը, որ վճռաբեկ վերանայման վարույթի շրջանակներում դատախազի կողմից իրականացվում է բացառապես վճռաբեկ բողոքի պաշտպանության գործառույթ¹⁵⁵: Վերաքննիչ բողոք բերելու գործառույթի հետ կապված՝ նույն դիրքորոշումն է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը *Գ.Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի ԱՐԴ/0121/01/11 որոշման մեջ՝ հստակեցնելով, որ դատախազի կողմից մեղադրանքի ֆունկցիայի իրականացումն ավարտվում է առաջին ատյանի դատարանում դատավճռի կայացմամբ, և, ըստ այդմ, դատախազը վերաքննիչ դատարանում պաշտպանում իր բերած վերաքննիչ բողոքը կամ հարուցած միջնորդությունը: Այսպիսով, վճռաբեկ վարույթի շրջանակներում դատախազի կողմից իրականացվում է բացառապես վճռաբեկ բողոքի պաշտպանության գործառույթ, որն ուղղված է հանրային շահի պաշտպանությանը, այդ թվում և քրեական դատավարության մասնակիցների մասնավոր շահերի պաշտպանության եղանակով: Ինչ վերաբերում է մասնավոր շահերի պաշտպանությանը օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի շրջանակներում դիտարկելու մոտեցումներին, ապա դրանց հետ դժվար է

¹⁵⁴Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջեր 105-107, *Куцова Э. Ф.*, նշված աշխատությունը, էջ 42. *Гродзинский М.М.*, նշված աշխատությունը, էջեր 23-24, 37, 41.

¹⁵⁵Տե՛ս *Строгович М.С.*, նշված աշխատությունը, էջ 180:

համաձայնել, քանի որ դատախազությունն առհասարակ այլևս չի իրականացնում օրինականության նկատմամբ ընդհանուր հսկողության գործառույթ:

Եթե դատախազի կողմից ստորադաս դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելը հանրային շահի պաշտպանության միջոց է, ապա վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող մյուս սուբյեկտների համար՝ իրենց մասնավոր շահերի պաշտպանության միջոց: Վերջին դեպքում բողոք բերելու ընդհանուր պայմանը՝ դատական ակտով բողոք բերող սուբյեկտի օրինական շահերի խախտումն է¹⁵⁶: Վերոհիշյալ ընդհանուր պայմանին պետք է ավելացնել նաև Օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Այս օրենսդրական կարգավորման հետ կապված՝ կարելի է որոշակի գուգահեռներ անցկացնել Սահմանադրական դատարան կամ Եվրոպական դատարան դիմելիս իրավական պաշտպանության միջոցները սպառելու պահանջի հետ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ անձը պետք է վերաքննիչ բողոքում բարձրացնի իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստը, արձագանքի ստորադաս դատարանի կողմի թույլ տրված դատական սխալներին, առարկի ստորադաս դատարանի ենթադրյալ անօրինական գործողությունների և որոշումների դեմ՝ հավակնելու համար հետագայում վճռաբեկ դատարանում այդ հարցերի վերստին քննարկմանը: Մինևնույն ժամանակ, իհարկե, պետք է նշել, որ այս պայմանի տառացի մեկնաբանությունից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելիս անձը կաշկանդված է բացառապես բողոքի հիմքերով, սակայն ոչ հիմնավորումներով, և վճռաբեկ բողոքում անձը կարող է լրացնել, հարստացնել վերաքննիչ բողոքում նշված հիմքերի առկայությունը հիմնավորող փաստարկները: Այս եզրահանգման օգտին է ծառայում նաև այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքում, ի տարբերություն վերաքննիչ բողոքի, անձը պետք է լրացուցիչ հիմնավորի նաև բողոքը վարույթ ընդունելու

¹⁵⁶Տե՛ս *Ռ.Ն. Մելիքյան*, Վերաքննությանը Յայաստանի Յանրապետության քրեական դատավարությունում: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջեր 90-91, *Беззубов С.И.*, նշված աշխատությունը, էջ 53. *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 116:

պայմանների առկայությունը: Բացի այդ պետք է նշել, որ չնայած վերոհիշյալ նորմն ուղղակիորեն որևէ բացառություն չի նախատեսում, այդուհանդերձ, չսահմանափակելով դրա տառացի մեկնաբանությունը և առաջնորդելով իրավական նորմը մեկնաբանելու ոսկե կանոնով, որի էությունը օրենսդրի կամքը բացահայտելու հնարքն է, կարծում ենք, դրա գործողությունը ողջամտորեն չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ անձն չի բողոքարկել իր համար բերենպատ դատական ակտը վերաքննիչ դատարան, սակայն մյուս կողմի բերած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը կայացրել է իր շահերին հակասող դատական ակտ: Կարծում ենք՝ հակառակ մեկնաբանությունը չի կարող բխել այս նորմը նախատեսելու օրենսդրի կամքից: Այս իրավակարգավորմանն անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-849 որոշման մեջ՝ ընդհանուր առմամբ ընդունելի համարելով այն մոտեցումը, որ եթե իրավական բողոքում նշված հիմքի (հիմքերի) վերաբերյալ ստորադաս դատական ատյաններում քննություն չի կատարվել, ապացույցներ չեն հավաքվել, հետազոտվել ու գնահատվել, ապա վճռաբեկ դատարանը զրկվում է տվյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու հնարավորությունից: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի կարծիքով առկա իրավակարգավորման տառացի մեկնաբանությունը վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և նոր դատական ակտ կայացնելու դեպքում դատավարության մասնակիցներին կարող է զրկել ըստ էության նոր դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքից: Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը գտել է, որ պետք է ապահովվի վճռաբեկ բողոքի պարտադիր ընդունումն ու քննությունը բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի շրջանակներում վերաքննիչ դատարանը շահագրգիռ կողմի բողոքի քննության արդյունքներով կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից տարբերվող՝ ըստ էության նոր դատական ակտ: Քննարկվող նորմի նման մեկնաբանությունը կոչված է երաշխավորել վերաքննիչ դատարանի կողմից կայացված ըստ էության նոր դատական ակտի վերանայման իրավունքը, ինչը կարող է սահմանափակվել վճռաբեկ բողոքը վա-

րույթ ընդունելու հայեցողությամբ պայմանավորված: Սակայն մեր կարծիքով՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացված ըստեության նոր դատական ակտի վերանայման իրավունքը երաշխավորելու խնդիրը պետք է լուծել ոչ թե Վճռաբեկ դատարանի հայեցողական լիազորությունների սահմանափակման, այլ կոնկրետ դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից ոչ թե նոր դատական ակտ կայացնելու, այլ գործը ստորադաս դատարանը՝ նոր քննության ուղարկելու պահանջ նախատեսելով: Բացի այդ, նույն հիմքով դատական ակտը վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ վճռաբեկ բողոք բերելու պայմանի տառացի մեկնաբանության արդյունքում առաջացող տարըմբունումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք 404-րդ հոդվածի 2-րդ մասը «դատական ակտը» բառից առաջ լրացնել «իր համար անբարենպաստ» բառերով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքարկման հատուկ նախադրյալներին, ապա այդպիսիք կանխորոշում են քրեական դատավարության այս կամ այն սուբյեկտի՝ դատական ակտի բողոքարկման լիազորությունների շրջանակը (ծավալը): Հատուկ նախադրյալներն ուղղակիորեն կախված են քրեական դատավարության համապատասխան սուբյեկտի դատավարական կարգավիճակից¹⁵⁷: Օրենսգիրքը, ինչպես արդեն նշվել է, վճռաբեկ բողոք բերելու իրավունք վերապահում է դատավարության մասնակիցներին՝ այդ շրջանակից բացառելով քրեական հետապնդման մարմիններին՝ դատախազին, քննիչին և հետաքննության մարմինն: Վերոհիշյալ նորմի և դատավարության մասնակիցների շրջանակը սահմանող՝ Օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի համակարգային վերլուծությանից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրաներկայացուցիչը:

Այսպիսով, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում օրենսդիրն առաջին հերթին նախատեսում է տուժողին: Մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի

¹⁵⁷Տե՛ս *Кочух Н.Н.*, նշված աշխատությունը, էջ 351:

ՅՕ-34-Ն օրենքն ու ժի մեջ մտնելը տուժողն իրավունք ուներ վճռաբեկ բողոք բերել միայն մասնավոր մեղադրանքի գործերով: Վերոհիշյալ օրենքով տուժողի վճռաբեկ բողոքարկման իրավունքի այդ ոչ իրավաչափ սահմանափակումը վերացվեց: Տուժողն իրավունք ունի վճռաբեկ բողոք բերել վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ցանկացած դատական ակտի դեմ, որը խախտում է իր իրավունքներն ու օրինական շահերը: Քրեադատավարական տեսության մեջ կարծիք կա, որ տուժողն իրավունք ունի բողոքարկել ու միայն դատավճռի այն հատվածը, որն անմիջականորեն վերաբերում է իրեն և կապված է իրեն պատճառված վնասի հետ¹⁵⁸: Կարծում ենք՝ նման դիրքորոշումը տուժողի կողմից՝ դատական ակտի իր համար անբարենպաստ մասի դեմ բողոք բերել ու պայմանի չափազանց նեղ և ոչ իրավաչափ մեկնաբանությունն է: Մինչդեռ, տուժողը, օրինակ, կարող է բողոքարկել մեղադրական դատավճռի՝ դրանով նշանակված պատժի կամ ամբաստանյալին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականի հետ համաձայն չլինելու կամ ստորադաս դատարանի կողմից իր իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական իրավունքի խախտումներ թույլ տված լինելու դեպքում¹⁵⁹: Տեսական գրականության մեջ քննարկման առարկա է դարձվել տուժողի կողմից ամբաստանյալի վիճակը բարելավող բողոք բերելու իրավունքը: Կայն տեսակետը, որ տուժողը նման իրավունք չունի, քանի որ դա չի բխում իր մասնավոր շահերից, իսկ համապատասխան խախտումները կարող են դատախազի կողմից բողոք բերելու հիմք ծառայել¹⁶⁰: Քննարկելով ամբաստանյալի վիճակի բարելավման խնդրանքով տուժողի կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավաչափությունը՝ Ռ.Ն.Մելիքյանը դիրքորոշում է արտահայտել, որ տուժողի օրինական շահերի մեջ է մտնում ոչ թե որևէ անձի, այլ հենց իրեն վնաս հասցրած անձի դատապարտումը, և ըստ այդմ համաձայնել Մ.Մ.Վիդրյայի այն տեսակետին, որ տուժողին պետք է իրավունք վերապահվի բողոքարկել մեղադրական դատավճռը հանցագործությանն ամբաստանյալի մասնակցության ապացուցված չլի-

¹⁵⁸Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 36:

¹⁵⁹Տե՛ս *Гродзинский М.М.*, նշված աշխատությունը, էջ 26:

¹⁶⁰Տե՛ս *Александров А.С., Ковтун Н.Н.*, Субъекты апелляционного обжалования приговора: пределы процессуальных прав и полномочий//Журнал российского права.-2002, N5, էջեր 108-115:

նելու հիմքով: Բացի այդ, Ռ.Ն.Մելիքյանի կարծիքով օրենքի վերլուծության հիմքում, որի շահ ամբաստանյալի բողոք բերելու տուժողի իրավունքը որևէ կերպ սահմանափակված է, ուստի անհրաժեշտ է ճանաչել տուժողի իրավունքը՝ վերաքննիչ բողոքում խնդրելու անգամ նվազեցնել նշանակված պատիժը¹⁶¹: Մենք ինքներս հակված ենք այն մոտեցմանը, որ տուժողի կողմից դատական ակտի բողոքարկումը ի շահ ամբաստանյալի առանձին դեպքերում կարող է համահունչ լինել վերջինիս մասնավոր շահերին, ինչի արդյունքում չի սահմանափակվում մրցակցության սկզբունքը, և չեն խախտվում տուժողի իրավունքները¹⁶²:

Վճռաբեկ բողոք բերելու ինքնուրույն սուբյեկտ է նաև քաղաքացիական հայցվորը: Քաղաքացիական հայցի մասով դատարանի գործողության ներքին ու այլ որոշումները բողոքարկելու՝ քաղաքացիական հայցվորի ընդհանուր իրավունքն ամրագրված է Օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում: Բացառապես քաղաքացիական հայցի մասով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու հատուկ պայմանը նախատեսված է վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանող՝ Օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում: Նման հատուկ պայման Օրենսգրքի 404-րդ հոդվածը չի նախատեսում, սակայն նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ արդեն իսկ հիշատակված ընդհանուր պայմանի և նույն օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համակարգային վերլուծության հիմքում է, որ քաղաքացիական հայցվորը վճռաբեկ բողոք կարող է ներկայացնել բացառապես քաղաքացիական հայցի մասով: Դատավճիռը կարող է շոշափել քաղաքացիական հայցվորի շահերը քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու կամ քաղաքացիական հայցն այս կամ այն չափով բավարարելու մասով¹⁶³, քանի որ քաղաքացիական հայցվորը շահագրգռված է նրանում, որ քաղաքացիական հայցը բավարարվի այն չափով, որն անհրաժեշտ է իրեն պատճառված գույքային վնասն ամբողջ ծավալով հատուցելու համար: Քաղաքացիական հայցվորն իրավունք ունի բողոքարկելու մե-

¹⁶¹Տե՛ս **Ռ.Ն.Մելիքյան**, Վերաքննությանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նույնիսկ: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 97:

¹⁶²Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությանը, նույն տեղում:

¹⁶³Տե՛ս **Кучова Э.Ф.**, նշված աշխատությանը, էջեր 54-55, **Калмыков В.Б.**, նշված աշխատությանը, էջ 121:

դադրական դատավճիռն այնպիսի հիմքերով և այն մասով, որոնք վերաբերում են իր ներկայացրած քաղաքացիական հայցին: Քաղաքացիական հայցվորն իրավասու է բողոքարկել ու ստորադաս դատարանի դատական ակտը արարքին տրված իրավական գնահատականի կամ ընտրված պատժատեսակի կամ նշանակված պատժաչափի մասով¹⁶⁴: Որոշակի իրավական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք քաղաքացիական հայցվորին պետք է ընձեռվի արդարացման դատավճիռը բողոքարկել ու հնարավորություն: Այս հարցի առնչությամբ դատավարագետների մոտեցումը միանշանակ է: Որոշակիորեն գերակշռող է այն տեսակետը, որ քաղաքացիական հայցվորի՝ իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման նպատակով վերջինիս պետք է իրավունք վերապահել բողոքարկել արդարացման դատավճիռը՝ հիմքերի մասով այնքանով, որքանով դրանք կապված են քաղաքացիական հայցի հետ¹⁶⁵: Քաղաքացիական հայցվորը, սակայն, պետք է իրավունք ունենա բողոքարկել ու ոչ թե ինքնին արդարացումը, այլ արդարացման հիմքն այնքանով, որքանով դրանից է կախված քաղաքացիական հայցի հետագա ճակատագիրը և ըստ այդմ իր գույքային շահերի պաշտպանությունը¹⁶⁶:

Վճռաբեկ բողոք բերել ու իրավունք ունեցող ինքնուրույն սուբյեկտ է քաղաքացիական պատասխանողը, ով իրավունք ունի իր դեմ ներկայացված քաղաքացիական հայցի մասով բողոքարկել ստորադաս դատարանի դատական ակտը (Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ): Մեղադրական դատավճիռը քաղաքացիական հայցվորը, օրինակ, կարող է բողոքարկել իրեն որպես քաղաքացիական պատասխանող իր կարծիքով առանց օրինական հիմքերի ներգրավել ու և հանցագործությամբ պատճառված վնասը հատուցել ու պարտականություն դնել ու, քաղաքացիական հայցը բավարարել ու որոշման կամ քաղաքացիական հայցի չափի մասով: Առանձին դատավարագետների կարծիքով իր բողոքում քաղաքացիական պատասխանողն իրավասու է անդրադառնալ նաև հանցադեպին ու հանցակազմի հատկանիշ-

¹⁶⁴Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, նույն տեղում:

¹⁶⁵Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 122:

¹⁶⁶Տե՛ս *Куцова Э.Ф.*, նշված աշխատությունը, էջեր 59, 62:

ներին՝ հիմնավորելով ամբաստանյալի անմեղու թյուրը¹⁶⁷: Ինչպես իրավացիորեն հիմնավորում է այս դիրքորոշումը Ռ.Ն. Մելիքյանը քաղաքացիական հայցի և քրեական պատասխանատվության հիմքերի միաձուլման պայմաններում, ի տարբերություն քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և ամբաստանյալի միջև օրինական շահերի բախումը բացակայում է, և իրավական խոչընդոտ չկա, որպեսզի քաղաքացիական պատասխանողը բողոքարկի քաղաքացիական պատասխանատվության հիմքի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի հետևությունները: Դատավարագետի կարծիքով չի բացառվում նաև քաղաքացիական պատասխանողի կողմից առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճռի կամ գործը կարճելու մասին որոշման բողոքարկումը, եթե արդարացման հիմքն այնպիսին է, որ քաղաքացիական պատասխանողին չի ազատում գույքային վնասը հատուցելու պարտականությունից¹⁶⁸:

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում քրեադատավարական օրենքը նախատեսում է կասկածյալին (մեղադրյալին): Ընդ որում, հաշվի առնելով, որ կասկածյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով կարող է համարվել արդարացված, իսկ մեղադրյալը՝ ամբաստանյալ¹⁶⁹, կարելի է եզրահանգել, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն նաև ամբաստանյալը, արդարացվածի կարգավիճակ ձեռք բերած կասկածյալը: Կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ անձը կարող է ունենալ բացառապես քրեական գործով մինչդատական վարույթում: Յետևաբար, կասկածյալը կամ մեղադրյալը՝ որպես վճռաբեկ բողոքարկման սուբյեկտ, կարող են հանդես գալ, եթե վճռաբեկ դա-

¹⁶⁷Տե՛ս *Познанский В.А.*, Вопросы теории и практики кассационного производства в советском уголовном процессе, Саратов, Изд-во Саратов. ун-та, 1978, էջ 56:

¹⁶⁸**Ռ.Ն.Մելիքյան**, Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 102:

¹⁶⁹Մեղադրյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով կարող է համարվել նաև դատապարտյալ կամ արդարացված: Սակայն հաշվի առնելով, որ մեղադրյալը դատապարտյալի կամ արդարացված կարգավիճակ է ձեռք բերում իր նկատմամբ կայացված մեղադրական կամ արդարացման դատավճռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իսկ վճռաբեկ բողոքարկման առարկա են կազմում օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, հետևաբար դատապարտյալը կամ արդարացվածը վճռաբեկ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շարքում նախատեսվել չեն կարող: Իհարկե պետք է վերապահում անել այն առումով, որ վճռաբեկ բողոքարկման առարկա են կազմում նաև դատական ակտերի կատարման կապակցությամբ կայացված որոշումները, իսկ այս դեպքում վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունի դատապարտյալը:

տարան են բողոքարկվում մինչ դատական վարույթում գտնվող գործերով՝ այդ փուլի նկատմամբ դատական վերահսկողության կարգով կայացված դատական ակտերը: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքարկման առարկա են դատական քննության փուլում կայացված դատական ակտերը, ապա այս դեպքում վճռաբեկ բողոքարկման սուբյեկտը ամբաստանյալն է: Ամբաստանյալն օժտված է վճռաբեկ բողոքարկման լայն իրավունքով, կարող է բողոքարկել ոչ միայն մեղադրական, այլև արդարացման դատավճիռը (քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը)՝ արդարացման հիմքերի մասով (Օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մաս), քանի որ արդարացման կոնկրետ հիմքով պայմանավորված՝ անձը կարող է ազատվել ոչ միայն քրեական պատասխանատվությանից, այլև նաև տուժողին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից: Որոշ տեսաբանների կարծիքով անձը, ում նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կարող է բողոքարկել դրա հիմքում ընկած պատճառաբանությանն ներքին, եթե դատավճռում տեղ գտած ձևակերպումներն այնպիսին են, որ անձի անմեղությունը կասկած է հարուցում¹⁷⁰:

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում նախատեսված է նաև պաշտպանը: Չնայած պաշտպանը քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ է, և քրեական դատավարության ունում իրականացնում է քրեադատավարական օրենքով իրեն վերապահված լիազորությունները, այդուհանդերձ, վերջինս քրեական դատավարության ունում ունի ոչ թե սեփական, այլ ներկայացվող շահ, ուստի վճռաբեկ բողոքարկման վերջինիս իրավունքը սահմանափակված է պաշտպանյալի դիրքորոշմամբ: Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներ են նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի (մեղադրյալի) օրինական ներկայացուցիչները, տուժողի, քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչները: Եթե օրինական ներկայացուցիչն իրավունք ունի, անկախ տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի կամքից, ինքնուրույն բողոքարկել ստորադաս դատարանի դատական ակտը, ապա ներկայացուցչի՝ վճռաբեկ բողոքարկման իրավունքն անցվում է ներկայացվո-

¹⁷⁰Տե՛ս *Строгович М.С.*, նշված աշխատությունը, էջ 244:

դի համապատասխան իրավունքից և այն դեպքում, երբ ներկայացուցիչն ինքնուրույն և իր անունից է վճռաբեկ բողոք բերում, ապա այն բնականաբար պետք է համաձայնեցվի տուժողի կամ քաղաքացիական հայցվորի հետ:

Անդրադառնալով դատախազի կողմից վճռաբեկ բողոք բերելու իրավունքին՝ ինչպես արդեն նշել ենք, Օրենսգրքի՝ սկզբնական խմբագրությամբ 404-րդ հոդվածը նախատեսում էր, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող էին բերել Գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները, իսկ մեղադրողը նշված իրավունքը կարող էր իրացնել միջնորդավորված կարգով՝ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով: Իսկ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ մեղադրողն ինքը անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք ուներ: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման բարդեցված ընթացակարգի նախատեսումը, կարծում ենք, կարելի է բացատրել դատական ակտերի կայունության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությամբ: Սակայն այդ տրամաբանության մեջ չեն տեղավորվում «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006 թվականի հունիսի 1-ի թիվ ՀՕ-108-Ն օրենքով կատարված փոփոխությունները, երբ նախատեսվեց օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը ոչ միայն ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների, այլ և մեղադրողի կողմից անմիջականորեն բողոքարկելու հնարավորություն: «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 21-ի թիվ ՀՕ-93-Ն օրենքի ընդունումից հետո վճռաբեկ բողոքարկման իրավունքը վերապահվեց բացառապես ՀՀ գլխավոր դատախազին և նրա տեղակալներին¹⁷¹, իսկ մե-

¹⁷¹Չնայած այն հանգամանքին, որ օրենսդիրը վճռաբեկ բողոք բերելու իրավունքն ուղղակիորեն վերապահել է Գլխավոր դատախազին և նրա տեղակալներին, այդուհանդերձ վճռաբեկ դատարանը Կ.Սահակյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի ԱՎԴ/0002/11/10 որոշման մեջ գտել է, որ դատախազին վճռաբեկ բողոքարկման իրավունք չտրամադրելը հակասում է մրցակցության սկզբունքն ամրագրող՝ Օրենսգրքի 23-րդ հոդվածին: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը ամրագրված է օրենսգրքի ընդհանուր մասում, իսկ 404-րդ հոդվածը՝ հատուկ մասում, համապատասխան կոլիզիոն կանոնների կիրառմամբ՝ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գործում է ընդհանուր մասի դրույթը: Գործնականում, սակայն, այս որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառվել է մինչև արդեն հիշատակված՝ ՀՕ-48-Ն օրենքի ընդունումը:

դադրողը զրկվեց թե՛ միջնորդավորված կարգով և թե՛ անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքից: Քանի որ նույն օրենքով ներմուծվեց նաև հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտը՝ կարծում ենք՝ նշված փոփոխության ներքո պայմանավորված էին ավելի վաղ ընդունված՝ ՀՕ-152-Ն օրենքով բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի ներմուծմամբ և բողոքին ներկայացվող բովանդակային պահանջների խտացմամբ: Մեր կարծիքով, օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնություն և դրանով պայմանավորված՝ վճռաբեկ վերանայման հայեցողական լիազորությունների առկայության պայմաններում վճռաբեկ բողոքարկման իրավունքը բացառապես ՀՀ գլխավոր դատախազին և նրատեղակալներին վերապահելը միանգամայն իրավաչափ է, քանի որ նման կարգավորումը վճռաբեկ բողոքարկման տեղայնացված գործընթացը կենտրոնացնելու, այն առավել համակարգված դարձնելու նպատակ է հետապնդում: Դա կարող է նպաստել ՀՀ գլխավոր դատախազության կողմից պատշաճ, այսպես կոչված, ընտրողական քաղաքականության իրականացմանն այն հաշվով, որ վճռաբեկ դատարան հասնեն այն գործերը, որոնցով բարձրացված իրավական խնդիրները համահունչ են այս դատարանի դերին ու կոչմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների և վերջիններիս կողմից իրենց այդ իրավունքի իրացման կարգի տեսանկյունից գործող օրենսդրական կարգավորման զարգացումներն ընդհանուր առմամբ հիմքում ունեցել են բողոքարկման առարկայով, բողոքարկման կարգի փոփոխությամբ (խոսքը վերաբերում է հայեցողական կարգի ներմուծմանը) պայմանավորված՝ տարբերակված կարգավորում նախատեսելու տրամաբանություն, թեև օրենսդիրը ոչ միշտ է հետևողական եղել այդ նպատակի իրացման հարցում: Դրավառ օրինակ կարող է ծառայել այն, որ նախատեսելով փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ընդհանուր առմամբ իրավաչափ մեխանիզմ, հետևողական չի եղել դրան համահունչ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորող կարգավորումներ նախատեսելու հարցում՝ արժեզրկելով նաև նշված իրավաչափ մեխանիզմի դերն ու նշանակությունը: Ուստի առաջարկում

ենք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում անվճար իրավաբանական օգնության տրամադրելու կարգավորումները հստակեցնել այն առումով, որ այդպիսիք տարածվեն նաև վերաքննիչ և վճռաբեկ վարույթների վրա, իսկ Օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադրությամբ. «Նշված անձինք վերաքննիչ դատարանի դատական ակտի հրապարակման պահից իրավունք ունեն միջոցառություններ կայացնել վերաքննիչ դատարանի վճռաբեկ բողոք ներկայացնելու համար գործով վարույթին փաստաբան ներգրավելու մասին, որը պետք է քննության առնվի և լուծվի եռօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան վերաքննիչ դատարանի դատական ակտը դատավարության մասնակիցներին ուղարկելը: Միջոցառությունը պետք է քննության առնվի և լուծվի անհապաղ, եթե վերաքննիչ դատարանի դատական ակտն արդեն ուղարկվել է դատավարության մասնակիցներին»:

§4. Վճռաբեկ բողոք բերելու և բողոքի նախնական քննության դատավարական կարգը

Վճռաբեկ բողոք բերելու դատավարական կարգը սահմանված է գործող Օրենսգրքի 411-րդ և 413-րդ հոդվածներով: Վերը հիշատակված նորմերի համադրված վերլուծությանից բխում է, որ վճռաբեկ բողոքը բերվում է վճռաբեկ դատարան, իսկ պատճենը՝ դատավճիռը կամ որոշումը կայացրած դատարան՝ գործը բողոքի պատճենը ստանալու պահից անհապաղ վճռաբեկ դատարան ուղարկելու համար: Անդրադառնալով վերաքննիչ բողոք բերելու համանման կանոնակարգմանը՝ Ռ.Ն. Մելիքյանը, իբրև դրա առավելություն, նշել է վերանայումն իրականացնող դատարանի կողմից բողոքին ներկայացվող պահանջների նկատմամբ ընդհանուր մոտեցման ձևավորումը¹⁷²: Բողոքը վարույթ ընդունելու միատեսակ մոտեցում ձևավորելու հանգամանքը առանձնահատուկ կարևոր է վճռաբեկ բողոքարկման պարագայում, երբ առկա են բողոքը վարույթ ընդունելու հատուկ պայմաններ: Մյուս կողմից՝ քննարկվող այս նույն կարգավորումը Ռ.Ն. Մելիքյանը խնդրահարույց է համարում արդարադատության մատչելիության տարածքային սկզբունքի երաշխավորման տեսանկյունից:

¹⁷² Տե՛ս **Ռ.Ն.Մելիքյան**, Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նում: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 109:

Դատավարագետի կարծիքով գործող կարգի թերու թյ ու ններից է նաև այն, որ բողոքաբերը բողոքը վերադաս դատական ատյան ներկայացնելու հետ մեկտեղ պետք է լրացուցիչ գործողություններ կատարի՝ դրա պատճենը բողոքարկվող դատական ակտը կայացրած դատարան ներկայացնելու համար¹⁷³: Քանի որ վճռաբեկ բողոքարկման պարագայում դատական ակտը կայացրած դատարանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն է, կարծում ենք, դատական ակտը կայացրած դատարանի միջոցով բողոք բերելու կարգավորումը վճռաբեկ բողոքարկման պարագայում չի կարող ավելի արդյունավետ լինել արդարադատության մատչելիության տարածքային սկզբունքի երաշխավորման տեսանկյունից: Ինչ վերաբերում է բողոքը Վճռաբեկ դատարան ներկայացնելու հետ մեկտեղ հիշատակված լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտությանը, ապա վճռաբեկ բողոքարկման պարագայում դրան ավելանում է նաև բողոքի պատճենը դատավարության մասնակիցներին ուղարկելու պահանջը, որի պարտականությունը վերաքննիչ բողոքարկման պարագայում դրված է դատական ակտը կայացրած դատարանի վրա: Քանի որ վճռաբեկ բողոքարկման պարագայում բողոքի պատճենը դատական ակտը կայացրած դատարան ներկայացնելու նպատակը բացառապես բողոքի պատճենը ստանալու պահից գործը դատարան ուղարկելու օրենսդրական պահանջի կենսագործումն է, կարծում ենք՝ կարելի է բողոքաբերին ավելորդ չձանրաբեռնել, այլ նախատեսել բողոքը ստանալուց հետո վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանից գործը պահանջելու ընթացակարգ: Ընդ որում, այս դեպքում պետք է նախատեսել վճռաբեկ դատարանի պահանջը ստանալուց հետո անհապաղ գործն ուղարկելու ստորադաս դատարանի պարտականությունը: Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բողոքի պատճենը դատավարության մասնակիցներին ուղարկելու պահանջին, ապա նշված պարտականությունը դատական ակտը կայացրած դատարանի վրա դնելը կարող է ոչ արդյունավետ օրենսդրական կարգավորում լինել բողոքը ժամկետով վերադարձնելու և այն կրկին ներկայացնելու ինստիտուտի գոյության պայմաններում:

Վճռաբեկ բողոքարկման դատավարական կարգը սահմանող

¹⁷³Տե՛ս *Ռ.Լ.Մելիքյան*, նույն տեղում:

Նորմերը ներառում են նաև բողոքը հետվերցնելու հետկապված իրավահարաբերությունները: Ընդ որում, օրենսդիրը նախատեսում է այս իրավունքի իրացման որոշակի ժամանակային և սուբյեկտային սահմանափակումներ: Այսպես, բողոք բերած անձն իրավունք ունի բողոքը հետվերցնել **մինչև վճռաբեկ դատարանում դատական նիստի սկսվելը**: Այս նորմի օրենսդրական ձևակերպումը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ գործող Օրենսգիրքը նախատեսում է դատական նիստ հրավիրելու երկու դեպք, այն է՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու (ՔԴՕ 39-րդ հոդված) և արդեն իսկ վարույթ ընդունված բողոքը քննության առնելու համար¹⁷⁴: Մինչդեռ օրենսդիրը չի հստակեցնում, թե խոսքը որ դատական նիստի մասին է: Ուստի հարց է ծագում, թե արդյոք բողոքը վարույթ ընդունելուց հետո անձը կարող է այն հետվերցնել: Այս իրավական խնդրին անդրադարձել է Վճռաբեկ դատարանն **ԱՍարգսյանի գործով** 2009 թվականի հունիսի 2-ի ՀՀՔԲԴՅ/0109/01/08 որոշման մեջ: Հաշվի առնելով Օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասով և մինչև 2014 թվականի հունիսի 6-ը գործող խմբագրությամբ 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով դատական նիստում լուծելու պահանջը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ բողոքի շրջանակներում վերջնական որոշում կայացնելը դառնում է արդարադատության պահանջ: Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ բողոք բերած անձն իրավունք ունի այն հետվերցնել մինչև այն վերադարձնելու կամ վարույթ ընդունելու մասին որոշումներից մեկի կայացումը, և բացի այդ, օրենքով Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված բողոքն այն բերած անձի կողմից հետվերցնելու դատավարական կարգ նախատեսված չէ: Հաշվի առնելով, որ բողոքը վա-

¹⁷⁴Նախկին խմբագրությամբ 414.2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ Վճռաբեկ դատարան ներկայացրած վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը լուծվում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով, Վճռաբեկ դատարանի դատական նիստում:

րույթ ընդունելու հիմքերից մեկն օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունն է՝ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը, ըստ էության, համանուն գործառույթի արդյունավետ իրացումն ապահովելու մեխանիզմ է: Այլ օրենսդրական կարգավորում է նախատեսում Նախագիծը: Այսպես, Նախագծի 362-րդ հոդվածը սահմանում է արդեն իսկ վարույթ ընդունված բողոքը նախքան դատական նիստում նախագահող դատավորի կամ դատավորներից մեկի զեկուլցումը հետվերցնելու հնարավորություն: Ընդ որում, Նախագիծն իրավաչափորեն սահմանում է ոչ միայն բողոքն ամբողջությամբ հետվերցնելու, այլև դրամի մասից հրաժարվելու հնարավորություն: Մինևույն ժամանակ իբրև օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման երաշխիք՝ Նախագիծը սահմանում է, որ վճռաբեկության դեպքում բողոքը հետվերցնելու միջնորդությունը կարող է չբավարարվել, եթե բողոքի քննությունը հիմնարար նշանակություն ունի օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար (Նախագծի 362-րդ հոդվածի 2-րդ մաս): Կարծում ենք՝ Նախագծում տրված կարգավորումն առավել ընդունելի է մի կողմից՝ վճռաբեկ բողոքարկման ազատության երաշխավորման, մյուս կողմից՝ վճռաբեկ դատարանի կողմից իր սահմանադրափրավական առաքելության իրացման շահերի ողջամիտ հավասարակշռման տեսանկյունից: Վարույթ ընդունված բողոքը հետվերցնելու հնարավորությունն է իրապես երաշխավորում անձի վճռաբեկ բողոքարկման ազատությունը: Այս դիրքորոշումը կարելի է հիմնավորել նրանով, որ թե վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու կամ այն վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելու և թե մինչ այդ այն հետվերցնելու պարագայում անձի համար առաջանալու են միատեսակ իրավական հետևանքներ, այն է՝ բողոքարկվող դատական ակտը մտնելու է օրինական ուժի մեջ: Մինչդեռ նոր իրավական հետևանքներ կարող են առաջանալ վարույթ ընդունված բողոքի քննության արդյունքում: Ուստի, վճռաբեկ բողոքարկման տնօրինման ազատության տեսանկյունից բողոքաբերը նաև վարույթ ընդունված բողոքի ճակատագիրը տնօրինելու իրական հնարավորություն պետք է ունենա: Մյուս կողմից՝ երաշխավորելու համար օրենքի միատեսակ կիրառության գործա-

ռույթի իրացումը՝ Նախագիծը սահմանում է տնօրինչականության սկզբունքից նահանջելու սահմանափակ իրավաչափ հնարավորություն, այն է՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմնարար նշանակություն ունեցող դեպքերում բողոքը հետվերցնելու միջնորդությունը մերժելու հնարավորություն: Նախագիծն իհարկե չի հստակեցնում հիմնարար նշանակություն ունեցող այդ դեպքերի շրջանակը՝ համապատասխան չափանիշների մշակումը թողնելով դատական պրակտիկային: Չհավակնելով սպառիչ լուծումների՝ կարծում ենք՝ հիմնարար նշանակություն կարող են ունենալ այն դեպքերը, երբ, օրինակ, առկա է իրավունքի զարգացման կամ ստորադաս դատարանների կողմից որոշակի իրավական նորմի տարաբնույթ մեկնաբանության և կիրառության հետ կապված խնդիրների հետ կապված՝ համակարգային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ արտահայտելու անհրաժեշտություն: Նախագծում տրված այս կարգավորման հետ կապված թերևս միակ մտավախությունը դեպի վատթարացում հնարավոր շրջադարձն է այն դեպքում, երբ, օրինակ, մերժվում է ի վնաս ամբաստանյալի բերված բողոքը հետվերցնելու միջնորդությունը: Կարծում ենք՝ նման դեպքերի հետ կապված՝ պետք է վերապահում անել առ այն, որ բողոքի քննությունը չպետք է հանգեցնի անձի վիճակի վատթարացման: Անդրադառնալով վճռաբեկ բողոքը հետվերցնելու իրավունքի իրացման սուբյեկտային սահմանափակումներին՝ պետք է նշել, որ ինքնին Օրենսգրքի 413-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է բողոք բերած ցանկացած անձի կողմից առանց որևէ սահմանափակման բողոքը հետվերցնելու հնարավորություն: Մինչդեռ նույն Օրենսգրքի ընդհանուր մասի առանձին դրույթների վերլուծությունից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող առանձին սուբյեկտներ ունեն այն հետվերցնելու անսահմանափակ իրավունք (կասկածյալ, մեղադրյալ, քաղաքացիական հայցվորը և քաղաքացիական պատասխանողը), իսկ առանձին սուբյեկտների՝ բողոքը հետվերցնելու իրավունքը որոշակիորեն սահմանափակված է (օրինական ներկայացուցիչներ, ներկայացուցիչներ, պաշտպան):

Դատական բողոքարկման ենթափուլում ընթացող դատավարական իրավահարաբերությունների՝ Նախագծում տրված կարգավորման ա-

ռանձնահատկություններինց մեկը բողոքարկման հստակ ժամկետի առկայությունն ենթադրող դատական վերանայման դեպքում նախքան բողոքարկման ժամկետի ավարտը, դատական վերանայման Լրացուցիչ բողոք բերելու հնարավորության նախատեսումն է (Նախագծի 361-րդ հոդվածի 2-րդ մաս): Ինչպես և գործող Օրենսգիրքը, Նախագիծը և սահմանում է, որ դատական վերանայման բողոքի հիմքերը և դրանք հաստատող փաստերը ներկայացվում են բացառապես բողոքում և չեն կարող փոփոխվել կամ Լրացվել դատական վարույթի ընթացքում (Նախագծի 361-րդ հոդվածի 3-րդ մաս): Յետևաբար Լրացուցիչ բողոք բերելու և ըստ այդմ բողոքի հիմքը, այն հաստատող փաստերը, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստարկները Լրացնելու օրենսդրական հնարավորության ընձեռումը նպատակաուղղված է բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման ապահովմանը: Լրացուցիչ բողոքի ինստիտուտը, մասնավորապես հիմնական բողոքի հետդրահարաբերակցության խնդիրը, Լայն քննարկման առարկա է դարձվել դատավարագետների կողմից¹⁷⁵: Տեսություն մեջ կա այն կարծիքը, որ Լրացուցիչ բողոքն առանց հիմնական բողոքի չունի ինքնուրույն դատավարական նշանակություն, չի արտահայտում բողոքաբերի կամարտահայտությունը, և դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի թե՛ սկզբնական և թե՛ Լրացուցիչ բողոքում ներկայացված փաստարկները¹⁷⁶: Օ.Ա. Սուխովան, հակադրվելով այս դիրքորոշմանը, նշում է, որ Լրացուցիչ բողոքը թեև վճռաբեկ վարույթի հարուցման ինքնուրույն առիթ է, սակայն բողոքաբերի նախաձեռնությամբ վճռաբեկ բողոքը Լրացնելու իրավունքը սկզբնական բողոքով կանխորոշված՝ վերանայման սահմանների ընդլայնման միջոց է¹⁷⁷: Լրացուցիչ և հիմնական բողոքի հարաբերակցության խնդիրը Լուծելու համար պետք է անդրադառնալ Լրացուցիչ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի իրացման բովանդակային սահմաններին: Ինչ -

¹⁷⁵Տե՛ս **Гродзинский М.М.**, նշված աշխատությունը, էջ 35; **Строгович М.С.**, Дополнительные кассационные жалобы адвоката по уголовным делам // Социалистическая законность. – 1974, N1, էջեր 34-37, **Темушкин О.П.**, Прокурорский надзор как гарантия законности в кассационном производстве по уголовным делам. Автореф. дисс... канд. юрид. наук. - М., 1970, էջ 12, **Басков В.И., Темушкин О.П.**, Прокурор в суде второй инстанции по уголовным делам. - М., 1972, էջ 30, **Мартыничук Е.Г.**, Охрана прав осужденного в кассационном производстве. Кишинев: «Штиинца», 1979, - էջեր 31-37:

¹⁷⁶Տե՛ս **Резниченко И.**, О дополнительной кассационной жалобе адвоката//Российская юстиция. 1995, N5, էջ 30:

¹⁷⁷Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջեր 270, 274:

պէս նշում են տեսաբանները, լրացուցիչ բողոքը կարող է ոչ միայն լրացնել սկզբնական բողոքն արդեն իսկ դրանում մատնանշված հիմքի առկայությունը հիմնավորող փաստարկներով, այլ և պարունակել հղում նյութական և դատավարական իրավունքի նոր խախտումների, բացառությամբ նրանց, որոնք կապված են ամբաստանյալի վիճակի վատթարացման հետ¹⁷⁸: Ըստ էության նույն տրամաբանությունն էլ նույն նաև Նախագծի կարգավորումը: Դեռ ավելի ն, կարծում ենք՝ բողոքի հիմքը լրացնելու իրավունքը պետք է լայն մեկնաբանել՝ դրատակ ներառելով նաև բողոքը վարույթ ընդունելու պայմանները կամ դրանք հիմնավորող փաստարկները լրացնելու հնարավորությունը, ինչը պետք է հստակ օրենսդրական ամրագրում ստանա: Այսպիսով, կարծում ենք, հիմնավոր չէ այն մոտեցումը, որ լրացուցիչ բողոքն առանց հիմնական բողոքի չունի ինքնուրույն դատավարական նշանակություն և որ այն չի արտահայտում բողոքաբերի կամարտահայտությունը: Իհարկե բոլոր դեպքերում լրացուցիչ բողոքն ուղղված է սկզբնական բողոքը լրացնելուն, ուստի սկզբնական բողոքի հետ միասին պետք է դիտարկվի որպես միասնական դատավարական փաստաթուղթ:

Կարծում ենք՝ քննարկման կարիք ունի այն իրավիճակը, երբ օրինակ, սկզբնական բողոքը ներկայացվի վճռաբեկ բողոքարկման սահմանված ժամկետի սկզբում, իսկ լրացուցիչ բողոքը՝ դրավարտին: Նախագծի 385-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, գործն անհապաղ ուղարկում է վճռաբեկ դատարան: Իսկ Նախագծի 388-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումների համաձայն՝ բողոքը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կարող է կայացնել վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ այն առանց քննության թողնելու մասին որոշում, իսկ եռամսյա ժամկետում՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում: Իսկ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից մեկը բողոքին ներկայացվող այնպիսի պահանջների խախտումն է, ինչպիսին բողոքի հիմքերը,

¹⁷⁸Ռուս դատավարագետների կողմից ամբաստանյալի վիճակի վատթարացման հետ կապված բացառության նախատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՌԴ քրեադատավարական օրենսդրությունը չի արգելում վճռաբեկ բողոքարկման ժամկետի ավարտից հետո մինչև վճռաբեկ դատարանում նիստը սկսելը լրացուցիչ բողոք բերել:

դրանք հաստատող փաստերն ու փաստարկները չնշելն է: Վերոշարադրյալ կարգավորումների պարագայում տեսականորեն չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ սկզբնական բողոքը վերադարձվի նախքան լրացուցիչ բողոք ներկայացնելը, որում արդեն իսկ լրացուցիչ հիմքեր և հիմնավորումներ են ներկայացված: Կարծում ենք՝ լրացուցիչ բողոք բերելու ինստիտուտն ախտահարելու հանգամանքով պայմանավորված՝ վերոհիշյալ իրավական խնդրից խուսափելու համար թերևս ճիշտ կլիներ վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ այն վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելու ժամկետի սկիզբը հաշվարկել բողոքարկման սահմանված ժամկետի ավարտից: Լրացուցիչ բողոք բերելու իրավունքի հետ կապված՝ քննարկման կարիք ունի այն հարցը, թե արդյոք բողոքը լրացնելը ենթադրում է ոչ միայն սկզբնական բողոքը հարստացնելու, այլ նաև այն փոփոխելու հնարավորություն: Այս հարցի առնչությամբ դատավարագետները հակադիր տեսակետներ են արտահայտում¹⁷⁹¹⁸⁰: Չաշվի առնելով, որ հավելյալ բողոք բերելու իրավունքը սահմանափակված է վճռաբեկ բողոքարկման ժամկետով՝ կարծում ենք՝ հավելյալ բողոքում նաև սկզբնական բողոքում նշված հիմքերը մասնակիորեն կամ նույնիսկ ամբողջությամբ փոփոխելու հնարավորություն ընձեռնելը կարող է իրավաչափ ինտել թե՛ հանրային և թե՛ մասնավոր շահի ապահովման տեսանկյունից:

Վճռաբեկ բողոքի նախնական քննության դատավարական կարգը սահմանված է Օրենսգրքի 414.1-414.3-րդ հոդվածներով: Բողոքի նախնական քննությանը, ըստ էության, գտող մեխանիզմ է, որը կոչված է, ինչպես արդարացիորեն նշվում է տեսական գրականության մեջ, ապահովելու բողոքի որակը, ինչը չափազանց կարևոր է մրցակցային դատավարության պայմաններում: Նման կարգավորումը նպատակ ունի խթանելու կողմերի ակտիվ վարքագիծը՝ հասնելու համար իրենց իրավունքների պաշտպանությանը¹⁸¹: Գործող Օրենսգրքը նախատեսում է վճռաբեկ բողոքի նախնական քննության արդյունքում

¹⁷⁹Տե՛ս *Калитеин П.* Дополнительная кассационная жалоба защитника // Советская юстиция. – 1984, N 8, էջ 26, *Кокорев Л.Д.*, Подсудимый в советском уголовном процессе.- Воронеж, 1973.- էջ 161. *Перлов И.Д.*, Кассационное производство в советском уголовном процессе, էջ 224, *Мартыничик Е.Г.*, Охрана прав осужденного в кассационном производстве. Кишинев, 1979, էջ 33:

¹⁸⁰Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությանը, էջեր 277-278:

¹⁸¹Տե՛ս *Колоколов Н.А.* Апелляция. Общая характеристика/Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления:- Юрист: Москва, 2011, էջ 65:

վճռաբեկ բողոքը վերադարձնելու, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու կամ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու հնարավորություն:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում, իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ ընդունելը մերժելու մասին որոշումը՝ երեք ամսվա ընթացքում: Եթե բողոքարկման առարկայով պայմանավորված՝ բողոքարկման ժամկետների սահմանում առումով օրենսդիրը տարբերակված մոտեցում է նախատեսում, ապա թե՛ գործն ըստ էության լուծող և թե՛ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների նախնական քննության և բողոքի քննության արդյունքներով համապատասխան որոշում կայացնելու համար օրենսդիրը նախատեսել է միասնական ժամկետներ: Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բնույթով պայմանավորված՝ կարծում ենք՝ արդարացված կարող է լինել դրանց դեմ բերված բողոքների նախնական քննության կրճատ ժամկետների նախատեսումը: Այս առումով, ընդունելի կարգավորման օրինակ է նախագծում գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ հատուկ վերանայման կարգով բերված բողոքների նախնական քննության մեկամսյա ժամկետի նախատեսումը (Նախագծի 403-րդ հոդվածի 4-րդ մաս):

Նախքան ՅՕ-48-Ն արդեն իսկ հիշատակված օրենքի ընդունումը վճռաբեկ բողոքի նախնական քննության փուլը եզրափակվում էր վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելով՝ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելով կամ առանց դրա (առանց կրկին ներկայացման հնարավորության), վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու կամ այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելով: Նախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու տարբերակված ռեժիմ՝ օրենսդիրն այդուհանդերձ չէր հստակեցնում այն չափանիշները, որոնցով դատարանը կարող էր առաջնորդվել բողոքը վերադարձնելու այս կամ այն տար-

բերակն ընտրել իս¹⁸²: Իսկ դա գործնականում հանգեցրել էր նրան, որ բողոքին ներկայացվող թե՛ սոսկ ձևական և թե՛ բովանդակային պահանջների խախտման պարագայում վճռաբեկ բողոքը, որպես կանոն, վերադարձվում էր առանց ժամկետի սահմանման և հետևաբար առանց կրկին ներկայացման հնարավորության: Օրենսգրքում կատարված՝ վերոհիշյալ փոփոխությունների և լրացումների արդյունքում օրենսդիրն իրավաչափորեն տարբերակեց վճռաբեկ բողոքին ներկայացվող ձևական կամ բովանդակային (որակական) պահանջները չպահպանելու իրավական հետևանքները: Այսպես, Վճռաբեկ դատարանը որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին, եթե այն չի համապատասխանում դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող՝ օրենքով հստակ սահմանված պահանջներին: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքը դրանում տեղ գտած սոսկ ձևական և բովանդակային-ձևական սխալներն են: Այս նոր օրենսդրական կարգավորումը, սակայն, ևս գերծ չէ թերություններից: Այսպես, օրինակ, նշված փոփոխություններից հետո Վճռաբեկ դատարան մուտքեղած առանձին վճռաբեկ բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հազվադեպ չեն այն դեպքերը, երբ վերադարձված վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվում է օրենքով սահմանված ձևական պահանջների խախտմամբ, ընդ որում, երբեմն նոր՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ չնշված խախտումներով: Գործնականում, եթե կրկին ներկայացված բողոքում չեն շտկվել բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված ձևական սխալները, ապա վճռաբեկ բողոքը, որպես կանոն, թողնվում է առանց քննության այն հիմքով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել¹⁸³, որը, սակայն, կարծում ենք, կիրառելի չէ այդ դեպքերի նկատմամբ: Թեև այս հիմքի օրենսդրական ձևակերպման մեջ ուղղակիորեն նշվում է բողոքում նշված հիմքի վերաբերյալ արդեն իսկ որոշում կայացրած լինելու դեպքերի մասին, այդուհանդերձ, գործնականում այս

¹⁸²Սահմանադրական դատարանն իր 2008 թվականի մայիսի 27-ի թիվ ԱԴՈ-754 որոշման մեջ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակումը ճանաչել է դատական պաշտպանության իրավունքի պահանջներին հակասող և անվավեր:

¹⁸³Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի ԱՐԴ/0195/01/14, 2015 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԱԴԴ/0028/11/14 որոշումները:

Նորմի մեկնաբանությունն այն է, որ կրկին ներկայացված բողոքում առկան ույն խախտումների հիմքով վճռաբեկ դատարանն արդեն վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում է կայացրել: Վերոհիշյալ նորմի՝ քննարկվող դեպքերի նկատմամբ ոչ կիրառելի լինելու մասին է վկայում նաև այն, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք կարող է լինել բողոքում դատական ակտի բողոքարկման հիմքերը չնշելը, մինչդեռ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու կոնկրետ հիմքի օրենսդրական ձևակերպման մեջ նշվում է բողոքում մատնանշված հիմքի վերաբերյալ արդեն իսկ որոշում կայացրած լինելու հանգամանքի մասին: Առկա է օրենսդրական կարգավորման բաց նաև այն հարցի առնչությամբ, թե ինչ որոշում պետք է կայացնի վճռաբեկ դատարանը, երբ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվում է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ չնշված, նոր խախտումներով կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի խախտմամբ: Եթե վերջին դեպքի հետկապված, չնայած ուղղակի օրենսդրական կարգավորման բացակայությանը, կարծում ենք՝ անվիճելի է բողոքն առանց քննության թողնելու եղանակով հարցի լուծումը, ապա առաջին իրավիճակի դեպքում հարց է ծագում, թե արդյոք վճռաբեկ դատարանը դարձյալ պետք է որոշում կայացնի վճռաբեկ բողոքը ժամկետով վերադարձնելու մասին: Գործող քրեադատավարական կարգավորումներն ըստ էության այս դեպքում ևս վճռաբեկ բողոքը վերադարձնելու օրենսդրական արգելք չեն պարունակում: Սակայն մյուս կողմից՝ նման մեկնաբանությունը կարող է հանգեցնել վճռաբեկ բողոքարկման իրավունքի չարաշահման: Կարծում ենք՝ կրկին թերություններով ներկայացված բողոքն առանց քննության թողնելու կարգավորումը միանգամայն համահունչ կարող է լինել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման պահանջին: Այսպես մի կողմից՝ օրենսդիրը, բողոքաբերին հնարավորություն տալով շտկել բողոքում տեղ գտած ձևական թերությունները, երաշխավորում է վերջինիս՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման իրավունքը՝ այն կախվածության մեջ չդնդելով սոսկ ձևական թերություններից: Սակայն, մյուս կողմից՝ նշված հնարավորությունը սպառնում է հետո անձի կողմից բողոք բերելու իրա-

վունքը պատշաճ կերպով չիրացնելու դեպքում վերջինս պետք է կրի դրա բացասական իրավական հետևանքները: Քննարկվող խնդիրների լուծում է Նախագծում տրված այն կարգավորումը, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքը վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետում չի համապատասխանեցվել Նախագծով սահմանված պահանջներին: Որոշակիորեն խնդրահարույց են այն իրավիճակները, երբ վճռաբեկ բողոքը, օրինակ, վերադարձվել է, քանի որ դրան դրա էլ եկտրոնային տարբերակը կցված չի եղել կամ այն ստորագրված չի եղել, մինչդեռ կրկին ներկայացված բողոքում ոչ միայն շտկվել է այդ սխալը, այլև բովանդակային առումով լրացվել են բողոքի հիմքերն ու հիմնավորումները կամ դրանք փոխարինվել են նոր հիմքերով ու հիմնավորումներով: Այս դեպքում հարց է ծագում, թե արդյոք վճռաբեկ դատարանը պետք է ընդհանրապես քննարկման առարկա դարձնի անձի ներկայացրած բողոքը և եթե այո, ապա՝ որ բողոքը՝ սկզբնական ներկայացված, թե լրացված: Եթե քննարկման առարկա դարձվի երկրորդ բողոքը, ապա դատարանի կայում հնարավորություն կստեղծի ձևական սխալներ պարունակող բողոքներ ներկայացնելու ճանապարհով շրջանցել վճռաբեկ բողոքարկման ժամկետների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և ժամանակ շահել բողոքը լրացնելու համար: Իսկ եթե անձի ներկայացրած բողոքն ընդհանրապես առանց քննության թողնվի, ապա դատարանը է հանգեցնել դատական վերանայման իրավունքի անհամաչափ սահմանափակման: Որպես միջանկյալ կարգավորում՝ առաջարկում ենք, այս դեպքում քննության առարկա դարձնել սկզբնական բողոքի բովանդակությունը:

Օրենսգրքի 414-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե չեն պահպանվել վճռաբեկ բողոքարկման ժամկետային, սուբյեկտային և առարկայական սահմանափակումները: ՅՕ-48-Ն օրենքով իբրև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմք նախատեսվեց բողոք ներկայացրած անձի կողմից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին դիմում ներկայացնելը: Այն նպատակ ուներ լրացնելու օրենսդրական այն բացը, թե ինչ որոշում պետք է կայացներ վճռաբեկ դատարանը

բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելու դեպքում: Սակայն, կարծում ենք՝ առավել իրավաչափ է համանման խնդրի օրենսդրական կարգավորումը վերաքննիչ վարույթի շրջանակներում, երբ բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում (Օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում, Նախագիծն էլ, կարգավորելով վերաքննիչ բողոքը հետ վերցնելու իրավական հետևանքները, այդպիսիք չի հստակեցնում վճռաբեկ բողոքը հետ վերցնելու դեպքերի համար: Վճռաբեկ բողոքը թողնվում է նաև առանց քննության, եթե դատական քննության արագացված կարգի կիրառմամբ կայացված դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք է բերվել գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևություններին՝ վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին անհամապատասխանության հիմքով: Կարծում ենք՝ վերջին հիմքի նախատեսումն ավելորդ է, քանի որ վճռաբեկ բողոքարկման հիմքերն օրենսդրորեն սահմանափակված են նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառության և դատավարական օրենքի էական խախտման դեպքերով: Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու ընթացակարգի ոչ հետևողական օրենսդրական կարգավորման օրինակ է նաև Օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած այն կարգավորումը, որ. *«Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին»*: Նշված նորմի տարացի մեկնաբանությունից բխում է, որ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու դեպքում կարող է կրկին վճռաբեկ բողոք ներկայացվել: Եթե վերադարձված վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելը միանգամայն համահունչ է բողոքը վերադարձնելու ինստիտուտի տրամաբանությանը, ապա առանց քննության թողնված վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունն իմաստազրկում և ձևական է դարձնում վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու ինստիտուտը: Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման կայացման պահից ստորադաս

դատարանի դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ և կարող է բողոքարկվել միայն բացառիկ վերանայման կարգով, ինչը դուրս է Վճռաբեկ վերանայման մեխանիզմի շրջանակներից: Նույն նկատառումներով անընդունելի ենք համարում Վճռաբեկ դատարանի կողմից այս նորմին գործնականում տրված այնպիսի մեկնաբանությունները, որ առանց քննության թողնված՝ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը չպարունակող ժամկետանց բողոքը կարող է կրկին ներկայացվել՝ դրանց կցելով նշված միջնորդությունները¹⁸⁴:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու կամ վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու հիմքերը: Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնում է, երբ քննարկման առարկա դարձնելով բողոքը վարույթ ընդունելու հիմքերի հիմնավորումները՝ գտնում է, որ այդպիսիք բավարար չեն բողոքը վարույթ ընդունելու որևէ հիմքի առկայությունը փաստելու համար: Արդեն իսկ հիշատակված՝ ՅՕ-48-Ն օրենքով ներմուծվեց վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պատճառաբանելու ընդհանուր օրենսդրական պահանջ: Նշված որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքով նախատեսված օրենքի միատեսակ կիրառության համապատասխան հիմքի բացակայությունը: Նշված օրենսդրական լրացումներից հետո էլ, սակայն, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների ուսումնասիրությունից բխում է, որ դրանց պատճառաբանությունները բովանդակային առումով համընկնում են մինչ այդ լրացումները վճռաբեկ բողոքն առանց ժամկետ սահմանելու վերադարձնելու մասին որոշումների հիմնավորումներին՝ սահմանափակվելով միայն ընդհանուր քննության այն դիտարկմամբ, որ բողոքաբերի հիմնավորումները բավարար չեն փաստելու, որ առկա է բողոքը վարույթ ընդունելու

¹⁸⁴Տե՛ս օրինակ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի մայիսի 17-ի ԵՄԴ/0066/01/14 որոշումը:

այս կամ այն հիմքը¹⁸⁵: Ուստի, վերոհիշյալ օրենսդրական նորմի հետ կապված՝ նախ քննարկման կարիք ունի առհասարակ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանվածության խնդիրը: Բացի այդ, որոշակի իրավական անորոշության է առաջացնում նաև ինքնին քննարկվող օրենսդրական նորմի ձևակերպումը: Այսպես, մի կողմից՝ այն սահմանում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պատճառաբանելու ընդհանուր պահանջ, մյուս կողմից՝ վճռաբեկ դատարանին պարտավորեցնում է հիմնավորել միայն բողոքում վկայակոչված՝ օրենքի միատեսակ կիրառության կոնկրետ հիմքի բացակայությունը: Երկրորդ խնդրի հետ կապված՝ առաջ անցնելով նշենք, որ Սահմանադրական դատարանը, քննարկման առարկա դարձնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված այն կարգավորումը, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածվում օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքով բերված վճռաբեկ բողոքները վերադարձնելու որոշումների վրա, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդիրն օժտված է վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ և չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայությունն հիմնավորման կարիք չկա: Կախված հիմքից՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պատճառաբանելու տարբերակված օրենսդրական կարգավորում նախատեսելու օրենսդրի մոտեցման տարբերությունն այս դեպքում այն է, որ սահմանվել է միայն օրենքի միատեսակ կիրառության հիմքով (բացառությամբ իրավունքի զարգացման հիմքի) բերված բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պատճառաբանելու պահանջ: Թեև Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից որևէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու բացարձակ արգելք, այդուհանդերձ, կարծում ենք, օրենսդրի՝ միայն օրենքի միատեսակ կիրա-

¹⁸⁵Տե՛ս, ի թիվս այլ բազմաթիվ որոշումների, վճռաբեկ դատարանի 2015 թվականի մարտի 3-ի ԵԿԴ/0237/06/15, 2016 թվականի հունվարի 27-ի ԵԿԴ/0109/11/15, 2016 թվականի մարտի 3-ի ԵԿԴ/0238/06/15 որոշումները և այլն:

ռու թյան հիմքի բացակայ ու թյունը պատճառաբանելու մոտեցման հնարավոր տրամաբան ու թյունը կարող է լինել, ի տարբերություն բողոքը վարույթ ընդունելու մյուս հիմքերի, գործի էություն մեջ խորանալու անհրաժեշտ ու թյան բացակայ ու թյունը: Նույն կարգավորումն է սահմանում նաև Նախագծի 388-րդ հոդվածի 6-րդ մասը: Մինչև քննարկվող փոփոխությունները գործող Օրենսգրքով սահմանված՝ վճռաբեկ բողոքն առանց կրկին ներկայացման հնարավորություն վերադարձնելու (գործող օրենսդրական կարգավորումների իմաստով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու) մասին որոշումը պատճառաբանելու անհրաժեշտ ու թյան խնդրին անդրադարձել է Սահմանադրական դատարանը: Այսպես, 2007 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ-691 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշելով, որ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք, այդուհանդերձ գտել է, որ վճռաբեկ դատարանն իր սահմանադրական լիազորություններն առավել ամբողջական կկատարի, եթե վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանմանն օրենսդրական պահանջ ներկայացվի: Ավելի վաղ՝ 2007 թվականի ապրիլի 9-ին ընդունված՝ թիվ ՍԴՈ-690 որոշման մեջ, քննարկման առարկա դարձնելով քաղաքացիական դատավարությունում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանվածության օրենսդրական պահանջի բացակայ ու թյունը, Սահմանադրական դատարանը հատուկ ընդգծել է, որ. *«վճռաբեկ դատարանի կողմից «էական նշանակություն ունեցող», «ծանր հետևանք» և «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պատճառաբանումը պայման է բողոքը վարույթ ընդունելու հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար»:* Իրավաչափ համարելով վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով հայեցողական լիազորությունների վերապահումը, այդուհանդերձ, հաշվի առնելով իրավագիտակցության դեռևս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անբավարար աստիճանը, համակարգային անկատարությունները, կոռուպցիոն ռիս-

կը, դատական իշխանության անկախության ու անկողմնակալության նկատմամբ հասարակության անդամների վստահության ամրապնդումը, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել նաև այն մասին, որ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն: Այս դիրքորոշումը վերահաստատվել է նաև 2008 թվականի մայիսի 27-ի թիվ ՍԴՈ-754 որոշման մեջ: ԵԱՐԿ ԺՅՄԻԳ 2012 թվականի նոյեմբերի 12-ի վճռաբեկ բողոքի ընդունելիության առանձին խնդիրների վերաբերյալ զեկույցի (այսուհետ՝ ԵԱՐԿ զեկույց) համաձայն՝ միջազգային փորձը վկայում է այն մասին, որ վերանայող դատական ատյաններն առավել ապես բողոքը վարույթ չընդունելու մասին որոշումները պատճառաբանելու պարտականություն չեն կրում և կարող են բավարարվել անհրաժեշտ հիմքերի բացակայության մասին սուսկ համապատասխան նշում կատարելով¹⁸⁶: Այսպես, օրինակ, Միացյալ Թագավորության Գերագույն Դատարանը բողոքարկման միջնորդությունը մերժելիս հիմնվում է ստանդարտ այն ձևակերպման վրա, որ դիմումում բարձրացված չէ համընդհանուր հասարակական նշանակություն ունեցող իրավունքի հարց¹⁸⁷: Կամ, օրինակ, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը կամ վարույթ ընդունելը մերժելը ձևակերպվում է Գերագույն դատարանի որոշմամբ՝ առանց կոնկրետ պատճառներ մատնանշելու¹⁸⁸: Որոշակիորեն հետաքրքիր է նաև այս հարցի առնչությամբ Եվրոպական դատարանի մշակած չափանիշների ուսումնասիրությունը: Քննարկման առարկա

¹⁸⁶ Տե՛ս Opinion on selected issues regarding the admissibility of appeals to the Cassation Court of the Republic of Armenia. OSCE, ODHIR Warsaw, 29 November 2012 Opinion-Nr.: JUD-ARM/212/2012 (LB), Էջեր 8-9// [file:///C:/Users/User/Downloads/212_JUD_ARM_29%20Nov%202012_en%20\(4\).pdf](file:///C:/Users/User/Downloads/212_JUD_ARM_29%20Nov%202012_en%20(4).pdf)

¹⁸⁷ Տե՛ս բողոքարկման թույլ տվողություն տրամադրելու մասին Միացյալ Թագավորության Գերագույն դատարանի որոշումների ամսական ամփոփագիրը. <http://www.supremecourt.gov.uk/news/permission-to-appeal.html>, մեջբերումն ըստ ԵԱՐԿ զեկույցի:

¹⁸⁸ Տե՛ս Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքը՝ 2014 թվականի փետրվարի 26-ի դրությամբ. http://www.wipo.int/wipolex/en/text.jsp?file_id=332601

դարձնելով բողոքարկման թույլատվական կարգի իրավաչափության յուրյունը, երբ վերադաս դատական ատյան դիմելու համար անձը պետք է ստանա դատական ակտը կայացրած կամ վերադաս դատարանի թույլատվությունը՝ Եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի պահանջում է մանրամասն պատճառաբանել թույլատվությունը մերժելու մասին որոշումը: Եվրոպական դատարանի կարծիքով, եթե բարձրագույն դատական ատյանը հրաժարվում է գործը վարույթ ընդունել այն հիմքով, որ իրավական հիմքերը բավարար չեն, շատ կարճ պատճառաբանությունը կարող է բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին¹⁸⁹: Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի պահանջում վերանայում իրականացնող դատական ատյանից ներկայացնել մանրամասն պատճառաբանություն, երբ այն պարզապես հատուկ իրավական դրույթի կիրառմամբ մերժում է իրավունքի հիմքով բերված բողոքն այն հիմքով, որ այն չունի հաջողության հեռանկար (having no prospects of success)՝ առանց հետագա բացատրության¹⁹⁰: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ առանձին դեպքերում կարող է անգամ բավարարվել այդ ընթացակարգը սահմանող նորմերին հղումը: Այսպես, օրինակ, ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված համանման օրենսդրական կարգավորումը և պրակտիկան ներսիսյանն ընդդեմ Յայաստանի գործով Եվրոպական դատարանը դիտարկել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող¹⁹¹:

Այսպիսով, դատական պաշտպանության իրավունքի լավագույնս երաշխավորման տեսանկյունից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանվածության պահանջի նախատեսումը միանգամայն իրավաչափ է: Սակայն միևնույն ժամանակ այս խնդիրը պետք է դիտարկել առհասարակ վճռաբեկ բողոքարկ-

¹⁸⁹Տե՛ս *Glender v. Sweden*, 2005 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռ, գանգատ թիվ 28070/03, *Stepenska v. Ukraine*, 2006 թվականի հունիսի 12-ի վճիռ, գանգատ թիվ 24079/02, *Jaczkó v. Hungary*, 2006 թվականի հունիսի 18-ի վճիռ, գանգատ թիվ 40109/03, *Kukkonen v. Finland*, 2009 թվականի հունվարի 13-ի վճիռ, գանգատ թիվ 47628/06, կետ 24, *Wnuk v. Poland*, 2009 թվականի սեպտեմբերի 1-ի վճիռ, գանգատ թիվ 38308/05:

¹⁹⁰Տե՛ս *Burg and Others v. France*, գանգատ թիվ 34763/02, 2003 թվականի հունվարի 8-ի որոշում, *Gorou v. Greece* [Մեծ պալատ], գանգատ թիվ 12686/03, կետ 41, 2009 թվականի մարտի 20-ի որոշում:

¹⁹¹Տե՛ս *Nersesyan v. Armenia*, գանգատ թիվ 15371/07, 2010 թվականի հունվարի 19-ի վճիռ, կետ 24:

ման ինստիտուտի օրենսդրական կարգավորման, քննարկվող պահանջի գործնականում իրացման իրատեսակական լինելու համատեքստում՝ առաջարկելու համար հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման երաշխիքներ պարունակող և ծումներ: Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումների ուսումնասիրությունն ինչ բխում է, որ քննարկվող խնդիրը դիտարկել է ոչ թե պարփակված, այլ մի շարք գործոնների հետ համակարգային կապերի ներքո: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելը պատճառաբանելու անհրաժեշտությունը, ի թիվս այլոց, պայմանավորել է այն հանգամանքով, որ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերն առավել ասես կրում են գնատահատողական և խիստ անորոշ բնույթ: Ուստի, կարծում ենք՝ կարելի է նախնական դիտարկում անել այն մասին, որ Նախագծում բողոքը վարույթ ընդունելու հիմքերի հստակ շարադրումը որոշակիորեն կարող է մեղմել այս խնդրի սրությունը: Բացի այդ, հաշվի առնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշման պատճառաբանվածության պահանջի իրացման ոչ իրատեսակականությունը՝ պայմանավորված վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությամբ, դատավորների փոքր թվաքանակով¹⁹², կարծում ենք՝ նման պահանջի հետ մեկտեղ պետք է քննարկման առարկա դարձնել և գործնական քայլեր ձեռնարկել վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված իրավաչափ մեխանիզմների ներդրմանն ուղղությամբ: Այդպիսի մեխանիզմ, օրինակ, կարող է լինել սույն աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆում քննարկված՝ գործնականում ըստ էության չլուծող դատական ակտերը վճռաբեկ բողոքարկման առարկայից բացառելու առաջարկը: Բացի այդ, առաջարկում ենք բողոքի քննության և լուծման պարզեցված ընթացակարգեր նախատեսել այն դեպքերի համար, երբ բողոքը վարույթ ընդունելու հիմքը բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանության հակասությունն է վճռաբեկ դատարանի նախկին որոշումներում այդ նորմի իրավական բովանդակության վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Դրանք, այսպես կոչված, կրկնվող

¹⁹² Այս մասին արդեն իսկ խոսվել է սույն աշխատության 1-ին գլխի 2-րդ պարագրաֆում:

գործերն են, որոնք գործնականում էապես ծանրաբեռնում են դատարանի գործունեությանը, և որոնցով դատարանը նոր իրավական դիրքորոշում արտահայտելու խնդիր չունի, քանի որ ունի արդեն իսկ ձևավորված նախադեպային իրավունք (եվրոպական դատարանի օրինակով՝ այսպես կոչված՝ leading cases): Սակայն նշված գործերով բողոքները վարույթ չընդունելը սոսկ այն պատճառաբանությամբ, որ վճռաբեկ դատարանն արդեն իսկ նմանատիպ գործերով պրակտիկայի համար ուղղորդող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ է արտահայտել, հակասության մեջ է մտնում օրենքի միաստեսակ կիրառությունն ապահովելու գործառնություններն էություն ան հետ, արժեզրկում է դրան նշանակությունը այնքանով, որքանով վճռաբեկ դատարանին զրկում է գործնականում իր իրավական դիրքորոշումների հետևողական իրացումն ապահովելու գործունեմեխանիզմից և ի վերջո անհամաչափորեն սահմանափակում է անձի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման իրավունքը: Հավասարակշռված լուծման օրինակ, կարծում ենք, կարող է լինել բողոքի նախնական քննության (բողոքի ընդունելիությունը որոշելու) փուլում նաև այն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու օրենսդրական կարգավորումը, ինչը հնարավորություն կտա առանց դատական նիստ հրավիրելու կայացնել ըստ էության դատական ակտ՝ ինչպես նաև ժամանակային և նյութական ռեսուրսներ: Գործնականում դա նաև հնարավորություն կտամշակելու այդ որոշումներին ներկայացվող պարզեցված ձևական և բովանդակային պահանջներ:

Բացի այդ, հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը գործնականում որևէ իրավական հետևանք չի առաջացնելու և այն պատճառաբանելու պահանջը վճռաբեկ բողոքի նախնական քննության ընթացակարգերն առավել կանխատեսելի դարձնելու նպատակ է հետապնդում՝ կարծում ենք՝ նույն նպատակի իրացմանը կարող է ծառայել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման պատճառաբանվածության պահանջը: Եվ քանի որ այդ որոշման պատճառաբանությունը կարող է հետագայում դրվել նաև վճռաբեկ դատարանի վերջնական որոշման հիմքում, կարծում ենք, այս կարգավորումը կարելի է արդարացված

համարել նաև վճռաբեկ դատարանի գործունեությանը նաև ավելորդ չծանրաբեռնելու խնդրի տեսանկյունից: Ի հավելումս վերոգրյալի՝ առաջարկում ենք՝

1) Օրենսգրքի 411-րդ հոդվածից հանել «իսկ պատճենը՝ դատավճիռը կամ որոշումը կայացրած դատարան՝ սույն օրենսգրքի 413 հոդվածի երկրորդ մասի պահանջները կատարելու համար», իսկ Նախագծի 385-րդ հոդվածի 2-րդ մասից՝ «իսկ պատճենը՝ վերաքննիչ դատարան» բառերը.

2) Օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասում և Նախագծի 385-րդ հոդվածի 1-ին մասում «հրապարակման պահից» բառերը փոխարինել «ստացման պահից» բառերով.

3) Օրենսգրքի 413-րդ հոդվածի՝ «Բողոքարկման հետևանքները» վերտառությունը փոխարինել «Բողոքարկման կարգը» վերտառությամբ:

4) ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ դատարանը, ստանալով վճռաբեկ բողոքը, գործն անհապաղ պահանջում է դատական ակտը կայացրած դատարանից: Դատական ակտը կայացրած դատարանը վճռաբեկ դատարանի պահանջով գործն անհապաղ ուղարկում է վճռաբեկ դատարան»: Նույն խմբագրությամբ շարադրել Նախագծի 385-րդ հոդվածի 3-րդ մասը.

5) Նախագծի 362-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Այս դեպքում վճռաբեկ բողոքի քննության արդյունքում անձի վիճակը չի կարող վատթարացվել».

6) Նախագծի 388-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասության մեջ «բողոքը ստանալուց» բառերը փոխարինել «բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց» բառերով.

7) Օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Եթե կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում բացի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները շտկելուց լրացվել են նաև բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները, ապա վճռաբեկ դատարանի կողմից քննվում են սկզբնական բողոքի հիմքերն ու հիմնավո-

րու մեները: Սույն կանոնը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է սույն Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6.1-րդ մասերով սահմանված պահանջներին անհամապատասխանությամբ հիմքով».

8) Օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 3-րդ մասից հանել 2-րդ նախադասությունը.

9) Օրենսգրքում և նախագծում սահմանել, որ եթե վճռաբեկ բողոքարկման ժամկետն ավարտվել է, իսկ տվյալ դատական ակտի դեմ այլ վճռաբեկ բողոքներ չեն բերվել, ապա բողոքը հետվերցնելու դեպքում դատարանը կայացնում է վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշում:

Անդրադառնալով բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքերին՝ պետք է արձանագրել, որ ինչպես բազմիցս արդեն նշել ենք, դրանց նախատեսումն օրենքի միատեսակ կիրառության գործառնության իրականացման երաշխիք է: Բողոքարկման թույլատրվական կարգն առավել բնութագրական է ընդհանուր իրավունքի համակարգին: Այսպես, օրինակ, ԱՄՆ Գերագույն դատարանի հայեցողական լիազորությունները սահմանող՝ Գերագույն դատարանի 2010 թվականի կանոնների համաձայն՝ դաշնային կամ նահանգային դատարանի դատական ակտը վերանայվում է գործը պահանջելու հրաման արձակելու կամ վերանայման թույլ տվողության (writ of certiorari կամ leave for appeal) մասին միջնորդության հիման վրա: Իսկ այդ կանոնների 3-րդ բաժնի 10-րդ կանոնի համաձայն՝ Գերագույն դատարանի կողմից միջնորդության բավարարումը ոչ թե իրավունքի, այլ դատական հայեցողության հարց է: Եվ միջնորդությունը կարող է բավարարվել միայն ծանրակշիռ փաստարկների առկայության պարագայում¹⁹³: Բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ է նախատեսում նաև Միացյալ Թագավորության Գերագույն դատարանի 2009 թվականի կանոնների 11-րդ հոդվածը¹⁹⁴: Բողոքարկման թույլատրվական կարգն աստիճանաբար ներթափանցում է նաև մայրցամաքային իրավունքի համակարգ: Մասնավորապես, Նիդերլանդներում, հաշվի առնելով վճռաբեկ դատարանի (Hoge Road) ծանրաբեռնվա-

¹⁹³ Տե՛ս *Rules of the Supreme Court of the United States*, Department of Justice 950 Pennsylvania Avenue, N. W Washington, DC 20530-0001. <http://www.supremecourt.gov/ctrules/2013RulesoftheCourt.pdf>

¹⁹⁴ Տե՛ս https://www.supremecourt.uk/docs/uksc_rules_2009.pdf

ծուծությունը և բողոքները վարույթ ընդունելը մերժելու համապատասխան մեխանիզմների բացակայությունը, դատարանի աշխատանքի ծավալների նվազեցման նպատակով 1987 ընդունված օրենքով լայն (հայեցողությունն դրսևորելու հնարավորությունն ընձեռող) բնորոշում է տրվել վճռաբեկ դատարանի խնդիրներին առայն, որ վերջինս մի կողմից՝ կոչված է երաշխավորելու օրենքի միատեսակ կիրառությունը և իրավունքի զարգացումը, իսկ մյուս կողմի հաշվի առնել արդար դատաբնական պահանջները: Իսկ 1988 թվականին ընդունված «Դատարանակազմության մասին» օրենքի 101-րդ հոդվածով սահմանվել է, որ վճռաբեկ դատարանն իրավասու է մերժել վճռաբեկ բողոքը, եթե այն օրենքի միատեսակ կիրառության կամ իրավունքի զարգացման հետ կապված խնդիր չի առաջացնում¹⁹⁵: Շվեդիայի դատական վարույթի վերաբերյալ օրենսգրքի 54-րդ գլխի 10-րդ բաժնի համաձայն՝ գերագույն դատարան բողոք բերելու թույլ տվություն կարող է տրվել, եթե բողոքի քննությունը կարող է ուղղորդող նշանակություն ունենալ օրենքի ճիշտ կիրառության համար կամ եթե առկա են բացառիկ հանգամանքներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի կոպիտ խախտումներ կամ որ վերաքննիչ ասյանում գործի ելքն ակնհայտորեն արդյունք է կոպիտ անփութության կամ կոպիտ սխալի¹⁹⁶: Գերմանիայում վճռաբեկության (ռևիզիայի) կարգով բերված բողոքներն ընդունվում են վարույթ, եթե առկա է վերաքննիչ դատարանի համապատասխան թույլ տվությունը կամ եթե վճռաբեկ դատարանը բավարարել է թույլ տվությունը մերժելու մասին վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված բողոքը: Օրենսդիրը հստակեցրել է նաև ռևիզիայի կարգով դատական ակտը բողոքարկելու թույլ տվություն տալու հիմքերը, այն է՝ առկա է առանձնահատուկ կարևորության գործ, կամ իրավունքի զարգացման կամ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար պահանջվում է վճռաբեկ դատարանի որոշումը (Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 543-րդ հոդված)¹⁹⁷: Եստուհայի քրեական

¹⁹⁵ Տե՛ս **Sofie M.F. Geeroms**, նշված աշխատությունը, էջեր 211-214:

¹⁹⁶ Տե՛ս Swedich Code of Judicial Procedure

http://www.imolin.org/doc/amlid/Sweden_Code%20of%20Judicial%20Procedure.pdf

¹⁹⁷ Տե՛ս **Sofie M.F. Geeroms**, նշված աշխատությունը, էջեր 214-218, Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքը (05.09.2005)՝ 2013 թվականի

դատավարության 349-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է վարույթ, եթե Գերագույն դատարանի դատավորներից առնվազն կեսը գտնում է, որ բողոքի փաստարկները հիմք են տալիս ենթադրելու, որ ստորադաս դատարանը սխալ է կիրառել նյութական իրավունքի նորմը կամ թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում կամ վճռաբեկ բողոքում վիճարկվում է նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառությունը կամ պահանջվում է դատական ակտի բեկանումը քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով, և Գերագույն դատարանի որոշումը էական նշանակություն ունի օրենքի միատեսակ կիրառության կամ իրավունքի զարգացման ապահովման համար:

Տեսական գրականության մեջ չկա մեկ միասնական մոտեցում բողոքը վարույթ ընդունելու հայեցողության շրջանակների վերաբերյալ: Այսպես, մի խումբ դատավարագետներ կողմ են դատարանի կողմից հայեցողությանը, մյուսներն ընդհանրապես դեմ են այդ գաղափարին: Կան նաև հեղինակներ, ովքեր ընդունում են դատական հայեցողության առկայության փաստն ու դրան նշանակությունը, սակայն միևնույն ժամանակ ընդգծում են, որ այն պետք է հիմնված լինի ոչ թե դատարանի (դատավորի) անհատական նախապատվության, այլ օրենքով սահմանված չափանիշների վրա¹⁹⁸: Շարունակելով վերոշարադրյալ դատողությունը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ այս խնդրի օրենսդրական կանոնակարգման ժամանակ պետք է հաշվի առնել նաև դրաստերտ կապը արդարադատության մատչելիության իրավունքի և իրավական որոշակիության սկզբունքի հետ, և իրավաչափ շահերի համակողմանի հաշվառմամբ փորձել տալ խնդրի հնարավորինս արդյունավետ լուծում: Արդարադատության մատչելիության իրավունքի առանձին դեպքերում սահմանափակման իրավաչափությանն անդրադարձել է նաև Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում¹⁹⁹: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ իրա-

հոկտեմբերի 10-ի դրությամբ// http://www.gesetze-im-internet.de/englisch_zpo/englisch_zpo.html#p1994

¹⁹⁸Տե՛ս R. Dworkin, "Judicial Discretion", (1963) The Journal of Philosophy Vol. 60, No. 21, American Philosophical Association, Eastern Division, Sixtieth Annual Meeting, էջեր 624-638:

¹⁹⁹Այս մասին արդեն իսկ խոսվել է սույն աշխատության 2-րդ գլխի 1-ին պարագրաֆում: Տե՛ս **Harrison McKee v. Hungary**, գանգատ թիվ 22840/07, 2014 թվականի հունիսի 3-ի վճիռ, կետ 21, **Egic v. Croatia** գանգատ թիվ 32806/09, 2014 թվականի հունիսի 5-ի վճիռ, կետ 48, **García Manibardo v. Spain**, գանգատ թիվ 38695/97, 2000

վուճակների հիմքով վերանայման պարագայում օրենքով կարող են նախատեսվել բողոքը վարույթ ընդունելու ավելի խիստ պահանջներ: Յաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ դերը՝ համապատասխան ընթացակարգն այստեղ կարող է ավելի ֆորմալ լինել հատկապես այն պարագայում, երբ վճռաբեկ վերանայմանը նախորդում է գործի քննությանն առաջին անգամից վերաքննիչ դատարանում, որոնք իրավասու են անդրադառնալու նաև փաստի հարցերի²⁰⁰: Անդրադառնալով երրորդ անգամի դերին ու գործառու թային նշանակությունը՝ արդեն իսկ հիշատակված **R(95)5** հանձնարարականի շրջանակներում եվրոպայի խորհուրդը հնարավոր է համարում երրորդ անգամի դատարան այն գործերի բողոքարկումը, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ իրավունքի միատեսակ մեկնաբանությանը կամ որոնք վերաբերում են հանրային մեծ նշանակություն ունեցող իրավական հարցի (7-րդ հոդվածի շեղում)²⁰¹: Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրական կարգավորումներին, ապա Օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևություն, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ

թվականի փետրվարի 15-ի վճիռ, կետ 36, *Mortier v. France*, գանգատ թիվ 42195/98, 2001 թվականի հունիսի 31-ի վճիռ, կետ 33: *Markovic and Others v. Italy [GC]*, գանգատ թիվ 1398/03, 2006 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ, կետ 99, *Masirevic v. Serbia*, գանգատ թիվ 30671/08, 2014 թվականի փետրվարի 11-ի վճիռ, կետ 46, *Baka v. Hungary*, գանգատ թիվ 20261/12, 2014 թվականի մայիսի 27-ի վճիռ, §73, *Papon v. France*, գանգատ թիվ 54210/00, 2002 թվականի հունիսի 25-ի վճիռ, կետ 90, *Canete de Goni v. Spain*, գանգատ թիվ 55782/00, 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ, կետ 36, *Miragal Escolano and others v. Spain*, գանգատներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98..., 2000 թվականի հունվարի 25-ի վճիռ, *Zvolky and Zvolkska v. The Czech Republic*, գանգատ թիվ 46129/99, 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռ, կետ 51:

²⁰⁰ Տե՛ս *Levages Prestations Services v. France*, գանգատ թիվ 23920/93, 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռ, կետեր 44-48, *Brualla Gómez de la Torre v. Spain*, գանգատ թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, կետեր 34-39, *Meftah and Others v. France [GC]*, գանգատներ թիվ 32911/96, 35237/97 և 34595/97, 2002 թվականի հունիսի 26-ի վճիռ, կետ 41:

²⁰¹ Draft recommendation no. R(95) ... of the Committee of Ministers to member states concerning the introduction and improvement of the functioning of appeal systems and procedures in civil and commercial cases, Strasbourg, 10 January 1995 restricted addendum iii to_cm(95)1
[//https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=528075&Site=CM](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=528075&Site=CM)

3) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Նախագծի 386-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևություն, որ՝

1) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերևույթ ի հայտ է եկել որևէ լուրջ փաստական կամ իրավական հանգամանք կամ առերևույթ թույլ է տրվել լուրջ դատական սխալ, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Այսպիսով, և՛ գործող Օրենսգրքում, և՛ Նախագծում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկը օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունն է: Քանի որ մեկնաբանության առարկա կարող են դառնալ ոչ միայն օրենքները, այլ նաև այլ նորմատիվ իրավական ակտեր, ինչպես իրավաչափորեն սահմանված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում, կարծում ենք՝ պետք է համապատասխան լրացումներ կատարել Օրենսգրքում և Նախագծում: Ընդ որում, թե գործող Օրենսգիրքը և Նախագիծը հստակեցնում են օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության մասին վկայող դեպքերը, որոնք մասնավորապես հանգում են ստորադաս դատարանների՝ տարբեր գործերով (վարույթներով) առնվազն երկու դատական ակտերում միևնույն նորմի՝ իրար հակասող, ինչպես նաև բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմի՝ Եվրոպական դատարանի կամ Սահմանադրական դատարանի կամ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ կիրառությունը: Օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու ինքնուրույն հիմք է բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայությամբ:

յ ու նը²⁰²: Նշված հիմքերից առաջինի հետևանքով՝ քննարկման կարիք ունի այն հարցը, թե արդյոք խոսքը վերաբերում է առաջին և վերաբննիչ դատարանների, թե միայն վերաբննիչ դատարանի՝ միևնույն նորմի հակասական մեկնաբանությամբ ուս պարունակող դատական ակտերին: Նախագծում տրված կարգավորման տառացի մեկնաբանությամբ ունից բխում է, որ խոսքը վերաբերում է նաև տարբեր վարույթներով առաջին և վերաբննիչ դատարանների դատական ակտերին: Կարծում ենք՝ միանգամայն իրավաչափ է նման մեկնաբանությամբ, քանի որ վճռաբեկ բողոք բերելու պահին նույն նորմի՝ տարբեր առյաններում, տարբեր գործերով հակասական մեկնաբանության առկայությամբ ունը վկայում է համապատասխան իրավական նորմին որոշակի իրավամեկնաբանությամբ ուս տալու անհրաժեշտության մասին: Օրենքի միատեսակ կիրառության ապահովման դեպքերը սահմանելիս նախագիծը չի սահմանափակվել միայն համապատասխան դատական ակտերի միջև հակասության առկայությամբ, այլ և արդարացիորեն առանձնացրել է բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայության հիմքը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ վճռաբեկ դատարանի արժեքային իրավամեկնաբանությամբ ունը ծառայում է որպես անձի հիմնարար իրավունքների և ազատության ներքին ապահովման արդյունավետ միջոց:

Ինչպես արդեն նշվել է, գործող օրենսդրական կարգավորման համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է վարույթ, եթե վերաբննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը ազդել կամ կարող էր ազդել գործի ելքի վրա: Նախկին խմբագրությամբ բողոքը վարույթ ընդունելու հիմք էր առերևույթ դատական սխալը, որ կարող էր առաջացնել կամ առաջացրել էր ծանր հետևանքներ²⁰³: Օրենսդիրը քննարկվող հիմքին ոչ միայն նոր օրենսդրական ձևակերպում է տվել, այլ և փորձել է հստակեցնել անորոշ և խիստ գնահատողական բնույթ կրող այս հիմքը՝ նախատեսելով

²⁰²Այս հիմքի մասին արդեն իսկ խոսվել է սույն աշխատության 1-ին գլխի 2-րդ պարագրաֆում:

²⁰³ԵԱՀԿ՝ բազմիս հիշատակված գեկույցում դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ բարձրագույն դատական առյանները բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությամբ ունը գնահատելիս պետք է հաշվի առնեն ինքնին խախտման, այլ ոչ թե դրահնարավոր հետևանքների ծանր բնույթը: Բացի այդ առաջարկվել էր նաև հստակեցնել կոպիտ դատական սխալների շրջանակը՝ երաշխավորելու համար իրավական որոշակիության սկզբունքը և ամրապնդելու համար հասարակության վստահության նշանաբանությունների իրականացման նկատմամբ:

դատական սխալ ների որոշակի շրջանակ: Այս առումով էլ, սակայն, օրենսդիրը հակառակ ծայրահեղության մեջ է ընկել՝ նախատեսելով այնպիսի դատական սխալ ների շրջանակ, որոնք անգամ իբրև բողոքարկման հիմք նախատեսված չեն, և ինչպես այդ մասին արդեն իսկ նշվել է, դուրս են վճռաբեկ վերանայման մեխանիզմի իրավական եռթյունից: Նախագծում սահմանված կոպիտ դատական սխալ ների շրջանակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդգրկում են անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող նյութական և դատավարական իրավունքի առավել ծանր խախտման դեպքերը, որոնք նույնանում են վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու, որոշակիորեն անգամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի՝ հիմնարար խախտման հիմքով բողոքարկման հիմքերին (իհարկե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի շրջանակը շատ ավելի լայն է): Հարկ է նաև ընդգծել, որ արդեն հիշատակված ԵԱՀԿ գեկոյցում որպես օրինակելի օրենսդրական կարգավորման օրինակ վկայակոչված Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքում (427-րդ հոդվածի 1-ին մաս) նախատեսված՝ դատական սխալի հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքերն ըստեռության նույնանում են նախագծով սահմանված հիմքերի հետ (խոսքը վերաբերում է, մասնավորապես, արարքի սխալ իրավական գնահատականին, քրեադատավարական օրենքի էական խախտման դեպքերին): Ինչպես արդեն նշվել է, նախագծի 386-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում խոսքը ոչ թե ցանկացած, այլ միայն կոպիտ դատական սխալ ների մասին է, իսկ ցանկացած այլ դատական սխալի առկայության պարագայում բողոքն ընդունվում է վարույթ, եթե առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վճռաբեկ բողոքում վճռաբեկ բողոքարկման հիմքերից բացի նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները նշելու պահանջը՝ կարծում ենք քննարկման կարիք ունի դրանց հարաբերակցության խնդիրը: Վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը թեկուզև փոխկապակցված, այդուհանդերձ, նույնական կամ այլ ընտրանքային հիմքեր չեն: Այս խնդրի քննարկման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն, որ ինչպես ցույց է տալիս բազմաթիվ վճռաբեկ

բողոքների ու սու մնասիրությու նը, գործնականում եղել են առան-
ձին դեպքեր, երբ վճռաբեկ բողոք է բերվել սոսկ օրենքի միատեսակ
կիրառության հիմքով, այլ կերպ՝ օրենքի միատեսակ կիրառության ու-
նը ներկայացվել է և՛ որպես դատական ակտի բողոքարկման, և՛ որպես
բողոքը վարույթ ընդունելու հիմք: Դատական ակտի բողոքարկման
հիմքը, անկախ բողոքը վարույթ ընդունելու հիմքից, դատական
սխալն է: Բողոքի քննության արդյունքներով կայացվող որոշումը
այն մերժելու կամ բավարարելու և ըստ այդմ վերանայվող դատա-
կան ակտանփոփոխ թողնելու կամ դատական ակտը բեկանելու (փոփո-
խելու) մասին կախված է նրանից, թե արդյոք հաստատվում կամ չի
հաստատվում բողոքում նշված դատական սխալը: Այլ հարց է, որ օ-
րենքի միատեսակ կիրառության հիմքով վարույթ ընդունված բո-
ղոքների քննության արդյունքները միշտ չէ, որ կապված են դատա-
կան սխալի ուղղման անհրաժեշտության հետ: Դրավառ օրինակն այն
գործերն են, որոնցով վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել օ-
րենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության
հիմքով, իսկ բողոքի քննության արդյունքում ստորադաս դատարա-
նի դատական ակտը թողնվել է օրինական ուժի մեջ, քանի որ նյութա-
կան կամ դատավարական իրավունքի որևէ խախտում ստորադաս դատա-
րանի կողմից թույլ տրված չի եղել: Նշված գործերով վճռաբեկ դա-
տարանն իր որոշման շրջանակներում արտահայտել է իրավական
դիրքորոշումներ, որոնցով զարգացրել է ստորադաս դատարանների
ըստ էության ճիշտ իրավամեկնաբանությունը: Բայց անգամ այս
դեպքում, դատական ակտի բողոքարկման հիմքը դատական սխալն է,
քանի որ եթե անձը բողոքարկում է ստորադաս դատարանի դատական
ակտը, ուրեմն համաձայն չէ կոնկրետ նորմին դատական ակտում
տրված մեկնաբանության հետ: Առավել հետաքրքրական է դատական
սխալի հիմքով դատական ակտի բողոքարկման և բողոքը վարույթ ըն-
դունելու հիմքերի հարաբերակցության խնդիրը: Այսպես, վճռաբեկ
բողոք բերելու հիմքը դատական սխալն է՝ նյութական կամ դատավա-
րական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի
ելքի վրա: Օրենսգրքի 407-րդ հոդվածը, որի հասցեատերը բողոքա-
բերն է, պարտավորեցնում է վճռաբեկ բողոքում հիմնավորել բողո-
քը վարույթ ընդունելու հիմքերից որևէ մեկը, որոնք, ի թիվս այ-

լ ոց, ներառում են առերևույթ դատական սխալը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Նույն 407-րդ հոդվածի 2.³-րդ մասը բողոքաբերին պարտավորեցնում է վերոհիշյալ հիմքով բողոք ներկայացնելու դեպքում հիմնավորել, որ այդ խախտումն **ազդել է գործի ելքի վրա** Վկայակոչված նորմերի համակարգային վերլուծության և իրավաբանական ակտի բողոքարկման հիմքը դատական սխալն է, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ապա բողոքը վարույթ ընդունելու հիմքն այն սխալն է, որը հաստատապես ազդել է գործի ելքի վրա: Սակայն հետագա օրենսդրական կանոնակարգումները վկայում են օրենսդրի ոչ հետևողական մոտեցման մասին: Այսպես, Օրենսգրքի՝ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը սահմանող՝ 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Վերոհիշյալ նորմից ուղղակիորեն բխում է, որ դրա հասցեատերը վճռաբեկ դատարանն է, որը կոչված է գնահատելու բողոքը վարույթ ընդունելու հիմքերի հիմնավորումների բավարարողությունը: Փաստորեն, մի կողմից՝ բողոքաբերը պետք է հիմնավորի, որ դատական սխալը **հաստատապես** ազդել է գործի ելքի վրա, իսկ մյուս կողմից՝ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու համար բավարար է գործի ելքի վրա **հավանաբար** ազդած առերևույթ դատական սխալի առկայությունը: Դեռ ավելի, ոչ իրավաչափ օրենսդրական կարգավորման վառ օրինակ է նաև նույն 414.2-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած կանոնը, համաձայն որի՝ նույն հոդվածի իմաստով դատական սխալն ընդգրկում է ոչ միայն նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառություն, քրեադատավարական օրենքի էական խախտման դեպքերը, այլև վերաքննության կարգով դատական ակտի բեկանման և փոփոխման այնպիսի հիմքեր, որոնք անգամ իբրև դատական ակտի բողոքարկման հիմք նախատեսված չեն: Վճռաբեկ վերանայման արդեն իսկ քննարկված առանձնահատկություններով պայմանավորված՝ վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցման իրավաչափ մեխանիզմ կարող է լինել այնպիսի բողոքները վարույթ ընդունելու պահանջ նախատեսելը, որոնցում հիմնավորվել է օրենքի միատեսակ

կիրառու թյան ապահովման անհրաժեշտություն կամ գործի ելքի վրա հաստատապես ազդած դատական սխալի առկայությունը: Ըստ էության այս տրամաբանությունն է զարգացվել Նախագծի՝ վճռաբեկ բողոքը վարույթը ընդունելու պայմանները սահմանող Նախագծի 386-րդ հոդվածի 1-ին մասում: Պարզապես, հաշվի առնելով, որ անկախ բողոքը վարույթը ընդունելու պայմանից՝ բողոքարկման հիմքը դատական սխալն է կամ բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք՝ առաջարկում ենք Նախագծի 386-րդ հոդվածի 386-րդ հոդվածի 1-ին մասից հանել «վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և» բառերը: Նախագծով վճռաբեկ բողոքը վարույթը ընդունելու հիմք է նաև դատական ակտի իրավաչափության վրա ազդող լուրջ փաստական կամ իրավական հանգամանքի առկայությունը, որոնց շրջանակը դարձյալ օրենսգրքում հստակեցված է: Նախագծով ընդհանրապես դատական վերանայման բողոք բերելու հիմքերից մեկը որևէ փաստական կամ իրավական հանգամանքի առկայությունն է, որը կարող է ազդել դատական ակտի իրավաչափության վրա (Նախագծի 360-րդ հոդվածի 2-րդ կետ): Իսկ Նախագծի 365-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական կամ իրավական հանգամանք է դատական ակտ կայացնելիս դատարանին և կողմերին անհայտ մնացած կամ դատական ակտը հրապարակելուց հետո առաջացած որևէ փաստ կամ ուժի մեջ մտած որևէ իրավական ակտ կամ արտահայտված որևէ իրավական դիրքորոշում: Այս բնորոշումից և Նախագծի 386-րդ հոդվածի 3-րդ մասում ներկայացված ցանկից կարելի է եզրակացնել, որ դրանք չեն ենթադրում դատական սխալի առկայություն, սակայն դատական ակտի իրավաչափության վրա անխուսափելիորեն ազդելու հանգամանքի ուժով նախատեսված են որպես դատական ակտի վերանայման հիմք: Իհարկե գործող քրեական դատավարության օրենսգիրքը ևս բացի օրենքի միատեսակ կիրառության ապահովման և դատական սխալի առկայության դեպքերից վճռաբեկ բողոքը վարույթը ընդունելու հիմքերի շարքում նախատեսում է նաև նոր և նոր երևան եկած հանգամանքները: Սակայն այս օրենսդ-

րական կարգավորման թերու թյ ու ն ն եր ից մ ե կ ն այ ն է , որ ն շ վ ա ծ հ ա ն գ ա մ ա ն ք ն եր ը ն ա ն օր ի ն ա կ ա ն ու ժ ի մ ե ջ մ տ ա ծ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր ի բ ո ղ ո ք ար կ մ ա ն հ ի մ ք եր ե ն , այ ս ի ն ք ն ` ն ու յ ն ա ց վ ու մ ե ն օր ի ն ա կ ա ն ու ժ ի մ ե ջ մ տ ա ծ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր ի բ ա ց ա չ ի կ և օր ի ն ա կ ա ն ու ժ ի մ ե ջ չ մ տ ա ծ դ ա տ ա կ ա ն ա կ տ եր ի ս ո վ ո ղ ա կ ա ն , տ վ յ ալ պ ար ա գ ա յ ու մ , վ ճ ռ ա բ ե կ վ եր ա ն ա յ մ ա ն հ ի մ ք եր ը : Ե վ եր կ ղ ո ղ , գ ո ղ ծ ո ղ Օր ե ն ս գ ղ ք ու մ և Ն ախ ա գ ծ ու մ հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն հ ա ն գ ա մ ա ն ք ն եր ի բ ն ո ղ ո շ մ ա ն և ա ռ ա ն ձ ի ն հ ի մ ք եր ի հ ա մ ե մ ա տ ա ի ղ ա կ ա ն վ եր լ ու ծ ու թ յ ու ն ի ց բ խ ու մ է , որ դ ա տ ա կ ա ն ա կ տ ը ո չ ի ղ ա վ ա չ ա ի դ ար ձ ն ո ղ փ ա ս տ ա կ ա ն կ ա մ ի ղ ա վ ա կ ա ն հ ա ն գ ա մ ա ն ք ն եր ի շ ղ ջ ա ն ա կ ը շ ա տ ա վ ե լ ի լ այ ն է , ք ա ն ն ո ղ կ ա մ ն ո ղ եր ն ա ն ե կ ա ծ հ ա ն գ ա մ ա ն ք ն եր ը :

Ը ն դ հ ա ն ղ ա ց ն ե լ ո վ կ ար ո ղ ե ն ք փ ա ս տ ե լ , որ Ն ախ ա գ ծ փ վ և ս գ ո ղ ծ ու մ է բ ո ղ ո ք ը վ ար ու յ թ ը ն դ ու ն ե լ ու հ ա յ ե ց ո ղ ա կ ա ն կ ար գ ` ո ղ ա լ ս օր ե ն ք ի մ ի ա տ ե ս ա կ կ ի ղ ա ռ ու թ յ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ի ղ ա կ ա ն ա ց մ ա ն եր ա շ խ փ ք , ս ա կ այ ն մ յ ու ս կ ո ղ մ ի ց ` այ դ հ ի մ ք եր ի օր ե ն ս դ ղ ա կ ա ն կ ա ն ո ն ա կ ար գ ու մ ն ի ղ ա կ ա ն ա ց վ ե լ է այ ն հ ա շ վ ո վ , որ Վ ճ ռ ա բ ե կ դ ա տ ար ա ն ը հ ն ա ղ ո ղ ո ղ թ յ ու ն է ս տ ա ն ու մ հ ա վ ա տ ար ի մ մ ն ալ ու ար դ ար ա դ ա տ ու թ յ ու ն ի ղ ա կ ա ն ա ց ն ե լ ու ի ղ կ ո չ մ ա ն ը :

Գ Լ ու խ 3

Վ ար ու յ թ ը վ ճ ռ ա բ ե կ դ ա տ ար ա ն ու մ

§1. Վ ճ ռ ա բ ե կ դ ա տ ար ա ն ու մ բ ո ղ ո ք ի ք ն ն ու թ յ ա ն դ ա տ ա վ ար ա կ ա ն կ ար գ ը : Վ ճ ռ ա բ ե կ վ եր ա ն ա յ մ ա ն ս ա հ մ ա ն ն եր ը

Վ ճ ռ ա բ ե կ դ ա տ ար ա ն ու մ վ ար ու յ թ ը ն դ ու ն վ ա ծ բ ո ղ ո ք ի ք ն ն ու թ յ ա ն ե ն թ ա փ ու լ լ ը կ ար ե լ ի է բ ա ժ ա ն ե լ եր կ ու հ ար ա բ եր ա կ ա ն ո ղ ե ն ի ն ք ն ու ղ ու յ ն մ ա ս եր ի , այ ն է ` վ ճ ռ ա բ ե կ դ ա տ ար ա ն ու մ դ ա տ ա կ ա ն ն ի ս տ ի

նախապատրաստումը և դատական նիստում բողոքի քննությանը: Դատական նիստի նախապատրաստումն ընդգրկում է դատական նիստի օրը և ժամը որոշելու, այդ մասին բողոք բերած անձին և դատավարության մյուս մասնակիցներին ծանուցելու հետ կապված դատավարական հարաբերությունները, որոնք կարգավորված են Օրենսգրքի 417-րդ հոդվածով: Դատական նիստի նախապատրաստման հետ կապված նույն իրավահարաբերությունները կարգավորող կանոն է պարունակում նաև Օրենսգրքի 418-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վճռաբեկ դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, դատավարության մասնակիցները, որոնք ծանուցվում են նիստի ժամանակի և տեղի մասին: Նշված հոդվածը, սակայն, ինչպես բխում է դրավերտառությունից, կոչված է կարգավորելու դատական նիստում բողոքի քննության հետ կապված դատավարական հարաբերությունները: Յետևաբար, իրավաչափ է քննարկվող կանոնի զետեղումը այդ հոդվածում: Բացի այդ, վերոհիշյալ նորմն այն մասով, որով բողոք բերած անձի մասնակցության հնարավորությունը կախման մեջ է դնում վճռաբեկ դատարանի հայեցողությունից՝ սահմանելով, որ **բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում** վճռաբեկ դատարանի նիստին **կարող է կանչվել** բողոք բերած անձը, հակասում է Օրենսգրքի 417-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև նույն՝ 418-րդ հոդվածի հոդվածի 4-րդ մասի կարգավորումներին, համաձայն որոնց՝ անկախ բացատրություններ տալու անհրաժեշտությունից՝ բողոք բերող անձը **ծանուցվում է** գործի քննության տեղի և ժամանակի մասին և **իրավունք ունի** ներկագտնվել վճռաբեկ դատարանի նիստին: Յարկ է նաև նշել, որ Օրենսգրքի 417-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է միայն բողոք բերած անձին վճռաբեկ դատարանում դատական նիստի օրվա և ժամի մասին ծանուցելու պահանջ, մինչդեռ նույն Օրենսգրքի 418-րդ հոդվածում ամրագրված քննարկվող նորմը այդ պահանջը տարածում է նաև դատավարության մասնակիցների վրա: Գործնականում, սակայն, իրավաչափորեն, ծանուցվում են նաև դատավարության մասնակիցները: Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատական նիստում գործը

քննում է ողջամիտ ժամկետում²⁰⁴: Նշված նորմը, ըստ էության, սահմանում է բողոքը վարույթ ընդունելուց հետո այն ողջամիտ ժամկետում քննության առնելու, այսինքն՝ դատական նիստ նշանակելու, այլ ոչ թե դատական նիստի տևողությունը ողջամիտ ժամկետով սահմանափակելու պահանջ, ինչը, սակայն, կարող է բխել այս նորմի տառացի մեկնաբանությունից: Ուստի, առավել նպատակահարմար կլիներ այս նորմի այն ձևակերպումը, որ վճռաբեկ դատարանը բողոքը քննում է այն վարույթ ընդունելուց հետո ողջամիտ ժամկետում: Գործնականում եղել են դեպքեր, երբ բողոքը վարույթ ընդունելուց հետո այն դատական նիստում քննվել է 4 կամ 5 ամիս անց²⁰⁵: Կարծում ենք՝ գործի ողջամիտ ժամկետում քննության պահանջի ապահովման երաշխիք կարող է լինել նաև բողոքը վարույթ ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում դատական նիստ նշանակելու մասին առանձին որոշում կայացնելու դատավարական կարգի սահմանումը, մանավանդ, որ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու համար օրենսդիրն արդեն իսկ սահմանում է եռամսյա ժամկետ:

Դատական նիստում բողոքի քննության դատավարական հարաբերությունները կարգավորված են Օրենսգրքի 418-րդ հոդվածով, որն ի դեպ կրում է «Վճռաբեկ դատարանում **գործի քննության** (ընդգծում) մը մերն է - Տ.Ս.) դատավարական կարգը» վերտառությունը: Կարծում ենք՝ այս վերտառության հետ կապված՝ քննարկման կարիք ունի այն հարցը՝ արդյոք վճռաբեկ դատարանը դատական նիստում իրականացնում է գործի քննություն: Մենք հակված ենք այս հարցին բացասական պատասխան տալ, քանի որ վճռաբեկ դատարանն իրականացնում է ոչ թե գործի, այլ ստորադաս դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքի քննություն և լուծում: Գործի քննությունը ենթադրում է գործով ձեռք բերված ապացույցների անմիջական հետազոտում, գործի փաստական հանգամանքների վերլուծություն: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ինչպես ուղղակիորեն սահմանված է օրենքում, դատական ակտը վերանայում է բողոքի հիման վրա: Վճռաբեկ

²⁰⁴Նախկին խմբագրությանը այս նորմի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատական նիստում գործը քննում էր այն բողոքի հետ ստանալու պահից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

²⁰⁵Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0179/11/14, ԵԿԴ/0039/01/15, ԵԱՆԴ/0011/01/14, ԵԿԴ/0016/11/15, ԵԱԲԴ/0024/11/15 որոշումները և այլն:

դատարանում համապատասխան դատավարական հարաբերությունները ծավալվում են վճռաբեկ բողոքի շուրջ, Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ գնահատական է տալիս բողոքի հիմքերին ու հիմնավորումներին, բողոքի պահանջին: Օրենսգիրքը պարունակում է բողոքի քննության դատավարական կարգը սահմանող սոսկ չորս կանոն: Խնդիրն իհարկե ոչ թե քանակական, այլ որակական է, քանի որ դրանք չեն կանոնակարգում Վճռաբեկ դատարանում դատական նիստի անցկացման հետ կապված դատավարական հարաբերությունների ողջ համալիրը: Այսպես, Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի տառացի վերլուծությունից բխում է, որ բողոքի քննությունը պետք է սկսվի վճռաբեկ դատարանի պալատի դատավորի ղեկուցումով: Մինչդեռ գործնականում, ինչպես երևում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նիստերի արձանագրություններից, դատական նիստի նշանակված օրը՝ սահմանված ժամին, նախագահող դատավորը (Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը) բացում է դատական նիստը, հայտարարում է դատարանի կազմը և դատական նիստի քարտուղարի անունը և ազգանունը: Այնուհետև նախագահող դատավորը հայտարարում է, թե որ գործով ներկայացված բողոքն է քննության առնվում և ով է այդ գործով ղեկուցող դատավորը: Ապա նախագահողը ճշգրտում է, թե արդյոք բողոք բերած անձը կամ դատավարության այլ մասնակիցներ ներկայացել են դատական նիստին: Եթե կան դատական նիստին ներկայացած դատավարության մասնակիցներ, ապա վերջիններս զբաղեցնում են իրենց համար նախատեսված տեղերը: Դատավարության մասնակիցների ներկայությունը ստուգելուց հետո միայն ղեկուցողը շարադրում է գործի հանգամանքները, դատավճռի կամ որոշման բովանդակությունը և վճռաբեկ բողոքի փաստարկները: Չնայած ուղղակի օրենսդրական պահանջի բացակայությանը՝ ղեկուցողը գործնականում նշում է նաև, թե արդյոք ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, թե ոչ: Եվ եթե այդպիսին ներկայացվել է, ապա ղեկուցողը շարադրում է նաև բողոքի պատասխանում շարադրված փաստարկները: Չեկույցը կրում է օբյեկտիվ բնույթ, հիմնված է բացառապես գործի տվյալների վրա և չի պարունակում գնահատականներ, եզրահանգումներ կամ կարծիքներ: Վերոշարադրյալից բխում է, որ բողոքի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանում

րանն առանձին հարցերի առնչությամբ փաստացի ղեկավարվում է Օրենսգրքի՝ դատական նիստի կարգը սահմանող 314-րդ հոդվածով: Նշված հոդվածը մի կողմից՝ գետեղված է «Դատական քննության ընդհանուր պայմանները» վերտառությամբ 41-րդ գլխում, որն իր հերթին ընդգրկված է առաջին առյանի դատարանում վարույթը կանոնակարգող 9-րդ բաժնում, մյուս կողմից՝ այն պարունակում է ձևակերպումներ, որոնք վկայում են, որ օրենսդիրը նպատակ է ունեցել սահմանելու ընդհանուր բնույթի նորմ, որը կիրառելի կլինի նաև վերաքննիչ կամ վճռաբեկ վարույթում ընթացող համապատասխան քրեադատավարական հարաբերությունների նկատմամբ²⁰⁶: Դատարանում գործի քննության դատավարական կարգի վերաբերյալ ընդհանուր բնույթի նորմեր են պարունակում նաև Օրենսգրքի 314.1-րդ և 315-րդ հոդվածները, որոնք համապատասխանաբար սահմանում են դատարանի կողմից կիրառվող սանկցիաները և դատական նիստի արձանագրման կարգը: Թեև միանգամայն իրավաչափ կարող է լինել վերոհիշյալ կանոնների գործողությունը վերաբերելի մասով նաև վճռաբեկ վարույթի նկատմամբ տարածելը, այդուհանդերձ, հստակ օրենսդրական կարգավորում ապահովելու իմաստով թերևս անապահով է նպատակահարմար կլինել վճռաբեկ դատարանում բողոքի քննության դատավարական կարգը սահմանող՝ քննարկվող հոդվածում հիշատակված դրույթները վերաբերելի մասով (mutatis mutandis) կիրառելու օրենսդրական հնարավորություն: Ինչ վերաբերում է Նախագծում տրված կարգավորումներին, ապա այն առանձին՝ 8-րդ բաժնում սահմանում է դատական վարույթների ընդհանուր պայմանները, այդ թվում՝ դատական վարույթի կարգին և մասնակիցներին վերաբերող ընդհանուր պայմանները: Իսկ բուն դատական վերանայման բողոքի հիման վրա դատալսումների անցկացման առանձնահատուկ կարգը սահմանված է դատական վերանայման ընդհանուր պայմանները նախատեսող 46-րդ գլխում (Նախագծի 363-րդ հոդված): Թեև դատական վարույթները ներառում են նաև դատական վերանայման վարույթները, այդուհանդերձ, կարծում ենք, նպատակահարմար կլինի-

²⁰⁶Այսպես, օրինակ, առաջին առյանի դատարանում գործի քննությունն իրականացվում է բացառապես միանձնյա կարգով, մինչդեռ 314-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **դատավորների**՝ դատական նիստի դահլիճ մտնելու պահին դատական նիստի քարտուղարը հայտարարում է. «Դատարանը գալիս է»:

ներ դատական վերանայման ընդհանուր պայմանները սահմանող՝ Նախագծի 46-րդ գլխում դատական վարույթների ընդհանուր պայմաններին վերաբերելի մասով հղում կատարելը: Քրեադատավարական օրենքը նախատեսում է նաև վճռաբեկ դատարանի դատավորների՝ գեկուցողին հարցեր տալու իրավունքը: Վճռաբեկ դատարանում բողոքի քննության դատավարական կարգը սահմանող կանոնները նախատեսում են բացառություններ տալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ բողոքաբերին կամ դատավարության մասնակիցներին դատական նիստին կանչելու կանոն, սակայն քրեադատավարական օրենքը որևէ կերպ չի կանոնակարգում բողոքաբերի կամ դատավարության մյուս մասնակիցների կողմից բացառություններ տալու կարգը: Գործնականում, եթե բողոքաբերը և (կամ) դատավարության մասնակիցները ներկայացել են դատական նիստին, ապա դատական նիստը նախագահողը նախ՝ բողոքաբերին, ապա դատավարության մյուս մասնակիցներին բացառությամբ հանդես գալու հնարավորություն է տալիս՝ պարզաբանելով, որ նրանց հնարավորություն է տրվում ոչ թե կրկին ներկայացնելու բողոքի բովանդակությունը, որն արդեն իսկ հայտնի է դատարանին, այլ իր դիրքորոշումը հիմնավորող փաստարկներ: Դատավարության մասնակցի կողմից իր փաստարկները ներկայացնելուց հետո նախագահողը ճշգրտում է, թե արդյոք դատավորները ցանկանում են նրան հարցեր տալ: Ինչպես արդեն նշել ենք, թե՛ բողոքաբերի և թե՛ դատավարության մասնակիցների՝ դատական նիստին չներկայանալը խոչընդոտչե բողոքի քննության համար: Ստորադաս դատարաններում գործի քննության ռեժիմի համեմատությամբ՝ վճռաբեկ վարույթի որակական տարբերություններին (առանձնահատկություններին) մեկը կողմերի պարտադիր մասնակցության պահանջի բացակայությունն է: Երկրորդ (երրորդ ատյանի) դատարանում կողմերի պարտադիր մասնակցության խնդիրը արդար դատաքննության իրավունքի երաշխավորման համատեքստում քննարկման առարկա է դարձրել նաև Եվրոպական դատարանը՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ եթե բողոքը շոշափում է բացառապես իրավունքի հարցեր, ապա 6-րդ հոդվածի պահանջների խախտում կարող է չհամարվել այն, որ անձին վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանի դատարանում լսված լինելու հնարավորություն

չի ընձեռվել ²⁰⁷: Վճռաբեկ բողոքի քննության գրեթե նույնափսի ընթացակարգ է նախատեսված նաև, օրինակ, Էստոնիայի և Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքերով: Դրանք նախատեսում են Գերագույն դատարանում վճռաբեկ բողոքի քննության, այսպես կոչված, գրավոր և բանավոր ընթացակարգեր: Այսպես, օրինակ, Էստոնիայի Գերագույն դատարանը, որպես կանոն, բողոքը քննում է գրավոր ընթացակարգով՝ կողմերի ներկայացրած գրավոր դիրքորոշումների հիման վրա: Անհրաժեշտ համարելու դեպքում Գերագույն դատարանը գործի քննությունը կարող է իրականացնել բանավոր ընթացակարգով: Վերջին դեպքում կողմերը ծանուցվում են դատական նիստի մասին, սակայն պաշտած ծանուցված կողմի չներկայանալը խոչընդոտ է գործի քննության համար, եթե այլ բան չի սահմանվել Գերագույն դատարանի որոշմամբ (Էստոնիայի ՔԴՕ 352-րդ հոդված): Ուկրաինայի քրեական դատավարությունում վճռաբեկ վարույթը, որպես կանոն, իրականացվում է բանավոր ընթացակարգով՝ կողմերի մասնակցությամբ: Պաշտած ծանուցված մասնակիցների՝ առանց հարգելի պատճառների դատական նիստին չներկայանալը, խոչընդոտ է գործի քննության համար: Սակայն դատավարության այն մասնակիցների չներկայանալու դեպքում, ում մասնակցությունը պարտադիր է (օրինակ՝ ամբաստանյալի, ում նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացվել), դատական նիստը հետաձգվում է (Ուկրաինայի ՔԴՕ 434-րդ հոդված): Գործն իրենց բացակայությամբ քննելու կողմերի միջնորդության հիման վրա Գերագույն դատարանը կարող է որոշում կայացնել գրավոր ընթացակարգով (Ուկրաինայի ՔԴՕ 435-րդ հոդվածի 1-ին մաս)²⁰⁸:

Վճռաբեկ դատարանում բողոքի քննության դատավարական կարգի հետ կապված՝ չափազանց հետաքրքրական է վճռաբեկ վերանայման սահմանների կամ վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի վերանայման ծավալի խնդիրը: Ընդհանուր առմամբ, քննարկվող խնդրի օրենսդրական կանոնակարգման պատմական փորձի ուսումնասիրությամբ

²⁰⁷Տե՛ս *Sutter v. Switzerland*, 1984 թվականի փետրվարի 22-ի վճիռ, գանգատ թիվ 8209/78, կետ 30, *Ekbatani v. Sweden*, 1988 թվականի մայիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 10563/83, կետ 31:

²⁰⁸Տե՛ս Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգիրք <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016802f6016>

յ ու ն ը վ կ այ ու մ է երկ ու հի մ ն ա կ ան մ ո ղ ե լ ն եր հի գ ոյ ու թ յ ան մ աս ի ն, երբ վ ճ ռ աբ ե կ դ ատ ա ր ան ու մ գ որ ծ ը վ եր ան ա յ վ ու մ է ամբ ող ջ (ռ ն ի-գ ի ո ն կ ար գ) կ ամ բ ող ո ք ու մ ն շ վ ած պ ա հ ան ջ ն եր հի ծ ա վ ալ ո վ: Այ ս պ է ս, օր ի ն ա կ, դ ատ ա կ ան ա կ տ եր հի վ ճ ռ աբ ե կ վ եր ան ա յ մ ան խ որ հ իր դ ա յ ի ն ռ ն ի-գ ի ո ն կ ար գ ը թ ու յ լ էր տ ալ ի ս վ եր ա դ աս դ ատ ա կ ան ա տ յ ան ի ն իր ա կ ա-ն ա ց ն ե լ գ որ ծ ի լ ը ի վ ծ ա վ ալ ո վ ն որ ք ն ն ու թ յ ու ն` ան կ ախ բ ող ո ք ի հի մ-ք եր հի ց և բ ող ո ք բ եր ող ի կ ար գ ա վ ի ճ ա կ ի ց, ի ն չ ը օ բ յ ե կ տ ի վ որ ե ն ար տ ա-ց ո լ ու մ էր հ անր ա յ ն ու թ յ ան խ որ հ իր դ ա յ ի ն գ աղ ախ ար ախ ո ս ու թ յ ու-ն ը²⁰⁹: Ն մ ան կ ար գ ա վ որ մ ան պ ա յ մ ան ն եր ու մ շ ա հ ա գր գ ի ռ ան ձ ան ց բ ո-ղ ո ք ն եր ը (պ ա հ ան ջ ն եր ը) մ ի ա յ ն առ ի թ է ի ն գ որ ծ ի վ եր ան ա յ մ ան վ ա-ր ու յ թ հ ար ու ց ե լ ու հ ամ ար և որ և է կ եր ա չ է ի ն ս ա հ մ ան ա լ ա կ ու մ դ ա-տ ա ր ան ի իր ա վ ու ն ք ը` իր ա կ ան ա ց ն ե լ ու գ որ ծ ի հ ան գ ամ ան ք ն եր հի բ ա գ-մ ա կ ող մ ան ի, լ ը ի վ, օ բ յ ե կ տ ի վ ք ն ն ու թ յ ու ն²¹⁰: Խ որ հ իր դ ա յ ի ն գր ա կ ա-ն ու թ յ ան մ ե ջ գ եր ա գ ու յ ն դ ատ ա ր ան ու մ ռ ն ի գ ի ո ն կ ար գ ի կ իր առ ու թ-յ ու ն ն ար դ ար ա ց վ ու մ էր ա յ ն հ ան գ ամ ան ք ո վ, որ ս ա հ մ ան ա լ ա կ վ ե լ ո վ մ ի ա յ ն բ ող ո ք ի հի մ ք եր ո վ` դ ատ ա ր ան ը չ էր կ ար ող ան ալ ու ու ող ղ ե լ թ ու յ լ տր վ ած օր ե ն ք ի խ ախ ու մ ն եր ը: Ե վ եր կ ըր ող` հ ն ար ա վ որ է, որ դ ատ ա կ ան ա կ տ ը բ ող ո ք ար կ վ ած լ ի ն ի մ ե կ կ ամ մ ի ք ան ի մ եղ ադ ի յ ալ ն ե-ր հի կ ող մ ի ց, ս ա կ ա յ ն գ որ ծ ու մ առ կ ալ ի ն ե ն խ ախ ու մ ն եր, որ ո ն ք վ ե-ր աբ եր ու մ ե ն դ ատ ա կ ան ա կ տ ը չ բ ող ո ք ար կ ած մ յ ու ս մ եղ ադ ի յ ալ ն ե-ր հի ն²¹¹: Ի բր և գ որ ծ ի վ եր ան ա յ մ ան հ անր ա յ ի ն ռ ն ի գ ի ո ն կ ար գ ի գ ոյ ու թ-յ ան ն ախ ապ ա յ մ ան` խ որ հ իր դ ա յ ի ն գր ա կ ան ու թ յ ան մ ե ջ մ ա տ ն ան շ վ ու մ էր ն ան դ ատ ա վ որ հի ան կ ախ ու թ յ ու ն ը, ն եր ք ի ն հ ամ ո գ մ ու ն ք ի հի մ ան վր ա որ ո շ ու մ ն եր ը ն դ ու ն ե լ ու, ի ն չ ա է ս ն ան գ որ ծ ո վ օ բ յ ե կ տ ի վ

²⁰⁹Եթե խորհրդային քրեական դատավարությունում հանրայնության սկզբունքի մեջ արտացոլվում էր պետության շահը, ապա ժամանակակից քրեական դատավարությունում հանրայնությունը չի բացառում մրցակցության սկզբունքի գոյությունը, որն էլ իր հերթին ոչ միայն ենթադրում է հանրային շահի առկայություն, այլ և այն, որ մասնավոր շահի հետ մրցակցությամբ այն դառնում է քրեական դատավարության շարժիչ ուժերից մեկը: Ավելի մանրամասն տե՛ս **Գ.Ս.Ղազիսյան, Ս.Ա.Դիլբանդյան** Հանրայնության սկզբունքի տեղը և դերը քրեական դատավարության սկզբունքների համակարգում / «Պետություն և իրավունք», 2013, N 1(59), էջեր 4-17:

²¹⁰Տե՛ս **Ковтун Н.Н.**, նշված աշխատությունը, էջ 329, **Перлов И.Д.** Надзорное производство в уголовном процессе.- М.: Юрид. лит., 1974, էջ 7:

²¹¹Տե՛ս **Строгович М.С.**, Курс советского уголовного процесса. Т.1.-М.,1968, էջեր 368-370, **Потеружа И.И.**, Роль суда второй инстанции в укреплении законности.-Минск, 1980, էջեր 74-75, **Копьева А.Н.**, Доказывание по уголовным делам в вышестоящем суде.-Иркутск, 1990, էջ 25, **Адаменко В.Д.**, Приговор и его изменение в кассации.-Кемерово, 2000, էջեր 77-79:

ճշմարտության ու նրբացահայտելու անհրաժեշտությանը²¹²:

Չնսեմացնելով վճռաբեկ վերանայման սահմանների՝ խորհրդային օրենսդրության մեջ նախատեսված կարգավորման արժեքը՝ այդուհանդերձ կարող ենք եզրակացնել, որ վճռաբեկ ատյանին վերապահելով գործի լրիվ ծավալով քննությանն իրականացնելու լիազորությունն՝ խորհրդային քրեադատավարական օրենքը գերակայության ունը տալիս էր բացառապես օբյեկտիվ ճշմարտության ունը բացահայտելու հանրային շահին, արդյունքում՝ սահմանափակում կողմերի բողոքարկման ազատությունը, անտեսում վերջիններիս իրավաչափ շահը՝ ներկայացնելու և հիմնավորելու իրենց իրավական դիրքորոշումը²¹³: Բնականաբար, սկզբունքորեն այլ կանոնակարգում պետք է ունենային վճռաբեկության սահմանները մրցակցային քրեական դատավարությունում: Մրցակցային քրեական դատավարությունում էապես սահմանափակվում է դատարանի հանրային ակտիվությունը, մասնավոր շահերի ու նորոգությունների հնարավորությունը, և փոխարենը կարևորվում է կողմերի ակտիվ վարքագիծը՝ հիմնված տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա²¹⁴: Մրցակցային քրեական դատավարության պայմաններում անձի՝ իր իրավական դիրքորոշումը հիմնավորելու պատշաճ ջանասիրությունից է մեծապես կախված գործի՝ իր համար բարենպաստելը: Քննադատաբար մոտենալով վճռաբեկության սահմանների կանոնակարգման հարցում ռևիզիոն տարրերի առկայությանը՝ պրոֆեսոր Պետրուլիսը նշում է, որ ռևիզիոն տարրերից հրաժարումը կնպաստի բողոքարկման իրավունքի իրացմանը և կբարձրացնի պաշտպանների պատասխանատվությունը՝ ներկայացնելու որակյալ բողոքներ²¹⁵: Ն.Կովտունի կարծիքով արդարադատության իրականացման գործում դատարանի տեղի և դերի մասին ժամանակակից պատկերացումների տեսանկյունից ռևիզիոն կարգն անխուսափելիորեն հակասության մեջ է մտնում դիսպոզիտիվության սկզբունքի հետ՝ համաձայն ո-

²¹²Տե՛ս Уголовный процесс/Под ред. К.Ф. Гуценко. - М., 1997, էջ 296:

²¹³Տե՛ս **Ковтун Н.Н.**, Нужен ли возврат к ревизионному началу в кассационном и надзорном производстве?// Журнал российского права.-2002, N12, էջ 15:

²¹⁴Տե՛ս **Յ.Յ.Ղուկասյան**, Մրցակցության գաղափարախոսության ունը ՅՅ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծում//«Պետություն և իրավունք», Երևան, 2013, N1, էջեր 19-31:

²¹⁵Տե՛ս **Петрухин И.Л.**, Публичность и диспозитивность в уголовном процессе// Российская юстиция. 1999, էջեր 24-25:

րի՝ դատավարութեան շարժիչ ուժը պետք է լինի գործով շահագրգռված անձանց կամքը, այլ ոչ թե օրենքի հանրային-իրավական կամքը և դատարանի հանրային-իրավական ակտիվութիւնը²¹⁶: Ըստ էության այս տրամաբանութեամբ է առաջ նորոգվել օրենսդիրը Վճռաբեկ դատարանին կաշկանդելով վճռաբեկ բողոքում նշված հիմքերով և հիմնավորումներով և այն անձանց շրջանակով, ում վերաբերյալ բողոք է բերվել: Այս մոդելը խիստ համահունչ է մրցակցային դատավարութիւնում վերադաս դատարանի գործունեության հիմքում ընկած՝ «որքան բողոք, այնքան վերանայում» (quantum devolutum quantum appellatum) և «դատարանը չի կարող դուրս գալ կողմերի պահանջների շրջանակից» (iudex ne eat ultra petita partium) սկզբունքներին²¹⁷: Քրեական դատավարութեան հիմնարար սկզբունքը՝ կողմերի մրցակցութիւնը, հնարավորութիւն է տալիս որոշել, թե դատական ակտի որ մասի հետ են կողմերն անհամաձայն և ըստ այդմ որոշել նաև վճռաբեկ վերանայման սահմանները²¹⁸: Սակայն հարկ է նշել, որ քրեական դատավարութիւնում նույն մրցակցութեան սկզբունքի չարդարացված գերազնահատումը, երբ լիովին բացառվում է դատարանի հնարավորութիւնը սեփական նախաձեռնութեամբ արձագանքելու կոպիտ դատական սխալներին, ևս կարող է հանգեցնել քրեական դատավարութեան մանակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Ինչպես արդարացիորեն նշվում է տեսական գրականութեան մեջ՝ մրցակցութեան տարրերը պետք է առկալին են քրեական դատավարութեան ամբողջ ընթացքում: Սակայն այդ գաղափարը կարելի է հասցնել արտուրդի, եթե քրեական դատավարութիւնը նմանեցվի ֆուտբոլային խաղի, որտեղ դատավորի դերը հանգում է երկու խմբերի խաղացողներին չխանգարելու²¹⁹:

Վճռաբեկ վերանայման սահմանների օրենսդրական կանոնակարգման խորհրդային և գործող մոդելների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ այդ մոդելներից յուրաքանչյուրը խնդրահա-

²¹⁶Տե՛ս **Ковтун Н.Н.**, Производство в суде второй (апелляционной и (или) кассационной) инстанции//В кн.: Уголовный процесс России / Науч. ред. В.Т.Томин.-М.,2003, էջեր 567 և 572:

²¹⁷Տե՛ս **Ковтун Н.Н.**, Апелляция, кассация, надзор: анализ содержания // Апелляция, кассация, надзор: новеллы ГКП РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления: -Юрист: Москва, 2011, էջ 87:

²¹⁸Տե՛ս **Ворожцов С.**, Принципы кассации по новому УПК РФ//Российская юстиция.-2002, N12, էջ 16:

²¹⁹Տե՛ս Совершенствование правосудия в России Интервью главного редактора журнала с В. А. Тумановым // Государство и право. 1998, N12, էջեր 5-15:

րույց է իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռությամբ ունակ անհավելու գաղափարի տեսանկյունից: Իսկ չափազանց կարևոր է գտնել, այսպես կոչված, «ոսկե միջինը» վերանայման հանրային տարրերի և դատական ակտի բողոքարկման իրավունք ունեցող այս կամ այն սուբյեկտի մասնավոր շահերի միջև: Խնդրի լուծումը պետք է փնտրել դատարանի չափավոր ակտիվության մեջ, մասնավոր նույն մրցակցության սկզբունքը չի բացառում, այլ նույնիսկ որոշակիորեն ենթադրում է դատարանի ակտիվ դերը քրեական դատավարության նպատակների նվաճման համար: Այլ կերպ, չանտեսելով դատական ակտի՝ իր համար անցանկալի մասի բողոքարկման անձի մասնավոր շահը, այդուհանդերձ անհրաժեշտ է հնարավորություն վերապահել Վճռաբեկ դատարանին դուրս գալու բողոքի սահմաններից: Իհարկե խոսքն այս դեպքում ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ հնարավորության մասին է՝ բացառելով հանրային և մասնավոր իրավաչափ շահերից որևէ մեկի չարդարացված գերակայությունը մյուսի նկատմամբ: Եվ այստեղ չափազանց կարևոր է այդ հնարավորության սահմանափակման ողջամիտ չափանիշների ընտրությունը: Այսպես, օրինակ, Էստոնիայի ՔԴՕ 360.²-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով գործի քննությունը վճռաբեկ բողոքով սահմանափակելու պահանջ, այդուհանդերձ նախատեսում է բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորությունը: Գերագույն դատարանը կաշկանդված չէ բողոքի առարկայով և սուբյեկտներով (խոսքը վերաբերում է այն անձանց, ում օգտին բողոք է բերվել), եթե թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, որը հանգեցրել է նրանց վիճակի վատթարացման կամ եթե ակնհայտորեն առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում: Ուկրաինայի ՔԴՕ-ն ևս, սահմանելով բողոքով կաշկանդված լինելու ընդհանուր պահանջ, նախատեսում է բողոքի սահմաններից, հօգուտ ամբաստանյալի, այդ թվում՝ դատական ակտը չբողոքարկած ամբաստանյալի, դուրս գալու հնարավորությունը: Կամ, օրինակ, թեև Վրաստանի ՔԴՕ 306-րդ հոդվածի 4-րդ մասը վճռաբեկ վերանայումը սահմանափակում է վճռաբեկ բողոքով և բողոքի պատասխանով, նույն Վրաստանի Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 3/1/608,609 որոշմամբ նշված կարգավորումը հակասահմանադրական է ճանաչել այնքանով, որքանով այն բացա-

ռում է բողոքի սահմաններից դուրս գալու և անձին քրեական պատասխանատվությանից ազատելու հնարավորությունն անձին մեղսագրվող արարքն ապաքրեականացնող օրենք ընդունելու պարագայում: Քննարկվող խնդրի առումով տեղին է հիշատակել **Գ.Յարությունյանի և այլոց** գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հունիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, որով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման տեսանկյունից հնարավոր համարվեց դատական ակտի անվերապահ բեկանման, ինչպես նաև նույն քրեական գործով վարույթի կարճման հիմքերի առկայության դեպքում բողոքարկման սահմաններից դուրս գալը: Վճռաբեկ վերանայման սահմանների օրենսդրական կանոնակարգման հարցում իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռությունն ապահովելու հիմնարար գաղափարն իր արտացոլումն է ստացել Նախագծում: Սահմանելով դատական ակտերի վճռաբեկ վերանայում վճռաբեկ բողոքում նշված հիմքի և այն հաստատող փաստերի սահմաններում իրականացնելու պահանջ²²⁰ (390-րդ հոդվածի 1-ին մաս)՝ Նախագծով հնարավոր է համարվում բողոքի սահմաններից դուրս գալը, եթե՝

1) հայ տնաբերվում է քրեական հետապնդումը բացառող հանգամանք.

2) հայ տնաբերվում է, որ մեղադրյալի արարքին տրվել է սխալ իրավական գնահատական.

3) հայ տնաբերվում են քրեադատավարական օրենքի էական խախտման՝ Նախագծով սահմանված հանգամանքներ.

4) հայ տնաբերվում է, որ մեղադրյալի նկատմամբ նշանակվել է նրան վերագրվող հանցագործության համար օրենքով չնախատեսված պատժատեսակ, պատժաչափ կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել.

5) բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկված մեղադրյալին:

Նախագծում տրված կարգավորման համաչափությունը իրավաչափ շահերի հավասարակշռման տեսանկյունից դրսևորվում է նրանում, որ նախատեսելով բողոքի սահմաններից դուրս գալու օրենսդրա-

²²⁰Այս մասին խոսվել է նաև սույն աշխատության 2-րդ գլխի 1-ին պարագրաֆում:

կան հնարավորությունն՝ Նախագիծը միաժամանակ հստակ կանխորոշում է այդ հնարավորության իրականացման պայմանները, այն է՝ իշահ մեղադրյալի²²¹ և նախագծով հստակ սահմանված հանգամանքների առկայության պարագայում: Այսպես, վերոնշյալ օրենսդրական հնարավորության իրականացման առաջին պայմանը վերաբերում է դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության կանոնին (ne reformatio in pejus կամ ne pejus), որը մեղադրյալի բողոքարկման ազատության ապահովման, վերջինիս կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք է: Այն նաև որոշակի առումով հանրային շահերի ապահովման գործունե մեխանիզմ է, քանի որ բողոքարկման լայն ազատությունն իր հերթին մեծացնում է դատական սխալների հայտնաբերման և ուղղման հավանականությունը: Վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու այսպայմանն, այդուհանդերձ, որոշակի հարցեր է առաջացնում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից: Այսպես, թե՛ քրեական դատավարության գործող օրենսգրքով և թե՛ Նախագծով դատական ակտի վճռաբեկ վերանայման արդյունքում մեղադրյալի վիճակը չի կարող վատթարացվել այլ կերպ, քան մեղադրանքի կողմի՝ համապատասխան հիմքերով բողոքի առկայության պարագայում: Այսինքն, թե՛ գործող օրենսգրքով և թե՛ Նախագծով բացառվում է ի վնաս մեղադրյալի բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորությունը: Սակայն մյուս կողմից՝ Օրենսագիրքը, ի տարբերություն Նախագծի, չի նախատեսում նաև հօգուտ մեղադրյալի բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորություն: Մինչդեռ վերջին իրավիճակում կարող են շոշափվել տուժողի իրավունքներն ու օրինական շահերը: Իհարկե մեղադրյալի հիմնարար իրավունքներին և ազատություններին առնչվող՝ բողոքում չնշված հանգամանքների առկայության պարագայում բողոքի սահմաններից դուրս գալը, որքան էլ դա անդրադառնա տուժողի իրավունքներին ու օրինական շահերին, բնականաբար արդարացված է դատական սխալների ուղղման, որոշ դեպքերում օրենքի միատեսակ կիրառության (օրինակ, երբ խոսքը վերաբերում է դատական ակտի բեկանման կամ փոփոխման՝ դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին

²²¹Նախագիծը գործող քրեադատավարական օրենսդրության իմաստով դատապարտյալ (արդարացված) եզրույթի փոխարեն օգտագործում է մեղադրյալ եզրույթը:

ակնհայտորեն վերաբերող հիմքը վերջինիս նկատմամբ կիրառելուն) խնդիրների լուծման տեսանկյունից: Դա հենց հանրային ու մասնավոր շահերի պահանջվող ողջամիտ հավասարակշռությունն է: Սակայն հարց է ծագում, թե արդյոք այդ նույն շահերի հավասարակշռության ապահովման տեսանկյունից արդարացված կարելի է համարել տուժողի իրավունքներին և օրինական շահերին առնչվող, սակայն բողոքում չնշված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի առկայության մասին վկայող հանգամանքներին չարձագանքելը (օրինակ նույն՝ մեղադրյալի արարքին տրված սխալ գնահատականը, սակայն մեղմ լինելու առումով): Կարծում ենք՝ այո, քանի որ հակառակ պարագայում լիովին կանտեսվեր սկզբունքային նշանակություն ունեցող դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության պահանջը, որը որոշակիորեն երաշխավորված էր անգամ խորհրդային ռեֆորմի պայմաններում:

Վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու երկրորդ պայմանը վերաբերում է Նախագծով հստակ սահմանված հանգամանքների առկայությանը: Իսկ այդ հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բխում են քրեական դատավարության նպատակների նվաճման, անձի հիմնարար իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից: Դրանք անգամ որոշակիորեն նույնանում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմնարար խախտման հիմքերին (Նախագծի 409-րդ հոդվածի 2-րդ մաս), որոնց առկայության դեպքում իրավաչափ է շեղումն անգամ այնպիսի կարևորագույն իրավական արժեքներից, ինչպիսիք են՝ կրկին դատվելու անթույլատրելիությունը և դատական ակտերի կայունությունը: Բողոքի սահմաններից դուրս գալու հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախագիծը հրաժարվել է նաև վերանայման ծավալի սահմանափակման այնպիսի չափանիշից, ինչպիսին բողոքի հեղինակն է: Յարկ է նշել, որ վճռաբեկության սահմանների ընդլայնման՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված այս հիմքը որոշ դատավարազետներ մեկնաբանում են որպես ռեֆորմն տարրերի լրիվ²²²,

²²²Տե՛ս *Муромова Н.Г.*, Система судебного контроля в уголовном судопроизводстве: вопросы

մյուսները՝ մասնակի վերականգնում՝ գտնելով, որ հակառակ պարագայում վերադաս դատական ատյանն ի գործը չէր լինելու լուծել իր առջև դրված՝ ստորադաս դատարանի դատական ակտի օրինականություն, հիմնավորվածությամբ և արդարացիությամբ ստուգման խնդիրը²²³: Նշված հիմքը համարելով ռեզիզիոն տարրերի վերականգնում՝ դրանց առկայությունը Ն.Կովտունը որոշակիորեն իրավաչափ է համարում միայն վերաքննիչ դատարանում, որն, ի տարբերություն վճռաբեկության, ենթադրում է գործի և՛ իրավական, և՛ փաստական կողմը վերանայելու հնարավորության առկայությունը: Եվ միայն վերաքննիչ դատարանին վերապահված դատական սխալների և շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման բացահայտման միջոցներն են հնարավորություն տալիս ինչպես պարզել գործի իրական հանգամանքները, այնպես էլ հաստատել նոր փաստեր²²⁴: Այս վերջին նկատառման տեսանկյունից Նախագիծը, կարծում ենք որ և է խնդիր չի առաջացնում, քանի որ դատական ակտը չբողոքարկած մեղադրյալի նկատմամբ վերջինիս *ակնհայտորեն վերաբերող* դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի կիրառությունը չի պահանջում պարզել գործի հանգամանքները կամ հաստատել նոր փաստեր, ինչը դուրս է վճռաբեկության (մաքուր վճռաբեկության) մեխանիզմի շրջանակներից և ենթադրում է վերաքննիչ դատարանի տիրապետության տակ գտնվող վերանայման համապատասխան գործիքերի առկայություն: Եվ ընդհանրապես մենք առավել հակված ենք տեսության մեջ առկա այն մոտեցմանը, որ քննարկվող դրույթը ուղղակի հատուկ կանոն է, սույն բացառությունն վճռաբեկ վերանայման սահմանների ընդհանուր պահանջներից, որը, սակայն չի վերականգնում ռեզիզիոն տարրերը վճռաբեկ դատարանի գործունեության մեջ և հետապնդում է այն դատապարտյալների կամ արդարացվածների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն

теории, закоиода тельного регулирования и практики. – Казань, էջ 216:

²²³Տե՛ս **Божьев П.**, Переделы прав суда кассационной ипстанции // Законность. 2003, N11, էջեր 2-4, **Ефимичев С., Шаруева М.**, Решения суда кассационной инстанции и их роль в совершенствовании предварительного расследования//Уголовное право. 2003, N4, էջ 71, **Волколуп О.В.**, նշված աշխատությունը, էջեր 191 և 194:

²²⁴Տե՛ս **Ковтун Н.Н.**, Апелляция, кассация, надзор: анализ содержания // Апелляция, кассация, надзор: новеллы ГКП РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления: -Юрист: Москва, 2011, էջեր 85-86:

իրավաչ ափ հանրայ ին նպատակ, ովքեր վճռաբեկ բողոք չեն բերել²²⁵: Վճռաբեկ վերանայման բողոքի սահմաններից դուրս գալու քննարկվող հանգամանքի հետ կապված՝ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք դատարանն իրավասու է իշահ դատական ակտը չբողոքարկած մեղադրյալների դուրս գալ բողոքի սահմաններից միայն դրանում նշված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերի առկայության, թե նաև բողոքի սահմաններից դուրս գալու՝ Նախագծով սահմանված, սակայն բողոքում չնշված հանգամանքներ հայտնաբերելու պարագայում, նույնիսկ եթե դրանք վերաբերում են միայն դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին: Կարծում ենք՝ քննարկվող հարցին անհրաժեշտ է դրական պատասխան տալ՝ նախել նելով Նախագծում տրված կարգավորման՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման ընդհանուր տրամաբանությունից, ապա քննարկվող հանգամանքի բուն օրենսդրական ձևակերպումից: Մասնավորապես, դրանում խոսվում է ընդհանրապես դատական ակտի բեկանման կամ փոփոխման (իսկ բողոքի սահմանների դուրս գալու մյուս հանգամանքները ոչ այլ ինչ են, քան դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքեր), այլ ոչ թե բողոքում նշված հիմքը դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին ակնհայտորեն վերաբերելու մասին: Հակառակ մեկնաբանությունն ընդունելի չի լինի նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից հատկապես այն պարագայում, երբ դուրս գալով բողոքի սահմաններից՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտը բեկաներ կամ փոփոխեր միայն դատական ակտը բողոքարկած մեղադրյալին նկատմամբ, երբ նույն հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալներին:

Այսպիսով, վճռաբեկ վերանայման դատավարական կառուցակարգի՝ մասնավորապես վերանայման սահմանների հավասարակշռված օրենսդրական կանոնակարգումից է, ի թիվս այլոց, մեծապես կախված Վճռաբեկ դատարանի և նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության՝ վճռաբեկության խնդիրների արդյունավետ իրագործումը: Վճռաբեկության չափազանց լայն (խորհրդային վճռաբեկություն) կամ նեղ (ժամանակակից վճռաբեկություն) սահմանների

²²⁵Տե՛ս **Cyxoea O.A.**, նշված աշխատությունը, էջ 53:

Նախատեսուումը ոչ միայն չեն նպաստում վերը նշված խնդիրների լուծմանը, այլև ծայրահեղական և անընդունելի մոտեցումներ են հանրային և մասնավոր իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռության և ապահովելու համատեքստում: Վճռաբեկության չափազանց լայն սահմանների նախատեսումը, իբրև գերխնդիր ունենալով դատական սխալների ուղղման շահը, անտեսում է մրցակցային քրեական դատավարությանում դատական ակտի բողոքարկման ազատության ունենցող անձի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը հետևողական լինելու մասնավոր շահը՝ հիմնված տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա: Միևնույն ժամանակ չի կարող արդարացվել նաև վճռաբեկության չափազանց նեղ սահմանների նախատեսելը և վճռաբեկ դատարանին անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալներին արձագանքելու հնարավորություն չընձեռելը: Ուստի խնդրի հնարավոր լուծումը վճռաբեկ դատարանին բողոքի սահմաններից դուրս գալու՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությանը համահունչ սահմանափակ հնարավորության ընձեռումն է, որի ուղղությամբ, ինչպես արդեն նշվել է, էական քայլ է կատարված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծում:

**§2. Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտկայ ացնելու կարգը:
Դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերը**

Բողոքի քննության արդյունքներով վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում: Որոշում կայացնելու կարգի հետկապված՝ արդեն իսկ բազմիցս հիշատակված ՀՕ-48-Ն օրենքի ընդունման արդյունքում առաջացավ օրենսդրական բաց, քանի որ նշված կարգը սահմանող՝ Օրենսգրքի 423-րդ հոդվածը փոխարինվեց վճռաբեկ դատարանի որոշումներն օրինական ուժի մեջ մտնելու կարգը սահմանող և սմեկ հոդվածով: Օրենսդրական այս բացը գործնականում լրացնում են Օրենսգրքի՝ կոլեգիալ կարգով գործի քննության կարգի վերաբերյալ կանոններ պարունակող 361.1-րդ հոդվածին, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածին հղում կատարելով: Ընդ որում, որոշում կայացնելու կարգի հետկապված՝ առանձին հարցերի առնչությամբ վերը հիշատակված 361.1-րդ հոդվածն առա-

վել համակողմանի կարգավորում է նախատեսում: Մասնավորապես այն անդրադառնում է նաև դատական ակտ կայացնելիս դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակին՝ այդ մասով, սակայն, հղում կատարելով դատավճիռ կայացնելիս գործի ըստ էության քննության արդյունքում լուծման ենթակա հարցերին: Վճռաբեկ վերանայման արդյունքում լուծման ենթակա հարցերի շրջանակը հստակեցված է նախագծում: Նախագիծը, սակայն, Վճռաբեկ դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակում չի նախատեսում ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ վերացնելու հարցը: Մինչդեռ նշված հարցին չանդրադառնալը հատկապես խնդրահարույց կարող է լինել այն իրավիճակներում, երբ, օրինակ, ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված լինի կալանքը, իսկ Վճռաբեկ դատարանը որոշում կայացնի ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին՝ առանց անդրադառնալու խափանման միջոցին: Այս դեպքում ամբաստանյալը պետք է ազատարձակվի, հակառակ դեպքում կստեղծվի ոչ իրավաչափ այնպիսի իրավիճակ, երբ անձն առանց դատարանի որոշման (իրավական հիմքերի) պահվում է անազատության մեջ, թեև կարող են առկա են լինել անձին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները: Ուստի կարծում ենք՝ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու հարցը ևս պետք է ընդգրկել նշված հոդվածում:

Քրեադատավարական տեսության մեջ լայն քննարկման առարկա են դարձվել դատական ակտի վճռաբեկ վերանայման արդյունքում դրա բեկանման և փոփոխման կամ այսպես կոչված՝ վճռաբեկության հիմքերի շրջանակը և դրանց բովանդակությունը: Այսպես, դատավարագետներն առավելապես վճռաբեկության հիմքերը բնորոշում են որպես քրեական գործի քննության ընթացքում թույլ տրված խախտումներ, որոնք հանգեցնում են վճռաբեկ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանմանը կամ փոփոխմանը²²⁶: Ն.Ն.Կովտունը դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը բնորոշում է որպես քրեադատավարական օրենքով սահմանված հանգամանքներ, ո-

²²⁶Տե՛ս *Богословская Л.А.*, Основания к отмене или изменению приговоров.-Харьков, 1981, էջ 21, *Воскобитова Л.А.*, Система оснований к отмене или изменениюприговора в кассационной порядке: Учеб. пособие. — М., 1985, էջ 10, *Куцова Э.Ф.*, նշված աշխատության ուղև, էջ 123:

րոնց առկայ ու թյան հաստատումը վերադաս դատարանի կողմից հանգեցնում է ստորադաս դատարանի դատավճռի կամ այլ դատական ակտի լրիվ կամ մասնակի բեկանման կամ փոփոխման կամ նոր դատական ակտի կայացման կամ քրեական գործի կարճման²²⁷: Քրեադատավարական տեսության մեջ «դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքեր» եզրույթի փոխարեն օգտագործվում է նաև «դատական ակտերի բեկանման և փոփոխման առիթներ» հասկացությունը, ինչը, սակայն, արդարացիորեն քննադատության է արժանանում: Քննադատությունը հիմնականում հանգում է նրան, որ այս դեպքում խոսքը ոչ թե սոսկ առիթների, այլ գործով թույլ տրված խախտումների մասին է, որոնք հիմք են տալիս վերադաս դատարանին բեկանելու կամ փոփոխելու գործով կայացված դատական ակտը²²⁸: Բացի այդ, Ն.Ն.Կովտունի կարծիքով «առիթներ» եզրույթի օգտագործումն առավել համահունչ է խորհրդային ռեզիմային, երբ ցանկացած հիմք դատարանին իրավական հնարավորություն էր տալիս դուրս գալ բողոքի շրջանակներից՝ առիթ ծառայելով հանրային իրավական շահի ապահովման նպատակով գործի ամբողջ ծավալով ըստ էության քննություն կատարելու համար²²⁹: Քննարկման առարկա դարձնելով դատական ակտերի բեկանման և փոփոխման հիմքերի հետ կապված տեսական հիմնախնդիրները՝ դատավարագետները բովանդակային առումով տարանջատում են վերաքննիչ և վճռաբեկ հիմքեր՝ վերջին դեպքում դրանք սահմանափակելով միայն նյութական օրենքի սխալ կիրառության և քրեադատավարական օրենքի էական խախտման դեպքերով²³⁰: Այս տարանջատման հիմքը վերաքննության և վճռաբեկության այն սկզբունքային տարբերությունն է, որ ի տարբերություն վերաքննության՝ վճռաբեկ վերանայման առարկա կարող է լինել բացառապես գործի իրավական կողմը: Ի տարբերություն դատական ակտերի բեկանման և փոփոխման վերաքննիչ հիմքերի, որոնք ուղղակիորեն սահմանված են գործող քրեադատավարական օրենքով՝ վճռաբեկ հիմքերը նման հստակ օրենսդրական կանոնակարգում չեն ստացել: Պարզապես վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանող՝ Օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ

²²⁷Տե՛ս *Ковтун Н.Н.*, նշված աշխատությունը, էջեր 397-398:

²²⁸Տե՛ս *Гродзинский М.М.*, նշված աշխատությունը, էջ 97:

²²⁹Տե՛ս *Ковтун Н.Н.*, նշված աշխատությունը, էջ 393:

²³⁰Տե՛ս *Ковтун Н.Н.*, նշված աշխատությունը, էջեր 389-399, *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, էջ 151:

մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է դատական ակտերի բեկանման և փոփոխման վերաբերյալ նույն հիմքերը սահմանող կանոններով: Կարծում ենք՝ այս նորմի հետմեկտեղ վճռաբեկ հիմքերի շրջանակի և դրանց բովանդակության, դատական ակտի բողոքարկման և դրավերանայման արդյունքում դատական ակտի վերանայման կամ փոփոխման հիմքերի հարաբերակցության վերաբերյալ քրեադատավարական տեսության մեջ առկա տեսական մոտեցումները կարող են ուղղորդող նշանակություն ունենալ այդ հիմքերը որոշելու հարցում: Վճռաբեկ հիմքերի հստակեցման գործնական կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանք ուղղորդող նշանակությամբ ունեն վերադաս դատական ատյանի համար, իսկ ստորադաս դատարանների ուշադրությանն էլ հրավիրում են նյութական և դատավարական օրենքի առավել կարևոր պահանջների վրա: Այսպիսով, գործնական կարևորություն ունեցող այս խնդրի լուծման համար ուղենիշ կարող է ծառայել վճռաբեկ հիմքեր եզրույթի բովանդակային կողմի բացահայտումն այն առումով, թե արդյոք այն ընդգրկում է նաև վճռաբեկ բողոքարկման հիմքերը և ըստ այդմ՝ արդյոք նույնական են դատական ակտի բողոքարկման և դրաբեկանման (փոփոխման) հիմքերը: Ռ.Ն.Մելիքյանը վերաբերյալության հիմքերի ուսումնասիրության շրջանակներում նույն խնդրի ուսումնասիրության առնչությամբ կարծիք է հայտնել, որ այդպիսիք անհրաժեշտ է լայն մեկնաբանել և դրանցում ներառել թե՛ դատական ակտի բողոքարկման և թե՛ դրանց բեկանման (փոփոխման) հիմքերը, քանի որ դրանք որոշակի տարբերություններով հանդերձ՝ բովանդակային առումով օբյեկտիվորեն նույնական են²³¹: Դատական ակտի բողոքարկման հիմքերն օրենքով սահմանված այն հանգամանքներն են, որոնցով բողոքաբերը կասկածի տակ է դնում բողոքարկվող դատական ակտի իրավաչափությունը: Եզրահանգում անելով դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու անհրաժեշտության մասին՝ վերանայում իրականացնող դատարանը հաստատված է համարում ոչ այլ ինչ, քան դատական ակտի իրավաչափությունը կասկածի տակ դնող բողոքարկ-

²³¹Տե՛ս **Ռ. Ն. Մելիքյան**, Վերաբերյալությանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նույն: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ., էջ 150:

ման հիմքի առկայությունը: Իհարկե բացառություն են կազմում այն դեպքերը, երբ, օրինակ, Վճռաբեկ դատարանի արդեն իսկ հիշատակված որոշմամբ կամ Նախագծով սահմանված հանգամանքների առկայության դեպքում Վճռաբեկ դատարանը դուրս է գալիս Վճռաբեկ բողոքի հիմքերի սահմաններից: Չնայած այս դեպքում չեն նույնաՆում բողոքում նշված հիմքը և դատական ակտի բեկանման հիմքը, սակայն բովանդակային առումով վերջին հիմքը դարձյալ նույնական է դատական ակտի բողոքարկման՝ օրենքով սահմանված որևէ հիմքի: Օբյեկտիվորեն բացառվում է, որ հնարավոր չլինի դատական ակտը բեկանել (փոփոխել) այնպիսի հիմքով, որով բովանդակային առումով հնարավոր չլինի բողոքարկել դատական ակտը: Դատական ակտի բողոքարկման և բեկանման (փոփոխման) հիմքերի թերևս էական տարբերությունն առանձին հասցեատերերն են: Եթե դատական ակտերի բողոքարկման հիմքերը սահմանված են բողոքաբերի համար, ապա դատական ակտի բեկանման (փոփոխման) հիմքի հասցեատերը կոնկրետ դեպքում Վճռաբեկ դատարանն է: Եթե Վճռաբեկ բողոք կարող բերվել է օրենքով սահմանված համապատասխան հիմքերի ենթադրյալ առկայության պարագայում, որոնք հնարավոր է՝ ազդած լինեն գործի ելքի վրա, ապա դատական ակտի բեկանման (փոփոխման) հիմք կարող են ծառայել այն հանգամանքները, որոնց առկայությունը հաստատվել է բողոքի քննության արդյունքում և որոնք հաստատապես ազդել են գործի ելքի վրա: Դատական ակտի բեկանման (փոփոխման) հիմք կարող են ծառայել վերոհիշյալ երկու պայմաններին բավարարող հանգամանքները: Յնարավոր են իրավիճակներ, երբ բողոքում նշված այս կամ այն հիմքն առկա չլինի, սակայն գործի ելքի վրա ստեղծության ազդած չլինի: Բնականաբար, այդ դեպքում դատական ակտը փոփոխման կամ բեկանման ենթակա չէ: Այսպես, օրինակ, Օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարացման դատավճիռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում: Այսպիսով, **դատական ակտի բեկանման և փոփոխման վճռաբեկ հիմքերը վճռաբեկ բողոքում նշված և բողոքի քննության արդյունքում հաստատված նյութական կամ դատավարական իրավուն-**

քի այ ն խախտումները կամ նոր կամ նոր երևան եկած այ ն հանգամանքներն են, որոնք ազդել են գործի ել քի վրա

Քրեադատավարական օրենքի էական խախտումը: Դատական ակտերի բեկանման (փոփոխման) այ ս հիմքը տեսուչայն մեջ բնորոշում են որպես դասական, «ֆորմալ վճռաբեկ հիմք»՝ դրա հետորոշակի առումով կապելով վճռաբեկ ատյանի դատարանի գործունեության մեջ ճշգրիտ տարրերի առկայությունը (խոսքը վերաբերում է քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերին)²³²: Ընդ որում, տեսուչայն մեջ առանձնացնում են բացարձակ ֆորմալ վճռաբեկ հիմքեր՝ դրանց տակ ի նկատի ունենալով դատական ակտի անվերապահ բեկանման՝ քրեադատավարական օրենքի էական խախտման դեպքերը, և հարաբերական ֆորմալ վճռաբեկ հիմքեր, որոնք կարող են հանգեցնել դատական ակտի բեկանման կամ փոփոխման²³³: Որոշ տեսաբաններ առանձնացնում են քրեադատավարական օրենքի խախտման պայմանական և ոչ պայմանական հիմքեր՝ դասակարգման հիմքում դնելով այ ն չափանիշը, որ եթե պայմանական հիմքերի բնույթը՝ էական կամ ոչ էական լինելը, կախված է կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, ապա ոչ պայմանական հիմքերն այ ն խախտումներն են, որոնք անխուսափելիորեն ազդում են դատական ակտի օրինականության վրա²³⁴: Ընդ որում, ոչ պայմանական կամ բացարձակ հիմքերը, որոնք անխուսափելիորեն հանգեցնում են դատական ակտի անվավերության, դարձյալ նույնացվում են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի հետ: Նշված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում վերանայում իրականացնող դատական ատյանը քննարկման առարկա չի դարձնում այ ն հարցը, թե որքանով են էական այ ս խախտումները և որքանով դրանք կարող էին ազդել գործի ել քի վրա, այլ պարզապես բեկանում է դատական ակտը²³⁵: Վերանայում իրականացնող մարմնի

²³²Տե՛ս **Морщакова Т.Г.**, Квалификация процессуальных нарушений и основания отмены (изменения) приговоров//Сов. государство и право, 1985, N12, էջեր 56-57, **Мотовиловкер Я.О.**, О сущности кассационного основания и содержания правосознательной санкции в уголовном процессе// Уголовно-правовые и процессуальные гарантии защиты конституционных прав граждан. Калинин, 1980, էջեր 26-29, **Александров А.С., Ковтун Н.Н.**, Основания к отмене (изменению) приговора в суде апелляционной инстанции // Государство и право, 2001, N10, էջ 58:

²³³ Տե՛ս **Ковтун Н.Н.**, նշված աշխատությունը, էջ 405:

²³⁴Տե՛ս **Чельцов М.А.**, Советский уголовный процесс: Учебник / М.А.Чельцов. - М.: Госюриздат, 1951, էջ 382, **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջ 220:

²³⁵Տե՛ս **Гродзинский М.М.**, նշված աշխատությունը, էջ 103:

խնդիրն այս դեպքում համապատասխան հիմքի առկայությունը հավաստելն է: Վերջին դիրքորոշումից փաստորեն բխում է, որ առանձին դատավարագետներ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք դիտարկում են քրեադատավարական օրենքի ցանկացած խախտում՝ դրանց շարքից իբրև էական առանձնացնելով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը: Մինչդեռ, օրինակ թե Օրենսգիրքը և թե Նախագիծը, իբրև դատական ակտի բեկանման (փոփոխման) հիմք, Նախատեսում են քրեադատավարական օրենքի միայն **Էսլյան** խախտումը՝ հստակեցնելով նաև խախտման էական բնույթը որոշելու չափանիշները: Այսպես, գործող Օրենսգրքի համաձայն՝ էական են օրենսգրքով սահմանված սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Փաստորեն, գործող Օրենսգիրքը նախ՝ հստակեցնում է քրեադատավարական օրենքի էական խախտման առարկայական չափանիշը, այն է՝ էական կարող են լինել միայն սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները: Օրենսդրական այս ձևակերպման հետ կապված՝ հարց է ծագում, թե ինչ ինկատի ունի օրենսդիրն այլ ընդհանուր դրույթներ ասելով: Արդյոք խոսքն այս դեպքում գործող Օրենսգրքի՝ «Ընդհանուր դրույթներ» վերտառությամբ բաժնում զետեղված նորմերի մասին է: Հստակեցնելով քրեադատավարական օրենքի էական խախտման առարկայական չափանիշը՝ գործող քրեադատավարական օրենքը սահմանում է նաև էական խախտման այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելը, ազդեցությունը կամ հնարավոր ազդեցությունը գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերոհիշյալ հատկանիշները, սակայն, կարծում ենք՝ քրեադատավարական օրենքի էական խախտման ընդհանուր սեռային հասկացության հստակեցման հարցում որևէ էական, ուղղորդող նշանակություն չունեն, քանի որ դրանք ոչ թե

բացահայտում են խախտման էական բնույթը, այլ սուկթվարկում են այն իրավական հետևանքները, որոնք կարող են առաջանալ քրեադատավարական սկզբունքների խախտման արդյունքում: Բացի այդ, եթե խախտումը խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, հետևաբար ի վերջո ազդել է նաև գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Ուստի, հիմնավորված չէ նախորդ իրավական հետևանքն առանձնացնելու հանգամանքը: Քննարկվող նորմի օրենսդրական ձևակերպման հետ կապված՝ անհրաժեշտ է ուշադրություն ն դարձնել ևս մեկ հանգամանքի վրա: Այսպես, Օրենսգրքի 398-րդ հոդվածը սահմանում է քրեադատավարական օրենքի էական խախտման՝ որպես դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի բնորոշումը: Իսկ քրեադատավարական օրենքի էական խախտումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման կամ փոփոխման, եթե հաստատապես, այլ ոչ թե հավանաբար ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Յետևաբար, կարծում ենք՝ ընդունելի չէ դատական ակտի բեկանման (փոփոխման) այս հիմքի բնորոշման մեջ «կարող է ազդել գործի ելքի վրա» արտահայտության օգտագործումը: Քրեադատավարական օրենքի էական խախտման՝ որպես դատական ակտի բողոքարկման հիմքի օրենսդրական կարգավորման հասցեատերը բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտն է, ով ինդիփոնենի իր բողոքում խախտման հնարավոր ազդեցությունը գործի ելքի վրա: Իսկ քրեադատավարական օրենքի էական խախտման՝ որպես դատական ակտի բեկանման (փոփոխման) հիմքի վերաբերյալ օրենսդրական դրույթները ենթական են կիրառման վերաբննիչ կամ վճռաբեկ դատարանի կողմից, որոնք պետք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու մասին իրենց որոշման մեջ հիմնավորեն խախտման ազդեցությունը գործի ելքի վրա: Վերոշարադրյալի հավառմամբ՝ իրավաչափ ենք համարում Նախագծում քրեադատավարական օրենքի էական խախտման բնորոշումը որպես դատական վարույթի ընթացքում քրեական վարույթի որևէ սկզբունքի խախտում: Փաստորեն թե գործող քրեական դատավարության օրենսգրքով և թե Նախագծով տրված օրենսդրական կարգավորման իմաստով դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք կարող է ծառայել քրեադատավարական օրենքի միայն էական խախտումը: Դրանց շարքում գործող Օ-

րենսգրքում և Նախագծում առանձնացված են դատական ակտի անվերապահ բեկանման հիմք ծառայող քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքերը: Դրանց բովանդակային վերլուծությանը ցույց է տալիս, որ դրանք առավել ապես կապված են Սահմանադրությանը, Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության բարկացուցիչ մասը կազմող առանձին իրավունքների խախտման հետ: Նշված հիմքերի առկայության պարագայում դատական ակտի անվերապահ բեկանման օրենսդրական պահանջի հիմքում ընկած է այն գաղափարը, որ այդ խախտումների բնույթով պայմանավորված՝ մինչև խախտումը եղած վիճակի վերականգնումը և անձի խախտված իրավունքների վերականգնումը հնարավոր է միայն դատական ակտի բեկանման դեպքում: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատը Տ.Գալստյանի գործով 2014 թվականի նոյեմբերի 28-ի ԵԿԴ/1118/02/12 որոշման նշել է, որ. «(...) նման խախտումների արձանագրումը ipso facto հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ չկիրառման վերաբերյալ հիմքերի հիմնավոր ինտելեկտուալ: [Այս] խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննությանը ներկայացվելու դեպքում»:

Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ կիրառումը: Քրեադատավարական օրենքը նախատեսում է քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ կիրառության հետևյալ երեք դեպքերը.

- 1) քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումը, որը ենթակա էր կիրառման.
- 2) քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումը, որը ենթակա էր կիրառման.
- 3) կամ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ մեկնաբանումը, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

Միջազգային պայմանագրի սխալ կիրառության դեպքերը նյութական իրավունքի խախտման հիմքի հետևում նաև ցանցում օրենսդրական կարգավորման թերությանն առայն, որ միջազգային իրավունքը պարունակում է ոչ միայն նյութական, այլև դատավարական նորմեր, վերաբննիչ հիմքերի ուսումնասիրության շրջանակներում անդրադարձել է նաև Ռ.Ն.Մելիքյանը՝ առաջարկելով սահմանել միջազգային պայմանագրի սխալ կիրառությունը որպես դատական ակտի բեկանման (փոփոխման) ինքնուրույն հիմք: Այդպիսի կարգավորում է նախատեսվել նախագծում: Քննարկվող հիմքի հետ կապված՝ տեսական գրականության մեջ քննարկվող հաջորդ թերությունն այն է, որ նյութական իրավունքի սխալ կիրառության դեպքերը նույնացվում են բացառապես քրեական օրենքի խախտման հետ, մինչդեռ քրեական գործով կարող են կիրառվել նաև այլ օրենքներ (նորմատիվ իրավական ակտեր, օրինակ՝ համաներման մասին ակտը), որոնց պահանջների խախտումը ևս կարող է ազդել դատական ակտի օրինականության վրա²³⁶: Օրենսդրական կարգավորման այս թերությունը շտկվել է նախագծում, որն իբրև դատական ակտի բեկանման (փոփոխման) հիմք նախատեսում է առհասարակ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառությունը: Նախագծում այս հիմքն առավել հստակ օրենսդրական կարգավորում է ստացել նաև այն առումով, որ նոր օրենսդրական ձևակերպման իմաստով նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառության հանգեցնում է ոչ միայն ամբողջական հոդվածի, այլ նաև դրա առանձին մասերի կամ կետերի սխալ կիրառությունը: Դատավարագետները միակարծիք չեն նաև նյութական օրենքի սխալ կիրառության դեպքերի շրջանակի որոշման հարցում: Մասնավորապես, որոշ տեսաբաններ համաձայն չեն քրեական օրենքի սխալ կիրառության դեպքերի վերոհիշյալ դասակարգմանն այն հիմնավորմամբ, որ այդ հիմքերից առաջին երկուսը բովանդակային առումով նույնական են, իսկ ինչ վերաբերում է նորմի սխալ մեկնաբանությանը, ապա այն ի վերջո հանգեցնում է նորմի սխալ կիրառությանը: Ըստ այդմ առաջարկվում է նյութական օրենքի սխալ կիրառությունն դիտարկել քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի դրույթ-

²³⁶Տե՛ս *Ռ.Ն.Մելիքյան*, նշված աշխատությունը, **Էջ**, *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 229:

ների սխալ կիրառումը ունը²³⁷: Այս մոտեցումը, սակայն, որոշակի առարկություններն են տալիս այնքանով, որքանով նույնացնում է նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառության միանգամայն տարբեր այն դեպքերը, երբ կիրառվել է այն հոդվածը, որը ենթական էր կիրառման, կամ չի կիրառվել այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Դա, կարծում ենք, պայմանավորված է այս վերջին հիմքի ոչ ճիշտ մեկնաբանությամբ: Խնդրո առարկա դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե այն իրավիճակներին, երբ չի կիրառվել կիրառման ենթակա հոդվածը, և դրա փոխարեն կիրառվել է սխալ հոդված, այլ այն դեպքերին, երբ սոսկ չի կիրառվել քրեական օրենսգրքի այս կամ այն դրույթը, որը ենթակա էր կիրառման՝ ի թիվս քրեական գործով ճիշտ կիրառված այլ հոդվածների: Օրինակ, ստորադաս դատարանը, հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները և կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 60-րդ հոդվածները, նշանակում է ազատազրկման ձևով որոշակի ժամկետով պատիժ, որը դատարանի կարծիքով անձը պետք է կրի: Այս դեպքում բողոք կարող բերվել այն հիմքով, որ ստորադաս դատարանը չի կիրառել պատիժը պայմանակալորեն չկիրառելու ինստիտուտը նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Այլ հարց է, որ դակարող է արդյունք էլ ինչև ճիշտ ընտրված քրեաիրավական նորմի սխալ մեկնաբանությամբ կիրառություն: Իսկ այս դիտարկումն էլ թույլ է տալիս պնդել, որ թեև ընդհանուր առմամբ իրավաչափ է այն մոտեցումը, որ օրենքի սխալ մեկնաբանությունը, որպես կանոն, ի վերջո հանգեցնում է այն նորմի կիրառությանը, որը ենթակա էր կիրառման կամ այն նորմի չկիրառությանը, որը ենթակա էր կիրառման, այդուհանդերձ առանձին դեպքերում այս հիմքը ևս կարող է ինքնուրույն նշանակություն ունենալ:

Քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառության վճռաբեկ հիմքը կարող է փոխկապակցված էլ ինչև վերաբնիչ այնպիսի հիմքի հետ, ինչպիսին՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունների՝ ստորադաս դատարանում հետազոտված

²³⁷Տե՛ս *Строгович М.С.*, նշված աշխատությունը, էջ 104, *Перлов И.Д.*, Надзорное производство в уголовном процессе, էջեր 164-165, Уголовный процесс»: Учебник для студентов вузов, обучающихся по специальности «Юриспруденция»/под ред. В.П. Божьева, 3-е изд., испр. и доп. - М.: Спарк, 2002, էջեր 522-523//<http://www.alleng.ru/d/jur/jur245.htm>

ապացույցներին անհամապատասխանությունն է: Վերոհիշյալ հիմքը, ինչպես արդեն նշվել է, դասվում է վերաքննիչ հիմքերի շարքին, քանի որ գործի փաստական կողմը դուրս է վճռաբեկ վերանայման առարկայի շրջանակներից: Այս խնդիրը սերտորեն առնչվում է վճռաբեկ վերանայման առարկային: Եթե քրեադատավարական օրենքը հստակ սահմանում է վերաքննիչ վերանայման առարկան (Օրենսգրքի 356-րդ հոդված), ապա նույնը չի կարելի ասել վճռաբեկ վերանայման առարկայի մասին: Վճռաբեկ վերանայման առարկան սերտորեն կապված է դատական ակտերի վերանայման այս ձևի իրավական էության հետ: Քանի որ վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանն ստուգում է ստորադաս դատարանի կողմից քրեական օրենքի կիրառման ճշտությունը և քրեադատավարական օրենքի նորմերի պահպանումը, որոնք ապահովում են դատական ակտի օրինականությունը, ըստ այդմ, կարող ենք փաստել, որ վճռաբեկ վերանայման առարկան դատական ակտի օրինականությունն է: Վճռաբեկ վերանայման մեխանիզմի հիշատակված առանձնահատկությունը ամբողջականապես ավորված՝ հարց է ծագում, թե արդյոք դատական ակտի հիմնավորվածությունը ևս ընդգրկված է վճռաբեկ վերանայման առարկայի մեջ: Օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

- 1) դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.
- 2) այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.
- 3) դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին²³⁸:

Դատական ակտի հիմնավորվածության վերոհիշյալ պահանջներից առաջինի հետ կապված՝ հարկ է նշել, որ եթե վերաքննիչ դատարանի դատական ակտը հիմնված է առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանում չհետազոտված ապացույցի (ապացույցների) վրա, ապա այս

²³⁸Գ.Ղազարյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11 որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է, որ առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատավճռի կառուցվածքին և բովանդակությանն Օրենսգրքով ներկայացվող բովանդակային պահանջները վերաբերելի են նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին:

դեպքում գործ ունենք արդար դատաքննության իրավունքի, այսինքն՝ քրեադատավարական օրենքի խախտման հետ: Ինչ վերաբերում է դատական ակտի հիմնավորվածության երկրորդ պահանջին, ապա այն, ըստ էության, կարող է կապված լինել ապացույցների գնահատման, մասնավորապես, այդպիսիք մեղադրանքը հաստատված համարելու բավարության տեսանկյունից գնահատելու քրեադատավարական կանոնների խախտման հետ: Վերը հիշատակված երրորդ պահանջի հետ կապված՝ վճռաբեկ վերանայման շրջանակներում վճռաբեկ դատարանը խնդիր չունի պարզել գործի իրական փաստական հանգամանքները: Այլ հարց է, որ վճռաբեկ դատարանը կարող է արդեն իսկ ձեռք բերված ապացուցողական զանգվածի սահմաններում որոշել, թե որքանով են ստորադաս դատարանները ճիշտ գնահատել քրեական գործում առկա ապացույցները, առկա են արդյոք բավարար փաստական տվյալներ ապացուցված համարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները, հիմնավոր է արդյոք ստորադաս դատարանի դատական ակտը, այլ կերպ՝ արդյոք գործի էության վերաբերյալ եզրահանգումները բխում են գործով առկա ապացույցների համակցությունից: Վերոշարադրյալն անհրաժեշտ է դարձնում վճռաբեկ դատարանում ապացուցման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Որոշ դատավարագետներ ընդհանրապես ժխտում են վճռաբեկ դատարանում ապացուցման գործընթացի առկայությունը և կարծիք հայտնում այն մասին, որ վճռաբեկ դատարանը չի կարող նորից գնահատել այն ապացույցները, որոնք արդեն իսկ պատշաճ ձևով հետազոտվել և գնահատվել են գործի ըստ էության քննությունն իրականացրած ստորադաս դատարանների կողմից: Սակայն, կարծում ենք, առավել հիմնավոր է հակառակ տեսակետն արտահայտող դատավարագետների դիրքորոշումն այն մասին, որ վճռաբեկ դատարանի գործունեության մեջ առկա է նվազագույնն ապացուցման գործընթացի տարրերից մեկը՝ ապացույցների գնահատումը, քանի որ դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն կապված է ապացույցների գնահատման հետ: Ստորադաս դատարանի եզրահանգումները, որոնք արտացոլված են բողոքարկվող դատական ակտում, ապացուցման (ապացույցների գնահատման) արդյունք են: Յետևաբար, դատական ակտը վերանայող մարմինն իր առջև

դրված խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով պետք է ստուգի նաև դատական ակտը կայացրած դատարանի կողմից ապացույցների գնահատումը²³⁹: Վճռաբեկ դատարանն իրավասու է ստուգել, թե արդյոք ճիշտ է գնահատվել ապացույցը դրանով հաստատված փաստական հանգամանքների՝ գործի համար ունեցած նշանակության (ապացույցի վերաբերելիություն), ապացույցի ձեռքբերման օրենքով սահմանված կարգի պահպանման (ապացույցի թույլատրելիություն), ապացույցի արժանահավատության և գործով ապացուցման արևարկյան կազմող հանգամանքները ապացուցված համարելու համար բավարար լինելու (ապացույցների բավարարություն) տեսանկյունից²⁴⁰: Անգամ այն դատավարագետները, ովքեր ընդունում են վճռաբեկ դատարանի կողմից ապացույցների գնահատման գործառույթի իրականացումը, այդուհանդերձ, միակարծիք չեն այդ գործառույթի էության, դրա իրականացման առանձնահատկությունների և շրջանակի մեկնաբանման հարցում: Այսպես, որոշ հեղինակներ գտնում են, որ վճռաբեկ դատարանն իրավասու է գնահատական տալ գործում առկա ապացույցներին, մյուսները պնդում են, որ վճռաբեկ դատարանը միայն ստուգում կամ քննադատում է ստորադաս դատարանի կողմից ապացույցներին տրված գնահատականը: Կանալայն տեսակետը, որ դատարանն իրականացնում է ապացույցների վերագնահատում²⁴¹: Կարծում ենք՝ այն մոտեցումը, որ վճռաբեկ դատարանը ոչ թե գնահատում, այլ սոսկ ստուգում է ստորադաս դատարանի կողմից ապացույցներին տրված գնահատականը, ինքնանպատակ է, քանի որ դժվար է պատկերացնել, որ ապացույցին տրված գնահատականը կարելի է ստուգել այլ կերպ, քան այդ ապացույցները վերադաս դատական ատյանի կողմից նորից գնահատելու և այդ գնահատականը ստորադաս դատարանի կողմից տրված գնահատականի հետ համադրելու ճանապարհով: Այլ հարց է, որ վճռաբեկ դատարանին ապացույցների գնահատման գործառույթի վերապահումը չի ենթադրում ապացույցների անմիջական հետազոտության իրականացում, նոր ապացույցներին տրված և ըստ այդմ՝ գործի փաստական կողմի վերանայում:

²³⁹Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 25-26:

²⁴⁰Տե՛ս *Лантух Н.В.*, նշված աշխատությունը, էջեր 45-46:

²⁴¹Տե՛ս *Куцова Э.Ф.*, նշված աշխատությունը, էջ 114, *Мухин И.И.*, Кассационное обжалование, опротестование и пересмотр приговоров. М., 1956, էջ 51:

Իհարկե, տեսական գրականության մեջ կան տարբեր առաջարկներ վճռաբեկ դատարանի գործունեության մեջ վերաքննության տարրերն ընդլայնելու, մասնավորապես, առանձին դեպքերում ապացույցների անմիջական հետազոտությունն իրականացնելու (վկաներին հարցաքննելու, փորձաքննությունն նշանակելու), վճռաբեկ դատարանն լրացուցիչ նյութեր ներկայացնելու հնարավորությունն նախատեսելու մասին²⁴²: Սակայն մենք առավել հակված ենք այն դիրքորոշմանը, որ ապացույցներն անմիջականորեն հետազոտելու և դրահիման վրա որոշակի փաստական հանգամանքներ ապացուցված համարելու լիազորությունն առաջին ատյանի դատարանի (նաև վերաքննիչ դատարանի) մենաշնորհն է և դուրս է վճռաբեկ վերանայման կառուցակարգի շրջանակներից: Վերահաստատելով այն դիրքորոշումը, որ գործնականում դժվար է ապահովել մաքուր վճռաբեկության դասական մոդելը, այդուհանդերձ, վճռաբեկ դատարանին ապացույցներ հետազոտելու և գործի փաստական կողմն ուղղակիորեն վերանայելու լիազորությունն վերապահելու դեպքում դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը կորցնում է զուտ գործի իրավական կողմը վերանայելու իր տարբերիչ առանձնահատկությունը, ինչը և հանգեցնում է դատական ակտերի վերանայման երկու հիմնական ձևերի անհարկի մերձեցմանը և ընդհուպ մինչև նույնացմանը²⁴³: Այսպիսով, վերադաս դատական ատյանը կարող է քրեական գործում առկա ապացույցների գնահատման արդյունքում որոշել դատարանի դատական ակտում տեղ գտած վերջնական եզրահանգումների իրավաչափությունը՝ նոր իրավական գնահատական տալով գործով ձեռք բերված ապացույցներին: Նման մոտեցումը համապատասխանում է այն խնդիրներին, որոնք դրված են այս ատյանի առջև, և որոնց էությունը ոչ թե գործի ըստ էության նոր քննությունն է, այլ ստորադաս դատարանի կողմից իրականացված ապացույցների գնահատման և կայացված դատական ակտի իրավաչափության ստուգումը: Վճռաբեկ ատյանը քրեական գործի գրավոր նյութերի ուսումնասիրության արդյունքում կարող է ապացուցված չհա-

²⁴²Տե՛ս **Сухова О.А.**, նշված աշխատությունը, էջ 24, **Калмыков В.Б.**, նշված աշխատությունը, էջեր 26-28, **Лантух Н.В.**, նշված աշխատությունը, էջ 47:

²⁴³Ավելի մանրամասն տե՛ս **Куцова Э.Ф.**, նշված աշխատությունը, էջ 175, **Левин А.**, Пределы полномочий кассационной инстанции по уголовному делу // Советское государство и право. 1948, N8, էջ 37:

մարել ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները և ըստ այդմ ոչ արժանահավատ համարել ստորադաս դատարանի դատական ակտի հիմքում ընկած եզրահանգումները: Սակայն վճռաբեկ ատյանն իրավասու է հաստատված համարելու նոր փաստեր՝ իլրումն ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների կամ դրանց փոխարեն, քանի որ փաստական հանգամանքների հաստատումը և դրանց հիման վրա եզրահանգումների կառուցումը կարող է տեղի ունենալ միայն գործի ըստ էության քննության արդյունքում: Այլ կերպ՝ վճռաբեկ դատարանը ոչ թե խնդիր ունի պարզել գործի իրական փաստական հանգամանքները, այլ առկա ապացուցողական զանգվածի սահմաններում որոշել, թե որքանով են ստորադաս դատարանները ճիշտ գնահատել այդ ապացույցները, և ըստ այդմ որքանով են հիմնավորված դատական ակտում արված հետևությունները: Բոլոր այս դեպքերում վճռաբեկ ատյանը ստուգում է, թե որքանով են գործով ձեռք բերված ապացույցները և դրանց հիման վրա հաստատված գործի փաստական հանգամանքները թույլ տալիս կիրառելու նյութական իրավունքի այս կամ այն նորմը: Գործի փաստական հանգամանքներ ասելով՝ պետք է հասկանալ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները, քանի որ գործի փաստական կողմը դուրս է վճռաբեկ վերանայման առարկայից, վճռաբեկ դատարանում գործում առկա կամ առավել ևս նոր ապացույցներ չեն հետազոտվում: Այլ կերպ՝ վճռաբեկ ատյանի դատարանն իրավասու է նոր գնահատական տալ քրեական գործում առկա ապացույցներին և դրանցից բխող՝ ստորադաս դատարանի եզրահանգումներին:

Անդրադառնալով նոր կամ նոր երևան եկած հանգամանքներին՝ ևս մեկ անգամ պետք է նշել, որ Նախագիծը վերանայման սովորական և բացառիկ կառուցակարգերի շփոթից խուսափելու նպատակով իրավաչափորեն տերմինաբանական առումով օգտագործում է «դատական ակտը ոչ իրավաչափորեն ձևով իրավական և փաստական հանգամանքներ եզրույթը»: Նշված հանգամանքներն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման հիմք դիտարկելը ելնում է այն տրամաբանությունից, որ այդպիսիք կարող են ի հայտ գալ նախքան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը: Բացի այդ, եթե դրանք ի-

րենց բնույթով այնպիսին են, որ իրավաչափ են դարձնում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության սկզբունքից շեղումը, ապա առավել ևս պետք է հիմք ծառայեն նաև օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման համար: Եթե դրանց շրջանակը վճռաբեկ վարույթի շրջանակներում նախագծում հստակեցված է, ապա Օրենսգիրքը նշված հանգամանքների՝ իբրև վճռաբեկ բողոքարկման հիմքերի հստակեցում չի պարունակում: Ուստի, ենթադրվում է, որ վերջին դեպքում իբրև ուղենիշ պետք է ընդունվել համապատասխան հանգամանքները սահմանող՝ Օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները²⁴⁴:

§3. Վճռաբեկ դատարանի լիազորությունները

Վճռաբեկ դատարանի լիազորությունները (դատական ակտերի վճռաբեկ վերանայման արդյունքում կայացվող որոշումների շրջանակը) սահմանված են Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում: Գրեթե նույն շրջանակն է նախատեսված նաև նախագծի 393-րդ հոդվածի 1-ին մասում: Օրենսգիրքը, սահմանելով Վճռաբեկ դատարանի լիազորությունների ընդհանուր շրջանակը, չի հստակեցրել վճռաբեկ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերն ու դրանց առկայության պարագայում Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող կոնկրետ որոշումների տեսակը: Քննարկվող խնդրի առնչությամբ գործող Օրենսգիրքը հստակ օրենսդրական կարգավորում է նախատեսում վերաբնիչ դատարանի համար: Ընդ որում, վերաբնիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերից երկուսը՝ քրեական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը (Օրենսգրքի 397-րդ հոդված) և քրեադատավարական օրենքի էական խախտումը (Օրենսգրքի 398-րդ հոդված), նույնանում են դատական սխալի հիմքով վճռաբեկ բողոք բերելու դեպքերի հետ, քանի որ 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է

²⁴⁴ Նոր և նոր երևան եկած հանգամանքների՝ որպես դատական ակտի բողոքարկման հիմքերի մասով ավելի մանրամասն տե՛ս **ԱԱՀովհաննիսյան**, Նոր երեվան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, ատենախոսություն ի.գ.թ. գիտական աստիճանի շնորհման համար, Երևան, 2014, էջեր 58-113:

նույն Օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների կանոններով: Վերո-
շարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ դատական ակտի բե-
կանման կամ փոփոխման այս հիմքերի առկայության հարցը լուծե-
լիս Վճռաբեկ դատարանը կարող է առաջնորդվել նշված հոդվածնե-
րով սահմանված դրույթներով իհարկե այն վերապահումով, որ
նշված հոդվածներում ամրագրված դրույթները սահմանում են նաև
կոնկրետ հիմքերի առկայության դեպքում Վերաքննիչ դատարանի
կողմից դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու կոնկրետ լիա-
զորությունը (կայացվելիք կոնկրետ որոշման տեսակը), որոնք, սա-
կայն, չեն կարող նույնական լինել Վճռաբեկ դատարանի համար՝
հաշվի առնելով վերաքննության և վճռաբեկության իրավական կա-
ռուցակարգերի առանձնահատկությունները և դատական սխալներն
ուղղելու դատավարական հնարավորությունների ծավալ այն տար-
բերությունը: Ուստի, կարելի է եզրակացնել, որ բոլոր դեպքերում
առկա է օրենսդրական բաց վճռաբեկ վերանայման արդյունքում դա-
տական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերի և դրանց առկայու-
թյան դեպքում վճռաբեկ դատարանի լիազորությունների հնարավո-
րինս հստակ կանոնակարգման առումով: Օրենսդրական հստակ կար-
գավորման անհրաժեշտության և կարևորության մասին է վկայում
դատական ակտի բեկանման կամ փոփոխման առանձին հիմքերի առկա-
յության պարագայում վճռաբեկ դատարանի լիազորությունների
հետ կապված՝ տեսական գրականության մեջ առանձնացվող խնդիրնե-
րը և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ առկա ոչ միանշա-
նակ մոտեցումները, որոնք կներկայացվեն ստորև: Հարկ է նաև
նշել, որ օրենսդրական այս բացը լրացվել է Նախագծում:

Այսպես, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի քննության և դա-
տական ակտի վերանայման արդյունքում իրավասու է մերժել բողո-
քը, իսկ բողոքարկվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:
Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշված լիազորությունն իրացնելիս
իրավասու է պատճառաբանել ստորադաս դատարանի՝ գործն ըստ էութ-
յան ճիշտ լուծող դատական ակտը, որը, սակայն, թերի կամ սխալ է
պատճառաբանված²⁴⁵: Այս լիազորության օրենսդրական ձևակերպու-

²⁴⁵ Վճռաբեկ այն անի կողմից ստորադաս դատարանի թերի պատճառաբանված, սակայն
գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտի իրավական
պատճառաբանությունը զարգացնելու լիազորությունն նախատեսված է նաև

մը խնդրահարույց է նախ այն առումով, որ վճռաբեկ բողոքարկման առարկան կազմում դեռևս օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտերը, հետևաբար մերժելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը չի կարող այն օրինական ուժի մեջ թողնել: Եվ երկրորդ՝ եթե թերի կամ մասնակի պատճառաբանված դատական ակտը կարող է գործն ըստ էության ճիշտ լուծող լինել, ապա նույնը դժվար է ասել սխալ պատճառաբանված դատական ակտի համար²⁴⁶: Սխալ պատճառաբանված դատական ակտը վկայում է դատական ակտին քրեադատավարական օրենքով ներկայացվող բովանդակային պահանջների խախտման, այսինքն՝ դատական սխալի առկայության մասին, որը կարող է հիմք ծառայել, օրինակ, դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու կամ դատական ակտը փոփոխելու անհրաժեշտության մասին: Ընդ որում, անգամ այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը պատճառաբանում է ստորադաս դատարանի թերի պատճառաբանված դատական ակտը, խոսքը վերաբերում է իրավական պատճառաբանությանը կամ այլ կերպ՝ ստորադաս դատարանի դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումը զարգացնելուն, իրավական փաստարկները լրացնելուն: Այս խնդիրները որոշակիորեն լուծվել են Նախագծում: Մասնավորապես, սահմանվել է, որ մերժելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը բողոքարկվող դատական ակտը թողնում է անփոփոխ, այլ ոչ թե օրինական ուժի մեջ, և որ վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի կամ մասնակի սխալ պատճառաբանված դատական ակտը (Նախագծի 393-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Սակայն որոշակի անհամաձայնության տեղիք է տալիս նաև մասնակի սխալ պատճառաբանված դատական ակտը լրացուցիչ պատճառաբանելու՝ Նախագծով սահմանված օրենսդրական հնարավորությունը: Կարծում ենք՝ այս դեպքում խոսքը ոչ թե լրացուցիչ պատճառաբանության, այլ դատական ակտը մասամբ փոփոխելու և մասնակի սխալ պատճառաբանությանը ճիշտ պատճառաբանությամբ փոխարինելու հնարավորության մասին կարող է լինել: Ուստի

Ֆրանսիայում, Իտալիայում: Տե՛ս *Jolowicz J.A.*, նշված աշխատությունը, էջ 2054:
²⁴⁶Տե՛ս **Ս.Ա. Դիլբանդյան, Ռ.Լ. Մելիքյան**, Վճռաբեկությունը քրեական դատավարությունում, 33 քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Եր., 33 իրավաբանների միություն, 2014, էջ 435:

առաջարկում ենք Նախագծի 393-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «մասնակի սխալ է» բառերը:

Գործող Օրենսգրքով (ևսև Նախագծով) նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի հաջորդ լիազորությունը դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու լիազորությունն է, որի հետ կապված՝ առանձնահատուկ քննարկման կարիք ունի տեսական գրականության մեջ առաջ քաշվող այն հարցը, թե արդյոք ստորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները պետք է կանխորոշվեն վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ և դրանով սահմանված նոր քննության ծավալով²⁴⁷: Մենք հակված ենք այս հարցին դրական պատասխան տալու, քանի որ դա բխում է արդարադատության արդյունավետության ապահովման, մասնավորապես՝ դատական ակտերի բողոքարկման անընդհատ շրջապտույտից խուսափելու անհրաժեշտությունից: Բացի այդ, նման կարգավորումն անհրաժեշտ է Վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացման և օրենքի միատեսակ կիրառությունն ապահովման խնդիրների արդյունավետ իրականացման համար: Հատկապես վերջին դեպքում միասնական դատական պրակտիկայի ձևավորումը հնարավոր է միայն ստորադաս դատարանի համար պարտադիր և ուղղորդող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումների մշակմամբ²⁴⁸: Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը Գ.Խնուսյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԵԴ/0030/01/12

²⁴⁷Մինչև 1837 թվականը գործող մաքուր վճռաբեկության \$րանսիական մոդելի համաձայն՝ ստորադաս դատարանը, որին ուղարկվել է գործը նոր քննության համար, կաշկանդված չէր նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ: Սակայն այս կարգավորումը հետագայում որոշակիորեն փոփոխվել է և սահմանվել է, որ գործի նոր քննության արդյունքում կայացված դատական ակտը կրկին բեկանելու դեպքում գործի նոր քննության ընթացքում վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը դառնում է պարտադիր ստորադաս դատարանի համար: Վերջին մոտեցումը որդեգրել է նաև Բելգիան: Տե՛ս **J.A. Jolowicz**, նշված աշխատությունը, էջ 2052, **Sofie M.F.Geeroms**, նշված աշխատությունը, էջեր 205-206, 209:

²⁴⁸Այս եզրահանգման օգտին է նաև խոսում ԶՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված օրենսդրական այն պահանջը, որ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) ընդհանրապես պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով ցանկացած այլ գործի քննության ժամանակ (բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ):

որոշման մեջ՝ հավելելով նաև, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալը ստորադաս դատարանի կողմից չպահպանելն իրավաչափ կարող է համարվել միայն, եթե ստորադաս դատարանը, ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ, հիմնավորի այնպիսի բացառիկ հանգամանքի (օրինակ՝ համաներման ակտի ընդունումը, արարքի ապաքրեականացումը, քրեական գործի վարույթը բացառող այլ հանգամանքի ի հայտ գալը և այլն) առկայությունը, որի պայմաններում Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը չի կարող կատարվել սահմանված ծավալով: Այսպիսով, ստորադաս դատարանը չպետք է դուրս գա Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված՝ գործի նոր քննության ծավալներից (օրինակ՝ եթե դատական ակտը բեկանվել և նոր քննության է ուղարկվել միայն պատժի կամ դատապարտյալներից միայն մեկի մասով, ապա Վերաքննիչ դատարանն իրավասու է անդրադառնալու անձի մեղավորության կամ անմեղության հարցերին կամ գործը քննել նաև մյուս դատապարտյալների մասով) և մինչև նա ժամանակ պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները: Վերոհիշյալ դիրքորոշման գործնականում իրացման երաշխիքն այն դեպքերն են, երբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանվել է նոր քննության սահմանված ծավալը չպահպանելու հիմքով²⁴⁹ (տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի ԱՎԴ4/0044/01/13, 2015 թվականի փետրվարի 27-ի ԵԵԴ/0030/01/12, 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԱՎԴ4/0044/01/13 որոշումները): Վճռաբեկ դատարանն իր հերթին իր դատական ակտում պետք է հստակ նշի նյութական և դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը պետք է վերացվի ստորադաս դատարանի կողմից, ստորադաս դատարանի կողմից պարագաբանման ենթակա հանգամանքները, նոր քննության ընթացքում կատարվելիք անհրաժեշտ դատավարական գործողությունների շրջանակը²⁵⁰: Ընդ որում, կոնկրետ ստորադաս դատարանը, որին գործը պետք է ուղարկվի նոր քննության համար, Վճռաբեկ դատարանը պետք է որոշի՝ հաշվի առնելով իր իսկ կողմից

²⁴⁹Նախագծում վերադաս դատարանի կողմից փոխանցված վարույթով այդ դատարանի սահմանված ծավալի շրջանակներում անհրաժեշտ վարույթային գործողությունները չկատարելը նախատեսվել է որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

²⁵⁰Տե՛ս *Гродзинский М.М.*, նշված աշխատությունը, էջ 71:

սահմանված քննության ծավալը, քանի որ դատավարական համապատասխան գործողություններ կատարելու և թույլ տված խախտումները վերացնելու՝ առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի օրենսդրական հնարավորությունները միատեսակ չեն: Այս առումով, օրինակ, որոշակի քննադատության տեղիք է տալիս Վճռաբեկ դատարանի՝ Գ.Մանուկյանի գործով թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշմամբ դատական ակտը բեկանելը և առաջին ատյանի դատարանում ղարկել նայն պարագայում, երբ Վճռաբեկ դատարանի արձանագրած դատական սխալը հաստատված փաստական հանգամանքերին տրված սխալ իրավական գնահատականն էր: Նոր քննությունն իրականացնելու անհրաժեշտության բացակայության պայմաններում գործը թերևս կարող էր ուղարկվել Վերաքննիչ, սակայն ոչ Առաջին ատյանի դատարան՝ հատկապես հաշվի առնելով առանց գործի ըստ էության քննությունն իրականացնելու Առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտ կայացնելու անհնարինությունը: Վերոշարադրյալը, սակայն, չպետք է հիմք տա եզրակացնելու, որ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ կանխորոշում է ստորադաս դատարանի եզրահանգումները և կայացվելիք որոշումը, ինչը կհակասեր դատարանների ներքին անկախության սկզբունքներին: Գործող Օրենսգիրքը, ինչպես արդեն նշել ենք, չի հստակեցնում Վճռաբեկ դատարանի լիազորությունների ընդհանրապես և այս լիազորության իրականացման հիմքերը՝ մասնավորապես: Պարզապես կարելի է ենթադրել, որ Վճռաբեկ դատարանն իր այս լիազորությունը պետք է իրականացնի բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի կողմից թույլ տված խախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը և վերջինիս վերապահված օրենսդրական հնարավորությունները չեն կարող թույլ տալ ուղղել դրանք: Այս առումով Նախագիծն ավելի հստակ կարգավորում է պարունակում՝ սահմանելով, որ քրեադատավարական օրենքի էական խախտման կոնկրետ հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանը պարտադիր բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության: Ընդ որում, նշված հիմքերը գրեթե նույնական են դատական ակտի անվերապահ բեկան-

ման՝ գործող Օրենսգրքով նախատեսված հիմքերին: Համապատասխան հիմքերի առկայության դեպքում թե՛ Օրենսգրքով և թե՛ Նախագծով վերաքննիչ դատարանը կարող է ոչ միայն բեկանել դատական ակտը և գործը (վարույթը) փոխանցել նոր քննության, այլ և կայացնել նոր դատական ակտ: Նույն հիմքերի առկայության պարագայում վերաքննիչ դատարանի և Վճռաբեկ դատարանի լիազորությունների օրենսդրական կարգավորման տարբերակումն պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն դատական ակտերի վճռաբեկ վերանայման՝ վերաքննիչ դատարանում ապացույցներ, այդ թվում՝ լրացուցիչ ներկայացված, հետազոտելու և ըստ այդմ գործի փաստական կողմը վերանայելու լիազորությունը թույլ տված դատական սխալը ուղղելու և նոր դատական ակտ կայացնելու հնարավորությունն է տալիս: Նշված խախտումներն իրենց բնույթով այնպիսին են (օրինակ՝ դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, դատական վարույթն անիրավաչափորեն իրականացվել է մեղադրյալի բացակայության դատական վարույթն իրականացվել է պաշտպանի բացակայության դեպքում, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր և այլն), որ դրանք հնարավոր է ուղղել միայն նոր քննության, որոշակի դատավարական ընթացակարգ կրկնելու արդյունքում, ինչը Վճռաբեկ դատարանում ապահովել հնարավոր չէ: Հետևաբար, իրավաչափե՛ Նախագծում տրված նշված կարգավորումը:

Վճռաբեկ դատարանի՝ քննարկման կարիք ունեցող հաջորդ լիազորությունը բողոքարկվող դատական ակտը փոփոխելու²⁵¹ լիազորությունն է: Վճռաբեկ դատարանի այս (նաև քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու) լիազորությունը սերտորեն առնչվում է վճռաբեկ վերանայման մեխանիզմի և մասնավորապես, վճռաբեկ ատյանում ապացուցման գործընթացի՝ արդեն իսկ քննարկված առանձնահատկությունների հետ: Եվ հենց այդ առանձնահատկությունները հաշվի առնելով՝ պետք է փաստել, որ Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտի փոփոխությունը չի ենթադրում գործի ըստ էության

²⁵¹Եթե Օրենսգրքում նշվում է դատական ակտը բեկանելու և փոփոխելու, ապա Նախագծում՝ միայն փոփոխելու մասին, ինչը միանգամայն իրավաչափ է, քանի որ բեկանված (ոչ նչացված, չեղյալ հայտարարված) դատական ակտը փոփոխել հնարավոր չէ:

քննությունն իրականացնելու և ապացույցներն անմիջականորեն հետազոտելու հնարավորությունն: Ուստի թե՛ Օրենսգիրքը, թե՛ Նախագիծն այս լիազորության իրացումն իրավաչափորեն կապում են հետևյալ երկու պայմանների առկայության հետ.

1) համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նմանակտ, (այսպայմանը հստակ վկայում է այն մասին, որ Վճռաբեկ դատարանը կաշկանդված է ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքներով և իրավունք չունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանքներ) և

2) դաբխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Քաղաքացիական դատավարության շրջանակներում վճռաբեկ դատարանին համանման լիազորություն վերապահելու իրավաչափորեն անդրադարձել է ՀՀ Սահամանդրական դատարանն իր 2009 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-832 որոշման մեջ՝ նշելով, որ այն կոչված է բացառելու դատական ակտերի անընդհատ շրջապտույտը և երաշխավորելու ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը: Տեսական գրականության մեջ այս լիազորության հետ կապված՝ լայնորեն քննարկվում են նաև վճռաբեկ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը, ինչպես նաև նշանակված պատիժը փոխելու²⁵² հարցերը, ինչը վկայում է դրանց հատուկ անդրադառնալու անհրաժեշտության մասին: Այսպես, որոշ դատավարագետներ հնարավոր են համարում վերադաս դատարանի կողմից արարքի իրավական գնահատականի փոփոխումը մեղադրյալի պաշտպանության իրավունքը երաշխավորող հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1) առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները դաթույլ են տալիս, և դրանց արժանահավատությունը վերադաս դատական ատյանի մոտ կասկած չի հարուցում:

2) արարքի նոր իրավական գնահատականը չի վատթարացնում դատապարտյալի վիճակը:

3) արարքի իրավական գնահատականը փոփոխվում է առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքների շրջանակում:

²⁵²Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 196:

4) արարքի իրավական գնահատականի փոփոխությունը չի նշանակում անձին իրեն առաջադրված մեղադրանքից բացի նաև մեկ այլ հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչել ²⁵³:

Գործող Օրենսգիրքը չի կանոնակարգում Վճռաբեկ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու հարցը, իսկ Նախագծի 394-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզելով, որ մեղադրյալի արարքի իրավական գնահատականը ճիշտ է՝ վճռաբեկ դատարանը բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության կամ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին ²⁵⁴: Պաշտպանության իրավունքի լույսի ներքո վերադաս դատական ատյանում արարքի իրավական գնահատականը փոխելու խնդրին անդրադարձել է Եվրոպական դատարանը: Դալլոսն ընդդեմ Յունգարիայի գործով որոշման մեջ Եվրոպական դատարանը Յունգարիայի շրջանային դատարանի (վերաքննիչ ատյան) կողմից արարքի իրավական գնահատականի փոփոխությունը չի դիտարկել պաշտպանության իրավունքի խախտում՝ կարևորելով այն հանգամանքը, որ նոր իրավական գնահատականը եղել է մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների շրջանակում և որ հնարավորություն է եղել այն բողոքարկելու Յունգարիայի գերագույն դատարան (երրորդ ատյան) ²⁵⁵: Յազվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք իրավաչափ կարող է դիտարկվել արարքի իրավական գնահատականի փոփոխությունը Վերաքննիչ, սակայն ոչ Վճռաբեկ դատարանի կողմից, քանի որ վերջին դեպքում անձը գրկվում է իր արարքին տրված իրավական գնահատականը բողոքարկելու իրավունքից: Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի դատական ակտից տարբեր իրավական գնահատական պարունակող՝ առաջին ատյանի դատարանի դատավճռին օրինական ուժ տալու՝ Նախագծով սահմանված լիազորությանը, ապա նման կարգավորումը իրավաչափորեն ելնում է այն տրամաբանությունից, որ այդ իրավական գնահատականն արդեն մեկ անգամ Վերաքննիչ դատարան

²⁵³Տե՛ս *Kyçoba Յ.Փ.*, նշված աշխատությունը, էջեր 179-180:

²⁵⁴Օրենսգիրքը կանոնակարգում է միայն Վերաքննիչ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու լիազորությունը:

²⁵⁵Տե՛ս *Dallos v. Hungary*, 2001 թվականի մարտի 1-ի վճիռ, գանգատ թիվ 29082/95, 47-53-րդ կետեր:

նուժ վիճարկել ու հնարավորութեան անձն ունեցել է:

Անդրադառնալով պատժի մասով ստորագրած դատարանի դատական ակտը փոփոխել ու հարցին՝ հարկ է նշել, որ Օրենսգիրքն այս խնդրի առնչութեամբ դարձյալ որևէ հստակ օրենսդրական կարգավորում (հետևաբար նաև արգելք) չի նախատեսում: Մինչդեռ նախածով վճարք եկ դատարանն իրավասու է պատժի մասով փոփոխել ստորագրած դատարանի ակտը (Նախագծի 393-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ կոնկրետ այն դեպքում, երբ պարզվում է, որ մեղադրյալի նկատմամբ նշանակվել է նրան վերագրվող հանցագործության համար օրենքով չնախատեսված պատժատեսակ, պատժաչափ կամ նրան կատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել՝ վճարք եկ դատարանը բեկանում է ստորագրած դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորագրած դատարան նոր քննության կամ օրինական ուժ տալ իսկառաջին ատյանի դատարանի դատական ակտին (Նախագծի 394-րդ հոդվածի 3-րդ մաս): Մյուս կողմից՝ նախագիծը սահմանում է նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառման այլ դեպքերում նաև Վճարք եկ դատարանի կողմից ստորագրած դատարանի դատական ակտը փոփոխել ու լիազորություն: Նախագծում տրված կարգավորումը, ըստ էության, ելնում է այն գաղափարից, որ պատիժ նշանակելը դուրս է բարձրագույն դատական ատյանի իրավասության շրջանակներից: Այդուհանդերձ, կարծում ենք՝ այս մոտեցումը որոշակի խնդիրներ է առաջացնում դատավարական խնայողության տեսանկյունից: Մասնավորապես, հարց է ծագում, թե արդյոք Վճարք եկ դատարանն իրավասու է պատիժը պայմանականորեն չկիրառել, երբ նույն պահանջով ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է վերաքննիչ դատարանի կողմից: Տեսական գրականության մեջ ևս ընդհանուր առմամբ ընդունելի է բարձրագույն դատական ատյանի կողմից պատժի մասով դատական ատյանի փոփոխությունը՝ իհարկե դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունն ապահովելու պայմանով: Իսկ այդ երաշխիքը նախագիծը բովանդակում է՝ սահմանելով, որ մեղադրյալի վիճակի վատթարացման առումով՝ մեղադրական դատավճիռը կարող է բեկանվել կամ փոփոխվել միայն այն դեպքում, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրան ներկայացուցիչը: Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ իրավաչափ չէ Վճարք եկ դա-

տարանին պատժի մասով դատական ակտը փոխելու լիազորությունից զրկելը՝ հատկապես այն դեպքերում, երբ դապայ մանավորված է գործով թույլ տված դատական սխալը՝ քրեական օրենքի սխալ կիրառումն ուղղելու հետ: Թե գործող Օրենսգրքը և թե Նախագիծը, հաշվի առնելով դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքը²⁵⁶, առանձնահատուկ կանոնակարգել են Վճռաբեկ դատարանի կողմից արդարացման դատավճռի բեկանման լիազորությունը: Այսպես, Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացման դատավճռը կարող է վճռաբեկության կարգով բեկանվել ոչ այլ կերպ, քան դատախազի, տուժողի կամ նրաներկայացուցչի բողոքի հիման վրա, կամ արդարացված անձի բողոքի հիման վրա, եթե նա համաձայն չէ արդարացման հիմքի հետ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարացման դատավճռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում: Քանի որ գործող օրենսդրական կարգավորմամբ՝ Վճռաբեկ դատարանը կաշկանդված է միայն վճռաբեկ բողոքի հիմքով և հիմնավորումներով, սակայն ոչ պահանջով, ստացվում է, որ դատախազի, տուժողի կամ նրաներկայացուցչի բողոքի առկայությունը, անկախ պահանջից, կարող է յուրաքանչյուր դեպքում հանգեցնել արդարացման դատավճռի բեկանման: Այս խնդիրը Նախագծում լուծվել է և սահմանվել է, որ վճռաբեկ դատարանն իրավասու է բեկանել արդարացման դատավճռը, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրաներկայացուցչը: Բացի այդ, Նախագիծն իրավաչափորեն սահմանել է, որ մեղադրական դատավճռը ևս մեղադրյալի վիճակի վատթարացման առումով կարող է բեկանվել կամ փոփոխվել միայն այն դեպքում, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրաներկայացուցչը: Օրենսգրքով և Նախագծով սահմանված՝ Վճռաբեկ դատարանի վերջին լիազորությունը վերաբերունիչ դատարանի դատական ակտը բեկանելն է և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը: Վճռաբեկ դատարանին

²⁵⁶Ավելի մանրամասն տե՛ս *Кущова Э.Ф.*, նշված աշխատությունը, էջեր 161-163, *Петрухин И.Л.*, Запрет поворота к худшему в российском уголовном процессе // Государство и право, 2006, N3, էջեր 46, 53:

Նման լիազորություններ ստանալու իրավաչափությանն անդրադարձել է ՀՀ Սահամանդրական դատարանն իր 2007 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՍԴՈ-720 որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ դակոչ վաճառքի դատական ակտերի անընդհատ շրջապատում և ըստ այդմ երաշխավորելու ողջամիտ ժամկետում գործի քննության կարևորագույն իրավունքը:

Անդրադառնալով վճռաբեկ դատարանի որոշումների կառուցվածքին՝ հարկ է նկատել, որ Օրենսգրքի 422-րդ հոդվածը ձևական պահանջների հետմեկտեղ (1-ին մասի 1-5-րդ կետեր)՝ նախատեսում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ բովանդակային հետևյալ դրույթները նշելու պահանջ՝

1) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը.

2) հիմքերը, որոնցով դրվել է դատավճռի կամ որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման հարցը.

3) օրենքները, որոնցով ղեկավարվել է վճռաբեկ դատարանը որոշում կայացնելիս²⁵⁷.

4) դատավճիռը կամ որոշումը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով վճռաբեկ դատարանը չի համաձայնվել դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի հետևություններին.

5) վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով եզրահանգումը (5.1-9-րդ կետեր):

Օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը, պարզելով, որ բացակայում են դատավճիռը կամ որոշումը բեկանելու հիմքեր, այդ մասին պետք է նշի կայացրած որոշման մեջ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի ճիշտմեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը: Ինչ վերաբերում է քննարկվող նորմով սահմանված պատճառաբանվածության պահանջին, ապա այն ըստ էության արդեն իսկ սահմանված է նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում և 2-րդ մասում: Բացի այդ, այս նույն նոր-

²⁵⁷Դատական ակտ կայացնելիս վճռաբեկ դատարանն առաջնորդվում է ոչ միայն օրենքներով, այլև այլ նորմատիվ իրավական ակտերով, ուստի ճիշտ կլիներ նախագծի օրինակով օրենքներ եզրույթի փոխարեն նշել նորմատիվ իրավական ակտեր եզրույթը:

մի օր են սղրական ձևակերպման տառացի մեկնաբանությամբ ունից բխում է, որ վճռաբեկ դատարանի ցանկացած որոշում պետք է ապահովի օրենքի ճիշտ մեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը, քանի որ նշված պայմանները բաժանված են ստորակետով, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է: Նախ՝ իրավունքի զարգացումն օրենքի միատեսակ կիրառության ապահովման դեպքերից մեկն է, և հնարավոր է, որ վճռաբեկ դատարանի որոշումը նպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, սակայն ոչ իրավունքի զարգացման իմաստով: Եվ երկրորդ՝ վճռաբեկ բողոքը կարող է վարույթ ընդունվել ոչ միայն օրենքի միատեսակ կիրառության, այլև առերևույթ դատական սխալի հիմքով: Անդրադառնալով վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության պահանջին՝ հարկ է քննարկել այն հարցը, թե արդյոք այն ենթադրում է վճռաբեկ բողոքի բոլոր փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտություն: Կարծում ենք՝ անվիճելի է, որ Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ պարտադիր կերպով պետք է անդրադառնա բողոքի բոլոր հիմքերին: Այս առումով, թերևս բացառություն են գործնականում հանդիպող այն իրավիճակները, երբ Վճռաբեկ դատարանն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենում անդրադառնալ բողոքաբերի վկայակոչած նյութական իրավունքի խախտումներին, քանի դեռ չեն վերացվել արձանագրված քրեադատավարական օրենքի խախտումները²⁵⁸: Ինչ վերաբերում է բողոքի բոլոր հիմնավորումներին անդրադառնալու պահանջին, ապա այս առնչությամբ հարկ է վկայակոչել Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցումները: Այսպես, արդար դատաքննության իրավունքի համատեքստում դատական ակտի պատճառաբանվածության խնդրին անդրադարձել է նաև Եվրոպական դատարանը՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքը պահանջում է դատարա-

²⁵⁸Տես, ի թիվս այլոց, Վճռաբեկ դատարանի ԳԴ3/0001/11/14, ԵՇԴ/0011/11/14, ԵՄԴ/0020/01/14, ԵԴ2/0004/01/14, ԿԴ1/0006/01/14 որոշումները և այլն:

նին պատշաճ պատճառաբանել իր դատական ակտերը: Այդուհանդերձ, պատճառաբանված ության պահանջը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից և կոնկրետ գործի փաստական հանգամանքներից: Ավելին, չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է դատարաններին պատճառաբանել իրենց դատական ակտերը, դա չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած փաստարկի առնչությամբ պատճառաբանված պատասխան ներկայացնելու պահանջ²⁵⁹: ՅԵԼԼ ընդդեմ Ֆինլանդիայի գործով Եվրոպական դատարանն ընդգծել է, որ արդար դատաբնույթյան իրավունքը պահանջում է, որպեսզի վերանայում իրականացնող դատարանը նվազագույնը անդրադառնա իր իրավասությանը վերապահված հարցերին և սոսկ չվկայակոչի ստորադաս դատարանի եզրահանգումները՝ առանց այդպիսիք քննարկման առարկա դարձնելու²⁶⁰: Այս առումով, հետաքրքիր օրենսդրական կարգավորում է պարունակում Նախագիծը, որը սահմանում է, որ դատական վերանայման արդյունքում կայացված դատական ակտում դատարանը հիմնավորված իրավական գնահատական է տալիս դատական վերանայման բողոքում ներկայացված բոլոր փաստարկներին՝ բացառությամբ այն փաստարկների, որոնց հիմնադրուկ լինելը անկողմնակալ դիտորդի մոտ չի կարող կասկած հարուցել (366-րդ հոդվածի 2-րդ մաս):

Գործող Օրենսգրքի՝ նախկին խմբագրության 423-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում էր Վճռաբեկ դատարանի որոշումը ողջամիտ ժամկետում գործին մասնակցող անձանց ուղարկելու օրենսդրական պահանջ: Գործնականում եղել են դեպքեր, դատարանի որոշումն ուղարկվել է դատական նիստից մինչև չորս կամ ավելի ամիս անց: Չափի առնելով, որ վարույթ ընդունված բողոքը դատական նիստում քննության առնելու հստակ ժամկետներ և օրենքով նախատեսված չեն, գործնականում չի բացառվել, որ Վճռաբեկ դատարանի որոշումը շահագրգիռ անձանց ուղարկվել է բողոքը դատարանում ստացվե-

²⁵⁹ Տե՛ս Human Rights in the Administration of Justice: A Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers, Chapter 7, The Right to a Fair Trial: Part II – From Trial to Final Judgement, էջ 293

<http://www.ohchr.org/Documents/Publications/training9chapter7en.pdf>

²⁶⁰ Տե՛ս *Helle v. Finland*, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, գանգառ թիվ 20772/92, կետ 55:

լ ու պահից մոտ մեկ տարի անց²⁶¹: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Նախագծում առաջարկվում է նախատեսել վճռաբեկ դատարանի որոշումը դատավարության մասնակիցներին եռամսյա ժամկետում ուղարկել ու պահանջ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի լիազորությունների կանոնակարգելիս պետք է ընտրել միջանկյալ այնպիսի մոդել, որը համակցված ձևով կպարունակի վճռաբեկության մաքուր և խառը մոդելներին բնորոշ տարրեր այնպիսի չափաբաժիններով, որ բացառվի վճռաբեկ ասյանին դատական սխալներն ուղղելու չափազանց լայն կամ չափազանց նեղ օրենսդրական հնարավորությունների ընձեռումը: Նախ՝ իբրև հիմք պետք է ծառայի այն գաղափարը, որ վճռաբեկությանյուրահատկությունը բացառապես գործի իրավական կողմի վերանայումն է: Այս առանձնահատկությունը, սակայն, չի ենթադրում դատական ակտի վերանայման չափազանց ձևական ընթացակարգի առկայություն, երբ դատարանը զրկված կլինի անգամ իրավական սխալներն արդյունավետորեն ուղղելու հնարավորությունից: Այս համատեքստում, կարծում ենք, միանգամայն իրավաչափ է վճռաբեկության խառը մոդելին բնորոշ՝ մասնավորապես, դատական ակտը փոփոխելու, քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորության նախատեսումը: Իսկ դա իր հերթին ենթադրում է նաև գործի եության մեջ որոշակիորեն խորանալու, ապացույցներ գնահատելու հնարավորության վերապահում, ինչը, կարծում ենք, արդարացված է և՛ Վճռաբեկ դատարանի կողմից իր խնդիրների արդյունավետ իրականացման, և՛ արդարադատության արդյունավետության շահի տեսանկյունից: Սակայն միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը չպետք է ունենա ապացույցներ հետազոտելու և դրահիման վրագործի փաստական կողմը վերանայելու լայն հնարավորություններ:

²⁶¹Տե՛ս արդեն իսկ հիշատակված՝ Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0179/11/14, ԵԿԴ/0039/01/15, ԵԱՆԴ/0011/01/14, ԵԿԴ/0016/11/15, ԵԱԲԴ/0024/11/15 որոշումները:

Եզրակացություն

Ամփոփելով վճռաբեկության` որպես դատական ակտերի վերանայման ձևի տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր հետազոտության արդյունքները, հանգում ենք ներքոշարադրյալ հետևություններին.

1. Վճռաբեկ վերանայումը` որպես դատական ակտերի վերանայման ձև, կարելի է բնորոշել որպես ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման հայեցողական ձև, որի արդյունքում վճռաբեկ ատյանը, նպատակ ունենալով ուղղելու դատական սխալները և ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ստուգում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը` նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանման տեսանկյունից:

2. Վճռաբեկությունը նաև քրեական դատավարության ինքնուրույն փուլ է` կազմված վճռաբեկ բողոքարկման և բողոքի նախնական քննության (պարտադիր ենթափուլ) և բողոքի ըստ էության քննության (\$ակուլ տատիվ ենթափուլ, քանի որ այս ենթափուլ բողոքն անցնում է միայն այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում) ենթափուլերից:

3. Դատական ակտերի վճռաբեկ վերանայումը կոչված է լուծելու առհասարակ դատական վերանայման ինստիտուտի առջև դրված կարևորագույն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են` դատական սխալների ուղղումը և միասնական դատական պրակտիկայի ապահովումը:

4. Միասնական դատական պրակտիկայի ապահովման շրջանակներում դատական ակտերի վճռաբեկ վերանայումը կոչված է իրականացնելու նաև իրավունքի զարգացման գործառույթ, չնայած որ այն ուղղակի սահմանադրական ամրագրում չի ստացել: Ընդ որում, թեև Հայաստանի Հանրապետությունը պատկանում է ռոմանագերմանական իրավական համակարգին, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը կոդիֆիկացված օրենքն է, այդուհանդերձ, անգամ այս պարագայում իրավունքի զարգացման գործառույթի շրջանակներում իրավաչափ է օրենսդրական կարգավորման բացերի

լրացու մը դատական նախադեպեր ստեղծելու ճանապարհով:

5. Բարձրագույն դատական ատյանի՝ միասնական դատական պրակտիկայի ձևավորման մեխանիզմը կարելի է ներկայացնել որոշակի փուլային համակարգի տեսքով: Նախ, կոնկրետ գործի քննության և լուծման շրջանակներում իրավական նորմը ենթարկվում է որոշակի դատական իրավամեկնաբանության: Ապա, օրենսդրորեն երաշխավորվում է բարձրագույն դատական ատյանի մեկնաբանության ներքին պարտադիր լինելը ստորադաս դատարանի համար նույն անմասն փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, իսկ բարձրագույն դատական ատյանին վերապահվում են որոշակի գործունե լծակներ՝ ապահովելու համար ստորադաս դատարանների կողմից իր իրավական դիրքորոշումների միասնական կիրառությունը:

